

Ֆ. Սրբո Ֆիցերալդ

ՄԵՆ ԳԵՂԱՄԻ



Francis Scott Fitzgerald

Ֆրենսիս Աքոթ Ֆիցջերալ

THE GREAT GATSBY

ՄԵԾՆ ԳԵԹԱԲԻ



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Francis Scott Fitzgerald

THE GREAT GATSBY

Novel

Translated into Armenian by Sona Seferyan



Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդ

ՄԵԾՆ ԳԵԹՍԻՒ

Վեպ

Թարգմանությունն անգլերենից՝ Սոնա Սեֆերյանի



ՀՏԴ 821.111(73)–31 Ֆիցջերալդ
ԳՄԴ 84(7ԱՄՆ=412.1)–44
Ֆ 660

Ֆ 660 Ֆիցջերալդ Ֆրենսիս Սքոթ
Մեծն Գեթսբի: Վեպ / Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդ; Թարգ-
մանությունն անգլերենից՝ Սոնա Սեֆերյանի.— Եր.: «Զանգակ»
հրատ., 2022.— 200 էջ:

«Մեծն Գեթսբի» վեպը ամերիկացի գրող Ֆ. Ս. Ֆիցջերալդի գլուխ-
գործոցն է: Այն ամերիկյան գրականության «ջազի դարը» բնորոշող
ստեղծագործություն է: Այդ ժամանակաշրջանը, որ ընդգրկում է Առաջին
աշխարհամարտի ավարտից մինչև 1930–ականների Մեծ ճգնաժամի
տարիները, իր անվանումը ստացել է հենց Ֆիցջերալդի կողմից:

20–րդ դարում անգլերենով գրված 100 լավագույն գրքերի ցանկում
վեպը զբաղեցնում է երկրորդ տեղը:

ՀՏԴ 821.111(73)–31 Ֆիցջերալդ
ԳՄԴ 84(7ԱՄՆ=412.1)–44

Առաջին հրատարակությունը՝ 2014 թ.

ISBN 978–9939–68–897–8

© «Զանգակ–97» ՍՊԸ, 2014
«Zangak–97» LLC, 2014
© Սեֆերյան Ս. (հրավահաջորդներ)

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Սույն հրատարակության որևէ հատված չի կարող վերարտադրվել մեխանիկական,
էլեկտրոնային, լուսապատճենահանման, տեսագրման և այլ եղանակներով՝ առանց
հրատարակչի գրավոր համաձայնության:

Կրկին Ջելդային

Թե սիրելվույդ կհուզի, դիր քո ոսկի գլխարկը,
Թե կարող ես դու թռչել, բարձր թռիչք վեր այնքան,
Մինչև որ նա կկանչի.

— Ոսկի, սիրուն գլխարկով բարձր թռչող սիրեկան,
Ի՛նչ եղիք առհավետ...

Թոնաս Փարք Դինվիլիե

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Պատանեկության տարիներին, երբ ես առավել խոցելի էի, հայրս ինձ մի խորհուրդ տվեց, որը մինչև հիմա էլ պահել եմ մտքումս. «Եթե երբևէ ուզես որևէ մեկին դատապարտել, հիշիր՝ այս աշխարհում ամեն մարդ չէ, որ ունի քո առավելությունները»:

Նա միայն այսքանն ասաց, բայց մենք միշտ անխոս հաղորդակցվում էինք, և ես հասկացա, որ նա շատ ավելին է ուզում ասել: Հետևաբար դատողությունների մեջ զուսպ լինելը դարձել է ինձ համար սովորություն, որի շնորհիվ շատ տարօրինակ խառնվածքներ են բացահայտվել իմ առաջ, բայց հաճախ էլ դրա պատճառով զոհ եմ դարձել անուղղելի կաշուն մարդկանց: Անառողջ ուղեղը անմիջապես որսում է զուսպ լինելու այս հատկությունը և եթե դա նկատում է առողջ մարդու մոտ, կառչում է դրանից: Եվ ահա պատահեց այնպես, որ դեռևս քոլեջում ինձ հանիրավի մեղադրում էին դիվանագետ լինելու մեջ, որովհետև անհաղորդ և ինքնամփոփ մարդիկ ինձ մասնակից էին դարձնում իրենց թաքուն վշտերին: Գաղտնիքներից շատերին տեղեկացել եմ ակամա: Հաճախ ձևացրել եմ, թե քունս տանում է, զբաղված եմ կամ անբարյացակամ, կամ էլ փորձել եմ կատակի տալ, երբ բացահայտ զգացել եմ, որ հորիզոնում խոստովանություն է գծագրվում, քանզի երիտասարդների մտերմիկ խոստովանությունները կամ համենայն դեպս դրանց արտահայտման ձևերը սովորաբար բանագողության նման մի բան են, և որպես օրենք՝ ասելիքն էլ ասում են ոչ լրիվ: Ջուսպ դատողություններ անելը անհատնում հույսի գրավական է: Ես մինչև հիմա էլ փոքր-ինչ վախենում եմ

որևէ սխալ թույլ տալուց՝ մոռանալու դեպքում այն, ինչ ժամանակին ասում էր հայրս ցուցադրաբար, և նույն ցուցադրությամբ կրկնում եմ ես, որ մարդկանց ի ծնե անհավասար է բաշխված հիմնական բարոյական արժեքները զգալու կարողությունը:

Եվ ահա իմ համբերությամբ այս կերպ պարծենալուց հետո պետք է ընդունեմ, որ համբերությունն էլ չափ ու սահման ունի: Մարդու վարքագիծը կարող է տարբեր հիմքեր ունենալ՝ և՛ կարծր ժայռ, և՛ լարծուն ճահճուտ, բայց գալիս է մի պահ, երբ ինձ համար այլևս ոչ մի կարևորություն չունի, թե այն ինչի վրա է հիմնված: Անցյալ աշնանը, երբ Արևելքից տուն դարձա, աշխարհը համազգեստի ու բարոյական զգաստության մեջ տեսնելու ցանկություն ունեի: Ես ամենևին չէի ուզում արտոնյալի պես շոնդալից մուտք գործել մարդկային սրտի խորքը: Բացառությունը միայն Գեթսեիին էր, որի անունով էլ կոչվում է այս գիրքը. Գեթսեին, որ թվում է՝ իր մեջ էր ամփոփում այն ամենը, ինչ բացեիբաց արհամարհում եմ: Եթե մարդու մասին դատելու լինենք ըստ այն բանի, թե նա ինչպես է իրեն դրսևորում, ապա այդ մարդը հիրավի վեհաշուք մի բան ուներ, կյանքի բոլոր խոստումներն ընկալելու մի խորին գերզգայնություն, կարծես նա մասն էր այն բարդ սարքերից մեկի, որը տասը հազար մղոն հեռավորության վրա գրանցում է երկրաշարժերը: Արագ արձագանքելու այս հատկությունը բնավ չպետք է նույնացնել տկար դյուրագացության հետ, ինչը ճոռոմ կերպով անվանում են «ստեղծագործական խառնվածք»։ դա հազվագյուտ մի շնորհ էր հույսի, երազային խանդավառություն, որպիսին երբեք չեմ տեսել ուրիշ մեկի մեջ և հավանաբար երբեք էլ չեմ տեսնի: Սակայն Գեթսեիին վերջում արդարացրեց իրեն. ոչ թե նա ինքը, այլ այն, ինչ կախված էր նրա գլխին, այն չարագույժ փոշին, որ իջնում էր նրա արթմնի երազների վրա, ինձ ստիպեց առժամանակ իսպառ կորցնել հետաքրքրությունս մարդկանց

վաղանցուկ տխրությունների և կարճատև ուրախությունների հանդեպ:

* * *

Իմ ընտանիքն արդեն երեք սերունդ է, ինչ հայտնի է ու հարուստ Միջին Արևմուտքի այս քաղաքում: Քարավեյները տոհմի պես մի բան էին, և ըստ ընտանեկան ավանդության՝ գիտեինք, որ սերել ենք Բաբլոնի դուքսերից, սակայն իմ ճյուղի իսկական հիմնադիրը պապիս եղբայրն է, որն այստեղ էր եկել 1851 թվականին՝ իր փոխարեն վարձկան զինվոր ուղարկելով քաղաքացիական պատերազմ, իսկ ինքը մետաղյա իրերի մեծածախ առևտրի գործ էր սկսել, որը մինչ օրս էլ ղեկավարում է հայրս:

Ես երբեք չեմ տեսել իմ այդ նախնուն, բայց ինձ նմանեցնում են նրան՝ վկայակոչելով հորս գրասենյակում կախված բավականին թանձր գույներով դիմանկարը: Ավարտել եմ Նյու Հեյվընի համալսարանը 1915 թվականին՝ հորիցս ուղիղ քառորդ դար հետո, իսկ քիչ անց մասնակցել եմ Առաջին աշխարհամարտին, մի անվանում, որ սովորաբար տալիս են տևտոնական ցեղերի ուշացած գաղթին: Ես այնպիսի մեծ բավականություն ստացա հակահարձակումից, որ անգամ տուն դառնալուց հետո էլ հանգիստ չէի գտնում: Միջին Արևմուտքը աշխարհի տաքուկ կենտրոնը լինելու փոխարեն այժմ թվում էր տիեզերքի մաշված քղանցքը, այնպես որ վճռեցի գնալ Արևելք՝ վարկային գործ սովորելու: Իմ ճանաչած բոլոր մարդիկ այդ գործն էին անում, ուրեմն մի մարդ ևս կարող էր ապահովվել: Մորաքույրներս ու հորեղբայրներս այդ հարցն այնպիսի լրջությամբ քննարկեցին, կարծես ինձ համար նախապատրաստական դպրոց էին ընտրում, և վերջապես անվճռական դեմքերով եզրակացրին. «Ինչու-նո՛ւ չէ»: Հայրս համաձայնեց ինձ նյութապես օգնել մեկ տարի, և ահա այդ երկար ու բարակ քաշքշուկներից հետո՝ 1922 թվա-

կանի զարնանը, եկա Արևելք՝ ընդմիշտ հաստատվելու, գոնե
ինձ այդպես էր թվում այն ժամանակ:

Առաջին գործս Նյու Յորքում բնակարան գտնելն էր:
Եղանակը տաք էր, ես էլ նոր էի լքել լայն, կանաչ սիգամար-
գերի ու քնքուշ, մատղաշ ծառերի երկիրը, և երբ գրասենյա-
կում մի երիտասարդ առաջարկեց միասին տուն վարձել ար-
վարձաններից մեկում, ուրախացա: Նա ինքն էլ գտավ տու-
նը՝ խավաքարտե հողմածեծ մի հյուղակ՝ ամսական ութսուն
դոլարով, բայց վերջին պահին ընկերությունը նրան Վա-
շինգտոն ուղարկեց, և ես մենակ տեղավորվեցի: Շուն էի պա-
հում, ճիշտ է՝ մի քանի օրից փախավ, բայց հոգ չէ, հետո մի
հին «դոջ» գնեցի և վարձեցի ֆինն սպասուհու, որը հավա-
քում էր անկողինս, նախաճաշ էր պատրաստում և էլեկտրա-
կան վառարանի մոտ քթի տակ ֆիննական խորիմաստու-
թյուններ քրթմնջում:

Սկզբում մենակություն էի զգում, սակայն մի առավոտ
ճանապարհին ինձ կանգնեցրեց ինչ-որ մեկը, որն, ըստ
երևույթին, նոր էր ժամանել:

— Ինչպե՞ս կարելի է գնալ Վեսթ Էզզ,— շվարած հարց-
րեց նա:

Բացատրեցի: Եվ երբ առաջ անցա, այլևս մենակություն
չէի զգում: Ես արդեն դարձել էի բնիկ, ուղեկցորդ, ճանա-
պարհ ցույց տվող: Այդ մարդն ակամա ազատագրեց ինձ եկ-
վորի կաշկանդվածությունից:

Եվ այսպես՝ արևաշողի և աչքիդ առաջ փունջ-փունջ
բացվող բողբոջների հետ մեկտեղ, ինչպես արագացրած
շարժանկարներում, ես կրկին եկա այն համոզման, որ ամ-
ռան հետ կյանքը վերսկսվում է:

Մի կողմից՝ այնքան շատ բան կար կարդալու, իսկ մյուս
կողմից՝ այնքան շատ կենարար ուժ՝ թարմ, բուրումնավետ
օդից ներծծելու: Ես տասնյակ հատորներ գնեցի դրամատան
ապառիկ գործի, խոշոր ներդրումների ապահովագրության
վերաբերյալ, և դրանք՝ շարված կարմիր ու ոսկեգույն կազ-

մերով, ինչպես դրամահատարանից նոր դուրս եկած դրամներ, խոստանում էին պարզել այն շողշողուն գաղտնիքները, որ միայն Միդասը, Մորգանը և Մեկենասը գիտեին: Բացի այդ՝ մտադրություն ունեի այլ գրքեր էլ կարդալու: Քոլեջում զբաղվում էի գրականությամբ (մի տարի շարունակ «Յեյլ Նյուզ» թերթի համար լուրջ ու խորիմաստ առաջնորդողներ եմ գրել), հիմա էլ պատրաստվում էի նորից անցնելու այդ գործին՝ վերստին դառնալով նեղ մասնագետ, այսպես ասած՝ լայն մտահորիզոնի տեր մարդ: Սա սոսկ պարադոքս չէ. ի վերջո, կյանքը շատ ավելի լավ ես դիտում, երբ նայում ես միակ պատուհանից:

Պատահականությանը հաճո էր, որ ես տուն վարձեի Հյուսիսային Ամերիկայի յուրօրինակ վայրերից մեկում: Այն մի երկարավուն աղմկահույզ կղզում էր, որը ձգվում էր Նյու Յորքից դեպի արևելք, և որտեղ բնության այլ քմահաճույքների կողքին երկու անսովոր հողակտորներ էին առանձնանում: Քաղաքից քսան մղոն հեռու հսկայական մեծության մի գույգ միանման հրվանդաններ՝ նեղլիկ ծովածոցով բաժանված, մխրձվում էին Արևելյան կիսագնդի ջրատարածության ամենաբնակեցված մասը՝ Լոնգ Այլընդ Սաունդի մեծ, խոնավ ամբարը: Նրանք ճիշտ ձվաձև չէին, այլ Կոլումբոսի ձվի նման՝ ծայրամասում քիչ տափակ, և նրանց արտաքին նմանությունը շարունակ շփոթմունք էր պատճառում գլխավերևում թռչող ձայերին: Չնայած անթև արարածների համար շատ ավելի զարմանահրաշ պետք է լիներ նրանց ակնհայտ տարբերությունն ամեն ինչում՝ բացի ուրվագծից ու չափերից:

Ես ապրում էի Վեսթ Էզգում, դե, ինչպես ասեմ, երկու բնակավայրերից համեմատաբար ոչ այնքան հարմարավետում, թեև այդ ավելորդ բառային պիտակավորումը ամենևին չի արտահայտում այն արտառոց և փոքր-ինչ չարաբաստիկ հակասությունը, որի մասին ուզում եմ խոսել: Իմ տունը հրվանդանի ծայրին էր՝ Սաունդից հիսուն յարդ հեռու՝

երկու ճոխ առանձնատների արանքում, առանձնատներ, որոնց վարձը տասներկու կամ տասնհինգ հազար էր ամռանը: Աջ կողմս մի անսովոր հիասքանչ շինություն էր, իսկ և իսկ նորմանդական *Hôtel de Ville*¹, որի անկյունային աշտարակը վեր էր խոյանում թարմ, ցանցառ բաղեղի միջից, իսկ մարմարյա լողավազանը ավելի քան քառասուն ակր զբաղեցնող մարզ ու այգու մեջ էր: Դա Գեթսբիի առանձնատունն էր, ավելի ճիշտ՝ պատկանում էր այդ անունով մի մարդու, որովհետև չէի ճանաչում պարոն Գեթսբիին: Իմ տունն աչքի փուշ էր, բայց այնքան աննշան փուշ, որ ոչ ոք չէր նկատում, այնպես որ ես ունեի ծովային տեսարան, հարևանիս այգու կեսը և միլիոնատիրոջ դրկիցը լինելու հաճելի գիտակցությունը՝ այդ բոլորի համար վճարելով ամսական ութսուն դոլար:

Նեղլիկ ծովածոցի մյուս կողմում շողշողում էին պերճաշուք Իսթ Էզգի ձերմակ պալատները: Ըստ էության, այս ամառվա պատմությունը սկսվեց այն երեկոյից, երբ ես մեքենայով գնացի այնտեղ՝ տեր և տիկին Բյուքենենների տուն՝ ճաշի: Դեյզին իմ զարմուհին էր, Թոմին ծանոթ էի քոլեջից: Իսկ պատերազմից անմիջապես հետո Չիկագոյում երկու օր անցկացրել էի նրանց տանը:

Դեյզիի ամուսինը, մարմնական բազմաթիվ առավելություններով օժտված լինելուց բացի, Նյու Հեյվընի ֆուտբոլի թիմի ամենահզոր եզրայիններից էր, ազգային դեմք էր, այսպես ասած՝ մեկն այն մարդկանցից, որոնք մինչև քսանմեկ տարեկանը որևէ ասպարեզում այնպես են առաջ գնում, որ հետագայում նրանց յուրաքանչյուր քայլը թվում է անկում: Նրա ընտանիքն անսահման հարստության տեր էր, և քոլեջում արդեն Թոմի շռայլությունը խոսակցության նյութ էր դարձել: Հիմա էլ, Չիկագոն թողած, նա Արևելք էր եկել այնպիսի մի շուքով, որից մարդու շունչը կտրվում էր: Օրինակ՝

¹ Քաղաքապետարան (Ֆրանս.):

Լեյք Ֆորիսթից բերել էր պոլո խաղալու ձիուկներ: Դժվար էր պատկերացնել, որ իմ սերնդի մարդը կարող էր այդքան հարուստ լինել:

Ինչո՞ւ էին նրանք եկել Արևելք, չգիտեմ: Առանց որոշակի դրդապատճառի մի տարի ապրել էին Ֆրանսիայում, ապա թափառել տեղից տեղ, որտեղ հարուստները պոլո էին խաղում և միասին վայելում կյանքը: Դեյզին հեռախոսով ինձ ասաց, որ սա իրենց վերջին հանգրվանն է, բայց ես չհավատացի. Դեյզիի հոգու խորքը չէի տեսնում, իսկ Թոմը, զգում էի, որ թափառելու է ամբողջ կյանքում՝ կարոտագին որոնելով անդարձ կորած ֆուտբոլի խաղի դրամատիկ մոլեզնությունը:

Եվ ահա մի քամոտ, տաք օր ես այցի գնացի Իսթ Էզգի իմ երկու հին ծանոթներին, որոնց, ըստ էության, կարգին չէի ճանաչում: Նրանց տունը սպասածիցս շատ ավելի շքեղ էր՝ ուրախ, կարմրաձերմակ գաղութային Ջորջիա ոճի ծովահայաց մի ապարանք: Մոտ քառորդ մղոն երկարության կանաչ սիզամարգը սկսվում էր հենց լողափից ու ձգվում մինչև նախադուռը՝ ցատկելով արևի ժամացույցների, աղյուսի կտորտանքներ շաղ տված ձեմուղիների ու բազմերանգ ծաղկաթմբերի վրայով և, ի վերջո միանալով տանը, մազլցում էր պատերն ի վեր՝ մատղաշ բաղեղների վերածված, ասես թափ առած լինել: Մեծ, մինչև գետին հասնող պատուհանների շարքը, որ հիմա ոսկե շողեր էր արտացոլում և լայն բացված էր երեկոյան տաք քամուն ընդառաջ, ձգվում էր շենքի ողջ առաջամասով, իսկ նախագավթում ոտքերն իրարից հեռու դրած կանգնած էր Թոմ Բյուքենենը՝ ձիավարի հագուստով:

Նա փոխվել էր Նյու Հեյվընի տարիներից ի վեր: Այժմ ամրակազմ, հարդագույն մազերով երեսնամյա տղամարդ էր՝ խիստ ընդգծված բերանով և բավականին ամբարտավան շարժումներով: Մի գույզ փայլուն գոռոզ աչքեր իշխում էին նրա դեմքին և այնպիսի տպավորություն ստեղծում,

կարծես նրանց տերը միշտ պատրաստ էր հարձակման: Անգամ ձիավարի հագուստի նրբագեղությունը չէր թաքցնում նրա մարմնի անսահման ուժը. թվում էր, թե քուղով մինչև վերջ ձգած պսպղուն երկարաճիտ կոշիկները նեղ էին ոտքերին, իսկ վերնաշապիկի բարակ կտորի տակից մկանների մի ամբողջ խուրձ էր տեղահան լինում՝ ուսի շարժմանը զուգընթաց: Դա հսկայական ուժի տեր մի դաժան մարմին էր:

Թունը կամակոր մարդու տպավորություն էր թողնում, ինչին նպաստում էր նրա կոպիտ, խռպոտ տենորը: Նույնիսկ իր սիրած մարդկանց հետ խոսելիս նրա ձայնում ներողամիտ հայրական արհամարհանքի երանգ կար, որի պատճառով Նյու Հեյվընում շատերը տանել չէին կարողանում նրան:

«Ես, իհարկե, ձեզնից ավելի ուժեղ եմ և ավելի հզոր, սակայն իմ կարծիքը վերջնական մի՛ համարեք»,— կարծես ասում էր նրա հայացքը: Վերջին տարում երկուսս էլ նույն ուսանողական ընկերության անդամ էինք, և չնայած երբեք մտերիմ չէինք եղել, բայց այն տպավորությունն էմ ունեցել, որ ես նրան դուր եմ եկել, և նա էլ իր հերթին իրեն հատուկ հանդուգն, մարտական մտախոհությամբ ցանկացել էր ինձ դուր գալ:

Մենք մի փոքր գրուցեցինք արևոտ գավիթում:

— Լավ տուն ունեմ,— ասաց նա՝ աչքերն անհանգիստ պտտեցնելով չորսքուղորը:

Այա թևիս թեթևակի հպվելով՝ շրջեց ինձ ու լայն, տափակ ձեռքով ցույց տվեց դիմացի տեսարանը՝ ներառելով դարավանդներով իտալական պարտեզը, հարյուրավոր մետրերով ձգվող մուգ, բուրումնավետ վարդերը և ափի մակընթացությանը բախվող կլոր առաջամասով զբոսանավր:

— Նավթատեր Դեմեյնից եմ գնել,— նա ինձ կրկին քաղաքավարի ու կտրուկ շրջեց դեպի դուռը:— Գնանք ներս:

Մենք անցանք ընդարձակ միջանցքով և մտանք պայծառ, վարդագույն մի տարածություն, որը հազիվ էր միացած տանը՝ մինչև գետին հասնող բարձր, երկկողմանի լուսամուտներով: Լայն բացված պատուհանները ձերմակին էին տալիս դրսի թարմ խոտի վրա, որը, թվում էր, ներաճել է տան մեջ: Սենյակում թափառող զեփյուռը ծածանում էր խունացած դրոշներ հիշեցնող վարագույրները մերթ դեպի դուրս, մերթ դեպի ներս, մերթ թոցնում վեր՝ դեպի առաստաղը, որը թանձր շաքարաիյութով ծածկված հարսանեկան կարկանդակ էր հիշեցնում, և ապա վետվետուն ստվերով թավալվում էր գինեգույն գորգի վրա, ինչպես քամին՝ ծովի մակերևույթին:

Սենյակի միակ անշարժ առարկան հսկայական մեծության բազմոցն էր, որի վրա՝ ասես խարիսխ գցած օդապարիկի մեջ, թառել էին երկու երիտասարդ կին: Նրանց սպիտակ զգեստները թրթռում էին ու ծփծփում, կարծես նրանց տերերը հենց նոր մի կարճ թռիչք գործած լինեին տան շուրջը: Հավանաբար ես մի պահ մնացի կանգնած՝ ունկնդիր վարագույրների թափահարմանը և պատի նկարի շխկշխկոցին: Ապա՝ չրրխկ, Թոմ Բյուքենենը փակեց առջևի պատուհանները, և թակարդն ընկած քամին հանդարտվեց սենյակում: Վարագույրները, գորգերն ու կանայք դանդաղ վայրէջք կատարեցին:

Կանանցից երիտասարդը անծանոթ էր ինձ: Նա ամբողջ մարմնով փռվել էր բազմոցի մի ծայրին, միանգամայն անշարժ, ծնոտը թեթևակի բարձրացրած, ասես ընկնելու պատրաստ ինչ-որ առարկա հավասարակշռելիս լիներ: Եթե անգամ նշմարեց ինձ, ապա միայն աչքի պոչով, սակայն ուշադրության չարժանացրեց: Չափազանց շփոթված՝ ես քիչ մնաց ներողություն մրմնջայի, որ իմ ներս գալով խանգարեցի նրան:

Մյուսը՝ Դեյզին, բարձրանալու փորձ արեց, մտահոգ արտահայտությամբ թեթևակի առաջ թեքվեց և իսկույն նեթ ծիծաղեց՝ կարճ, հմայիչ, անհերթեթ:

Ես նույնպես ծիծաղեցի ու շարժվեցի առաջ:

— Ես իսկնիքս թոցրել եմ երջանկությունից:

Նա կրկին ծիծաղեց, կարծես մի շատ սրամիտ բան ասած լիներ, և ձեռքս մի պահ սեղմելով՝ նայեց ուղիղ դեմքիս այնպիսի հայացքով, ասես աշխարհում չկար մեկը, որին այդքան տենչացած լիներ տեսնելու: Նա գիտեր այդպես նայել: Հետո շշուկով ավելացրեց, որ «հավասարակշռող» աղջկա ազգանունը Բեյքեր է: (Ասում են՝ Դեյզիի շշունջը ծուղակ է, որպեսզի խոսակցին ստիպի ավելի մոտ նստել: Անտեղի բամբասանք, որը նրա այդ խոսելաձևը չի զրկում հմայքից):

Ինչնիցե, օրիորդ Բեյքերի շրթունքները շարժվեցին, նա ինձ համարյա աննկատ գլխով արեց ու անմիջապես նորից հետ զցեց գլուխը. հավանաբար հավասարակշռող առարկան փոքր-ինչ տեղաշարժվել էր՝ նրան վախ պատճառելով: Կրկին պատրաստվեցի ներողություն խնդրելու: Բացարձակ ինքնավատահուության յուրաքանչյուր դրսևորում ինձ վրա միշտ շշմեցուցիչ ազդեցություն է գործում:

Ապա հետ նայեցի զարմուհուս, որն սկսեց իր հուզիչ ձայնով հարցեր տալ: Նրա ձայնը այնպիսին էր, որ շարունակ ուզում էիր լսել. ասես յուրաքանչյուր խոսքը երաժշտական մի դրվագ լիներ, որն այլևս չէր կրկնվելու: Նրա սիրունիկ թախծոտ դեմքը պայծառ դիմագծեր ուներ, պայծառ աչքեր և շարժուն, կրքոտ բերան, բայց նրա հուզիչ ձայնի մեջ շատ բան կար, և նրան սիրող տղամարդիկ չէին կարողանում մոռանալ երգեցիկ, տիրական շշուկով ասված «Լսիր»-ը, որը քիչ առաջվա ուրախության և զվարճության արձագանքն էր և հաջորդ վայրկյանի ուրախության և զվարճության խոստումը:

Ես պատմեցի, թե ինչպես Արևելք գալիս մի օր մնացել էի Չիկագոյում, և մի խումբ մարդկանց ողջույնները հաղորդեցի նրան:

— Ուրեմն ինձ կարոտում են,— ցնծագին գոչեց նա:

— Ողջ քաղաքն անմխիթար վիճակում է: Բոլոր մեքենաների հետևի ձախակողմյան անիվը սև է ներկված՝ որպես սգո նշան, և ամբողջ գիշեր հյուսիսային ավիով մեկ շարունակ լացուկոծ է լսվում:

— Ա՛յ քեզ հրաշք: Թո՛ւմ, ե՛կ վաղը հետ գնանք:— Ապա մի անսպասելի միտք հայտնեց:— Դու պետք է աղջկաս տեսնես:

— Հաճույքով:

— Բայց հիմա քնած է: Երեք տարեկան է փոքրիկս: Չես տեսել նրան:

— Ո՛չ:

— Դե, ուրեմն պետք է տեսնես: Նա...

Թո՛ւմ Բյուքենենը, որ մինչ այդ անհանգիստ պտույտ էր գալիս սենյակում, կանգ առավ, ձեռքը դրեց ուսիս:

— Ի՞նչ գործի ես, Նի՛ք:

— Վարկային գործ եմ անում:

— Ո՞ւմ մոտ:

Ասացի:

— Երբեք չեմ լսել,— մեծամտորեն նետեց նա:

Ես բարկացա:

— Կլսես,— կարճ պատասխանեցի:— Կլսես, եթե մնաս Արևելքում:

— Հանգիստ եղիր, կմնամ,— ասաց՝ նայելով Դեյզիին, ասպա՛ կրկին ինձ, ասես պատրաստվում էր հակահարձակման:— Ես այնքան էլ հիմար չեմ, որ գնամ այստեղից:

Այդ խոսքի վրա օրհորդ Բեյքերն ասաց. «Բացարձակապես», այնպես անսպասելի, որ ես վեր թռա: Սենյակ մտնելուցս ի վեր դա նրա արտաբերած առաջին բառն էր: Ըստ

երևոյթին, նա ինքն էլ նույնքան զարմացալ, ապա հորան-
ջեց և մի շարք արագ, ճարպիկ շարժումներով ոտքի ելալ:

— Փայտացել եմ,— գանգատովեց նա,— ինչքան կարե-
լի է պառկած մնալ բազմոցին:

— Ի՛նչ ես ինձ նայում,— առարկեց Դեյզին,— ես ամբողջ
օրն աշխատում էի քեզ Նյու Յորք տանել:

— Ո՛չ, շնորհակալ եմ,— ասաց օրիորդ Բեյքերը՝ նայելով
մտռանից հենց նոր բերած քոքթեյլներին:— Միցումների նա-
խօրեին չեմ խմում:

Տանտերը թերահավատ հայացք ձգեց նրա վրա:

— Ճի՛շտ,— նա մի կում արեց բաժակի պարունակու-
թյունը, կարծես եղածը մի կաթիլ լիներ:— Եվ ընդհանրա-
պես, դու ինչպէ՛ս ես որևէ արդյունքի հասնում, խելքս բան չի
կտրում:

Ես նայեցի օրիորդ Բեյքերին՝ մտածելով, թե նա ինչ ար-
դյունքի է հասնում: Մարդ բավականություն էր ստանում
նրան նայելուց: Նրբակազմ աղջիկ էր՝ փոքր կրծքով, ձիգ
կեցվածքով, որն ավելի էր ընդգծվում նորաթուխ կաղետի
նման ուսերը հետ զցելու նրա սովորությամբ: Մոխրագույն
արևաշող աչքերը փոխադարձ քաղաքավարի հետաքրքրա-
սիրությամբ զննում էին ինձ հրապուրիչ, դալուկ, քմահաճ
դեմքի բարձրությունից: Ինձ հանկարծ թվաց, որ մի տեղ տե-
սել եմ նրան կամ նրա լուսանկարը:

— Դուք Վեսթ Էզզոմ եք ապրում,— արհամարհաբար
հարցրեց նա:— Ես այնտեղ ծանոթներ ունեմ:

— Ես ոչ մեկին չեմ ճանաչում...

— Չի կարող պատահի, որ Գեթսբիին չիմանաք:

— Գեթսբի,— հարցրեց Դեյզին:— Ի՛նչ Գեթսբի:

Ես ուզեցի ասել, որ նա իմ հարևանն է, բայց չհասցրի.
մեզ ճաշի կանչեցին: Թո՛մ Բյուքենենը իր մկանուտ ձեռքով
հրամայաբար բռնեց արմունկս և ուժով ինձ դուրս տարավ
սենյակից, սեսս շախմատի խաղաքար էր տեղաշարժում մի
քառակուսուց մյուսը:

Անշտապ և նվաղուն, ձեռքերը թեթևակի հպած ազդրերին՝ երիտասարդ կանայք ուղղվեցին արևամուտին դեմ հանդիման բացված վարդագույն գավիթը, որտեղ ճաշասեղանին՝ թուլացող քամուն ընդառաջ, չորս դողդոջուն մոմեր էին վառվում:

— Այս ինչ մոմեր են,— դժգոհեց Դեյզին կնճռոտվելով և մատներով հանգրեց:— Երկու շաբաթ հետո տարվա ամենաերկար օրն է:— Եվ պայծառացած նայեց բոլորիս:— Պատահե՞լ է, որ դուք սպասեք տարվա ամենաերկար օրվան ու հետո մոռանաք: Ամեն տարի ինձ հետ նույն բանն է կատարվում:

— Եկե՛ք ինչ—որ բան կազմակերպենք,— հորանջեց օրիորդ Բեյքերը՝ սեղանի մոտ նստելով այնպես, կարծես անկողին էր մտնում:

— Եկե՛ք,— ասաց Դեյզին:— Իսկ ինչ:— Նա անօգնական դիմեց ինձ:— Իսկ ինչ կարելի է կազմակերպել:

Պատասխանի չսպասելով՝ հանկարծ նրա աչքերը սարսափահար գամվեցին իր ձկույթին:

— Նայե՛ք,— գանգատվեց նա,— մատս վիրավորել եմ:

Մենք բոլորս նայեցինք: Հողը սևացել էր ու կապտել:

— Դո՛ւ ես մեղավորը, Թո՛մ,— կշտամբեց նա:— Ես գիտեմ՝ դիտմամբ չես արել, բայց և այնպես, դու ես արել: Տեղն է ինձ, ո՞վ էր ասում ամուսնանամ կոշտ ու կոպիտ անձոռնի հսկայի հետ:

— Ես զգվում եմ այդ բառից,— բարկացած հակառակվեց Թոմը,— եթե նույնիսկ կատակով ես ասում, դարձյալ ինձ դուր չի գալիս:

— Անձոռնի,— պնդեց Դեյզին:

Երբեմն Դեյզին և օրիորդ Բեյքերը, առանց մեզ ձանձրույթ պատճառելու, միաժամանակ խոսում էին, և նրանց հեզնական անկապ շաղակրատանքը զրույցի չէր վերածվում ու պաղ էր նույնքան, որքան նրանց ճերմակ զգեստներն ու ցանկությունից միանգամայն զուրկ անտարբեր աչքերը:

Նրանք ներկա էին ճաշին և Թումին ու ինձ ընդունում էին քաղաքավարությունից դրդված՝ ճիգ գործադրելով զբաղեցնելու մեզ կամ իրենց: Նրանք գիտեին, որ շուտով ճաշը կավարտվի, իսկ քիչ անց դրա հետ մեկտեղ՝ նաև երեկոն, ու անփութորեն կարող են այն անցյալի գիրկը նետել: Արևմուտքում լրիվ ուրիշ պատկեր էր. այնտեղ միշտ հուզումով արագացնում են երեկոն, ժամ առ ժամ մղում դեպի ավարտը, որին սպասում ես և որից սարսափում:

— Դու ինձ ստիպում ես մոռանալ քաղաքակրթությունը, Դեյզի,— խոստովանեցի ես բավականին թունդ կարմիր գինու երկրորդ բաժակից հետո:— Չե՞ս կարող խոսել հացահատիկի կամ նման այլ բանի շուրջ:

Ես այդ դիտողությամբ որոշակի ոչինչ նկատի չունեի, բայց այն անսպասելի կերպով ընկալվեց:

— Քաղաքակրթությունը անկում է ապրում,— կատաղած պոռթկաց Թումը:— Ես հիմա սարսափելի հոռետես եմ դարձել: Կարդացել ես Գոդդարդի «Գունամորթ կայսրությունների վերելքը»:

— Ո՛չ, չեմ կարդացել,— պատասխանեցի՝ ապշած նրա հարցից:

— Հիանալի գիրք է, ամեն մարդ պետք է կարդա: Միտքը հետևյալն է. եթե սպիտակ ցեղը չզգուշանա, ապա ամբողջովին կձուլվի: Եվ դա գիտականորեն ապացուցված է:

— Թումը գնալով իմաստնանում է,— անկեղծ տխրությամբ նկատեց Դեյզին:— Նա երկար բառերով խելացի գրքեր է կարդում: Այն ի՞նչ բառ էր, որ մենք...

— Դրանք գիտական գրքեր են,— սրտնեղեց Թումը՝ անհամբեր հայացք նետելով կնոջը:— Այդ մարդը մշակել է մի ամբողջ տեսություն: Դա մեր՝ իշխող ցեղի գործն է՝ թույլ չտալ, որ այլ ցեղեր գլուխ բարձրացնեն:

— Մենք պետք է ջախջախենք նրանց,— շնչաց Դեյզին՝ կատաղությամբ թարթելով աչքերը բոցավառ արևի ճառագայթների ներքո:

— Եթե դուք Կալիֆոռնիայում ապրեիք... — սկսեց օրիորդ Բեյքերը, բայց Թոմն ընդհատեց նրան՝ աղմուկով շարժելով աթոռը:

— Բանն այն է, որ մենք հյուսիսցիներ ենք: Ես, դու, նա... — ակնթարթային վարանումից հետո Թոմը գլխի թեթևակի շարժումով Դեյզիին էլ ներառեց, իսկ Դեյզին նորից աչքով արեց ինձ: — ...Եվ մենք ենք ստեղծել այն բոլորը, ինչ քաղաքակրթություն է կոչվում՝ գիտություն, արվեստ ու նման բաներ: Պարզ է:

Ինչ—որ սրտառույզ բան կար Թոմի համառության մեջ, կարծես նրա ինքնագոհությունը, տարիքի հետ ավելի խորացած, այլևս չէր բավարարում նրան: Եվ հենց այն պահին, երբ ներսում գնգաց հեռախոսը, և ծառայապետը դուրս գնաց լսափողը վերցնելու, Դեյզին, օգտագործելով առիթը, թեքվեց դեպի ինձ:

— Ես քեզ մեր ընտանեկան գաղտնիքն ասեմ,— աշխույժ շնչաց նա: — Ծառայապետի քթի մասին է: Ուզո՞ւմ ես լսել նրա քթի պատմությունը:

— Հենց դրա համար եմ եկել:

— Դե, նա միշտ ծառայապետ չի եղել: Նյու Յորքում աշխատել է մի մարդու մոտ, որը երկու հարյուր հոգու համար արծաթյա սպասք է ունեցել: Եվ առավոտից մինչև երեկո փայլեցրել է ու փայլեցրել, մինչև վերջապես քիթը հիվանդացել է...

— Եվ գնալով գործը բարդացել է,— միջամտեց օրիորդ Բեյքերը:

— Այո՛, գնալով գործը բարդացել է, և նա ստիպված թողել է աշխատանքը:

Մի պահ վերջին արևաշողը հրաժեշտի ջերմությամբ դիպավ Դեյզիի շառագունած դեմքին: Ես առաջ թեքված ու շունչս պահած լսում էի: Հետո շողը խամրեց, և լույսի յուրաքանչյուր մասնիկ վարանոտ ափսոսանքով հեռացավ նրա-

նից հաճելի փողոցից մթնշաղին տուն դարձող երեխաների նման:

Ծառայապետը վերադառնալով ինչ-որ բան շնջաց Թումի ականջին: Թումը խոժոռվեց, հետ տարավ աթոռը և անխոս հեռացավ: Օգտվելով նրա բացակայությունից՝ Դեյզին գործի անցավ: Նա կրկին առաջ թեքվեց և ծորուն, երգեցիկ ձայնով վրա բերեց.

— Նիք, ես շատ ուրախ եմ, որ դու այստեղ ես, ինձ հետ: Դու նման ես, նման... դու նման ես վարդի, իսկական վարդի, ճիշտ եմ ասում, չէ:— Նա դիմեց օրիորդ Բեյքերին, որպեսզի վերջինս հաստատի ասածը:— Իսկական վարդի:

Այ՛քեզ ցնդաբանություն: Ես՝ ո՛ր, վարդը՝ ո՛ր: Նա խելքին եկածն ասում էր, բայց հուզիչ ջերմություն էր հորդում նրանից, կարծես նրա սիրտը, այդ շնչակտուր, զգլխիչ բառերից մեկի մեջ ամփոփված, ջանում էր նետվել դեպի քեզ: Հետո հանկարծ անձեռոցիկը զցեց սեղանին, ներողություն խնդրեց ու դուրս գնաց:

Օրիորդ Բեյքերն ու ես մի կարճ, անիմաստ հայացք փոխանակեցինք: Ես պատրաստվում էի բերանս բաց անելու, երբ նա ձգվեց աթոռին ու նախազգուշացնող ձայնով լռեցրեց ինձ: Մի խուլ, կրքոտ շշուկ էր լսվում դռան հետևից, և օրիորդ Բեյքերն առանց քաշվելու սկսեց ականջ դնել: Դողահար ձայնը մերթ լսելի էր դառնում, մերթ ոչ լսելի, ապա հուզված պոռթկաց ու վերջնականապես մարեց:

— Այդ պարոն Գեթսբին, որի անունը քիչ առաջ տվեցիք, իմ հարևանն է,— սկսեցի ես:

— Լռե՛ք: Ես ուզում եմ լսել, թե ինչ է կատարվում ներսում:

— Իսկ մի՞թե որևէ բան է կատարվում,— անմեղ հետաքրքրվեցի:

— Ուզում եք ասել՝ ոչինչ չգիտե՞ք,— անկեղծորեն զարմացավ օրիորդ Բեյքերը:— Ինձ թվում էր՝ բոլորը գիտեն:

— Ես չգիտեմ:

— Դե... — տատանվեց նա, — Թոմն ինչ-որ կնոջ հետ է կապված Նյու Յորքում:

— Ինչ-որ կնոջ հետ, — անիմաստ կրկնեցի:

Օրիորդ Բեյքերը գլխով արեց:

— Գոնե պատշաճություն ունենար ճաշի ժամին չգանգահարեր: Ճիշտ չեմ ասում:

Մինչ կհասկանայի նրա ասածը, լավեց զգեստի շոշյուն, կոշիկների քստքստոց, և Թոմն ու Դեյզին վերադարձան:

— Անհետաձգելի գործ էր, — շինծու ուրախությամբ գոչեց Դեյզին: Ապա նստեց, գննողաբար նայեց օրիորդ Բեյքերին, հետո ինձ ու շարունակեց: — Ես մի վայրկյանով դուրս գնացի: Այնքան լավ էր այնտեղ: Մարզի վրա թռչուն էր երգում, երևի ինչ-որ տեղից եկած սոխակ էր: Եվ ինչ էլ լավ էր երգում: — Նա ինքն էլ ասես գեղգեղում էր, ոչ թե խոսում: — Ռոմանտիկ է, չէ, Թոմ:

— Շանտ, — համաձայնեց Թոմը, ապա խեղճացած դիմեց ինձ: — Եթե ճաշից հետո լույս լինի, քեզ կտանեն ախոռ:

Հեռախոսը զիլ հնչեց ներսում, և քանի որ Դեյզին, վճռականորեն նայելով Թոմին, բացասաբար շարժեց գլուխը, ախոռի խոսակցությունն ու փաստորեն բոլոր խոսակցությունները հօդս ցնդեցին: Ճաշկերույթի վերջին փշրված հինգ բոպենների բեկորներում մեջս տպավորվեցին կրկին աննպատակ վառվող մոմերը, և ես ցանկություն զգացի դիմահար նայելու յուրաքանչյուրին, բայց այնպես, որ հայացքս չհանդիպի նրանց հայացքին: Ես Դեյզիի ու Թոմի միտքը գուշակել չէի կարող, բայց չեմ կասկածում, որ նույնիսկ օրիորդ Բեյքերը, իր բացարձակ թերահավատությամբ, հազիվ թե կարողանար մտքից հանել հեռախոսի՝ այդ հինգերորդ հյուրի սուր, մետաղային հապճեպությունը: Ուրիշ մեկին նման իրավիճակը զավեշտական կթվար, իսկ ես բնագոյաբար անմիջապես ոստիկանատուն զանգելու ցանկություն ունեցա:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ ձիերի մասին այլևս խոսք չեղավ: Մի քանի ոտնաչափ մթնշաղ էր բաժանում Թոմին ու օրիորդ Բեյքերին իրարից, որոնք վերադարձան գրադարան՝ կարծես հերթապահելու միանգամայն նյութեղեն հանգուցյալի կողքին, մինչդեռ ես, փորձելով հաճելիորեն հետաքրքրված, բայց փոքր-ինչ խուլ ձևանալ, հետևեցի Դեյզին՝ անցնելով իրարամերձ պատշգամբների շղթայով դեպի նախագավիթը, որի թանձր աղջամուղջի մեջ մենք կողք կողքի ընկղմվեցինք հյուսկեն բազմոցին:

Դեյզին գլուխն առավ ափերի մեջ, ասես շոշափելու սիրունիկ դեմքը, իսկ քիչ անց աչքերը հառեց թավշյա մթնշաղի խորքը: Ես տեսա, թե ինչպես անհանգիստ հուզմունք համակեց նրան, և փորձեցի շեղել՝ դատրիկի մասին խոսք բացելով:

— Մենք իրար լավ չենք ճանաչում, Նիք,— հանկարծ ասաց նա,— չնայած զարմիկներ ենք: Դու նույնիսկ իմ հարսանիքին ներկա չէիր:

— Ես դեռ պատերազմից չէի վերադարձել:

— Ճիշտ է:— Նա լռեց մի պահ:— Ես շատ եմ տառապել, Նիք, իսկ հիմա ոչնչի նկատմամբ հավատ չունեմ:

Ըստ երևույթին, նա հիմք ուներ այդպես ասելու: Ես սպասեցի, բայց նա այլևս չխոսեց. քիչ անց կրկին անհույս խոսք բացեցի աղջկա մասին:

— Երևի նա արդեն խոսում է... ուտում կամ նման բաներ անում:

— Դե իհարկե,— նա ցրված նայեց ինձ:— Լսիր, Նիք: Ես հիմա քեզ կպատմեմ, թե ինչ ասացի, երբ աղջկա ծնվեց: Ուզո՞ւմ ես լսել:

— Շահտ:

— Դու հիմա կիմանաս, թե ինչպես սկսեցի հասկանալ... ամեն ինչ: Աղջկա ծնվելուց մի ժամ էլ չէր անցել, իսկ Թոմն, Աստված գիտի, որտեղ էր: Աչքերս բացեցի՝ լքված ու մոռացված բոլորի կողմից, և անմիջապես հարցրի դայակին՝

տղամ է, թե՛ աղջիկ: Ասաց՝ աղջիկ է. ես շրջեցի գլուխս ու արտասպեցի: «Ի՛նչ լավ է: Ուրախ եմ, որ աղջիկ է: Հուսով եմ՝ հիմար կլինի: Այս աշխարհում աղջկա համար ամենալավ բանը գեղեցիկ հիմարիկ լինելն է»:

— Ինձ թվում է՝ կյանքում ոչ մի լավ բան չկա, — համոզված շարունակեց Դեյզին, — բոլորն էլ այդպես են մտածում: Նույնիսկ ամենախելացի, ամենաառաջադեմ մարդիկ: Եվ ես գիտեմ, որ այդպես է: Ես ամեն տեղ եղել եմ, ամեն ինչ տեսել, ամեն բան փորձել:— Նրա աչքերը մարտականորեն փայլատակեցին Թոմի աչքերի նման, և բացահայտ արհամարհանքով ծիծաղեց:

— Ա՛յ թե փորձառու եմ դարձել, հա՛, փորձառու:

Այն պահին, երբ նրա ձայնը, որն ուզում էր իմ ուշադրությունը և հավատը գրավել, կտրվեց, ես զգացի նրա ասածի ողջ կեղծությունը: Դա ինձ անհանգստացրեց. կարծես ամբողջ երեկոն մի տեսակ խաղ էր եղել ինձնից կարեկցանք կորզելու համար: Ես սպասեցի, և, իրոք, մի վայրկյան անց նրա սիրունիկ դեմքին շինծու գոհունակության ժպիտ գոյացավ, ասես նրան հաջողվել էր հաստատել իր անդամությունը բավականին հայտնի գաղտնի ընկերության, որին պատկանում էր նաև Թոմը:

* * *

Ներսում ալ կարմիր սենյակը լուսաթաթախ էր: Թոմը նստած էր երկար բազմոցի մի ծայրին, իսկ օրիորդ Բեյքերը՝ մյուս, և բարձրաձայն կարդում էր «*Saturday Evening Post*»-ը: Նրա մրմունջախառն բառերը շարվում էին կողք կողքի՝ սփռելով հանդարտություն: Լույսը շողշողում էր Թոմի երկարաճիտ կոշիկների վրա, խավարում օրիորդ Բեյքերի աշնան դեղնության մազերի մեջ, սահում էջերն ի վար, որ շրջվում էին աղջկա բազուկների թույլ մկանների թրթիռով:

Երբ ներս մտանք, նա, ձեռքը բարձրացնելով, մեզ լռելու նշան արեց:

— Շարունակությունը՝ հաջորդիվ,— և թերթը շարունակ
սեղանին:

Ծնկի անհանգիստ շարժումով նրա մարմինը հաստա-
տուն դիրք ընդունեց:

— Ժամը տասն է,— ժամանակը որոշելու համար նայե-
լով առաստաղին՝ ասաց նա:— Պատիկ աղջիկները պետք է
անկողին մտնեն:

— Ջորդանը վաղը Վեսթչեսթրում մրցության է մասնակ-
ցելու,— բացատրեց Դեյզին:

— Այդ դո՞ւք եք Ջորդան Բեյքերը:

Ես այժմ միայն հասկացա, թե ինչու էր այդքան ծանոթ
թվում նրա դեմքը, որի քմահաճ հեգնական ժպիտը հաճախ
աչքովս էր ընկել Աշվիլի, Հոթ Սփրինգզի և Փալմ Բիչի մար-
զական ամսագրերի բազմաթիվ էջերում: Ես նույնիսկ ինչ-որ
անդուր ու տգեղ պատմություն էի լսել նրա մասին, բայց վա-
ղուց մոռացել էի:

— Բարի գիշեր,— մեղմորեն մաղթեց նա:— Առավոտյան
ժամը ութին ինձ արթնացրե՛ք:

— Եթե վեր կենաս:

— Վեր կկենամ: Բարի գիշեր, պարո՞ն Քարավեյ: Մենք
դեռ կհանդիպենք:

— Իհարկե կհանդիպե՞ք,— հաստատեց Դեյզին:— Ես
մտածում եմ ձեզ ամուսնացնել: Շուտ-շուտ արի, Նիք: Ես
ձեզ... ինչպես են ասում... կմտերմացնեմ: Կամ միասին
կփակեմ սպիտակեղենի պահարանում, կամ մակույկով բաց
ծով կզգեմ, կամ էլ նման մի բան կանեմ:

— Բարի գիշեր,— ձայնեց օրիորդ Բեյքերը աստիճան-
ների վրայից:— Ես ոչ մի բառ չլսեցի:

— Լավ աղջիկ է,— քիչ անց ասաց Թոմը:— Պետք չէ
նրան թողնել, որ թափառական կյանք վարի:

— Իսկ ո՞վ չպետք է թողնի,— սառը հարցրեց Դեյզին:

— Նրա ընտանիքը:

— Նրա ընտանիքը բաղկացած է հարյուր տարեկան մորաքրոջից: Բացի այդ՝ սրանից հետո Նիքն է խնամելու նրան, ճիշտ չեմ ասում, Նիք: Այս ամառ Ջորդանը շաբաթ և կիրակի օրերը մեր տանն է անցկացնելու: Իմ կարծիքով ընտանեկան մթնոլորտը լավ ազդեցություն կունենա նրա վրա:

Դեյզին ու Թոմը մի պահ լուռ նայեցին միմյանց:

— Ջորդանը Նյու Յորքից է,— շտապեցի տեղեկանալ ես:

— Լուիսվիլից է: Մեր աղջկությունն այնտեղ է անցել: Իմ անհոգ, գեղեցիկ...

— Նիքի հետ ջերմ-ջերմ զրուցում էիր,— հանկարծ հարցրեց Թոմը:

— Ջրուցեցի՞նք որ:— Դեյզին նայեց ինձ:— Չեմ հիշում, բայց, կարծեմ, խոսեցինք հյուսիսային ցեղի մասին: Դե իհարկե խոսեցինք, մի տեսակ խոսելներս եկել էր ու անցավ...

— Մի՛ հավատա ամեն մի լսածիդ, Նիք,— խորհուրդ տվեց Թոմը:

Ես իմիջիայլոց ասացի, որ ոչինչ էլ չէի լսել, և քիչ անց ոտքի ելա հրաժեշտ տալու: Նրանք ինձ ուղեկցեցին մինչև դուռը, կանգնեցին կողք կողքի՝ լույսի պայծառ քառակուսու մեջ: Հենց մեքենայի շարժիչը սկսեց աշխատել, Դեյզին հրամայաբար ձայնեց.

— Սպասիր: Մոռացա մի կարևոր բան հարցնել քեզ: Ասում են՝ դու նշանված ես եղել Արևմուտքում:

— Ճիշտ է,— հաստատեց Թոմը բարեհոգաբար:— Մենք լսել ենք, որ դու նշանված ես եղել:

— Բամբասանք է: Ես աղքատ մարդ եմ, ամուսնանալ չեմ կարող:

— Բայց մենք լսել ենք,— պնդեց Դեյզին՝ ասես կրկին քացվելով ծաղկի պես:— Երեք հոգուց ենք լսել, այնպես որ սխալ լինել չի կարող:

Իհարկե, ես գիտեի, թե ինչ են նրանք ակնարկում, բայց ես հարսնացու անգամ չունեի: Այդ բամբասանքը շարժառիթներից մեկն էր, որի համար Արևելք էի եկել: Մարդ չի կարող լուրերի պատճառով չհանդիպել հին ընկերուհուն, բայց մյուս կողմից մտադրություն չունեի ամուսնանալու՝ տեղի տալով այդ լուրերին:

Նրանց ջերմ ընդունելությունը բավականին հուզեց ինձ, նույնիսկ նրանց հարստությունը նվազեց իմ աչքին, բայց և այնպես շփոթված և որոշակի տհաճությամբ ճանապարհ ընկա: Ինձ թվաց, որ Դեյզին հիմա երեխան գրկին դուրս կփախչի տնից, բայց, ըստ երևույթին, նա այդպիսի մտադրություն չուներ: Ինչ վերաբերում է Թոմին, ապա այն փաստը, որ «նա ինչ-որ մեկի հետ կապված է Նյու Յորքում», նվազ զարմանալի էր, քան այն, որ նա կարող էր ազդվել որևէ գրքից: Անհայտ մի բան նրան ստիպում էր կրծոտել հնամենի գաղափարների կեղևը, ասես նրա առողջ ինքնամեծարումը այլևս չէր սնուցում տիրատենչ սիրտը:

Արդեն խոր ամառ էր իջել ճամփեգրի պանդոկների տանիքների և ավտոտնակների առջև՝ ասֆալտի վրա, որտեղ լույսի լճակներում բենզինի կարմիր աշտարակներ էին ցցված: Երբ հասա Վեսթ Էզգի իմ տիրույթը, մեքենասու տեղավորեցի ծածկի տակ և որոշ ժամանակ նստեցի բակում՝ մի կողմ նետված խոտհունձ գլանի վրա: Քամին դադարել էր, գիշերը պայծառ էր, ձայներով առլեցուն, իսկ ծառերի մեջ թռչնաթևեր էին թափահարվում, և հողի հզոր փուքսերը լիարժեք կյանք էին ներարկում գորտերին, որոնց միալար կոկոռոցը տարածվում էր ամենուր: Շարժվող կատվի ուրվականը թրթռաց լուսնալույսի տակ, և երբ շրջեցի գլուխս, տեսա, որ մենակ չեի. հիսուն ոտնաչափ հեռու՝ հարևանիս առանձնատան առջևի մարզում, ձեռքերը գրպանները դրած մի կերպարանք դիտում էր աստղերի արծաթին տվող տաք դեղահատիկները: Նրա անկաշկանդ շարժումները, ոտքերի հաստատուն դիրքը խոտի վրա ինձ հուշեցին, որ նույն ինքը՝

պարոն Գեթաբին է դուրս եկել՝ որոշելու իր բաժինը տեղական երկնակամարում:

Ես մտադրվեցի ձայն տալ նրան: Այսօր ճաշին օրհորդ Բեյքերը խոսել էր նրա մասին, և դա բավական էր ներկայանալու համար: Բայց չձայնեցի, որովհետև հանկարծ նա զգացնել տվեց, որ գոհ է իր մենակությունից, ինչ-որ տարօրինակ շարժումով տարածեց ձեռքերը դեպի ջրի մթությունը, և չնայած հեռու էի նրանից, բայց կարող եմ երդվել, որ դողում էր: Ակամայից նայեցի նրա հայացքի ուղղությամբ և մենավոր կանաչ մի լույս զանազանեցի հեռվում՝ գուցե նավամատույցի ծայրին: Երբ շրջվեցի, Գեթաբին չքվել էր, ու կրկին մնացի մենակ անհանգիստ մթության մեջ:

1915.info

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Վեսթ Էզզից Նյու Յորք տանող ճանապարհի կեսից մայրուղին անակնկալ միանում է երկաթգծին և քառորդ մղոնի չափ վազ տալիս նրա կողքով՝ ասես խույս տալով հսկայական ամայի հողատարածությունից: Սա խարամի մարգագետինն է՝ մի զարմանահրաշ երկիր, որտեղ մոխիրը, ցորենի նման աճելով, վերածվում է դեզերի, բլուրների և զավեշտական պարտեզների, մի մարգագետին, որտեղ խարամն ընդունում է տների, ծխնելույզների, բարձրացող ծխի ձև և վերջապես գերբնական ճիգով փոխակերպվում մարդկանց, որոնք, հուշիկ շարժվելով, փլուզվում են փոշեբույր օդի մեջ: Ժամանակ առ ժամանակ մոխրագույն վագոնների մի շարք է սողում անտեսանելի երկաթգծերի վրայով, անձոռնի խզզոց արձակելով՝ կանգ առնում, և մոխրե մարդիկ կապարե բահերով անմիջապես վրա են հասնում՝ անթափանց ամպ բարձրացնելով, որը նրանց խորհրդավոր գործողությունները ծածկում է տեսադաշտից:

Սակայն քիչ անց այդ անհրապույր հողի անվերջ փշող մոխրագույն փոշու ամպերից վեր տեսանելի են դառնում բժիշկ Թ. Ջ. Էքլբերգի աչքերը: Բժիշկ Թ. Ջ. Էքլբերգի հսկայական աչքերը կապույտ են, իսկ նրանց ցանցաթաղանթը մեկ յարդ բարձրության է հասնում: Նրանք դեմքի վրայից չեն նայում, այլ ահռելի դեղին ակնոցի միջից, որը դրված է երևակայական քթին: Ամենայն հավանականությամբ ինչ-որ կատակասեր խելառ ակնաբույժ տեղադրել էր այն Քուինզի շրջանում լայն գործունեություն ծավալելու համար և ապա հավիտենական կուրության մատնվել կամ էլ թողել հեռացել: Բայց արևի ու անձրևի տակ անգույն օրերից փոքր-ինչ աղո-

տացած անքերը առաջվա պես խորհրդածում են մռայլ աղբակույտի գլխին:

Խարամի մարգագետինը մի կողմից հարում է ապականված գետակին, և երբ կամուրջը բարձրանում է՝ ճանապարհ տալու լաստանավերին, ուղևորները երբեմն մոտ կես ժամ դիտում են այդ անհրապույր տեսարանը: Այստեղ միշտ գնացքները առնվազն մեկ բոպետով կանգ են առնում, և դրա շնորհիվ էր, որ առաջին անգամ հանդիպեցի Թոմ Բյուքենենի սիրուհուն:

Այն փաստը, որ նա սիրուհի ուներ, կասկածի ենթակա չէր Թոմին ճանաչողների շրջանում: Նրա ծանոթները վրդովված պատմում էին, որ Թոմը սիրուհու հետ հայտնվում էր հանրահայտ ռեստորաններում և, թողնելով նրան սեղանի մոտ, այս ու այն կողմ գնում՝ շաղակրատելով ում հետ պատահեր: Չնայած ինձ հետաքրքիր էր այդ կնոջը տեսնելը, սակայն նրա հետ ծանոթանալու ցանկություն չունեի, բայց և այնպես մեր ծանոթությունը ստացվեց: Մի օր գնացքով Թոմի հետ Նյու Յորք էի գնում: Երբ հասանք խարամի կույտերին, նա տեղից ցատկեց և բռնելով արմունկս՝ բառացիորեն դուրս հանեց ինձ գնացքից:

— Իջնում ենք,— պնդեց նա:— Ես ուզում եմ քեզ ծանոթացնել ընկերուհուս հետ:

Ըստ երևույթին, ճաշին Թոմը մեծ քանակությամբ ուտելիք էր ամբարել ստամոքսում և օրն ինձ հետ անցկացնելու նրա վճիռը հավասարվել էր բռնության: Նրա ինքնավստահ ենթադրությամբ՝ կիրակի ցերեկը ես ուրիշ անելիք չունեի:

Ստիպված հետևեցի նրան. մենք անցանք երկաթգծի կողքով ձգվող սպիտակեցրած ցածր պատի վրայով, ապա հարյուր յարդ հետ գնացինք բժիշկ Էքլերգի ճնշող հայացքի ներքո: Դեղին աղյուսից պատրաստված փոքր տների շարքը միակ բնակավայրն էր ամայի հողակտորի եզրին, որին միանում էր յուրատեսակ, բացարձակապես ոչ մի տեղ չտանող և ոչ մի փողոցի հետ չհատվող գլխավոր փողոցը: Տնակներից

մեկն այժմ վարձով տրվող խանութ էր, մյուսը՝ գիշերային ռեստորան, որին կարելի էր մոտենալ՝ անցնելով մոխրապատ արահետը, երրորդը ավտոտնակ էր՝ «Վերանորոգում: Ջորջ Բ. Վիլսոն: Այստեղ գնվում և վաճառվում են մեքենաներ» ցուցանակով: Եվ ես, հետևելով Թոմին, մտա ներս: Սրահը դատարկ էր ու անհրապույր: Միակ տեսանելի մեքենան կիսամութ անկյունում կույզ եկած փոշեծածկ «Ֆորդի» կմախքն էր: Ես մտածում էի, թե այդ ավտոտնակի նման շինությունը չի սքողում արդյոք վերնահարկի խորհրդավոր ու շքեղ հարկաբաժինները, երբ տերը հայտնվեց գրասենյակի դռանը՝ ձեռքերը սրբելով լաթի կտորով: Նա շեկ մարդ էր, անկյանք ու անարյուն, բայց և այնպես ինչ-որ հաճելի բան կար նրա արտաքինի մեջ: Մեզ տեսնելուն պես մի տարտամ հույս ցուլաց նրա բաց կապույտ աչքերում:

— Ողջոյն, բարեկամ,— Թոմը ուրախ թփթփացրեց նրա ուսին:— Գործդ լավ է առաջ գնում:

— Բողոք չունեմ,— անհամոզիչ ձայնով ասաց Վիլսոնը:— Երբ ես ինձ ծախում մեքենադ:

— Եկող շաբաթ: Վարորդս մի քիչ գործ ունի վրան:

— Դանդաղ է աշխատում:

— Հեչ էլ չէ,— սառը նետեց Թոմը:— Եթե չես ուզում սպասել, ուրիշին կծախես:

— Ո՛հ, ի՛նչ ես ասում,— արագ վրա բերեց Վիլսոնը:— Ես այդ չէի ուզում ասել...

Նրա ձայնը մարեց, իսկ Թոմը անհամբերությամբ նայեց շուրջը: Ապա ոտնաձայն լսվեց աստիճանների վրա, և քիչ անց մի կնոջ հաստավուն կերպարանքը փակեց գրասենյակի դռնից եկող լույսը: Նա երեսունհինգ տարեկան կլինեք, լիքը-լիքը, սակայն իր ավելորդ քաշը կրում էր հեշտասիրաբար, ինչպես որոշ գեր կանայք: Մուգ կապույտ պուտավոր մետաքսյա զգեստից վեր նրա դեմքը չուներ ոչ մի գեղեցիկ կամ ուղիղ դիմագիծ, բայց նրա ողջ էությունից բուրում էր անմիջական կենսախնդություն, ասես մարմնի մկաններում

անդադրում կրակ էր ցուլցում: Նա հանգիստ ժպտաց և, անցնելով ամուսնու կողքով, կարծես վերջինս ուրվական լինելը, թորվեց Թոմի ձեռքը՝ նայելով ուղիղ աչքերին: Ապա թրջեց շրթունքները և առանց շրջվելու մեղմ, թավ ձայնով դիմեց ամուսնուն.

— Աթոռներ բեր, որ մարդիկ նստեն:

— Հիմա,— Վիլսոնը շտապ նետվեց դեպի իր փոքրիկ բույնը՝ անմիջապես ձուլվելով պատերի գույնին: Մոխրափոշով էին պատված նրա մուգ շորերը, անգույն մագերը, ինչպես նաև ամեն ինչ շրջակայքում՝ բացի կնոջից, որն այժմ խիստ մոտ էր կանգնած Թոմին:

— Ես ուզում եմ քեզ տեսնել,— տիրաբար ասաց Թոմը:— Կգաս հաջորդ գնացքով:

— Լավ:

— Կսպասեմ թերթերի կրպակի մոտ՝ ներքևի աստիճանների վրա:

Կինը գլխով արեց և հեռացավ նրանից, հենց որ Ջորջ Վիլսոնը, երկու աթոռ բռնած, երևաց գրասենյակի դռանը:

Մենք սպասեցինք նրան ճանապարհին՝ աչքից հեռու: Հուլիսի չորսի տոնը մոտենում էր, և մի գորշ, ոսկրոտ իտալացի երեխա ինքնաշարժ ջրականներ էր շարում երկաթգծերի երկայնքով:

— Սարսափելի տեղ է, չէ՞,— Թոմը անբարեհամբույր հայացք փոխանակեց բժիշկ Էքլերգի հետ:

— Ահավոր:

— Դրա համար էլ նա դուրս է գալիս ցրվելու:

— Իսկ ամուսինը չի առարկում:

— Վիլսոնը: Նրան թվում է, թե կինը գնում է Նյու Յորք՝ քրոջ տուն: Տխմարի մեկն է. նույնիսկ չի նկատում, որ ապրում է աշխարհի երեսին:

Այսպիսով՝ Թոմ Բյուքենենը, նրա սիրուհին և ես միասին գնացինք Նյու Յորք, ավելի ձիշտ՝ ոչ միասին, քանի որ տիկին Վիլսոնը հավուր պատշաճի ուրիշ վագոն նստեց: Թո-

մը գնաց նման զիջման ի սեր փափկանկատության այն իսթեզգցիների, որոնք հավանաբար գնացքում կլինեին: Երբ Նյու Յորքի կառամատույցում Թոմը տիկին Վիլսոնին օգնեց իջնել գնացքից, վերջինս շագանակագույն նախշերով մուսլինե զգեստով էր, որը կիպ գրկում էր նրա բավականին լայն կոնքերը: Թերթերի կրպակից տիկին Վիլսոնը գնեց «Թաուն Թեթլ»-ի և կինոամսագրի մեկական օրինակ, իսկ դեղատնից՝ սառը քսուք ու մի շիշ օծանելիք: Վերևում՝ կայարանի ծածկած ելքի մոտ՝ կիսախավարի դղրոյունի մեջ, նա չորս տաքսի բաց թողեց, մինչև ընտրեց գորշ պաստառով նարդոսագույն մի նոր մեքենա, որը մեզ տարավ հեռու կայարանի ամբոխից՝ դեպի շողշողուն արևալույսը: Եվ անմիջապես նա կտրուկ շրջվեց պատուհանից ու առաջ թեքվելով՝ թխկթխկացրեց առջևի ապակուն:

— Շուն եմ ուզում,— լուրջ ասաց նա:— Ուզում եմ, որ տանս մեջ շուն լինի: Տունն առանց շան...

Վարորդը հետ քշեց մեքենան, և մենք հավասարվեցինք ձերմակահեր ծերունուն, որն անհերթեթ կերպով նմանվում էր Ջոն Դ. Ռոքֆելլերին: Նրա վզից կախ տված զամբյուղի մեջ իրար էին սեղմվել անորոշ ցեղի տասնյակ նորածին քոթոթներ:

— Ինչ շներ ունեք,— անհամբեր հարցրեց տիկին Վիլսոնը, երբ ծերուկը մոտեցավ մեքենայի պատուհանին:

— Զանազան: Ինչպիսին եք ուզում, տիկին:

— Ոստիկանի շուն եմ ուզում: Երևի չունենաք:

Մարդը կասկածանքով նայեց զամբյուղի մեջ, ձեռքը մտցրեց և մի գալարուն շնիկի վզից բռնած հանեց:

— Դա ոստիկանի շուն չէ,— ասաց Թոմը:

— Միգուցե,— ծերուկի ձայնի մեջ հիասթափություն զգացվեց:— Սա ավելի շուտ էրդելթերիեր է: Նա ձեռքը տարավ քոթոթի մեջքի շագանակագույն բիզ-բիզ մազերի վրայով:— Մորթուն նայեք: Ինչ մազ ունի: Այսպիսի մորթի ունեցող շունը երբեք չի մրսի և ձեզ նեղություն չի տա:

— Լավիկն է,— աշխույժ վրա տվեց տիկին Վիլսոնը:— Ի՞նչ արժե:

— Այս շո՞ւնը,— ծերուկը հիացած նայեց շանը:— Այս շու-
նը ձեզ համար տասը դոլար կարժենա:

Ապշեցուցիչ սպիտակության թաթեր ունեցող էրդելթե-
րիերը, որի նախնիներից մեկն անկասկած գտարյուն եղած
կլիներ, ձեռքից ձեռք անցավ ու բազմեց տիկին Վիլսոնի
ծնկին, որտեղ նրա ցրտադիմացկուն մորթին արժանացավ
փաղաբուշ շոյանքի:

— Տղա՛ է, թե՛ աղջիկ,— փափկանկատ հարցրեց նա:

— Այս շո՞ւնը: Տղա է:

— Քած է,— վճռական ասաց Թոմը:— Ա՛ն քո փողը: Գնա՛
մի տասը շուն առ դրանով:

Մենք մտանք Հինգերորդ պողոտա՝ այնքան հանգիստ
ու խաղաղ, համարյա հովվերգական այդ կիրակնօրյա կես-
օրին, որ չէի գարմանա, եթե անկյունից սպիտակ ոչխարների
մի մեծ հոտ դուրս գար:

— Մի րուպե կանգնե՛ք,— ասացի:— Իջնում եմ:

— Չես իջնի,— արագ ընդմիջեց Թոմը:— Միրթըլը կնե-
ղանա, եթե չգաս: Ճիշտ չե՛մ ասում, Միրթըլ:

— Գնացի՛նք,— պահանջեց Միրթըլը:— Ես կգանգեմ
Քեթրինին: Ասում են՝ քույրս շատ գեղեցիկ է:

— Մեծ սիրով կգալի, բայց...

Մենք շարժվեցինք հետ, նորից անցանք զբոսայգին ու
սլացանք Արևմտյան հարյուրերորդ փողոցների կողմը: Հա-
րյուր հիսունութերորդ փողոցում մեքենան արգելակեց ու
կանգ առավ ձերմակ թխվածք հիշեցնող միանման շենքերի
առջև: Տունդարձի արքայական հայացք ձգելով շուրջը՝ տի-
կին Վիլսոնը գրկեց շանը, մյուս գնումները ու գոռոզ ներս
մտավ:

— Մըք-Քիներին իմաց տամ՝ գան,— վերելակ մտնելուն
պես հայտարարեց նա,— քրոջս էլ կգանգեմ:

Բնակարանը վերնահարկում էր՝ բաղկացած փոքրիկ հյուրասենյակից, փոքրիկ ճաշասենյակից, փոքրիկ ննջարանից ու լողարանից: Հյուրասենյակը ծայրեծայր լեցուն էր կահույքով, որը հազիվ էր տեղավորվում սենյակում, այնպես որ շարժվելը նշանակում էր անվերջ սայթաքել՝ դիպչելով պաստառի՝ Վերսալի պարտեզում ձոճվող տիկնանց: Պատերը մերկ էին՝ չհաշված չափից դուրս մեծացրած միակ լուսանկարը, որն, ըստ երևույթին, աղոտ գծագրվող ժայռին բազմած հավ էր: Հեռվից նայելիս հավը գլխարկ էր դառնում, որի տակից գլխահակ գիրուկ ձեր տիկնոջ դեմքն էր ժպտում: Սեղանին դրված էին «Թաուն Թեթլ»-ի հին օրինակները, «Սիմոն, որ Պետրոս է կոչվում» գիրքը և Բրոդվեյում աղմուկ հանած մի քանի ամսագիր: Տիկին Վիլսոնը սկզբում զբաղվեց շնով: Անբարեհամբույր վերելակավարը գնաց մի արկղ ծղոտ և կաթ բերելու, որին սեփական նախաձեռնությամբ ավելացրեց մի տուփ կարծր պաքսիմատ. դրանցից մեկը հետո ամբողջ օրը անտարբերությամբ թթվում էր կաթով լի ամանում: Մինչ այդ Թոմը կողպած պահարանից հանեց վիսկիի շիշը:

Ես կյանքումս երկու անգամ եմ հարբած եղել: Երկրորդ անգամ այդ օրն էր, և այն ամենը, ինչ պատահեց, պարուրված է թանձր, միզամած մուժով, թեև մինչև ժամը ութը բնակարանը ողողված էր պայծառ արևալույսով: Թոմի ծնկին նստած՝ տիկին Վիլսոնը հեռախոսով մի քանի հոգու հրավիրեց: Հետո սիգարետները վերջացան, և ես գնացի անկյունի դեղատունը: Երբ հետ եկա, նրանք անհետացել էին, այնպես որ հուշիկ նստեցի հյուրասենյակում և կարդացի մի գլուխ «Սիմոն, որ Պետրոս է կոչվում» գրքից: Կամ նյութն էր ձանձրալի, կամ էլ վիսկին էր աղավաղում ամեն ինչ, որովհետև ոչինչ չհասկացա կարդացածիցս:

Հենց որ Թոմն ու Միրթլը (առաջին բաժակից հետո մենք միմյանց անունով էինք դիմում) վերստին հայտնվեցին, հյուրերը սկսեցին ժամանել:

Քույրը՝ Քեթրինը, երեսունին մոտ նրբակազմ, աշխարհիկ օրհորդ էր՝ խիտ, կարճ կտրած կարմիր մազերով և դիմափոշու շնորհիվ կաթի պես ճերմակ երեսով: Նրա հոնքերը պոկոտած էին և անփութորեն կրկին գծած: Սակայն նախկին ձևը վերականգնելու բնության ճիգերը դեմքին որոշակի ճապաղություն էին տալիս: Շարժվելիս նրա անթիվ-անհամար կավե ապարանջանները, վեր ու վար գալով թևերի վրա, անդադրում շխշխկում էին: Նա այնպիսի տիրական հապճեպությամբ ներս մտավ ու այնպիսի սեփականատիրական զգացումով նայեց կահկարասուն, որ ես մտածեցի, թե այստեղ է ապրում: Բայց երբ այդ մասին հարցրի, նա անզուսպ ծիծաղեց, բարձրաձայն կրկնեց հարցը և ասաց, որ ապրում է հյուրանոցում ընկերուհու հետ:

Պարոն Մըք-Քին՝ ներքևի հարևանը, գունատ մարդ էր՝ կանացի արտաքինով: Հենց նոր էր սափրվել, որովհետև այտոսկրին օձառի փրփուր էր կպած: Նա հարգանքով մեկառմեկ ողջունեց բոլորին: Իսկ ինձ տեղեկացրեց իր «արվեստի աշխարհին» պատկանելը, որից հետո միայն գլխի ընկա, որ լուսանկարիչ է. ինքն էր անհաջող մեծացրել տիկին Վիլսոնի մոր նկարը, որը աստղային մարմնի պես սավառնում էր պատի վրա: Նրա կինը փխրուն, գեղեցիկ արարած էր, բայց ճղճղան ու սարսափազդու: Նա ինձ հպարտությամբ պատմեց, որ ամուսնությունից ի վեր ամուսինը լուսանկարել է իրեն հարյուր քսանյոթ անգամ:

Տիկին Վիլսոնը հասցրել էր փոխվել և այժմ հագել էր կրեմագույն շիֆոնե շքեղ զգեստ, որն անվերջ շրշում էր, երբ նա սուրում էր սենյակով մեկ: Զգեստի ազդեցության տակ նրա անձը նույնպես փոփոխության էր ենթարկվել: Ուժեղ կենսախնդրությունը, որն այնքան աչքի զարնող էր ավտոտնակում, վերածվել էր հանդուգն ամբարտավանության: Նրա ծիծաղը, շարժումները, ինքնավստահ խոսքերը վայրկյան առ վայրկյան դառնում էին ավելի ու ավելի սեթևեթ, և քանի նա ընդարձակվում էր, սենյակը գնալով փոքրանում էր նրա

չորսրոլորը, մինչև վերջապես ծխով լի տարածության մեջ կարծես դարձավ իր աղմկարար, ճոճոան առանցքի շուրջ պտտվող մարմին:

— Սիրելիս,— ասում էր նա քրոջը բարձր, ճղճղան ձայնով,— մարդիկ ամեն թույն պատրաստ են քեզ խաբելու. նրանց միակ մտածմունքը փողն է: Անցյալ շաբաթ մի կին եկավ՝ ոտքերս կարգի բերելու, և երբ վարձը պահանջեց, կարելի էր մտածել, որ կույրաղիքս էր հեռացրել:

— Ի՞նչ է այդ կնոջ անունը,— հարցրեց տիկին Մըք-Քին:

— Տիկին Էբերհարթ: Նա տներն է գնում՝ մարդկանց ոտքերը խնամելու:

— Ի՞նչ գեղեցիկ շոր ես հագել,— նկատեց տիկին Մըք-Քին:— Ինձ շատ է դուր գալիս:

Տիկին Վիլսոնը հերքեց հաճոյախոսությունը հոնքերի արհամարհական շարժումով:

— Հին, անպետք շոր է: Մեկ-մեկ հագնում եմ, երբ միևնույնն է, թե ինչ տեսք կունենամ:

— Ինչ ուզում ես ասա՛, քեզ շատ է սազում,— պնդեց տիկին Մըք-Քին:— Եթե Չեսթերը կարողանա քեզ այդ դիրքով նկարել, երևի մի լավ բան կստացվի:

Մենք բոլորս լուռ նայեցինք տիկին Վիլսոնին, որը աչքերի վրայից հեռացրեց մազափունջը և պայծառ ժպիտով նայեց մեզ: Պարոն Մըք-Քին գլուխը մի կողմ թեքած անթարթ զննեց նրան, ապա ձեռքը դանդաղ հետուառաջ տարավ իր դեմքի առջև:

— Լույսը պետք է փոխել,— քիչ անց ասաց նա,— որ դիմագծերը լավ դուրս գան: Կաշխատեմ ետևի մազերն էլ հանել:

— Եթե քո տեղը լինեի, լույսը չէի փոխի,— գոչեց տիկին Մըք-Քին,— ես կարծում եմ...

Ամուսինը լռեցրեց նրան, և մենք բոլորս նորից նայեցինք նկարվող անձնավորությանը, իսկ Թոմ Բյուքենենը այդ պահին բարձր հորանջեց ու ոտքի ելավ:

— Լավ կլիներ, որ դուք ամուսիններով մի բան խմեիք: Միրթթ, սառույց և հանքային ջուր բեր, թե չէ մարդկանց բու- նը տանում է:

— Ես արդեն պատվիրել եմ,— Միրթթը հուսահատ բարձրացրեց հոնքերը՝ ի նշան դժգոհության ստորին խա- վից:— Ա՛խ, այդ ծառաները: Դրանց պետք է շարունակ հսկես:

Միրթթը նայեց ինձ ու անհմաստ ժպտաց: Հետո նետ- վեց շնիկի վրա, կրքոտ համբուրեց ու արշավեց խոհանոց, ասես մի խումբ խոհարարներ իր հրամաններին էին սպա- սում:

— Ես Լոնգ Այլընդում մի քանի հաջող նկար եմ արել,— ինքնագոհ հայտարարեց պարոն Մըք-Քին:

Թումը բութ նայեց նրան:

— Դրանցից երկուսը նույնիսկ կախված են մեր տանը:

— Երկու ի՞նչ,— հարցրեց Թումը:

— Երկու նկար: Մեկը կոչվում է «Մոնթոք հրվանդան: Ճայերը», մյուսը՝ «Մոնթոք հրվանդան: Ծովը»:

Քեթրինը նստած էր կողքիս՝ բազմոցին:

— Դո՞ւք էլ եք Լոնգ Այլընդում ապրում,— հետաքրքրվեց նա:

— Ես ապրում եմ Վեսթ Էզգում:

— Իսկապե՞ս: Մոտ մեկ ամիս առաջ ես գնացել էի այն- տեղ երեկույթի Գեթսբի անունով մեկի տանը: Ճանաչո՞ւմ եք:

— Իմ հարևանն է:

— Ասում են՝ նա Վիլիելմ կայզեր քրոջ որդին է, թե գար- միկը: Ահա թե որտեղից են նրա փողերը:

— Իրո՞ք:

Նա գլխով արեց:

— Ես նրանից վախենում եմ: Չէի ցանկանա հետը գործ ունենալ:

Հանկարծ տիկին Մըք-Քին, մատնացույց անելով Քեթ- րինին, ընդհատեց հարևանիս մասին ասված այս զվարճալի տեղեկությունը:

— Չեսթնր, գուցե նրան էլ նկարես,— մեջ ընկավ նա, բայց պարոն Մըք-Քին միայն իմիջիայլոց գլխով արեց ու շրջվեց դեպի Թոմը:

— Ես նորից եմ ուզում աշխատել Լոնգ Այլընդում, եթե իհարկե առիթը ներկայանա: Միայն թե ինչ-որ մեկն օգնի ինձ սկզբում:

— Խնդրիր Միրթլին,— Թոմը մի քրքիջ արձակեց: Այդ պահին սկուտեղը ձեռքին ներս մտավ տիկին Վիլսոնը:— Նա քեզ հանձնարարական նամակ կտա: Ճիշտ չեմ ասում, Միրթլ:

— Ինչ կտամ,— ցնցվեց նա:

— Դու Մըք-Քին հանձնարարական նամակ կտաս, որ գնա ամուսնուդ մոտ և մի քանի նկար անի:— Թոմի շրթունքները մի պահ շարժվեցին անձայն, ապա արտաբերեց՝ «Զորջ Բ. Վիլսոնը բենզակայանի առջև» կամ նման մի բան:

Քեթրինը մոտ նստեց ինձ ու շնչաց ականջիս.

— Տանել չեն կարող իրենց զույգին:

— Միթե:

— Տանել չեն կարող:— Քեթրինը նայեց Միրթլին, ապա Թոմին:— Ուզում եմ ասել՝ ինչ կարիք կա այդպես ապրել: Եթե ես նրանց տեղը լինեի, կրաժանվեի ու անհապաղ կամուսնանայի սիրածս մարդու հետ:

— Նա էլ Վիլսոնին չի սիրում:

Պատասխանը անսպասելի էր: Միրթլը, որ լսել էր խոսակցությունը, ինքը պատասխան տվեց՝ կոպիտ ու անվայելույ:

— Տեսնում եք,— ասաց Քեթրինը հաղթական: Նա կրկին ցածրացրեց ձայնը:— Թոմի կինն է պատճառը: Նա կաթոլիկ է և չի ընդունում ամուսնալուծությունը:

Դեյզին կաթոլիկ չէր: Ինչ հնարամիտ սուտ:

— Երբ նրանք ամուսնանան,— շարունակեց Քեթրինը,— կգնան Արևմուտք և կապրեն այնտեղ որոշ ժամանակ, մինչև ամեն ինչ անցնի, մոռացվի:

— Ավելի լավ կլիներ Եվրոպա գնալ:

— Ձեզ դո՞ր է գալիս Եվրոպան,— զարմացած բացականչեց նա:— Վերջերս եմ վերադարձել Մոնտե Կառլոյից:

— Իսկապե՞ս:

— Անցյալ տարի: Ընկերուհուս հետ էինք գնացել:

— Երկա՞ր մնացիք:

— Ո՛չ: Միայն գնացինք Մոնտե Կառլո ու հետ դարձանք:

Անցանք Մարսելով: Հազար դոլարից ավելի փող ունեինք, բայց երկու օրում մեզ կողոպտեցին խաղատներում: Մի կերպ տուն հասանք: Հիշել անգամ չեմ ուզում: Տեր Աստված, ինչպես եմ ատում այդ քաղաքը:

Մի պահ երեկոյան արևը Միջերկրականի մեղրալագուրի պես փայլատակեց պատուհանի մեջ, բայց անմիջապես տիկին Մըք-Քիի սուր ձայնը ինձ հետ բերեց հյուրասենյակ:

— Ես էլ քիչ էր մնում սխալ գործեի,— աշխույժ հայտարարեց նա:— Քիչ էր մնում ամուսնանալի այդ ողորմելի հրեայի հետ, որը տարիներ շարունակ հետևիցս էր ընկել: Գիտեի, որ ինձնից ցածր է: Բոլորն ասում էին. «Լյուսիլ, այդ մարդը քեզ համապատասխան չէ», բայց եթե Չեսթերին չհանդիպեի, նա ինձ հաստատ կհամոզեր:

— Ճիշտ է,— Միրթլ Վիլսոնը տմբտմբացրեց գլուխը,— բայց դու չամուսնացար նրա հետ:

— Այո՛, չամուսնացա:

— Իսկ ես ամուսնացա,— երկիմաստ ասաց Միրթլը:— Դա է իմ ու քո դեպքերի միջև եղած տարբերությունը:

— Իսկ դու ինչո՞ւ ամուսնացար, Միրթլ,— հարցրեց Քեթրինը,— ո՞վ էր քեզ ստիպում:

Միրթլը խորհեց մի պահ:

— Ես ամուսնացա, որովհետև կարծում էի, որ նա ազնիվ մարդ է,— վերջապես պատասխանեց նա:— Կարծում էի՝ գաղափար ունի դաստիարակության մասին, իսկ նա կոշիկիս տակի ցեխն անգամ չարժեր:

— Մի ժամանակ խելքդ գնում էր նրա համար,— ասաց Քեթրինը:

— Խելքս գնում էր,— վրդովվեց Միրթըլը:— Ո՞վ ասաց՝ խելքս գնում էր: Իմ խելքը նրա համար այնքան էր գնում, որքան այս մարդու համար:

Նա հանկարծ ինձ մատնացույց արեց, և բոլորի մեղադրական հայացքները գամվեցին վրաս: Ես իմ դեմքի արտահայտությամբ փորձեցի ցույց տալ, որ դեր չեմ խաղացել նրա անցյալում:

— Ես խելքս թոցրել էի այն ժամանակ միայն, երբ ամուսնացա: Եվ անմիջապես հասկացա, որ սխալ եմ գործել: Նա ընկերոջ կոստյումն էր հագել հարսանիքին ու ինձ էլ չէր ասել: Մի քանի օր անց ընկերը եկավ կոստյումը վերցնելու, իսկ նա տանը չէր:— Միրթըլը նայեց շուրջը՝ տեսնելու, թե ով է իրեն լսում:— «Դա Ձեր կոստյումն է,— հարցրի:— Առաջին անգամ եմ լսում»: Բայց և այնպես տվեցի, հետո ընկա անկողնուն ու ձայնս գլուխս զգած՝ ոռնացի մինչև գիշեր:

— Միրթըլը լավ կանի՝ բաժանվի նրանից,— եզրակացրեց Քեթրինը՝ կրկին ինձ դիմելով:— Արդեն տասնմեկերորդ տարին է, ինչ նրանք ապրում են ավտոտնակի վրայի այդ տանը: Եվ Թոմը նրա առաջին սիրեկանն է:

Նախ՝ վիսկիի մի շիշ, ապա՝ երկրորդը ձեռքից ձեռք անցավ: Միայն Քեթրինն էր անտարբեր խմիչքի նկատմամբ՝ ասելով, որ ինքն առանց այդ էլ լավ է զգում իրեն: Թոմը զանգահարեց հարկի աշխատողին և ուղարկեց նրան ինչ-որ հոշակավոր կարագահացեր բերելու, որոնք փոխարինեցին ընթրիքին: Ես ուզում էի գնալ այգի զբոսնելու մեղմ մթնշաղի մեջ, բայց ամեն անգամ, երբ փորձում էի ոտքի ելնել, ներգրավվում էի կատաղի վիճաբանության մեջ, որն ասես պարաններով հետ էր քաշում ինձ դեպի աթոռը: Սակայն մթնող փողոցներում մեր լուսավորված պատուհանները պետք է որ մարդկային գաղտնիքի իրենց բաժինը ունենային պատահական անցորդի համար, և ես այդ վեր նայող ու խորհրդա-

ծող անցորդն էի: Ես միաժամանակ և ներսում էի, և դրսում՝ հմայված ու խրտնած կյանքի անհատնում զանազանությունից:

Միրթլն աթոռը մոտեցրեց ինձ, և հանկարծ նրա ջերմ շնչի հետ մեկտեղ ինձ ողողեց Թումի հետ առաջին հանդիպման պատմությունը:

— Գնացքում նստել էինք դեմ դիմաց՝ ելքի մոտ: Ես գնում էի Նյու Յորք՝ քրոջս տուն՝ գիշերելու: Նա հագել էր տոնական կոստյում և լաքե կոշիկներ: Աչքս չէի կարողանում կտրել նրանից, բայց ամեն անգամ, երբ ինձ էր նայում, ձևացնում էի, թե գլխավերևի հայտարարությունն եմ կարդում: Երբ կայարան հասանք, նա կանգնեց կողքիս և այնպես սեղմվեց ուսիս ձերմակ վերնաշապիկ հագած կրծքով, որ ասացի՝ ուստիկան եմ կանչելու, բայց նա չհավատաց: Այնքան էի հուզված, որ երբ տաքսի նստեցինք, չէի հասկանում, թե որտեղ եմ՝ մետրոյո՞ւմ, թե՞ մեքենայում: Գլխումս շարունակ մի միտք էր պտտվում. «Մի անգամ ես աշխարհ եկել: Մի անգամ ես աշխարհ եկել»:

Միրթլը շրջվեց դեպի տիկին Մըք-Քին, և սենյակը լցվեց նրա շինծու ծիծաղով:

— Սիրելիս, — բացականչեց նա, — քեզ եմ նվիրելու այս հագուստը, հենց որ վրայիցս հանեմ: Վաղը նորը կառնեմ: Յուցակ կկազմեմ, թե ինչ եմ անելու: Մերսում, զանգրացում, շան համար էլ վզակապ, հետո զսպանակով մոխրաման, մեկ էլ մայրիկի գերեզմանի համար սև մետաքսե ժապավենով պսակ, որ ամբողջ ամառ չթառամի: Յուցակ կկազմեմ վաղվա անելիքներիս համար, որպեսզի ոչինչ չմոռանամ:

Ժամը ինն էր, բայց քիչ անց, երբ կրկին նայեցի ժամացույցիս, պարզվեց, որ արդեն տասն է: Պարոն Մըք-Քին, բռունցքները ծնկներին դրած, ննջում էր բազկաթոռին, ասես լուսանկարվելու պատրաստ գործիչ լիներ: Թաշկինակս հանեցի ու սրբեցի նրա դեմքի վրա չորացած օձառի փրփուրը, որն ամբողջ երեկո ինձ հանգիստ չէր տվել:

Սեղանին նստած շնիկը բացուխուփ էր անում կոյր աչքերը ծխի մեջ և ժամանակ առ ժամանակ թույլ գոմոռում: Մարդիկ անհետանում էին, հայտնվում, պայմանավորվում ինչ-որ տեղ գնալու, հետո կորցնում միմյանց, փնտրում ու մի քանի քայլի վրա կրկին գտնում: Կեսգիշերին մոտ Թոմ Բյուքենենն ու տիկին Վիլսոնը, դեմ դիմաց կանգնած, բորբոքված քննարկում էին, թե արդյոք տիկին Վիլսոնը իրավունք ունի արտասանելու Դեյզիի անունը:

— Դեյզի, Դեյզի, Դեյզի,— բղավում էր տիկին Վիլսոնը,— ուզածս ժամանակ կասեմ: Դեյզի, Դեյ...

Մի կարճ ճարպիկ շարժում, և Թոմ Բյուքենենի լայն ափը իջավ նրա քթին:

Հետո լողասենյակի հատակին արյունոտված սրբիչներ հայտնվեցին, լավեցին կանանց նախատալից ձայները, և այդ խառնաշփոթի մեջ առանձնացավ ցավի երկարատև մի ճիչ: Պարոն Մըք—Քին արթնացավ, շժմած շարժվեց դեպի դուռը: Կեսին շրջվեց ու աչքերը հառեց հետևյալ տեսարանին. իր կինն ու Քեթրինը նախատելով ու մխիթարելով, օգնության պարագաները ձեռքներին, այս ու այն կողմ էին շարժվում՝ սայթաքելով իրար մոտ դրված կահկարասու արանքներում, իսկ բազմոցի վրայի արնաշաղախ հուսահատ կերպարանքը փորձում էր փռել «Թաուն Թեթլ»-ի էջերը Վերսալի տեսարաններով պաստառի վրա: Մըք—Քին առաջ անցավ: Աշտանակի վրայից վերցնելով գլխարկս՝ հետևեցի նրան:

— Եկեք մի օր միասին ճաշենք,— առաջարկեց նա, երբ վերելակում տնքտնքալով իջնում էինք:

— Որտե՞ղ:

— Որևէ տեղ:

— Լծակը հանգիստ թողեք,— շաչեց վերելակավարը:

— Ներեցե՞ք,— արժանավայել ասաց նա:— Ես չնկատեցի, որ ձեռքս վրան եմ դրել:

— Դե լավ,— համաձայնեցի,— ուրախ կլինեմ:

...Ես կանգնել էի նրա անկողնու կողքին, իսկ նա ներքնաշորերով նստել էր սավանների վրա՝ ձեռքին մի հսկայական թղթապանակ:

— «Գեղեցկուհին և գազանը... Միայնություն... Նպարավաճառի ծեր ձին... Բրուքլին կամուրջը»...

Քիչ անց պառկելով Փենսիլվանիա կայարանի խոնավ նստարանին, քնից փակվող աչքերս հառելով «Թրիբյուն»-ի առավոտյան համարին՝ սպասում էի ժամը չորսի գնացքին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ամառվա գիշերներին հարևանիս տնից երաժշտություն էր հնչում: Նրա պարտեզի կապտավուն մթության մեջ տղամարդկանց ու կանանց սովերները գիշերաթիթեռների նման ճախրում էին շշուկների, շամպայնի և աստղերի միջև: Կեսօրին՝ բարձր մակընթացության ժամանակ, ես տեսնում էի, թե ինչպես են նրա հյուրերը ջուրը նետվում լաստանավի աշտարակից կամ արևի լոգանք ընդունում՝ փոված լողափի տաք ավազին, իսկ նրա երկու մոտորանավերը, իրենց հետևից ջրաթիռներ ձգելով, ճեղքում էին Սաունդի փրփրադեզ ալիքները: Շաբաթ-կիրակի օրերին նրա «Ռոլս-ռոյալ» վերածվում էր օմնիբուսի և առավոտից մինչև ուշ գիշեր քաղաքից խմբեր էր բերում-տանում, մինչդեռ նրա խոշոր մեքենան դեղին բզեզի նման սուրում էր կայարան՝ գնացքները դիմավորելու: Իսկ երկուշաբթի օրերին ութ ծառա, ներառյալ հատկապես այդ առիթով վարձած երկրորդ պարտիզպանը, ցախավելներով, քերիչ խոզանակներով, մուրձերով և խոշոր մկրատներով տքնաջանորեն աշխատում էին վերացնել նախորդ օրվա ավերածությունները:

Ամեն ուրբաթ Նյու Յորքի մրգավաճառից հինգ զամբյուղ նարինջ ու լիմոն էր գալիս, և ամեն երկուշաբթի հետնամուտքից այդ նույն նարինջներն ու լիմոնները անմիջուկ, բլրաձև դիզված կեսերով դուրս էին գնում: Խոհանոցում կար մի մեքենա, որը կես ժամում կարող էր երկու հարյուր նարնջի հյութը հանել, եթե ծառայի բթամատով երկու հարյուր անգամ սեղմվեր փոքրիկ կոճակը: Առնվազն ամիսը երկու անգամ մի խումբ մատակարարներ բերում էին հարյուրավոր յարդերով քաթան և անթիվ-անհամար գույնզգույն լապտեր-

ներ՝ ասես պատրաստվում էին Գեթսեմիի պարտեզը վերածելու հսկայական Ծննդյան ծառի:

Պսաղուն աղանդերով զարդարված սեղաններին առկա կինի հագուստանախշեր հիշեցնող աղցանների կարգի դիմաց շարվում էին համեմված ապուխտներ, իսկ խորոված խոճկորներն ու հնդկահավերը կախարդում էին իրենց թանձր կարմրագույնով: Մեծ դահլիճում արույրե ճաղերով մի իսկական բար կար, ուր ինչ ասես չէիր գտնի՝ վաղուց մոռացված ջին, լիկոր, թունդ խմիչքներ, որոնց անուններն անգամ չգիտեին նրա կին հյուրերից շատերը:

Ժամը յոթին նվագախումբն իր տեղում է, ոչ թե մի քանի խղճուկ երաժիշտ, այլ ամբողջ կազմը՝ հորոյները, տրոմբոնները, սաքսոֆոնները, վիոլաները, կոռնետները, սրինգները և փոքր ու մեծ թմբուկները: Լողափից վերադարձել են վերջին լողացողները և հիմա հագնվում են վերևում: Նյու Յորքից եկած հյուրերի մեքենաները հինգ շարքով կանգնած են դրսում, իսկ դահլիճում, սրահներում և պատշգամբներում արդեն երփներանգին են տալիս ծիածանի գույների զգեստները, վերջին նորաձևության սանրվածքները և շալեր, որ կերագեին անգամ կաստիլուիները: Բարն աշխուժացել է, պարտեզում սավառնում են սկուտեղներ, մինչդեռ ամենուր օդում զրնգում են շաղակրատանքն ու ծիծաղը, պատահական ակնարկներն ու տեղնուտեղը մոռացվող ծանոթությունների և միմյանց անուն չիմացող կանանց խանդավառ հանդիպումների բացականշությունները:

Լույսերը գնալով պայծառանում են, իսկ երկրագունդը գնալով թեքվում է արևից: Ապա նվագախումբը հնչեցնում է խմիչքին հարմար ծորուն երաժշտություն, և օպերային ձայների խումբը մի նոտա բարձր ձայնակցում է: Ծիծաղը գնալով անկաշկանդ է դառնում՝ պոռթկալով յուրաքանչյուր կատակ-բառի վրա: Խմբերը շարունակ փոփոխվում են, հավաքագրում նորանոր անդամներ, ցրվում և նույն ոգով վերակազմվում: Ահա մի քանի ինքնավստահ, անդադրում աղջիկ-

ներ, որոնք մերթընդմերթ երևում են պատկառելի տիկնանց կողքին, մի երջանիկ կարճ պահ հայտնվում ուշադրության կենտրոնում, հետո հաղթանակից հուզված՝ առաջ սահում դեմքերի, ձայների և գույների ծովածավալ մակընթացության միջով, հարատև փոփոխվող լույսի ներքո:

Հանկարծ նման գնչուական ոգու տեր մեկը՝ ծիծփուն կաթնագույնի մեջ, օդում բաժակ ճանկելով, մի կում է անում համարձակություն ստանալու համար ու մեն-մենակ պտույտներ գործում պաստառածածկ տախտակամածի վրա: Վայրկենական լռություն: Խմբավարը հնազանդ նրա պարին է հարմարեցնում երաժշտությունը և անմիջապես սուտ լուր է տարածում, թե աղջիկը Ջիլդա Գրեյի կրկնակն է «Ֆոլի» պարասրահից: Երեկույթը սկսված է:

Վստահ եմ, որ այն շաբաթ երեկոն, երբ առաջին անգամ ոտք դրի Գեթսբիի տուն, ես սակավաթիվ հրավիրյալներից մեկն էի: Այստեղ մարդկանց չէին հրավիրում, նրանք իրենք էին գալիս: Նստում էին մեքենա, քշում Լոնգ Այլընդ և ինչ-որ կերպ հայտնվում Գեթսբիի դռան առաջ: Սկզբում տանտիրոջը ճանաչող մեկը ներկայացնում էր հյուրին, իսկ դրանից հետո յուրաքանչյուրը, առաջնորդվելով վարվեցողության կանոններով, իրեն պահում էր այնպես, ինչպես զբոսայգում: Երբեմն նրանք գալիս էին ու գնում առանց Գեթսբիին հանդիպելու, գալիս էին սրտաբացությամբ, որն ինքնին մուտքի տոմս էր:

Ինձ հրավիրել էին ամենայն շուքով: Շիկահավի ձվի գույնի կապույտ համազգեստով վարորդը վաղ առավոտյան հայտնվեց դռանս առջև և ինձ հանձնեց չափից դուրս պաշտոնական մի գրություն հետևյալ բովանդակությամբ, որ Գեթսբիի համար մեծ պատիվ կլինի, եթե ես այդ օրը ներկա լինեմ նրա «փոքրիկ երեկույթին», և որ նա բազմիցս տեսել է ինձ ու վաղուց մտադրվել այցի գալ իմ տուն, սակայն հանգամանքների անսովոր բերումով չի կարողացել... Եվ պերճաշուք ձեռագրով ստորագրված էր՝ Ջեյ Գեթսբի:

Ժամը ութի կողմերը սպիտակ ֆլանելե կոստյումը հագիս ես ոտք դրի նրա սահմանը և անմիջապես տհաճ զգացում ունեցա՝ հայտնվելով մարդկային հորձանուտում. մեծ մասին չէի ճանաչում, թեև երբեմն զանազանում էի դեմքեր, որոնց տեսել էի գնացքում: Շուրջս այս ու այնտեղ աչքի ընկան երիտասարդ անգլիացիներ. բոլորն էլ լավ հագնված էին, բոլորն էլ փոքր-ինչ քաղցած էին, և բոլորն էլ ցածրաձայն, լուրջ զրուցում էին հարուստ, պատկառելի ամերիկացիների հետ: Ըստ երևույթին, նրանք առուծախի մեջ էին՝ բաժնետոմսեր, ապահովագրություն կամ էլ ավտոմեքենա: Հեշտ ձեռք բերվելիք դրամի մոտիկությունը հանգիստ չէր տալիս նրանց, և բացի այդ՝ համոզված էին, որ այն իրենցը կլինի, եթե հարկ եղած ձայնով հարկ եղած բառերը արտասանեին:

Տեղ հասնելուն պես փորձեցի գտնել տանտիրոջը, բայց այն երկու-երեք հոգին, որոնց դիմեցի, այնպես զարմացան և այնպես բուռն կերպով ապացուցեցին իրենց անտեղյակությունը նրանից, որ ճարահատյալ մոտեցա խմիչքի սեղանին, որտեղ մարդ, առանց անօգնական ու խղճուկ թվալու, կարող է ապաստան գտնել:

Միանգամայն շփոթված՝ ես պատրաստվում էի կատարի հարբեցողության մատնելու ինձ, երբ հանկարծ նկատեցի Ջորդան Բեյքերին: Նա դուրս եկավ տնից, կանգնեց մարմարյա աստիճանների գլխին և մարմինը փոքր-ինչ թեքած՝ արհամարհական հետաքրքրությամբ նայեց ցած՝ դեպի պարտեզը:

Ես չգիտեի, թե արդյոք իմ ընկերակցությունը հաճելի կլինի նրան, սակայն անհրաժեշտ էր մեկն ու մեկին միանալ, նախքան կսկսեի անցորդների հետ սրտագին զրույցի բռնվել:

— Ողջոյն,— աղաղակեցի ես՝ առաջանալով դեպի նա: Իմ ձայնն անբնականորեն բարձր հնչեց պարտեզում:

— Ես այդպես էլ գիտեի, որ ձեզ կտեսնեմ,— անփույթ
ասաց Ջորդանը, երբ մոտ եկա:— Հիշեցի, որ դուք հարևան-
ներ եք:

Նա թեթևակի սեղմեց ձեռքս՝ որպես խոստում քիչ հետո
ինձնով զբաղվելու, և շրջվեց նույնանման դեղին զգեստնե-
րով աղջիկների կողմը, որոնք կանգ առան աստիճանների
գլխին:

— Բարև՛ ձեզ,— ողջունեցին նրանք միաբերան:— Ափ-
սո՛ս, դուք չչահեցիք:

Խոսքը գովքի մրցումների մասին էր: Անցյալ շաբաթ
Ջորդանը տարվել էր վերջնախաղերի ժամանակ:

— Դուք մեզ չեք ճանաչում,— ասաց դեղնազգեստ աղ-
ջիկներից մեկը,— բայց մենք ծանոթացել ենք այստեղ մի
ամիս առաջ:

— Ձեր մազերն այն ժամանակ ուրիշ գույնի էին,— Ջոր-
դանի խոսքից ես վեր թռա, որովհետև աղջիկներն արդեն
առաջ էին անցել, և անկասկած նրա դիտողությունը ուղղվեց
նորալուսնին, որն ասես հենց նոր դուրս ելած լիներ մատա-
կարարի զամբյուղից այլևայլ ուտեստների հետ մեկտեղ: Ես
սեղմեցի Ջորդանի նուրբ արևահար բազուկը, և միասին
իջանք աստիճաններով ու զբոսնեցինք պարտեզում: Մթնշա-
ղի միջից քոքթեյլներով լի մի սկուտեղ ճախրեց դեպի մեզ, և
մեկական բաժակ վերցնելով՝ մոտեցանք այն սեղանին, որի
շուրջն արդեն նստած էին դեղնազգեստ աղջիկներն ու երեք
տղամարդ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացավ որպես
պարոն Այսինչ կամ Այնինչ:

— Հաճա՛խ եք գալիս այստեղ,— հարցրեց Ջորդանը
կողքին նստած աղջկան:

— Վերջին անգամ այն երեկոն էր, երբ ձեզ հետ ծանո-
թացա,— գոհ շարադրեց նա, ապա դիմեց ընկերուհուն:—
Իսկ դո՛ւ, Լյուսի՛:

Պարզվեց, որ նրանք միասին են եղել:

— Ես սիրով եմ գալիս այստեղ,— ասաց Լյուսիլը:— Ընդհանրապես երբեք չեմ մտածում, թե ինչ եմ անում, դրա համար էլ միշտ լավ ժամանակ եմ անցկացնում: Անցյալ անգամ շորս աթոռից կառչեց ու պատռվեց: Նա անունս ու հասցես գրեց և մի քանի օրից Քրուարյեի արհեստանոցից մի տուփ ստացա՝ մեջը երեկոյան նոր զգեստ:

— Ընդունեցի՞ք,— հարցրեց Ջորդանը:

— Իհարկե: Ուզում էի այս երեկո հագնել, բայց կուրծքը լավ չէր նստում, լայն է, փոխել է պետք: Բաց երկնագույն է, վրան ուլունքներով նարդոսի ծաղիկներ են ասեղնագործած: Երկու հարյուր վաթսունհինգ դոլար արժե:

— Ինչ ուզում եք ասեք, բայց սովորական մարդն այդպիսի բան չի անի,— համոզված հայտարարեց մյուս աղջիկը:— Պարզ է, չի ուզում որևէ մեկի հետ անախորժություն ունենալ:

— Ո՞վ չի ուզում,— հետաքրքրվեցի:

— Գեթսբին: Ինձ ասել են...

Աղջիկներն ու Ջորդանը դավադրաբար իրար մոտեցան:

— Ինձ ասել են, որ նա մարդ է սպանել:

Դող անցավ բոլորիս մարմնով: Պարոնայք Այսինչն ու Այնինչը առաջ թեքվեցին՝ համակ ուշադրություն դարձած:

— Ճիշտ չէ,— թերահավատորեն առարկեց Լյուսիլը,— ավելի շուտ նա գերմանական լրտես է եղել պատերազմի ժամանակ:

Տղամարդկանցից մեկը, ի նշան համաձայնության, գլխով արեց:

— Ես դա լսել եմ մի մարդուց, որն ամեն ինչ գիտի նրա մասին, միասին են մեծացել Գերմանիայում,— հավաստիացրեց վերջինս:

— Չի կարող պատահել,— առարկեց առաջին աղջիկը:— Պատերազմի ժամանակ նա ծառայում էր ամերիկյան բանակում:— Եվ ոգևորված շարունակեց, որովհետև մեր վստահությունն անցավ նրա կողմը:— Ուշադիր դիտե՛ք դեմ-

քը, մանավանդ այն ժամանակ, երբ կարծում է, թե իրեն չեն նայում: Գրագ կգամ՝ նա մարդ սպանած կլինի:

Աղջիկը կկոցեց աչքերն ու փշաքաղվեց: Լյուսիլը նույնպես փշաքաղվեց: Բոլորս շրջվեցինք և նայեցինք մեր չորսբոլորը Գեթսեմին փնտրելու միտումով: Դա վկայություն էր այն ռոմանտիկ խորհրդածության, որ նա էր ներշնչում, և նույնիսկ նրանք, ովքեր այս աշխարհում խոսելու անհրաժեշտ շատ քիչ բան էին գտնում, փսփսում էին նրա մասին:

Մատուցում էին առաջին ընթրիքը (կեսգիշերն անց երկրորդն էր հաջորդելու), երբ Ջորդանը հրավիրեց ինձ միանալու իր խմբին, որը տարածվել էր սեղանի շուրջը՝ պարտեզի մյուս կողմում: Այն բաղկացած էր երեք ամուսնացած զույգից և Ջորդանի թիկնապահից: Վերջինս՝ մի համառ ուսանող, ըստ երևույթին, այն կարծիքին էր, որ վաղ թե ուշ Ջորդանը անձնատուր կլինի իրեն: Դեսուդեն ընկնելու փոխարեն այս խումբը պահպանել էր արժանավայել միատարրություն և իրեն էր վերագրում տեղի դրական ազնվականությունը ներկայացնելու պատիվը՝ Իսթ Էզզը զիջողաբար է վերաբերվում Վեսթ Էզզին և զգոնությամբ խուսափում է նրա լուսադիտակային գվարթությունից:

— Ե՛կ գնանք այստեղից, — շնչաց Ջորդանը, երբ մոտ կես ժամ անտեղի վատնեցինք ու ձանձրացանք:— Էլ չեմ կարող նման քաղաքավարական խոսակցությունների դիմանալ:

Մենք ոտքի ելանք: Ջորդանը բացատրեց, թե գնում ենք տանտիրոջը գտնելու, որովհետև անհարմար է զգում մինչև հիմա նրան չներկայանալու համար: Ուսանողը ներողամիտ, ալարկոտ քմծիծաղով գլխով արեց:

Բարը, ուր մտանք, մարդաշատ էր, սակայն Գեթսեմին այնտեղ չէր: Ջորդանը, աստիճանների գլխին կանգնած, նայեց պարտեզ. Գեթսեմին ոչ մի տեղ չէր երևում: Նա պատշգամբում էլ չէր: Պատահմամբ բացեցինք կարևորություն

ներշնչող մի դուռ և հայտնվեցինք գրադարանում: Գոթական ոճի բարձր կամարներով սենյակի պատերին կաղնու փայտից դրվագված անգլիական զարդաքանդակներ էին՝ հավանաբար ամբողջությամբ տեղափոխած օվկիանոսից այն կողմ գտնվող ինչ-որ հեռավոր, տոհմիկ ամրոցից:

Լիքը, միջին տարիքի, բուի աչքեր հիշեցնող ահռելի ակնոցով մի մարդ՝ փոքր-ինչ խմած, նստած էր հսկա գրասեղանի եզրին ու մտազբաղ դիտում էր գրադարակները: Մեր մտնելուն պես նա թափով շրջվեց ու զննեց Ջորդանին ոտից գլուխ:

— Ի՞նչ եք կարծում,— եռանդուն հարցրեց:

— Ի՞նչը նկատի ունեք:

Նա ձեռքով ցույց տվեց գրադարակները:

— Դրանք: Կարիք չունեք ստուգելու: Ես ստուգել եմ: Իսկական են:

— Գրքերը:

Նա գլխով արեց:

— Ոչ մի կեղծիք, էջեր ունեն, կազմ, ինչպես որ պետք է: Ես կարծում էի՝ միայն սովարաթղթե գեղեցիկ կազմեր են, բայց պարզվեց, որ իսկական են: Էջեր էլ ունեն, ահա՛, տեսնք:

Ընդունելով մեր թերահավատությունը հարկ եղածին պես՝ նա նետվեց դեպի գրադարակներն ու վերադարձավ «Սթոդդարդի դասախոսություններ»-ի առաջին հատորը ձեռքին:

— Տեսնում եք,— հաղթական գոչեց նա՝ մեկնելով այն ինձ:— Ի՞նչ հրաշալի տպագրություն: Ինձ հիմար վիճակի մեջ գցեց: Այս տղան երկրորդ Բելասքո է: Սա հաղթանակ է: Մանրագին հետազոտություն: Ինչպիսի՞ ռեալիզմ: Նույնիսկ գիտի, թե երբ է կանգ առնելու... Էջերն անգամ չի կտրել: Բայց ի՞նչ եք ուզում: Ինչի՞ եք սպասում:

Նա գիրքը խլեց ձեռքիցս և շտապ տեղը դրեց՝ մոթմոթալով, որ եթե մի աղյուս տեղաշարժվի, ապա ամբողջ շենքը փոկ կգա:

— Ձեզ ո՞վ է բերել,— հարցրեց:— Գուցե ինքնե՞րդ եք եկել: Ինձ բերել են: Այստեղ շատերին են բերում:

Ջորդանն առանց պատասխանելու թոռուցիկ, գվարթ հայացք ձգեց նրա վրա:

— Ինձ այստեղ բերեց Ռուզվելթ անունով մի կին,— շարունակեց նա:— Տիկին Քլոդ Ռուզվելթը: Ճանաչո՞ւմ եք: Անցյալ երեկո ես նրա հետ մի տեղ ծանոթացա: Մի շաբաթ է, ինչ խմած եմ, մտածեցի՝ գրադարանում նստեմ, կսթափվեմ:

— Եվ ի՞նչ:

— Մի քիչ օգնեց, բայց ոչ շատ: Ընդամենը մեկ ժամ եմ նստել: Ես ձեզ ասացի՞ գրքերի մասին: Իսկական են: Դրանք...

— Ասացիք:

Մենք լուրջ ու հանդիսավոր ձեռք թոթվեցինք ու դուրս ելանք:

Քաթանե ծածկի վրա՝ պարտեզում, պարերն սկսվել էին: Ծերուկները երիտասարդ աղջիկներին հետ-հետ էին տանում՝ անդադար պարային անհրապույր պտույտներ գործելով. անկյուններում նորաձև գալարուն շարժումներով դուփում էին միմյանց փարված ինքնագոհ զույգեր, իսկ բազմաթիվ աղջիկներ, մի պահ ազատելով նվազախմբին բանջրկամ կաստանիետ նվազելուց, մենապարում էին յուրաքանչյուրն իր ձևով: Կեսգիշերին խրախճանքը թեժացավ: Հայտնի դարձած մի տենոր իտալական երգ կատարեց, իսկ համբավ ձեռք բերած կոնտրալտոն՝ ջազային երգ: Ընդմիջումներին հյուրերն իրենք իրենց էին զվարճանում՝ «համարներ» ցուցադրելով ամբողջ պարտեզով մեկ, իսկ նրանց երջանիկ, անհոգ ծիծաղի պոռթկումները թռչում էին դեպի ամառային երկինքը: Տարագ հագած բեմական զույգը, որն, ինչպես պարզվեց, դեղնազգեստ աղջիկներն էին, մանկական կյանքից մի հատված ներկայացրեց, իսկ սպասավորները լվացաթասի մեծության բաժակներով շամպայն էին մատուցում: Լուսինը բարձր երկնքում էր, և Սաունդ գետում լող էր տալիս

արծաթյա թեփուկների եռանկյունին՝ բանջոյի չոր մետաղա-
յին ճնկճնկոցից դողահար:

Ես դեռ Ջորդան Բեյքերի կողքին էի: Մեր սեղանին
նստած էին երկու հոգի՝ իմ տարիքի մի տղամարդ և մի փոք-
րիկ աղմկոտ աղջիկ, որն ամեն դատարկ բանից անկաշկանդ
ծիծաղում էր: Ես այժմ ինձ լավ էի զգում: Երկու լվացաթաս
շամպայն խմելուց հետո աչքիս ամեն ինչ կարևոր, անապա-
կան ու խորիմաստ էր թվում:

Կարճատև դադարի ժամանակ տղամարդը նայեց ինձ ու
ժպտաց:

— Ձեր դեմքը ծանոթ է,— բարեհամբույր ասաց նա:—
Դուք պատահմամբ պատերազմի ժամանակ Երրորդ բա-
ժանմունքում չէիք ծառայում:

— Ինչպես չէ: Ես Իններորդ գնդացրային գումարտա-
կում էի:

— Իսկ ես մինչև 1918 թվականի հունիսը Յոթերորդ հե-
տևակային գնդում էի: Իզուր չէր ինձ թվում, որ ձեզ ինչ-որ
տեղ տեսել եմ:

Որոշ ժամանակ մենք զրուցեցինք Ֆրանսիայի խոնավ
ու անհրապույր գյուղակների մասին: Ըստ երևույթին, նա
ապրում էր մոտակայքում, եզրակացրի ես, որովհետև պատ-
մեց, թե ինչպես վերջերս ջրաթիռ էր գնել և առավոտյան
պատրաստվում էր փորձարկելու:

— Չե՞ք ուզում ինձ այցելել, բարեկամ: Գետի վրա կզբոս-
նենք:

— Երբ:

— Երբ ուզում եք:

Քիչ էր մնում հարցնեի նրա անունը, երբ Ջորդանը նա-
յեց ինձ ու ժպտալով հարցրեց.

— Լավ եք զգում:

— Շանտ:— Ես կրկին դիմեցի նոր ծանոթիս:— Սա ինձ
համար անսովոր երեկույթ է: Տանտիրոջն անգամ չեմ ճանա-
չում: Ես ապրում եմ այնտեղ... — և ձեռքս ուղղեցի դեպի ան-

տեսանելի ցանկապատը:— Նա ինձ վարորդի հետ հրավիրատոմս էր ուղարկել:

Մի պահ ցրված նայեց ինձ:

— Ես եմ Գեթսեմին, — հանկարծ ասաց նա:

— Ինչ, — բացականչեցի ես: — Ա՛խ, ներեցե՛ք:

— Ես կարծեցի, թե Դուք ինձ ճանաչում եք, բարեկամ: Երևի վատ տանտեր եմ:

Նա ժպտաց բարեհոգի, ո՛չ, ավելի քան բարեհոգի: Դա մեկն էր այն հազվագյուտ քաջալերող ժպիտներից, որ կյանքում չորս կամ հինգ անգամ է պատահում: Մի պահ այն դեմ հանդիման էր կամ թվում էր դեմ հանդիման ողջ արտաքին աշխարհին, իսկ հետո անխուսափելի կանխակալությամբ կենտրոնանում էր վրադ հոգուտ քեզ: Եվ զգում ես, որ քեզ հասկանում են այնքան, որքան դո՛ւ ես ուզում, հավատում են քեզ այնքան, որքան դո՛ւ ես ցանկանում, և այնպիսի տպավորություն ես թողել դիմացինիդ վրա, ինչպիսին կուզեիր թողնել: Սակայն շատ շուտով ժպիտը չքացավ, և դեմս ելավ երեսունն անց մի պճնամոլ դատարկապորտ, որի պաճուճագարդ լեզուն անհեթեթության էր հասնում: Դեռ ինձ չներկայացած՝ ես այն տպավորությունը ստացա, որ նա գերագույն խնամքով էր ընտրում խոսքերը:

Հենց այդ վայրկյանին, երբ Գեթսեմին հայտնեց իր ով լինելը, մոտ վազեց ծառան և զեկուցեց, որ Չիկագոյից գանգահարում են: Գեթսեմին ներողություն խնդրեց թեթևակի խոնարհությամբ, որը բոլորիս էր վերաբերում:

— Եթե որևէ բանի կարիք զգաք, բարեկամ, — դիմեց նա ինձ, — կանչե՛ք ծառային: Ես շուտով կվերադառնամ: Ներեցե՛ք ինձ:

Հենց որ Գեթսեմին հեռացավ, ես անհամբեր շրջվեցի դեպի Ջորդանը՝ զարմանքս հայտնելու: Ես պարոն Գեթսեմին պատկերացնում էի միջին տարիքի, գեր, կարմիր դեմքով:

— Ո՞վ է նա, — հարցրի: — Ճանաչո՞ւմ եք նրան:

— Գեթսեմի անունով մեկն է:

— Ուզում եմ ասել՝ որտեղացի է, ինչ գրադմունքի տեր:

— Հիմա էլ դուք սկսեցիք,— ալարկոտ ժպտաց նա:— Մի բան գիտեմ, որ Օքսֆորդում է սովորել: Ինքն է ինձ ասել:

Աղոտ կերպով սկսեցի պատկերացնել Գեթսբիի միջավայրը, բայց Ջորդանի հաջորդ դիտողությունն ամեն ինչ տակնուվրա արեց:

— Ինչնէ, ես դրան չեմ հավատում:

— Ինչո՞ւ:

— Չգիտեմ,— պնդեց նա:— Ինձ թվում է՝ նա Օքսֆորդում չի սովորել:

Ինչ-որ բան նրա ձայնի մեջ ինձ հիշեցրեց դեղնազգեստ աղջկա՝ «Ինձ թվում է՝ նա մարդասպան է» խոսքը, և դա խթանեց իմ հետաքրքրասիրությունը: Ես անհապաղ, առանց այլևայլության պատրաստ էի ընդունելու, որ նա Լուիզիանայի ճահճուտների կամ էլ Նյու Յորքի աղքատ թաղամասերի ծնունդ է: Միանգամայն հնարավոր էր: Բայց նույնիսկ իմ գավառական անփորձությունը թույլ չէր տալիս հավատալու, որ երիտասարդները հենց այնպես, հեշտ ու հանգիստ դուրս են պրծնում ոչ մի տեղից ու պալատ են գնում Լոնգ Այլընդ Սաունդում:

— Ինչ որ է, նրա տանը միշտ բազմություն է հավաքվում,— ասաց Ջորդանը՝ շեղվելով նյութից՝ քաղաքացուն հատուկ ատելությամբ դեպի որոշակին:— Ես սիրում եմ շքեղ հավաքույթներ: Այնքան մտերմիկ են: Իսկ փոքր հավաքույթներում երբեք քեզ ազատ չես զգում:

Բաս թմբուկը խուլ թմբկահարեց, և խմբավարի ձայնը զիլ հնչեց պարտեզի ժխորի միջից:

— Տիկնայք և պարոնայք: Պարոն Գեթսբիի խնդրանքով ձեզ համար կնվագենք Վլադիմիր Տոստովի վերջին գործը, որը մայիսին մեծ ուշադրության արժանացավ Քարնեգի Հոլում: Եթե դուք լրագիր կարդում եք, ուրեմն գիտեք, որ այն մեծ աղմուկ բարձրացրեց:— Խմբավարը ներողամտորեն ժպտաց և աշխույժ ավելացրեց, — իսկական աղմուկ, — որի վրա բոլո-

րը ծիծաղեցին:— Եվ այսպես,— ոգևորված եզրափակեց նա,— Վլադիմիր Տոստով, «Աշխարհի ջազի պատմությունը»:

Ես չկարողացա պարոն Տոստովի ստեղծագործությունը վայելել, որովհետև հենց սկզբից նշմարեցի Գեթսեիին, որ, մարմարյա աստիճանների հարթակին կանգնած, աչքերը խրախուսանքով պտտում էր մի խմբից մյուսը: Նրա դեմքի արևահար մաշկը ձիգ էր, կարճ մազերն այնպիսի տեսք ունեին, ասես ամեն օր կտրվում էին ու խնամվում: Ոչ մի չարագույժ բան չկար նրա մեջ: Գուցե այն փաստը, որ նա չէր խմում, օգնում էր նրան առանձնանալու իր հյուրերից, և ինձ թվաց, որ համընդհանուր զվարթության աճին զուգընթաց նա գնալով զգաստանում էր: Երբ «Աշխարհի ջազի պատմությունը» ավարտվեց, աղջիկներից ոմանք մտերմիկ սեթևեթանքով գլուխները դրին տղամարդկանց ուսերին, ոմանք էլ սուտ ուշաթափվեցին՝ իրենց զցելով տղամարդկանց գիրկը, մի քանիսը՝ նույնիսկ մի խումբ տղամարդկանց, բայց ոչ ոք չընկավ Գեթսեիի գիրկը, տղայի սանրվածքով ոչ մի աղջնակ չդիպավ նրա ուսին, և նրա մասնակցությամբ ոչ մի երգեցիկ քառյակ չկազմվեց:

— Ներեցնք, խնդրեմ:

Գեթսեիի ծառան հանկարծ հայտնվեց մեր կողքին:

— Օրիորդ Բեյքնր,— հետաքրքրվեց նա:— Ներեցնք, խնդրեմ, պարոն Գեթսեին ցանկանում է Ձեզ հետ առանձին խոսել:

— Ինձ հետ,— զարմացած բացականչեց Ջորդանը:

— Այո, օրիորդ:

Ջորդանը ինձ նայեց, ապշած բարձրացրեց հոնքերը, դանդաղ ոտքի ելավ ու հետևեց ծառային դեպի տուն: Ես նկատեցի, որ նա երեկոյան զգեստի և ընդհանրապես ցանկացած հագուստի մեջ այնպես ազատ էր պահում իրեն, կարծես մարգահագուստով լիներ: Նրա շարժումներն անկաշկանդ էին, ասես իր առաջին քայլերը սովորել էր գուլֆի դաշտում ցինջ ու պարզ առավուտներին:

Ես մնացի մենակ: Համարյա ժամը երկուսն էր: Ինչ-որ խառնաշփոթ, հանելուկային հնչյուններ էին հորդում պատշգամբ նայող երկարավուն, շատ պատուհաններ ունեցող սենյակից: Խոյս տալով Ջորդանի թիկնապահից, որն ինձ երկու աղջիկների հետ ուզում էր ներգրավել ծննդաբերության մասին վարած խոսակցության մեջ, ես ներս գնացի:

Ընդարձակ սենյակը մարդաշատ էր: Դեղնազգեստ աղջիկներից մեկը դաշնամուր էր նվագում, իսկ կողքին կանգնած բարձրահասակ, կարմրահեր երիտասարդ տիկինը՝ հայտնի երգչախմբից, երգում էր: Նա չափազանց շատ շամպայն էր կոնծել և երգելիս հանկարծ անտեղի որոշեց, որ կյանքն անասելի տխուր է, և սկսեց միաժամանակ ողբալ: Յուրաքանչյուր երաժշտական դադար զուգակցվում էր կարճ, ջղաձիգ հեկեկոցներով, որից հետո դողդոջուն սուպրանոյով վերսկսվում էր մեղեդին: Արցունքները ոչ առանց խոչընդոտի կախվում էին թանձր ներկած արտևանունքներից, այնուհետև հոսում էին այտերն ի վար՝ թանաքագույն, դանդաղահոս առվակների վերածված: Ինչ-որ կատակասեր ասաց, որ նա երգում է դեմքի վրայի նոտաներով, այս խոսքի վրա երգչուհին ձեռքերը վեր տարավ, սուզվեց բազկաթոռի մեջ ու գինովի խոր քուն մտավ:

— Այս տիկինը վեճի էր բռնվել մի պարոնի հետ, որը հավատացնում էր, թե նրա ամուսինն է,— բացատրեց կողքիս կանգնած աղջիկը:

Ես նայեցի շուրջս: Ներկա կանանցից շատերը զբաղված էին վիճելով իրենք իրենց ամուսին հորջորջող տղամարդկանց հետ: Նույնիսկ Ջորդանի խմբի՝ Իսթ Էզգի քառյակի մեջ տարաձայնություն էր սկսվել: Տղամարդկանցից մեկը աշխույժ հետաքրքրությամբ զրուցում էր մի երիտասարդ դերասանուհու հետ, իսկ նրա կինը, որ սկզբում արժանավայել ու անտարբեր տեսքով կանգնած ծիծաղում էր ստեղծված իրավիճակի վրա, ի վերջո չդիմացավ ու պատրաստվեց հարձակման անցնել կողքից: Ժամանակ առ ժա-

մանակ նա շիկացած աղամանդի պես հայտնվում էր ամուսնու մեկ այս, մեկ այն կողմում՝ ֆշշացնելով նրա ականջին՝ դու խոստացել ես:

Տուն չգնալու ցանկությունը միայն քմահաճ տղամարդկանց չէր վերաբերում: Ներկաներն այժմ զբաղված էին կատարյալ զգոն երկու տղամարդկանցով և նրանց անչափ զայրացած կանանցով: Կանայք թեթևակի բարձրացրած ձայներով կարեկցում էին միմյանց:

— Հենց որ տեսնում է, որ ինձ լավ եմ զգում, տուն գնալը բռնում է:

— Կյանքումս նման եսասերի չեմ հանդիպել:

— Մենք միշտ առաջինն ենք տուն գնում:

— Մենք էլ:

— Բայց այսօր համարյա վերջինն ենք,— երկչոտ առարկեց ամուսիններից մեկը:— Նվագախումբը մի ժամ առաջ է գնացել:

Չնայած կանայք համաձայնեցին, որ նման բռնությունն անօրինական է, բայց տղամարդիկ իրենց խոսքի տերն էին. վիճաբանությունն ավարտվեց կարճ պայքարով, և կանանց թևատակերից բռնած՝ դուրս տարան դեպի գիշերային մթությունը:

Ես սպասում էի, որ գլխարկս բերեն, երբ հանկարծ գրադարանի դուռը բացվեց, և Ջորդան Բեյքերն ու Գեթսբին միասին դուրս եկան: Գեթսբին ավարտում էր խոսքը, սակայն նրա եռանդուն խոսելաձևը կտրուկ դարձավ ձևական, երբ մի քանի հոգի նրան մոտեցան հրաժեշտ տալու:

Ջորդանի ուղեկիցները, նախազավթում կանգնած, անհամբերությամբ նրան էին կանչում, բայց նա մի պահ կանգ առավ՝ ինձ մնաք բարով ասելու:

— Ես հենց նոր մի ապշեցուցիչ պատմություն լսեցի,— շնչաց նա:— Ինչքան ժամանակ մնացի ներսում:

— Մոտ մի ժամ:

— Այո՛... պարզապես ապշեցուցիչ է,— ցրված կրկնեց:— Բայց երդվեցի ոչ մեկին չասել, այնպես որ Ձեզ հոգեհան չա-

նեմ:— Նրա շնորհագեղ հորանջը ուղղված էր ուղիղ դեմ-
քիս:— Համեցե՞ք մեր տուն... Հեռախոսագրքերում կա մեր
համարը... Տիկին Սիգուրնի Հովարդ անվան տակ... մորա-
քույրս է...— նա արդեն վազում էր դեպի դուռը և անհետա-
նալով խմբի մեջ՝ թափահարեց արևահար ձեռքը:

Ես բավականին անհարմար էի զգում, որ իմ առաջին այ-
ցելությունը այդքան երկար տևեց, ուստի մոտեցա Գեթսեփ-
ին, որի շուրջ խմբվել էին վերջին հյուրերը: Ուզեցի բացատ-
րություն տալ, որ ամբողջ երեկո իրեն եմ փնտրել՝ ներողու-
թյուն խնդրելու, որ պարտեզում նրան չէի ձանաչել:

— Ի՛նչ եք ասում,— աշխույժ ընդմիջեց նա:— Բան եք
գտել խոսելու, բարեկամ:— Մտերմիկ արտահայտությունը
նվազ մտերմիկ էր, քան ձեռքը, որ համոզիչ կերպով իջավ
ուսիս:— Չմոռանա՞ք՝ վաղն առավոտյան ժամը իննին զրոս-
նում ենք ջրաթիռով:

Ապա նրա թիկունքից լավեց ծառայի ձայնը:

— Ֆիլադելֆիայից Ձեզ կանչում են հեռախոսի մոտ,
պարո՛ն:

— Շատ լավ, մի բոպե: Ասա՝ հենց հիմա գալիս եմ... Բա-
րի՛ գիշեր:

— Բարի՛ գիշեր:

— Բարի՛ գիշեր,— ժպտաց նա, և հանկարծ ինձ թվաց,
թե այդպես էլ պետք էր, որ նա վերջինը գնայի, ասես ամբողջ
ժամանակ նրա ուզածն այդ էր եղել:— Բարի՛ գիշեր, բարե-
կամ... Բարի՛ գիշեր:

Աստիճաններով իջնելիս տեսա, որ երեկույթը լրիվ չէր
ավարտվել: Դռնից հիսուն ոտնաչափ հեռու մեքենայի տաս-
նյակ ցոլարձակների լույսն ընկել էր մի արտառոց իրարանց-
ման վրա: Ճամփեգրին՝ առվի մեջ, աջ կողքը վեր տնկած,
հանգչում էր առանց անիվի երկտեղ մի նոր մեքենա, որը քիչ
առաջ էր հեռացել Գեթսեփի տնից: Անիվի պոկվելու պատճա-
ռը պատի սուր ելուստն էր, որը հիմա մեծ ուշադրության էր
արժանացել մի խումբ հետաքրքրասեր վարորդների կող-

մից: Նրանց մեքենաները փակել էին ճանապարհը, իսկ հետևի մեքենաների շչակներն իրենց զիլ, աններդաշնակ սուլոցով ավելի էին ուժեղացնում կատաղի խառնաշփոթը:

Երկար թիկնոցով մեկը, մեքենան թողած, կանգնել էր ճամփամիջին և սրտառույ տարակուսանքով նայում էր մեկ մեքենային, մեկ՝ անվաղողին, մեկ՝ մարդկանց:

— Տեսա՞ք՝ ինչպես մտավ առուն, — արդարացավ նա:

Փաստը պարզապես ապշեցուցիչ էր նրա համար: Ես սկզբից զարմանքի անսովոր խորությունը ճանաչեցի, հետո տիրոջը: Դա Գեթսբիի գրադարանի մենավոր այցելուն էր:

— Ինչպե՞ս պատահեց:

Նա թոթվեց ուները:

— Ես մեքենաներից բան չեմ հասկանում, — վճռական հայտարարեց նա:

— Բայց ինչպե՞ս պատահեց: Պատի՞ն խփվեցի՞ք:

— Մի՛ հարցրեք, — ասաց Բվեճը՝ ձեռքերը լվանալով այդ գործից: — Ես վարել համարյա չգիտեմ: Պատահեց, էլի՛, ինչ կարող եմ ասել:

— Եթե դուք վարել չգիտեք, ապա ինչո՞ւ եք գիշերով մեքենա քշում:

— Բայց ես չէի էլ փորձում, — վրդովվեց նա: — Ես միտք էլ չունեի:

Կանգնածները սարսափահար լռեցին:

— Դուք ուզում էիք ինքնասպան լինել:

— Բախտներդ բերել է, որ անիվն է թռել: Ե՛վ վարել չգիտեք, և՛ չէիք էլ փորձում:

— Չեք հասկանում, — բացատրեց հանցագործը: — Ես չէի վարում: Ուրիշ մարդ կա մեքենայում:

Հայտարարությանը հաջորդող խուլ, միաբերան բացականչության տակ երկտեղ մեքենայի դուռը դանդաղ ճռռաց: Ամբոխը (այժմ այն արդեն ամբոխ էր) հետ քաշվեց, և երբ դուռը լայն բացվեց, չարագուշակ դադար իջավ: Ապա ջախջախված մեքենայից աստիճանաբար, մաս առ մաս, գու-

նատ, երերուն մի անհատ ուրվագծվեց և մեծ չափի պարահանդեսային կոշիկ հագած՝ անհաստատ ոտքով սկսեց շոշափել գետինը:

Ցոլարձակների շլացնող լույսից կուրացած, չչակների անդադրում սուլոցից շշմած՝ ուրվականը կանգնած տեղում ճոճվեց որոշ ժամանակ, մինչև վերջապես նկատեց թիկնոցավորին:

— Ի՞նչ է պատահել,— անխոռով հարցրեց նա:— Բենզոլինը պրծավ:

— Նայիր:

Տասնյակ մատներ ուղղվեցին անդամահատված անիվի կողմը: Նա մի պահ աչքերը չռեց վրան, հետո վեր նայեց՝ ասես կասկածելով, որ այն երկնքից է ընկել:

— Դուրս է եկել,— բացատրեց մեկը:

Նա գլխով արեց:

— Չէի էլ նկատել, որ կանգնած ենք:

Լռեց: Ապա խոր շունչ քաշեց, ուղղեց ուսերը և վճռական հարցրեց.

— Չե՞ք ասի՝ որտեղ է բենզակայանը:

Ի վերջո, տասնյակ տղամարդիկ, ոմանք՝ առավել հաստատուն ձայներով, բացատրեցին, որ անիվն ու մեքենան այլևս իրար միացած չեն:

— Հենո քաշեք մեքենան,— քիչ անց առաջարկեց նա:— Հենո քաշեք, հետո առաջ կտաք:

— Անիվը չկա, ինչպե՞ն հետ քաշենք:

Նա տատանվեց:

— Փորձը փորձանք չէ:

Շչակների սուլոցը, աղմուկ-աղաղակը հասել էին գագաթնակետին: Ես շրջվեցի և սիզամարգի վրայով քայլեցի դեպի տուն: Ճանապարհին հետ նայեցի: Լուսնի մի շերտիկ շողում էր Գեթսեթի ապարանքի վրա: Գիշերն առաջվա պես գեղեցիկ էր նրա լուսավորված պարտեզում, որը կլանել էր երբեմնի ծիծաղն ու ձայները: Անսպասելի դատարկություն էր

հորդում այժմ տան պատուհաններից և լայն դռներից, որի շնորհիվ ավելի մենավոր էր թվում տանտիրոջ կերպարանքը հարթակի վրա՝ հրաժեշտի շարժումով ձեռքը բարձրացրած:

* * *

Վերընթերցելով գրածս՝ տեսա, թե այն տպավորությունն եմ ստեղծել, որ շաբաթների ընդմիջումով այդ երեք գիշերվա դեպքերը ինձ միակ հուզող բանն էին: Իրականում դրանք սուկ պատահարներ էին իրադարձություններով լի ամռանը, և այդ ժամանակ ինձ շատ ավելի քիչ էին զբաղեցնում, քան իմ անձնական գործերը:

Օրվա մեծ մասն անց էի կացնում աշխատանքի վայրում: Արևը վաղ առավոտյան արևմուտք էր գցում իմ ստվերը, երբ Ներքին Նյու Յորքի ձերմակ նրբանցքներով շտապ-շտապ քայլում էի՝ հասնելու բարեգործական ընկերություն:

Ես անուններով գիտեի այլևայլ պաշտոնյաների, բաժնետոմս վաճառող երիտասարդների: Մենք միասին ճաշում էինք կիսախավար, մարդաշատ ճաշարաններում, ուտում խոզապուխտ, պյուրե, վերջում էլ սուրճ խմում: Ես նույնիսկ մի կարճ սիրավեպ ունեցա Ջերսի Սիթիից եկած մի աղջկա հետ, որն աշխատում էր մեզ մոտ որպես հաշվետար, բայց նրա եղբայրը սկսեց խեթ-խեթ նայել ինձ, և երբ հուլիսին աղջիկն արձակուրդ վերցրեց, ես, առիթից օգտվելով, վերջակետ դրի:

Սովորաբար ճաշում էի Յեյլի ակումբում: Չգիտեմ ինչու, դա օրվա իմ ամենատհաճ գործն էր, հետո գնում էի վերևի հարկը՝ գրադարան, և մի ամբողջ ժամ բարեխղճորեն ուսումնասիրում ավանդների ու ապահովագրության գործը: Այցելուների մեջ քիչ չէին աղմկարարները, բայց նրանք երբեք գրադարան չէին մտնում, ուստի այստեղ հարմար էր աշխատելը: Ապա եթե մեղմ գիշեր էր լինում, ես ոտքով անցնում էի Մեդիսոն պողոտան, հին «Մուրեյ Հիլ» հյուրանոցը և, թեքվելով Երեսուներեքերորդ փողոցը, դուրս գալիս Փենսիլվանիա կայարան:

Աստիճանաբար սիրեցի Նյու Յորքը, նրա գիշերների խելացնոր, զգլխիչ բուրմունքը և այն բավականությունը, որ անհանգիստ աչքը ստանում էր մարդկանց ու մեքենաների անվերջանալի փայլատակումից: Ինձ դուր էր գալիս դեգերել Հինգերորդ պողոտայում, ամբոխից ընտրել ռոմանտիկ կանանց, պատկերացնել, որ մի քանի թուպեից կմտնեմ նրանց կյանքը, և ոչ ոք չի իմանա ու չի մեղադրի ինձ: Երբեմն մտովի հետևում էի նրանց դեպի խորհրդավոր փողոցների անկյունային հարկաբաժինները, և նախքան դռան հետևի ջերմ մթության մեջ անհետանալը նրանք շրջվում ու ժպտում էին ինձ: Երբեմն մայրաքաղաքի դյուբիշ մթնշաղը թախիծ էր բերում վրաս. նույնը նկատում էի նաև ուրիշների՝ երիտասարդ, աղքատ պաշտոնյաների մոտ, որոնք հապաղում էին ցուցափեղկերի առաջ, մինչև կգար մենավոր ճաշի ժամը ռեստորանում, երիտասարդ պաշտոնյաներ, որոնք կիսախավաբում սպանում էին գիշերվա ու կյանքի ամենադառը ժամերը:

Ժամը ութի կողմերը, երբ Քառասուներորդ փողոցի մութ նրբանցքներում փնչացող մեքենաների շարանները շտապում էին թատրոնների կողմը, սիրտս կրկին ճվվեց: Անցումներում սպասող մեքենաների մեջ իրար էին հպվել ստվերներ, երգի պատառիկներ էին ինձ հասնում ներսից, անլսելի կատակներից ծիծաղ էր հորդում, իսկ վառված սիգարետները ընդգծում էին ուղևորների դժվարըմբռնելի շարժումները: Եվ պատկերացրի, թե ես նույնպես շտապում եմ ինչ-որ տեղ, ուր ինձ զվարճություն է սպասվում, և կիսելով օտարի բուռն ուրախությունը՝ նրանց հաջողություն ցանկացա:

Որոշ ժամանակ Ջորդան Բեյքերը կորավ իմ տեսադաշտից, հետո ամառվա կեսին կրկին գտա նրան: Սկզբում ինձ շոյված էի զգում նրա ներկայությունից՝ նա գոլֆի չեմպիոն էր, և բոլորը ճանաչում էին նրան: Հետո դա այլ բնույթ ստացավ: Իրականում սիրահարված չէի, բայց մի տեսակ քնքուշ հետաքրքրություն էի տածում այդ աղջկա նկատմամբ: Նրա ձանձրույթ արտահայտող ամբարտավան դեմ-

քը, որ դեպի աշխարհն էր շրջել, ինչ-որ բան էր թաքցնում (սեթնեթանքների գերակշռող մասն ի վերջո ինչ-որ բան է քողարկում), և մի օր հայտնաբերեցի այն: Մի անգամ Վորվիքում հավաքվել էինք մեկի տանը: Նա ուրիշի մեքենան՝ թափքն իջեցրած, թողեց անձրևի տակ ու մի սուտ փչեց այդ կապակցությամբ: Ես հանկարծ հիշեցի նրա հետ կապված պատմությունը, որ այն գիշեր Դեյզլիի տանը մտքիցս թռել էր: Առաջին մեծ մրցմանը Ջորդանը գլխացավանքի մեջ ընկավ, որը քիչ մնաց հասներ լրագրերին. ասում էին, թե իբր կիսա-եզրափակիչ ռաունդում նա գնդակը անհաջող դիրքից հեռացրել էր: Քիչ էր մնում անախորժություն ծագեր, սակայն շուտով ամեն ինչ հարթվեց: Խաղը սպասարկող տղան հրաժարվեց խոսքից, իսկ մյուս վկան ընդունեց, որ կարող էր սխալված լինել: Միջադեպը անվան հետ մեկտեղ մնացել էր հիշողությանս մեջ:

Ջորդան Բեյքերը բնագոյաբար խուսափում էր խելացի, խորաթափանց մարդկանցից, և նոր միայն հասկացա, թե ինչու էր նա իրեն ապահով զգում այնպիսի մարդկանց շրջանում, որոնց մտքով անգամ չէր անցնում որևէ շեղում բարոյականության օրենքներից: Նա անուղղելի անազնիվ էր: Ի վիճակի չէր տանելու արգելք կամ չկամություն, այդ պատճառով էլ վաղ հասակից սովորել էր գանազան հնարքներ, որպեսզի պահպանի դեպի աշխարհը շրջած պաղ, անպատկառ ժպիտը և բավարարի իր առողջ, կայտառ մարմնի պահանջները:

Ես դրան կարևորություն չէի տալիս: Կնոջ անազնվությունը երբեք խստորեն չես դատապարտում: Հաճախ վշտանում էի դրա համար, հետո՝ մոռանում: Այդ նույն օրն էր, երբ մեր միջև հետաքրքիր խոսակցություն տեղի ունեցավ մեքենա վարելու մասին: Պատճառն այն էր, որ նա խիստ մոտիկից անցավ մի բանվորի կողքով և պոկեց նրա բաձկոնի կոճակը:

— Վատ ես վարում,— բարկացա ես:— Եթե չես կարող զգույշ լինել, ուրեմն մի՛ վարիր:

— Ես զգույշ եմ:

— Ո՛հ:

— Ուրիշները զգույշ են, — նետեց նա անհոգ:

— Ի՞նչ ես ուզում ասել:

— Ինձ ճամփա կտան: Վթարի համար երկու հոգի է պետք:

— Ենթադրենք՝ հանդիպեցիր քեզ նման անզգույշ մեկի:

— Հուսով եմ՝ չեմ հանդիպի, — պատասխանեց:— Տանել չեմ կարող անզգույշ մարդկանց: Ահա թե ինչու ես դու ինձ դուր գալիս:

Նրա մոխրագույն, արևաշող աչքերը հառած էին հեռուն, և նա միտումնավոր տեղաշարժ մտքրեց մեր հարաբերությունների մեջ: Մի պահ ինձ թվաց, որ սիրում եմ նրան: Սակայն ես դանդաղամիտ եմ՝ կապկպված բազմաթիվ ներքին սկզբունքներով, որոնք իմ ցանկությունների համար արգելակների դեր են կատարում, և գիտեի, որ նախ և առաջ պետք էր այդ հանգույցից ելք գտնել տանը: Շաբաթը մեկ ես նրան նամակ էի գրում՝ «Սիրով՝ Նիք» ստորագրությամբ՝ մտածելով միմիայն այն աղջկա մասին, որի վերին շրթունքի վրա թենիս խաղալիս քրտինքի բեղիկներ էին գոյանում: Այնուամենայնիվ, ինչ-որ անորոշ կապ կար մեր միջև, որը պետք էր նրբորեն քանդել, նախքան ինձ ազատ կզգայի:

Ամեն ոք իրեն վերագրում է առնվազն մեկ հիմնական առաքինություն: Ես, օրինակ, ինձ դասում եմ այն նվազագույն ազնիվ մարդկանց շարքը, որոնց երբևէ ճանաչել եմ:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Կիրակի առավոտյան, երբ առափնյա բնակավայրերում դեռևս դողանջում էին եկեղեցու զանգերը, ողջ աշխարհը կրկին լցվեց Գեթսեփի տուն՝ իր ուրախությունը սփռելով պարտեզով մեկ:

— Նա մաքսանենգ է, — փսփսում էին տիկնայք՝ խմելով նրա խմիչքներն ու հոտոտելով նրա ծաղիկները: — Նա սպանել է մի մարդու, որն իմացել է նրա ով լինելը: Նա ֆոն Հինդենբուրգի եղբորորդին է, դևի զարմիկը: Ինձ համար վա՛րդ քաղիր, սիրելիս, մեկ էլ մի քիչ խմի՛չք լցրու այդ բյուրեղապակյա բաժակի մեջ:

Մի անգամ ես սկսեցի չվացուցակի լուսանցքներում գրի առնել այն մարդկանց անունները, որոնք այդ ամառ այցելում էին նրան: Հիմա դա հին, ծալքերի մոտ քրքրված ցուցակ է՝ թվագրված. «Գրի է առնվում 1922 թվականի հուլիսի 5-ից»: Սակայն խամրած անունները դեռևս ընթռնելի են և ավելի լավ պատկերացում կտան ձեզ, քան իմ ընդհանրացումներն այդ մարդկանց մասին, որոնք ընդունում էին Գեթսեփի հյուրընկալությունը՝ փոխարենը մատուցելով այն աննշան տուրքը, որ նրա մասին բացարձակապես ոչինչ չգիտեին:

Իսթ Էզգից գալիս էին Չեսթեր Բեքերի ընտանիքը, Լիչերը և Բանսեն անունով մեկը, որին համալսարանից գիտեի, ինչպես նաև բժիշկ Վեբսթեր Քիվեթը, որն անցյալ ամառ խեղդվեց Մեյնի նահանգում, Հորնբիմերն ու Վիլլի Վուլթերը կնոջ հետ և ողջ Բլեքբեք գերդաստանը, որոնք միշտ հավաքվում էին մի անկյունում և այժի նման քթները պարզում յուրաքանչյուր մոտեցողի: Գալիս էին նաև Իսմեյներն ու Քրիսթի-

ները (կամ ավելի ձիշտ՝ Հյուբերթ Աուերբախը պարոն Քրիսթիի կնոջ հետ), Էդգար Բիվերը, որի մասին ասում են, թե մազերն առանց պատճառի ձյունի պես ձերմակեցին մի ձմեռային օր:

Ինչքան հիշում եմ, Քլարենս Էնդայվը նույնպես Իսթ Էզգից էր: Ես նրան միայն մի անգամ տեսա՝ ձերմակ, մինչև ծնկները հասնող տաբատով, և նա կռիվ սարքեց պարտեզում Էթթի անունով մի պորտաբույծի հետ: Կղզու հեռավոր ծայրից գալիս էին Չիդլն ու Օ. Ռ. Փ. Շրեդերը, իսկ Ջորջիայից՝ Սթոունվոլ Ջեքսոն Աբրամսը, Ֆիշգարդը և Ռիփլի Սնելը, բոլորն էլ՝ իրենց կանանց հետ: Սնելը բանտարկվելուց երեք օր առաջ այստեղ էր և այնքան էր խմել, որ հարբած ընկած էր խճաքարերին, երբ տիկին Յուլիսիա Սվեթի մեքենան անցավ նրա աջ ձեռքի վրայով: Դանսիների ընտանիքն էլ էր գալիս, ինչպես նաև Ս. Բ. Վայթբեյթը, որն այդ ժամանակ վաթսունն անց էր, Մորիս Ա. Ֆլինքը, Համերհեդերն ու ծխախոտ ներմուծող Բելուգան դուստրերի հետ:

Վեսթ Էզգից գալիս էին Փոուլները, Մալրեդիները, Սեսիլ Ռոուբաքը, Սեսիլ Շոնը, նահանգի սենատոր Գուլիքը, Նյութոն Օրչիդը, որը *Films Par Excellence* ընկերության պարագլուխն էր. Էքհոսթն ու Քլայդ Քոհենը, Դոն Ս. Շվարցեն (որդին), Արթուր Մըք-Քարթին՝ բոլորն էլ ինչ-որ կերպ առնչություն ունեին կինոյի հետ: Գալիս էին նաև Քաթլիփերն ու Բեմբերգերը, Ջ. Էրլ Մալդունը, եղբայրն այն Մալդունի, որը հետագայում խեղդեց կնոջը: Գործարար Դա Ֆոնթանոն, Էդ Լեգրոսը, Ջեյմզ Բ. (Փոսած աղիքը) Ֆերրեթը, Դե Ջոնգերն ու Էոնեստ Լիլին՝ բոլորն էլ գալիս էին թղթախաղի համար, և երբ Ֆերրեթը մենակ պարտեզ էր իջնում թարմանալու, նշանակում էր՝ տարվել է, և «Երկաթգծի միացյալ ընկերությունը» հաջորդ օրը գները բարձրացնում էր:

Ոմն Քլիփսփրինգերն այնքան հաճախ էր այցելության գալիս և այնքան երկար էր մնում, որ վաստակել էր «կենվոր» մականունը, հավանաբար ուրիշ տուն չունեի: Թատերական

աշխարհից գալիս էին Գաս Վայզը, Հորաս Օ. Դոնավանը, Լեսթեր Մայերը, Ջորջ Դաքվիդն ու Ֆրենսիզ Բուլը, իսկ Նյու Յորքից՝ Քրոմները, Բեքհիսոնները, Դենիքերները, Ռասել Բեթթին, Քորիգանները, Քելեհերները, Դյուերները, Սքալիները, Ս. Վ. Բելչերը, Սմիրքները, երիտասարդ Քվինները (նրանք այն ժամանակ ամուսնացած էին), Հենրի Լ. Փալմերոն, որը հետո «Թայմզսվեր» մետրոյի կայարանում իրեն գնացքի տակ գցեց:

Բեննի Մըք-Քլենահանին միշտ ուղեկցում էին չորս աղջիկներ: Նրանք երբեք միևնույն անձինք չէին լինում, բայց այնքան նման էին մեկը մյուսին, որ թվում էր, թե նրանց արդեն տեսել ես: Չեմ հիշում նրանց անունները, կարծեմ՝ Ջաքլին կամ Կոնսուելա, կամ Գլորիա, կամ Ջուդի, կամ էլ՝ Ջուն, իսկ ազգանունները կամ ծաղիկների, կամ ամիսների մեղեդային անուններ էին, կամ էլ, եթե խիստ հետաքրքրություն ցուցաբերեիր, ապա կլսեիր հայտնի ազգանուններն ամերիկացի կապիտալիստների, որոնց զարմուհիներն էին նրանք:

Այս բոլորին ավելացրած՝ Ֆաուսթինա Օ'Բրայընը առնվազն մեկ անգամ պետք է որ այցելած լիներ, ինչպես նաև Բեդեքերի դուստրերն ու երիտասարդ Բրույերը, որի քիթը պատերազմի ժամանակ գնդակից թռել էր, պարոն Ալբրուքսբերգերը և օրիորդ Հաագն ու իր նշանածը, Արդիթա Ֆից Փիթըրզը, պարոն Ֆ. Ջուիթը՝ ամերիկյան լեգեոնի երբեմնի պարագլուխը, և օրիորդ Քլոդիա Հիփը՝ մի մարդու հետ, որը, իշխան լինելով հանդերձ, ծառայում էր նրան որպես վարորդ: Մենք նրան դուքս էինք կոչում, իսկ անունը, եթե նույնիսկ երբևէ գիտեի էլ, մոռացել եմ:

Ահա այս բոլոր մարդիկ այդ ամռանը լինում էին Գեթսբիի տանը:

* * *

Մի օր՝ հուլիսի վերջերին՝ առավոտյան ժամը իննին, Գեթսբիի շքեղ լիմուզինը, մազլցելով քարքարոտ ճանա-

պարիը, մոտեցավ դռանս և հնչեցրեց եռաձայն շշակը: Սա նրա առաջին այցելությունն էր, չնայած երկու անգամ մասնակցել էի նրա երեկույթներին, գրոսնել նրա ջրաթիռով և, նրա համառ հրավերներին հնազանդ, օգտվել նրա լողափից:

— Բարի լույս, բարեկամ: Այսօր միասին ենք ճաշում, դրա համար էլ եկել եմ, որ քեզ տանեմ:

Ավտոմեքենայի ոտնակին կանգնած՝ նա իրեն հավասարակշռում էր ամերիկացիներին բնորոշ հնարամիտ շարժումով. կարելի է ենթադրել, որ դա գալիս է երիտասարդ ժամանակ մարմնական աշխատանքի և կամ անշարժ նստելու բացակայությունից կամ էլ, ավելին, մեր ջղաձիգ մարզախաղերի անորոշ շնորհագեղությունից: Այս ամենը Գեթսբիի մոտ հանդես էր գալիս անհանգստության ձևով, որը շարունակաբար խախտում էր նրա զուսպ վարվելակերպը: Ոչ մի բոլակ նա դադար չունեց. կամ ոտքն էր թփթփացնում գետնին, կամ էլ անհամբերությամբ ձեռքն էր բացուխուփ անում:

Նա տեսավ, թե ինչպիսի հիացմունքով եմ դիտում մեքենան:

— Լավն է, չէ՛, բարեկամ:— Եվ ցած թռավ, որպեսզի չխանգարի ինձ:— Տեսած չկայիր:

Տեսել էի: Բոլորն էլ տեսել էին: Պսաղուն նիկելով մեքենան թանձր սերուցքի գույն ուներ, հրեշային մեծության մարմին, որի վրա այս ու այնտեղ դուրս էին պրծել տոռոզ, ինքնագոհ տուփեր՝ գլխարկներ, ընթրիք և գործիքներ պահելու համար, իսկ վահանակների լաբիրինթոսում տասնյակ արևներ էին արտացոլվում: Ներսն ասես կանաչ կաշեպատ ջերմոց լինեց, որտեղ մենք նստեցինք մի քանի շերտ ապակու հետևը և սլացանք դեպի քաղաք:

Անցյալ ամիս ես նրա հետ մի քանի անգամ էլ խոսած չկայի և, ցավոք սրտի, համոզվել էի, որ խոսելու քիչ բան ուներ: Այսպիսով՝ առաջին տպավորությունը, որ նա թողել էր ինձ վրա՝ որպես արտասովոր մարդ, աստիճանաբար ջնջվեց, և նա պարզապես դարձավ հարևան շքեղ պանդոկի տերը:

Հետո՝ այդ անհերթեթ ուղևորությունը: Մենք դեռ չէինք հասել Վեսթ Էզզ, երբ Գեթսբին, իր վերամբարձ ոճով արտասանած խոսքերն անավարտ թողած, սկսեց անվճռական հարվածել կարամելի գույնի տաբատի ծնկներին:

— Լսիր, բարեկամ: Ինչ կարծիքի ես իմ մասին:

Փոքր-ինչ հանկարծակիի եկած՝ հարցին արժանի խուսափողական պատասխաններ տվի:

— Դե՛, ես քեզ իմ կյանքից որոշ բան պատմեմ, — ընդհատեց նա: — Չեմ ուզում քո լսած այդ բոլոր պատմություններից իմ մասին սխալ կարծիք կազմես:

Նշանակում է՝ նա տեղյակ էր այն արտառոց մեղադրանքներին, որ գրույցների համն ու հոտն էին իր հյուրասենյակներում:

— Ես քեզ սուրբ ճշմարտություն եմ ասում: — Նրա աջ ձեռքը հանկարծ բարձրացավ, ասես պատրաստ լիներ Աստծու պատիժը կրելու: — Ես ծնվել եմ Միջին Արևմուտքում՝ հարուստ ընտանիքում: Մեծացել եմ Ամերիկայում, բայց, ըստ ընտանեկան ավանդույթի, ուսանել Օքսֆորդում: Մեր ընտանիքի մի քանի սերունդներ սովորել են Օքսֆորդում:

Նա շեղակի նայեց ինձ, և ես հասկացա, թե ինչու էր Ջորդան Բեյքերը կասկածի ենթարկել այդ փաստը: Նա հապշտապ անցավ «սովորել են Օքսֆորդում» բառերի վրայով, քիչ մնաց կուլ տար կամ ձայնը խզվեր այդ խոսքի վրա, կարծես փորձից գիտեր, որ այն իրեն միշտ էլ նեղություն է պատճառել: Այս տարակուսանքն էր պատճառը, որ նրա ասածը կորցրեց իր հավաստի ուժը, և ես մտածեցի, թե նա կյանքում իրոք մի սոսկալի գաղտնիք ունի:

— Ո՞ր քաղաքից ես, — իմիջիայլոց հետաքրքրվեցի:

— Սան Ֆրանցիսկոյից:

— Հը՛մ:

— Իմ բոլոր հարազատները մեռել են, և ինձ շատ մեծ հարստություն է բաժին ընկել:

Նրա ձայնը հանդիսավոր էր, ասես իր գերդաստանի հանկարծակի բնաջնջման խորհրդածությունը դեռևս հետապնդում էր նրան: Մի պահ կասկածեցի, որ ինձ ձեռ է առնում, սակայն հայացք ձգելով նրա վրա՝ հրաժարվեցի այդ մտքից:

— Դրանից հետո ես երիտասարդ ռաջայի կյանք էի վարում Եվրոպայի մայրաքաղաքներում՝ Փարիզ, Վենետիկ, Հռոմ: Գոհարեղենի հավաքածու էի կազմում, գլխավորապես՝ սուտակի, խոշոր գազանների որսի գնում, նկարչությամբ զբաղվում հենց այնպես՝ ինձ համար, և փորձում մոռանալ անցած-գնացած մի տխուր պատմություն:

Ես ճիգ գործադրեցի զսպելու թերահավատ ծիծաղս: Նրա ծեծված խոսքերը ստեղծեցին Բուլոնյան անտառում վազր հետապնդող փաթթոցավոր տիկնիկի կերպարը, որի ամեն մի ձեղքից թեփ էր շաղ գալիս:

— Հետո սկսվեց պատերազմը, բարեկամ: Դա մեծ սփոփանք էր ինձ համար: Ես շատ անգամ փորձեցի մեռնել, բայց ասես կախարդված լինեի. մահն ինձ մոտ չէր գալիս: Եվ որպես ավագ լեյտենանտ՝ մեկնեցի ճակատ: Արգոնի անտառում գնդացրային երկու ջոկատով այնքան հեռու գնացինք, որ մեր աջ ու ձախ կողմերում բացվեց կես մղոնի չափ տարածություն, որտեղ հետևակը չէր կարող մտնել: Այսպես մնացինք երկու օր ու գիշեր, հարյուր երեսուն մարդ՝ տասնվեց գնդացրով, երբ վերջապես մերոնք վրա հասան, սպանվածների կույտի մեջ զանազանեցին գերմանական երեք տարբեր ստորաբաժանումների նշանները: Ինձ մայրի կոչում տվին, և յուրաքանչյուր դաշնակից պետություն պարզևատրեց շքանշանով, նույնիսկ փոքրիկ Մոնտենեգրոն՝ Ադրիատիկ ծովի ափին, ինձ չմոռացավ:

Փոքրիկ Մոնտենեգրոն: Կարծես այդ բառերը առանձնացնելով՝ նա վեր հանեց ու ժպտալով ողջունեց դրանք: Ժպիտը վկայակոչում էր Մոնթենեգրոյի խոովահույզ պատմությունը և կարեկցում ժողովրդի խիզախ պայքարին: Այն

լիովին գնահատում էր քաղաքական իրադարձությունների շղթան, որի օղակներից մեկն էր Մոնտենեգրոյի ջերմ սրտիկից բխած այդ պարզևր: Իմ անվստահությունը տարրալուծվեց հիացմունքի մեջ, ասես ես հապշտապ տասնյակ ամսագրեր թերթեցի:

Գեթսբին ձեռքը տարավ գրպանը, և ափիս մեջ ընկավ ժապավենի ծայրին ամրացված մետաղի մի կտոր:

— Ահա՛ այն՝ Մոնտենեգրոյի շքանշանը:

Ի զարմանս ինձ՝ նշանը իրական տեսք ուներ՝ «*Oderi de Danilo, Montenegro, Nicolas Rex*» շրջանաձև փորագրությամբ:

— Շրջիր:

— «Մայր Ձեյ Գեթսբիին,— կարդացի:— Անվեհեր խիզախության համար»:

— Ահա և մեկ ուրիշ բան, որ միշտ մոտս է: Հիշատակ օքսֆորդյան օրերից: Նկարվել ենք Թրինիթի բուլեջի բակում, ձախ կողմինս Դոնքասթերի կոմսն է:

Մարզական բաճկոններով մի խումբ երիտասարդներ անկաշկանդ կանգնած էին կամարի տակ, որի հետևից տեսանելի էին մի շարք աշտարակների ձողերը: Ես անմիջապես ճանաչեցի Գեթսբիին՝ ձեռքին քրիքեթի ծեծան. նա փոքր—ինչ ավելի երիտասարդ տեսք ուներ:

Ուրեմն այդ բոլորը ճիշտ էր: Ես պատկերացրի վագրի հրակեզ մորթիները Մեծ ջրանցքի վրայի իր պալատում, պատկերացրի նրան սուտակների թանկարժեք տուփը բանալիս, որպեսզի նրանց բոսորագույն խայտանքով մեղմի կոտրված սրտի մղկտոցը:

— Ես այսօր պատրաստվում եմ դիմելու քեզ մի մեծ խնդրանքով,— գոհունակությամբ գրպանը դնելով հուշանվերները՝ ասաց նա:— Դրա համար էլ մտածեցի որոշ բան պատմել իմ մասին: Չեմ ուզում ինձ պատահական մարդու տեղ դնես: Հասկանում ես՝ ինձ միշտ անծանոթ մարդկանցով եմ շրջապատում, տեղից տեղ գնում՝ փորձելով մոռանալ

այն տխուր պատմությունը, որի մասին քիչ առաջ հիշատակեցի:— Նա վարանեց:— Այսօր կիմանաս:

— Նախաճաշին:

— Ո՛հ, ավելի ուշ: Ես պատահմամբ իմացա, որ դու օրիորդ Բեյքերին թեյի ես հրավիրել:

— Ուզում ես ասել՝ սիրահարված ես նրան:

— Ո՛հ, ինչ ես ասում, բարեկամ: Սակայն նա բարի գտնվեց և համաձայնեց խոսել քեզ հետ այդ գործի մասին:

Ես գաղափար անգամ չունեի, թե ինչ «գործ» էր դա, բայց ավելի շուտ բարկացա, քան հետաքրքրվեցի: Ես Ջորդանին թեյի չէի հրավիրել, որպեսզի խոսեի պարոն Ջեյ Գեթսբիի մասին: Համոզված էի, որ նրա խնդրանքը բացարձակ հիմարություն էր լինելու, և մի պահ ավստասացի նրա հյուրընկալ տունը ոտք դնելուս համար:

Նա այլևս չխոսեց: Որքան մոտենում էինք քաղաքին, այնքան ավելի ինքնամփոփ ու զուսպ էր դառնում նա: Անցանք Ռուզվելթ նավահանգիստը, թռուցիկ տեսանք օվկիանոսային կարմրագոտի նավերը, սլացանք գլաքարով սալարկված խղճուկ արվարձանով, որտեղ կողք կողքի շարված էին դեռևս մարդաշատ գարեջրատները՝ իննհարյուրական թվականների ոսկետառ խամրած ցուցանակներով: Հետո երկու կողմերում բացվեց խարամի մարգագետինը, և մի պահ տեսա տիկին Վիլսոնին պոմպը ձեռքին եռանդուն աշխատելիս:

Մեքենայի թևատարած անվաճածկոցների լույսի տակ մենք անցանք Ասթորիայի կեսը, բայց միայն կեսը, որովհետև երբ սողոսկեցինք վերգետնյա ճանապարհի բարձր սյուների արանքը, ես լսեցի մոտոցիկլետի ծանոթ դիսկոլիսկոցը, և մի կատաղած ոստիկան հասավ մեզ:

— Դե լավ, ոչինչ, բարեկամ,— գոռաց Գեթսբին: Մենք դանդաղեցրինք: Մի սպիտակ թուղթ հանելով դրամապանակից՝ նա թափահարեց այն ոստիկանի աչքի առաջ:

— Ամեն ինչ կարգին է,— ձեռքը տանելով գլխարկին՝ ասաց ուստիկանը:— Հաջորդ անգամ Ձեր մեքենան կճանաչեմ, պարոն Գեթսբի: Ներեցե՛ք:

— Այդ ի՞նչ էր,— հարցրի ես,— Օքսֆորդի լուսանկա՛րը:

— Մի անգամ ուստիկանության պետին լավություն եմ արել, և ամեն Ծննդյան տոնի առթիվ նա ինձ շնորհավորական բացիկ է ուղարկում:

Ահա և մեծ կամուրջը, որի ձողերի արանքից ընկնող արևալույսը թրթռում է շարժվող մեքենաների վրա, իսկ գետից այն կողմ սպիտակ շաքարաբեկորներով վեր է խոյանում ինչ—որ մեկի ցանկությամբ կառուցված քաղաքը, որի համար տրամադրված փողն ամենևին չի զգացվում: Երբ Բվինսբորո կամրջից ես դիտում քաղաքը, ասես առաջին անգամ ես տեսնում, և այն իր խելացնոր համարձակությամբ քեզ խոստանում է աշխարհի ողջ խորհրդավորությունն ու գեղեցկությունը:

Մեր կողքով անցավ ծաղիկներով բեռնված մի դիակառք, որի հետևից գալիս էին վարագույրներն իջեցրած երկու կառք և մի քանի այլ՝ պակաս մոայլ տեսքով կառքեր՝ ընկերների համար: Վերջիններս նայեցին մեզ իրենց ողբերգական աչքերով ու Եվրոպայի հարավարևելցուն հասուն կարճ վերին շուրթերով, և ես ուրախացա, որ Գեթսբիի հիասքանչ մեքենան խառնվեց նրանց կիրակնօրյա տխուր երթին: Բլեքվել կղզում մեր կողքով սլացավ մի լիմուզին, որի վարորդը սպիտակամորթ էր, իսկ հետևում նստած էին նորաձև հագնված երեք սևամորթ՝ երկու տղամարդ ու մի աղջիկ: Ես բարձրաձայն ծիծաղեցի, երբ նրանք աչքերի սպիտակուցները գոռոզ ախոյանի հայացքով սևեռեցին մեզ վրա:

«Հիմա, երբ մենք անցանք կամուրջը, ինչ ասես կարող է պատահել,— մտածեցի ես:— Ի՞նչ ասես... Նույնիսկ Գեթսբին ոչ ոքի չի զարմացնի»:

Աշխույժ եռուզեռ էր: Մենք պայմանավորվել էինք հանդիպել Քառասուններկուերորդ փողոցի օդասուն ներքնահարկում: Դրսի պայծառությունից աչքերս կկոցած՝ ես վերջապես նախասրահում զանազանեցի Գեթսեբիին ինչ-որ մեկի հետ զրուցելիս:

— Պարոն՝ Քարավեյ, սա իմ ընկերն է՝ պարոն Վուլֆշայմը:

Մի փոքրամարմին տափակաքիթ հրեա բարձրացրեց խոշոր գլուխը, և նրա քթանցքերի ճոխ բուսականությունը ողջունեց ինձ: Քիչ անց կիսախավարում հայտնագործեցի նրա պստիկ աչքերը:

— ...Ես միայն մի անգամ նայեցի նրան, — ասաց պարոն Վուլֆշայմը՝ ուժեղ սեղմելով ձեռքս, — և ինչ եք կարծում, ինչ արեցի:

— Ինչ, — քաղաքավարությամբ հետաքրքրվեցի:

Սակայն, ըստ երևույթին, հարցն ինձ չէր տրված, որովհետև ձեռքս թողնելուն պես նա իր արտահայտիչ քիթն ուղեց Գեթսեբիի կողմը:

— Ես փողը Քեթսփոյին տվի ու ասացի. «Լսի՛ր, Քեթսփո՛ւ, մինչև բերանը չփակի, մի գրոշ անգամ չտաս»: Եվ նա անմիջապես փակեց բերանը:

Գեթսեբին, մեր երկուսի թևը մտած, մեզ առաջնորդեց ռեստորանի դահլիճը, որտեղ պարոն Վուլֆշայմը կուլ տվեց նոր սկսելիք նախադասությունը և ընկավ գիշերաշրջիկի ինքնամոռացության մեջ:

— Վիսկի՛, — հարցրեց ավագ մատուցողը:

— Ինչ հաճելի տեղ է, — ասաց պարոն Վուլֆշայմը՝ աչքի անցկացնելով առաստաղի երիցական հավերժահարսերին: Սակայն դիմացի ռեստորանն ինձ ավելի է դուր գալիս:

— Վիսկի, — գլխով արեց Գեթսեբին, ապա դարձավ դեպի պարոն Վուլֆշայմը: — Այնտեղ շատ շոգ է:

— Համաձայն եմ: Շոգ է ու նեղվածք, այո՛, բայց լի հուշերով:

— Այդ ի՞նչ ռեստորան է:

— Հին Մեթրոփոլը:

— Հին Մեթրոփոլ, — թախծոտ մտմտաց պարոն Վուլֆշայմը:— Անցած-գնացած դեմքեր, մեռած ընկերներ, որոնք այլևս հարություն չեն առնի: Մինչև կյանքիս վերջը չեմ մոռանա այն գիշերը, երբ կրակեցին Ռոզի Ռոզենթալի վրա: Վեց հոգի էինք սեղանի շուրջը, իսկ Ռոզին այդ գիշեր բոլորից շատ էր ուտում ու խմում: Արդեն լուսանում էր, երբ մատուցողը տարօրինակ հայացքով մոտեցավ ու ասաց, որ դրսում մարդ է սպասում նրան: «Գալիս եմ»: Ռոզին ուզում է ոտքի ելնել, բայց ես չեմ թողնում. «Լսի՛ր, Ռոզի՛, եթե ուզում եմ քեզ տեսնել, թող սրիկաններն այստեղ գան: Ի՛նձ լսիր, ոչ մի դեպքում տեղիցդ չշարժվես»: Առավոտյան ժամը չորսն էր: Եթե վարագույրները բարձրացնեին, սենյակը կլուսավորվեր:

— Եվ ի՞նչ, նա գնաց, — միամիտ հարց տվի:

— Իհարկե գնաց, — պարոն Վուլֆշայմի քիթը ցատումով շաչեց:— Դռան մոտ շրջվեց ու ասաց. «Մի՛ թող, որ մատուցողը տանի սուրճս»: Մայթի վրա երեք անգամ կրակեցին փորին ու քշեցին գնացին:

— Չորսին էլ էլեկտրական աթոռին նստեցրին, — մտաբերեցի ես:

— Հինգին՝ Բեքերի հետ միասին:— Նրա ռունգերը հետաքրքրասիրությունից ձևափոխվեցին:— Ինչպես հասկացա, դուք «գործընձեր» եք փնտրում:

Նման անցումը անակնկալ էր ինձ համար: Գեթսբին պատասխանեց իմ փոխարեն:

— Ո՛չ, ո՛չ, — բացականչեց նա:— Սա այն մարդը չէ:

— Չէ՛, — պարոն Վուլֆշայմը ասես հիասթափություն ապրեց:

— Սա պարզապես ընկերս է: Ես ձեզ ասացի, որ ուրիշ անգամ կխոսենք այդ մասին:

— Ներեցե՛ք,— ասաց պարոն Վուֆշայմը,— ես ձեզ ուրիշի տեղ դրի:

Մատուցեցին հյութեղ ձաշ՝ մտով ու բանջարեղենով, և պարոն Վուֆշայմը, մոռանալով Հին Մեթրոփոլի հուզիչ մթնոլորտը, գործի անցավ վայրագ հաճույքով: Ուտելիս նրա աչքերը աղեղնաձև պտտվում էին դահլիճով մեկ, և շրջանն ավարտելու համար նա դարձավ զննելու ետևում նստածներին: Ըստ երևույթին, եթե ես ներկա չլինեի, նա մի թոուցիկ հայացք կձգեր սեղանի տակ ևս:

— Լսիր, բարեկամ,— Գեթսբին, առաջ թեքվելով, դիմեց ինձ:— Վախենամ առավոտյան մեքենայի մեջ քեզ մի քիչ բարկացրի:

Կրկին այդ հմայիչ ժպիտը, բայց այս անգամ չհանձնվեցի:

— Չեմ սիրում հանելուկներ,— պատասխանեցի,— և չեմ հասկանում՝ ինչու անկեղծ չես ասում, թե ուզածդ ինչ է: Ի՞նչ կարիք կար գործին խառնել օրիորդ Բեյքերին:

— Դե, ոչ մի հանելուկ էլ չկա,— հավատացրեց նա:— Օրիորդ Բեյքերը հայտնի դեմք է և երբեք վատ բան չի անի:

Հետո հանկարծ նայեց ժամացույցին, վեր թռավ ու շտապ սենյակից դուրս նետվեց՝ թողնելով ինձ պարոն Վուֆշայմի հետ:

— Նա պետք է զանգահարի,— աչքերով ուղեկցելով նրան՝ ասաց պարոն Վուֆշայմը:— Չտեսնված մարդ է, գեղեցիկ և ոտքից գլուխ կատարյալ:

— Այո՛:

— «Օգսֆորդն է» ավարտել:

— Հը՛մ:

— Նա «Օգսֆորդի» համալսարանում է սովորել՝ Անգլիայում: Գիտե՞ք, չէ՞, «Օգսֆորդի» համալսարանը:

— Լսել եմ:

— Աշխարհի ամենահայտնի համալսարաններից է:

— Վաղո՞ց եք ճանաչում Գեթսբին:

— Մի քանի տարի կլինի,— հպարտ պատասխանեց:— Նրա հետ ծանոթանալու պատիվն ունեցա պատերազմից անմիջապես հետո: Մի ժամ զրուցեցինք, և հասկացա, որ հիանալի դաստիարակված մարդ է: Ես մտածեցի. «Ա՛յ, լավ կլիներ այսպիսի երիտասարդին տուն հրավիրել ու ներկայացնել մորդ ու քրոջդ»:— Նա լռեց:— Դուք երևի իմ թեքաճարմանդներն եք դիտում:

Մտքովս անգամ չէր անցել դրանց ուշադրություն դարձնել, բայց այդ խոսքի վրա անմիջապես նայեցի: Ճարմանդները պատրաստված էին փղոսկրի անկանոն կտորներից, որոնց ձևը չափազանց ծանոթ էր:

— Մարդկային սեղանատամների հիանալի նմուշներ են,— տեղեկացրեց նա:

— Իրոք,— զննեցի ես մոտիկից:— Հետաքրքիր միտք է:

— Ըհը՛,— նա թեքերը վեր քաշեց:— Գեթսքին շատ փափկանկատ է կանանց հանդեպ: Երբեք ընկերոջ կնոջը հարկ եղածից ավելի չի նայի:

Երբ այս բնագրային վստահության առարկան վերադարձավ ու նստեց, պարոն Վուլֆշայմը մի ումպով խմեց սուրճը և ոտքի ելավ:

— Շնորհակալություն նախաձաշի համար: Իսկ հիմա գնամ, որպեսզի չշահագործեմ երիտասարդների հյուրընկալությունը:

— Ինչո՞ւ եք շտապում, Մեյնր,— թույլ ասաց Գեթսքին:

Պարոն Վուլֆշայմը ձեռքը բարձրացրեց, ասես օրհնելիս լիներ:

— Դուք շատ սիրալիր եք, բայց ես այլ սերնդի եմ պատկանում,— հանդիսավոր ազդարարեց նա:— Դուք Ձեր խոսակցություններն ունեք՝ Ձեր զբաղմունքների, կանանց ու...— նրա ձեռքի մեկ այլ շարժումը փոխարինեց երևակայական գոյականին:— Ինչ վերաբերում է ինձ, ես հիսուն տարեկան եմ և չեմ ուզում այլևս նեղություն պատճառել Ձեզ իմ ներկայությամբ:

Երբ մենք ձեռք թողնեցինք, և նա շրջվեց գնալու, նրա ողբերգական քիթը թեթևակի դողում էր: Ես մտածեցի, թե արդյոք որևէ անզգույշ խոսքով չեմ վիրավորել նրան:

— Երբեմն նա չափազանց զգայուն է դառնում,— բացատրեց Գեթսբին:— Բայց ընդհանուր առմամբ հայտնի դեմք է Նյու Յորքում, մերոնցից է Բրոդվեյում:

— Բայց ո՞վ է նա, դերասան:

— Ո՛չ:

— Ատամնաբոյժ:

— Մեյեր Վուլֆշայմը: Ո՛չ, նա խաղամուլ է:— Գեթսբին մի պահ կանգ առավ, ապա սառնասրտորեն շարունակեց:— Նա այն մարդն է, որ 1919 թվականի բեյսբոլի մրցումների գլխին խաղ խաղաց:

— Խա՞ղ խաղաց բեյսբոլի մրցումների գլխին,— կրկնեցի ես ապշահար:

Ես իհարկե հիշում էի 1919 թվականի բեյսբոլի մրցումները, բայց եթե երբևէ մտածել էի այդ մասին, ապա ընդունել էի դա որպես սոսկ անցած-գնացած մի դեպք՝ իր անխուսափելի վախճանով: Երբեք մտքովս չէր անցել, որ մի մարդ կարող էր հիսուն միլիոն մարդկանց բախտի հետ խաղալ սեյֆ բացող ավագակի նպատակասլացությամբ:

— Այդ ինչպե՞ս է կարողացել նման բան անել:

— Առիթից օգտվել կարողացավ. ահա թե ինչ:

— Իսկ ինչո՞ւ բանտում չէ:

— Չկարողացան ապացույցներ գտնել, բարեկամ: Նա ճարպիկ մարդ է:

Ես ինքս ցանկացա հաշիվը փակել: Երբ մատուցողը մանրն էր վերադարձնում, հանկարծ լեփ-լեցուն դահլիճի մյուս ծայրին նկատեցի Թոմ Բյուքենենին:

— Արի՛ գնանք,— ասացի:— Ես պետք է ծանոթներիցս մեկին բարևեմ:

Տեսնելով մեզ՝ Թոմը ոտքի ցատկեց ու մեծ-մեծ քայլերով ընդառաջ եկավ:

— Այդ ո՞ր ես կորել, — բացականչեց նա: — Դեյզին սար-
սափելի կատաղած է, որ անգամ չես զանգահարում:

— Ծանոթացե՛ք. պարոն Գեթսքի, պարոն Բյուքենեն:

Նրանք չոր ձեռք թոթվեցին, և հանկարծ Գեթսքիի դեմքը
ձգվեց շփոթմունքից:

— Ինչևէ, ի՞նչ կա-չկա, — հարցուփորձեց Թոմը: — Այդ
ինչպե՞ս ես հայտնվել այստեղ:

— Ես նախաճաշում էի պարոն Գեթսքիի հետ:

Ես շրջվեցի դեպի Գեթսքին, բայց նա չքվել էր:

* * *

— Մի անգամ՝ 1917 թվականի հոկտեմբերին, — մի քա-
նի ժամ անց «Փլացա» հյուրանոցի պարտեզում, ուղիղ թիկ-
նակով աթոռի վրա ձիգ նստած, սկսեց իր պատմությունը
Ջորդան Բեյքերը, — ես քայլում էի Լուիսվիլի փողոցներով,
մերթ մայթ էի բարձրանում, մերթ անցնում սիզամարգի վրա:
Ես ավելի հաճույքով քայլում էի խոտի վրայով, որովհետև
հագել էի Անգլիայից բերած ռետինե ներբաններով կոշիկ-
ներ, որ խրվում էին փափուկ գետնին: Իսկ իմ նոր վանդակա-
վոր փեշը քամուց ուռչում էր, և ամեն անգամ, երբ բարձրա-
նում էր, տների ճակատի կարմիր, ճերմակ, կապույտ դրո-
շակները ձգվում էին ու անխրախուսաբար ծապացնում:

Դրոշներից ամենամեծն ու սիզամարգերից ամենալայ-
նը պատկանում էին Դեյզի Ֆեյի տանը: Նա այդ ժամանակ
տասնութ տարեկան էր՝ երկու տարով մեծ ինձնից, և ոչ մի
աղջիկ Լուիսվիլում նրա պես հաջողություն չունեք: Նա միշտ
սպիտակ զգեստ էր հագնում և ուներ փոքրիկ երկտեղ սպի-
տակ մեքենա: Ամբողջ օրը հեռախոսը զնգում էր նրա տանը,
և Թեյլոր ճամբարի երիտասարդ սպաները հուզված համա-
ռում էին՝ երեկոյան «գեթ մեկ ժամ» նրա հետ անցկացնելու
մենաշնորհն ունենալու համար:

Երբ այդ առավոտ ես անցնում էի նրա տան մոտով, տե-
սա մայթեզրին կանգնած սպիտակ մեքենան, որտեղ նստած

էր Դեյզին ինձ անծանոթ լեյտենանտի հետ: Նրանք այն-
քան էին տարված միմյանցով, որ Դեյզին ինձ նկատեց լոկ
այն ժամանակ, երբ ես արդեն հինգ ոտնաչափ էի հեռու:

— Հեյ, Ջորդան,— անսպասելիորեն ձայնեց նա:—
Խնդրում եմ, մո՛տ արի:

Ես ինձ շոյված զգացի, որ պետք եմ եկել նրան. իմ բոլոր
ավագ ընկերուհիներից Դեյզին ինձ համար ամենահրապու-
րիչն էր: Նա հարցրեց, թե արդյոք ես Կարմիր խա՛չ եմ գնում՝
վիրակապ պատրաստելու: Ասացի՝ այո՛: Դե լավ, ուրեմն հա-
ղորդի՛ր նրանց, որ այսօր գալ չեմ կարող: Դեյզին խոսում էր,
իսկ երիտասարդ սպան նայում էր նրան այնպիսի հայաց-
քով, ինչպիսին յուրաքանչյուր աղջիկ կցանկանա, որ իրեն
երբևէ նայեն, և քանի որ այդ բոլորն ինձ վրա հուզիչ տպավո-
րություն թողեց, ես մինչև օրս չեմ մոռացել այդ դեպքը: Սպա-
յի անունը Ջեյ Գեթսբի էր, և դրանից հետո ես չորս տարի
չտեսա նրան, նույնիսկ ավելի ուշ, երբ հանդիպեցինք Լոնգ
Այլընդում, մտքովս անգամ չանցավ, որ դա հենց նույն
մարդն է:

Դա 1917-ին էր: Հաջորդ տարին ես ինքս երկրպագու-
ներ ունեցա, սկսեցի մասնակցել մրցումների, այնպես որ
Դեյզինն քիչ էի տեսնում: Նա իրենից տարիքով մեծերի
հետ էր հանդիպում, եթե, իհարկե, հանդիպում էր: Սարսա-
փելի լուրեր էին շրջում նրա մասին, թե ինչպես մայրը ձմռան
մի օր բռնացրել էր նրան ճամպրուկը դասավորելիս, որպես-
զի գնա Նյու Յորք՝ ճանապարհ դնելու մի զինվորի, որը մեկ-
նում էր օվկիանոսից այն կողմ: Նրան անմիջապես կան-
խել էին, և դրանից հետո նա մի քանի շաբաթ տանը ոչ մեկի
հետ չէր խոսել: Նա այլևս զինվորականների հետ չէր սիրա-
բանում, այլ միայն քաղաքի հարթաթաթ ու կարճատես երի-
տասարդների հետ, որոնց բանակ չէին տարել:

Աշնանը Դեյզին առաջվա պես կրկին ուրախ-զվարթ էր:
Ջինադադարից անմիջապես հետո տվեց իր առաջին պա-
րահանդեսը, իսկ փետրվարին նշանվեց նորօլեանցի մի

երիտասարդի հետ: Հունիսին ամուսնացավ Չիկագոյից եկած Թոմ Բյուքենենի հետ. Լուիսվիլում մինչ այդ նման շուք ու փայլով հարսանիք չէր եղել: Թոմը հարյուր մարդ բերեց հետը՝ չորս լիքը վագոն, և վարձեց «Մյուլբախ» հյուրանոցի մի ամբողջ հարկը, իսկ հարսանիքի նախօրեին երեք հարյուր հիսուն հազար դոլար արժողությամբ մարգարտյա մանյակ նվիրեց կնոջը:

Ես հարսնաքույր էի: Հարսանեկան ճաշից կես ժամ առաջ մտա նրա սենյակը և տեսա նրան պատկած անկողնու վրա. իր ծաղկազարդ զգեստի մեջ նա հունիսյան գիշերվա պես սիրուն էր, սակայն հարբած կառապանի պես: Մի ձեռքին բռնել էր սոթերնի շիշը, իսկ մյուսին՝ նամակ:

— Շն... շնորհավորիր ինձ, — մոթմոթաց նա: — Կյանքումս առաջին անգամ խմել եմ և լավ եմ արել:

— Ի՞նչ է պատահել, Դեյզի:

Ճիշտն ասած՝ վախեցա: Երբեք որևէ աղջկա այդ վիճակում չէի տեսել:

— Ահա՛, նայիր: — Նա ձեռքը մտցրեց աղբացանցի մեջ, որ դրված էր կողքին՝ անկողնու վրա, և դուրս հանեց մարգարտյա մանյակը:

— Տար՛ ներքև և տո՛ւր, ում որ պետք է: Ասա՛, որ Դեյզին փոխել է միտքը, այդպես էլ ասա՛. «Դեյզին փոխել է միտքը»:

Եվ սկսեց լաց լինել, արտասվում էր ու արտասվում: Ես դուրս նետվեցի սենյակից, գտա մոր սպասուհուն: Հետո մենք դուռը կողպեցինք ու քարշ տվինք Դեյզիին սառը ջրի տակ: Նա ձեռքից բաց չէր թողնում նամակը. հետը տարավ լողասենյակ, ձեռքի մեջ ձգմած թաց գունդ սարքեց, և միայն այն ժամանակ թույլ տվեց դնեմ օձառամանի մեջ, երբ տեսավ, որ այն փխրվում է ձյան պես:

Եվ այլևս ոչ մի խոսք չասաց: Մենք նրա քթին անուշադրի լուծույթ մոտեցրինք, ճակատին սառույց դրինք, հագրինք զգեստը, և կես ժամ անց, երբ սենյակից ելանք, մանյակը նրա վզին էր, միջադեպն ավարտված էր: Հաջորդ օրը՝

ժամը հինգին, նա առանց տատանվելու ամուսնացավ Թոմ Բյուքենենի հետ և երեք ամսով մեկնեց հարսանեկան ճամփորդության դեպի հարավային ծովերը:

Ես հանդիպեցի նրանց Սանտա Բարբարայում, երբ արդեն վերադառնում էին, և նույնիսկ զարմացա՝ տեսնելով, որ նրա խելքը գնում է ամուսնու համար: Եթե Թոմը մի ընկերակցությամբ քաղաքում էր սենյակից, Դեյզին անհանգիստ շուրջն էր նայում ու հարցնում՝ Թոմն ո՞ր գնաց, և մինչև նրա հայտնվելը տեղը չէր գտնում: Ժամերով նստում էր ավազին՝ ամուսնու գլուխը ծնկներին դրած, մատներով շոյում քունքերը և զմայլված դիտում: Կհուզվեիր նրանց միասին տեսնելով, ծիծաղը կգար՝ լուռ հիացական ծիծաղ: Ես նրանց հանդիպեցի օգոստոսին: Իսկ իմ մեկնումից մեկ շաբաթ անց Թոմը Վենտուրայի ճանապարհին գիշերով խփվեց ավտոֆուրգոնի, և նրա մեքենայի առջևի անիվը դուրս թռավ: Թերթերում գրեցին նաև այն աղջկա մասին, որ նրա հետ էր նույն մեքենայի մեջ, որովհետև աղջկա թևը կոտրվել էր: Նա Սանտա Բարբարայի հյուրանոցի սպասուհին էր:

Հաջորդ ապրիլին Դեյզին աղջիկ ունեցավ, և նրանք մեկ տարով մեկնեցին Ֆրանսիա: Ես նրանց մեկ-մեկ տեսնում էի, մի անգամ զարնանը հանդիպեցի Կաննում, մի անգամ էլ՝ Դովիլում, իսկ հետո վերադարձան տուն ու հաստատվեցին Չիկագոյում: Ինչպես գիտես, Դեյզին Չիկագոյում բոլորը ճանաչում էին: Նրանց շուրջը վիստում էր թեթևաբարո մարդկանց մի խումբ՝ բոլորն էլ հարուստ, բոլորն էլ երիտասարդ ու շփացած, բայց Դեյզին կարողանում էր իր անարատ հեղինակությունը պահպանել, գուցե այն պատճառով, որ չէր խմում: Մեծ առավելություն է խմող մարդկանց շրջանում չխմելը: Կարող ես լեզուդ քեզ քաշել, ավելին՝ կարող ես սեփական անկարգությունդ այնպես թաքցնել, որ մարդիկ ոչինչ չտեսնեն ու չզգան: Հավանաբար Դեյզին երբեք սիրեկան չէր պահում, բայց նրա ձայնի մեջ ինչ-որ բան կա...

Եվ ահա մոտ վեց շաբաթ է անցել այն օրից, երբ նա առաջին անգամ այդ տարիների ընթացքում լսեց Գեթսեմի անունը: Հիշում ես, երբ հետաքրքրվեցի, թե արդյոք Վեսթ Էզզում Գեթսեմի անունով մեկին ճանաչում ես: Քո գնալուց հետո նա եկավ սենյակս, արթնացրեց ինձ ու հարցրեց. «Ի՞նչ Գեթսեմի»: Քունը գլխիս նկարագրեցի նրան, և նա տարօրինակ, անբնական ձայնով ասաց, որ դա հենց նույն մարդն է, որի հետ մի ժամանակ մտերիմ է եղել: Եվ նոր միայն գլխի ընկա, որ այդ Գեթսեմին նրա սպիտակ մեքենայում նստած լեյտենանտն էր:

* * *

Երբ Ջորդան Բեյքերը ավարտեց պատմությունը, մենք արդեն դուրս էինք եկել «Փլացայից» և երկտեղ բաց մեքենայով սլանում էինք Կենտրոնական զբոսայգու միջով: Արևը մայր էր մտել քաղաքի արևմտյան մասի Հիսուներորդ փողոցում՝ կինոաստղերի բարձրահարկ հարկաբաժինների հետևը, և հեղձուցիչ մթնշաղում խոտի վրա ծղրիղների նման խոնված աղջնակները զրնգուն երգում էին.

*Շեյխն եմ ես Արաբիայի,
Եվ իմն է սերդ նաբաթի:
Գիշերը, երբ մտնես դու քուն,
Կգամ վրանդ ես թաքուն:*

- Տարօրինակ զուգադիպություն,— ասացի ես:
- Բայց դա զուգադիպություն չէ:
- Ի՞նչ ես ուզում ասել:
- Գեթսեմին միտումով է գնել այդ տունը, որովհետև գիտեր, որ Դեյզին ապրում է ծովածոցի այն կողմում:

Ուրեմն սոսկ աստղերը չէին, որոնց նա տենչացել էր այն հունիսյան գիշերը: Գեթսեմին հանկարծ կենդանություն առավ

իմ աչքի առաջ՝ դուրս սպրդած իր աննպատակ շքեղության պատյանից:

— Նա ուզում է իմանալ, — շարունակեց Ջորդանը, — արդյոք մի օր կհրավիրեն Դեյզլին քեզ մոտ և իրեն էլ կկանչեն:

Խնդրանքի համեստությունը ցնցեց ինձ: Նա սպասել էր հինգ տարի, գնել առանձնատուն, որի շլացուցիչ փայլին թոշում էին պատահական մծեղները, և այդ ամենը նրա համար, որպեսզի իրեն «հրավիրեն» ինչ-որ անծանոթի տուն:

— Միթե նման փոքր խնդրանքի համար արժեք ինձ այդ բոլորը պատմել:

— Վախենում է, որովհետև շատ երկար է սպասել: Կարծում էր՝ կվիրավորվես: Հասկանո՞ւմ ես, նա, ըստ էության, բռնի է:

Ինչ-որ բան ինձ դուր չեկավ:

— Իսկ ինչո՞ւ քեզ չխնդրեց կազմակերպել այդ հանդիպումը:

— Նա ուզում է, որ Դեյզլին տեսնի իր տունը, — բացատրեց Ջորդանը: — Իսկ դու հարևան ես:

— Ա՛ա:

— Ինձ թվում է, նա հույս է ունեցել, որ մի գեղեցիկ օր Դեյզլին կգա իր երեկոյթներից մեկին, — շարունակեց Ջորդանը, — բայց Դեյզլին այդպես էլ չեկավ: Հետո սկսեց իմիջիայլոց հարցուփորձ անել մարդկանց, թե արդյոք նրան ճանաչում են, և ես առաջինն էի: Այդ գիշեր նա ինձ պարի հրավիրեց, և դու պետք է լսեիր, թե ինչպիսի հմտությամբ անցավ բուն նյութին: Ես, իհարկե, անմիջապես առաջարկեցի նախաճաշ կազմակերպել Նյու Յորքում, ինձ թվաց՝ հիմա խելքը կթոցնի: «Ես որևէ անթույլատրելի բան չեմ ուզում, — շարունակ կրկնում էր նա: — Ես ուզում եմ նրան տեսնել հարևանի տանը»:

— Եվ երբ ասացի, որ դուք Թոմի հետ հին ծանոթներ եք, քիչ մնաց հրաժարվել այդ մտքից: Նա Թոմին չի ճանաչում և

տարիներ շարունակ աչքի է անցկացրել Չիկագոյի լրագրերը Դեյզիի մասին որևէ տեղեկություն իմանալու նպատակով:

Արդեն գիշեր էր, երբ մենք սուզվեցինք կամրջակի մթության մեջ: Ես գրկեցի Ջորդանի արևափայլ ուսերը, թեթևակի սեղմեցի ու ճաշի հրավիրեցի: Ես այլևս չէի մտածում ո՛չ Գեթսբիի, ո՛չ էլ Դեյզիի մասին. ինձ միայն հետաքրքրում էր այս անխոռվ, վճռական, համաշխարհային թերահավատություն քարոզող սահմանափակ անձը, որն անփույթ հենվել էր թևիս: Առանձնահատուկ բուռն կրքով մի միտք էր հնչում իմ ականջներում՝ «Քեզ կամ հետապնդում են, կամ դու ես հետապնդում, կամ շարունակ զբաղված ես, կամ էլ հոգնած»:

— Իսկ Դեյզին կյանքում որևէ բան պետք է ունենա,— մրմնջաց Ջորդանը:

— Ուզո՞ւմ է Գեթսբիին տեսնել:

— Նա ոչինչ չգիտի: Գեթսբին չի ուզում, որ Դեյզին իմանա այդ մասին: Դու պետք է հենց այնպես հրավիրես նրան թեյի:

Մենք անցանք խավար ծառապատնեշի կողքով, և զրոսայգին անցնելուն պես մեղմ, գունատ լույսի մեջ ցուլաց Հիսունիններորդ փողոցի ճակատամասը: Ի տարբերություն Գեթսբիի և Թոմ Բյուքենենի՝ ես չունեի ընտրյալ աղջիկ, որի անմարմին դեմքը սավառներ մութ քիվերի և շլացուցիչ ազդերի վրա, այնպես որ պինդ գրկեցի կողքինիս: Նրա գունատ, արհամարհական բերանը ժպտաց, ու ես կրկին սեղմեցի նրան՝ այս անգամ հպվելով դեմքին:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Երբ այդ գիշեր ես վերադարձա Վեսթ Էզզ, մի պահ վախեցա, թե տունս հրդեհ է ընկել: Ժամը երկուսն էր, և թերակղզու ամբողջ ծայրը շողշողում էր վառ լույսի մեջ, որի անբնական փայլն ընկել էր թփուտների գլխին, իսկ ճամփեզրի լարերի վրա բարակ, երկարավուն ստվերներ էին բեկբեկում: Սակայն անկյունը շրջվելով՝ տեսա Գեթսբիի տունը՝ լուսաթաթախ աշտարակից մինչև մառանը:

Սկզբում մտածեցի, որ հերթական երեկույթ է կամ վայրի խրախճանք, և հյուրերն ամբողջ տնով մեկ «Տափկնոցի» կամ «Սարդինները տուփի մեջ» են խաղում: Բայց ծպտուն անգամ չէր լսվում: Միայն քամին էր սվսվում ծառերի մեջ ու թոցնելով լարերը՝ մերթ հանգցնում էր լույսերը, մերթ վառում, ասես տունը աչքով էր անում մթությանը: Երբ իմ տաքսին փնչացնելով հեռացավ, ես տեսա Գեթսբիին սիզամարգի վրայով առաջանալիս դեպի ինձ:

— Տունդ համաշխարհային տոնավաճառ է հիշեցնում,—
ասացի:

— Իրո՞ք,— նա ցրված շրջվեց դեպի տունը:— Սենյակներս էի աչքի անցկացնում: Ե՛կ իմ մեքենայով գնանք Քոնի Այլընդ, բարեկամ:

— Ուշ է:

— Դե, գուցե լողանք ավազանում: Այս ամառ ոչ մի անգամ ջուրը չեմ մտել:

— Ես պետք է գնամ քնելու:

— Ինչպես ուզում ես:

Չսպված հետաքրքրությամբ նայելով ինձ՝ նա սպասում էր:

— Ես խոսեցի օրիորդ Բեյքերի հետ, — վերջապես ասացի:— Վաղը կգանգեմ Դեյզիին ու թեյի կիրավիրեմ:

— Հիանալի է, — անփույթ նետեց նա:— Ես չեմ ուզում քեզ նեղություն պատճառել:

— Ո՞ր օրն է քեզ հարմար:

— Որ օրը որ քեզ է հարմար, — շտապ ուղղեց նա ինձ:— Ես չէի ուզենա քեզ նեղություն պատճառել:

— Ինչ կասես վաղը չէ մյուս օրվա մասին:

Նա մի վայրկյան մտածեց, ապա չկամությամբ ասաց.

— Ես ուզում եմ խոտը հնձել:

Մենք երկուսով նայեցինք այնտեղ, որտեղ պարզորոշ գծագրվում էր իմ անխնամ սիզամարզի եզրագիծը, որից այն կողմ նրա վառ կանաչ, լավ խնամված հողամասն էր: Ինձ թվաց՝ նա իմ խոտը նկատի ուներ:

— Մեկ ուրիշ բան էլ կա... — անվճռական կմկմաց նա:

— Գուցե հետաձգենք մի քանի օր, — հարցրի:

— Չէ, ես այդ չեմ ուզում ասել: Միգուցե... — նա մտովի փորձում էր մի շարք հարմար բառեր ընտրել:— Դե, ես կարծում եմ... Դե, ինձ լսիր, բարեկամ, դու շատ փող չես աշխատում, չէ՛:

— Ոչ շատ:

Պատասխանս կարծես համարձակություն տվեց նրան, և առավել վստահ շարունակեց.

— Այդպես էլ գիտեի: Կներես, իհարկե, բայց հասկանում ես, ես այստեղ մի փոքր գործ եմ ձեռնարկել, մի տեսակ կողմնակի գործ, հասկանում ես: Եվ ահա մտածեցի, որ եթե շատ փող չես աշխատում... դու արժեթղթեր ես վաճառում, չէ՛, բարեկամ:

— Փորձում եմ:

— Ուրեմն քեզ կհետաքրքրի: Քեզնից շատ ժամանակ չի խլի, և լավ փող կաշխատես: Փոքր-ինչ գաղտնի բնույթի գործ է:

Ես հիմա հասկանում եմ, որ այլ հանգամանքներում այդ խոսակցությունը կարող էր կյանքիս ընթացքը փոխել: Բայց քանի որ առաջարկը բացահայտ և անպատշաճ կերպով ուղղված էր ինձ ծառայություն մատուցելուն՝ որպես շնորհակալություն, ես այլ ընտրություն չունեի, քան նրան մերժելը:

— Շատ զբաղված եմ,— ասացի:— Զգացված եմ, բայց կողմնակի աշխատանք վերցնել չեմ կարող:

— Դու Վուլֆշայմի հետ գործ չես ունենա:— Ըստ երևույթին, նա մտածեց, թե ինձ խրտնեցնում են «գործընդերները», որոնց մասին հիշատակվեց նախաձաշին, բայց ես հավատացրի նրան, որ սխալվում է: Նա քիչ էլ սպասեց՝ հույս ունենալով, որ խոսակցություն բաց կանեմ, բայց ես խիստ մտազբաղ էի, այնպես որ դժկամությամբ տուն գնաց:

Գլուխս պտտվում էր Նյու Յորքում անցկացրած երեկոյից հետո, կարծեմ՝ տուն մտնելուն պես անմիջապես քուն մտա: Այդպես էլ չիմացա՝ արդյոք Գեթսբին գնա՞ց Բոնի Այլընդ և կամ մինչև լույս «սենյակներն աչքի անցկացրե՞ց», մինչ նրա տունը շարունակում էր շողշողալ ճաճանչների մեջ: Հաջորդ առավոտ գրասենյակից զանգահարեցի Դեյզիին և հրավիրեցի թեյի:

— Թոմի հետ չգաս,— զգուշացրի:

— Ի՞նչ:

— Թոմի հետ չգաս:

— Թո՞մն ով է,— միամիտ հարցրեց:

Պայմանավորված օրը տեղատարափ անձրև էր գալիս: Ժամը տասնմեկին անձրևանոց հագած մի մարդ, քարշ տալով հնձիչ մեքենան, բախեց իմ դուռը և ասաց, որ պարոն Գեթսբին է ուղարկել՝ խոտ հնձելու: Ես անմիջապես հիշեցի, որ չէի նախազգուշացրել իմ ֆինն սպասուհուն հյուրերի մասին: Ստիպված մեքենա նստեցի և գնացի Վեսթ Էզգ՝ նրան գտնելու՝ անցնելով սպիտակեցրած խոնավ տների միջով. ի դեպ, ճանապարհին գնեցի մի քանի թեյի բաժակ, կիտրոն ու ծաղիկ:

Ծաղիկներն անտեղի էին, քանի որ ժամը երկուսին Գեթսեբին անթիվ-անհամար ծաղկամաններ ուղարկեց՝ մի ամբողջ ջերմոց: Մի ժամ անց դուռը հապշտապ բացվեց, և Գեթսեբին՝ սպիտակ կոստյումով, արծաթավուն վերնաշապիկով և ոսկեգույն փողկապով, ներս ընկավ: Նա գունատ էր, աչքերի տակ անքնությունից սև շրջանակներ էին գոյացել:

— Ամեն ինչ կարգին է,— իսկույն հարցուփորձ արեց նա:

— Եթե խոտը նկատի ունես, ապա հիանալի ստացվեց:

— Ինչ խոտ,— անտարբեր հարցրեց:— Ան, բակի խոտը,— ու դուրս նայեց պատուհանից, բայց դատելով նրա դեմքի արտահայտությունից՝ հազիվ թե որևէ բան տեսավ:— Իրոք լավ է ստացվել,— ցրված նկատեց:— Ինչ-որ թերթում կարդացի, որ ժամը չորսին անձրևը կկտրվի: Կարծեմ՝ «*Journal*»-ում էր: Ամեն ինչ պատրաստ է, դե՛, ինչպես ասեմ, ամեն ինչ պատրաստ է թեյի համար:

Ես նրան տարա խոհանոց, որտեղ նա փոքր-ինչ նախատինքով խեթեց ֆինն սպասուհուն: Հետո միասին զննեցինք կիտրոնի տասնյակ թխվածքները, որ գնել էի հրուշակավաճառից:

— Ինչ կարծիքի ես,— հարցրի:

— Հիանալի է, հիանալի,— ապա ավելացրեց անտեղի,— բարեկամ:

Ժամը երեքն անց կեսին անձրևը վերածվեց խոնավ մառախուղի, որի մեջ ցողի հատուկենտ նվազ կաթիլներ էին լող տալիս: Գեթսեբին անմիտ աչքերով թերթում էր Քլեյի «*Էկոնոմիկան*»՝ վեր թռչելով սպասուհու ֆիննական քայքից, որը ցնցում էր խոհանոցի հատակը, և ժամանակ առ ժամանակ հայացքն ուղղում պղտոր պատուհանների ուղղությամբ, կարծես դրսում անտեսանելի ու տագնապալի դեպքեր էին միմյանց հաջորդում: Նա հանկարծ ոտքի ելավ ու անվստահ ձայնով հայտարարեց, որ գնում է տուն:

— Ինչ պատահեց:

— Եկող չկա: Ուշ է:— Նայեց ժամացույցին, ասես ինչ-որ տեղ անհետաձգելի գործեր իրեն էին սպասում:— Ես չեմ կարող ամբողջ օրը սպասել:

— Հիմարություն մի արա: Չորսից երկու բուպե է պակաս:

Նա խղճալի տեսքով նստեց, կարծես հրել էի, և ճիշտ այդ պահին լավեց մոտեցող մեքենայի ձայնը: Երկուսս էլ վեր թռանք, իսկ ես, թեթևակի հուզված, շտապեցի դուրս:

Մերկ, կաթկթացող եղրևանիների կողքից առաջանում էր մի մեծ, բաց մեքենա: Այն շուտով կանգ առավ: Դեյզիի խանդավառ ժպիտից փայլատակող դեմքն ինձ նայեց թեք դրած նարդոսագույն գլխարկի տակից:

— Ահա՛ թե որտեղ ես ապրում, հոգյակս:

Նրա ձայնի զվարթ կարկաչը սթափեցնող միջոց էր անձրևի տակ: Սկզբում միմիայն լսողությամբ հետևեցի նրա ելևէջին, ապա որսացի բառերը: Մազի խոնավ մի փունջ կապույտ վրձնահարվածի նման կպած էր այտին, իսկ ձեռքը, որը բռնեցի մեքենայից իջնելիս, պսպղուն անձրևակաթիլներով էր պատած:

— Ինչ է, սիրահարվել ես ինձ,— շնչաց ականջիս:— Ինչո՞ւ էիր ուզում, որ մենակ գամ:

— Դա Ռեքրենթ ամրոցի գաղտնիքն է: Վարորդիդ ուղարկիր, թող գնա մի քիչ գրոսնի:

— Ֆերդի, գնա՛, մի ժամից կգաս:— Հետո լուրջ շնչաց,— նրա անունը Ֆերդի է:

— Բենզինն ազդում է քթին:

— Չէ՛, երևի,— միամիտ ասաց:— Ինչո՞ւ:

Մենք ներս մտանք: Ի գարմանս ինձ՝ հյուրասենյակը բացարձակ դատարկ էր:

— Ա՛յ քեզ բան,— գոչեցի ես:

— Ինչ է պատահել:

Նա հետ նայեց, որովհետև դուռը թեթևակի, արժանապատվությամբ բախեցին: Ես գնացի բացելու: Գեթսքին,

մահիվան պես գունատ, ձեռքերը ծանրությունների նման խցկած բաձկոնի գրպանները, կանգնած էր ջրափոսի մեջ ու ողբերգական հայացքով նայում էր աչքերիս:

Ձեռքերը չհանելով գրպաններից՝ նա քայլեց իմ հետևից դեպի նախասրահ, կտրուկ շրջվեց, ասես լարախաղաց լիներ, ու անհետացավ հյուրասենյակում: Սրտիս բախոցին ունկնդիր՝ ես փակեցի փողոցի դուռը ուժգնացող անձրևի դեմ:

Կես րոպե լռություն տիրեց: Ապա հյուրասենյակից լսվեց խեղդուկ մի մրմունջ, ծիծաղի պատառիկ, որին հաջորդեց Դեյզիի ձայնի արհեստական զիլ հնչյունը:

— Շատ ուրախ եմ քեզ նորից տեսնելու համար:

Կրկին դադար, որը չափազանց երկար տևեց: Նախասրահում անելիք չունեի, ուստի մտա սենյակ: Գեթսբին՝ ձեռքերը դեռևս գրպաններում, հենվել էր բուխարուն՝ բացարձակապես հանգիստ կամ նույնիսկ ձանձրացած մարդու կերպարանք ընդունած: Գլուխն այնքան էր հետ գցել, որ դիպչում էր բուխարու կանգնած ժամացույցին, և այս դիրքով խելահեղ աչքերով նայում էր Դեյզիին, որը երկչոտ, բայց շնորհագեղ նստած էր բարձր աթոռի եզրին:

— Մենք հին ծանոթներ ենք, — մոթմոթաց Գեթսբին: Նա մի ակնթարթ նայեց ինձ, և նրա շրթունքները փորձեցին շինծու ժպիտ գոյացնել:

Բարեբախտաբար, ժամացույցը նրա գլխի ճնշումից սպառնագին տեղահան եղավ, որի վրա Գեթսբին շրջվեց ու բռնելով դողդոջուն մատներով՝ ուղղեց: Ապա ձգված նստեց բազմոցին, արմունկը հենեց կողափայտին, ծնոտը ձեռքի մեջ առավ:

— Ներիր, քիչ մնաց ժամացույցը գցել:

Դեմքս շիկնել, արևադարձային փայլ էր ստացել: Գլխումս հազար ու մի տափակաբանություն էր պտտվում, բայց մեկն անգամ չէի կարողանում արտաբերել:

— Հին ժամացույց է, — հիմարաբար ասացի:

Բոլորս մի պահ հավատացինք, որ այն ընկած է հատակին՝ ջարդուփշուր եղած:

— Մենք վաղուց իրար չենք տեսել,— ասաց Դեյզին սովորականի պես իմիջիայլոց:

— Նոյեմբերին հինգ տարի կլինի:

Գեթսբիի մեքենայական պատասխանը առնվազն մեկ րոպեով հետաձգեց խոսակցությունը: Ես հուսահատ առաջարկեցի գնալ խոհանոց՝ թեյ պատրաստելու, բայց չարաբաստիկ ֆիններ սկուտեղը ձեռքին ներս մտավ:

Բաժակների ու թխվածքների փրկարար իրարանցումը որոշակի նյութական աշխուժություն մտցրեց: Գեթսբին, ասես սովեր դարձած, կույ էր եկել մի անկյունում և տխուր աչքերով ուշադիր մեզ էր հետևում, մինչ ես ու Դեյզին հանգիստ զրուցում էինք: Եվ քանի որ խաղաղությունն ինքնին վերջնանպատակը չէր, ես ներողություն խնդրեցի առաջին իսկ պատեհ առիթով և ոտքի ելա:

— Ո՞ր ես գնում,— անմիջապես տագնապեց Գեթսբին:

— Հիմա կգամ:

— Սպասիր, ես քեզ հետ խոսելիք ունեմ:

Նա իմ հետևից արագ մտավ խոհանոց, փակեց դուռը և խղճալի ձայնով շշնջաց. «Աստված իմ, Աստված»:

— Ի՞նչ է պատահել:

— Այս ի՞նչ սխալ գործեցի,— սկսեց տարուբերել գլուխը,— սարսափելի, սարսափելի սխալ:

— Դու շփոթված ես, ահա թե ինչ,— բարեբախտաբար ավելացրի,— Դեյզին էլ է շփոթված:

— Շփոթված,— թերահավատորեն հարցրեց նա:

— Քեզնից ոչ պակաս:

— Այդպես բարձր մի խոսիր:

— Կարծես փոքր տղա լինես,— չհամբերեցի ես:— Այն էլ՝ կոպիտ տղա: Դեյզին մենակ ես թողել, եկել:

Նա բարձրացրեց գլուխը՝ վերջ տալու իմ խոսքերին, նայեց ինձ մի այնպիսի նախատինքով, որը ես երկար չէի

կարողանում մոռանալ, ապա զգույշ բացեց դուռը և մտավ հյուրասենյակ:

Ես դուրս եկա հետնամուտքից ձիշտ այնպես, ինչպես Գեթսեփին էր կես ժամ առաջ դուրս եկել և անհանգիստ պտույտներ գործել տան շուրջը, և վազեցի դեպի սև հանգուցավոր հսկա ծառը, որի խիտ սաղարթը կպահպաներ ինձ թրջվելուց: Անձրևը կրկին սաստկացել էր, և իմ անհարթ սիզամարզը, որ մինչ այդ կարգի էր բերել Գեթսեփի պարտիզպանը, այժմ վերածվել էր մանր ճահիճների ու նախապատմական ճահճուտների: Ծառի տակից դիտելու արժանի ոչինչ չկար՝ բացի Գեթսեփի հսկայական տնից, և ես կես ժամ աչքերս հառել էի դրան, ինչպես Կանտը՝ եկեղեցու զանգակատանը: Մի գարեջրագործ էր կառուցել այն տասնյակ տարիներ առաջ, երբ մարդիկ տարված էին «ոճավոր» ճարտարապետությամբ, և պատմում էին, թե ինչպես էր հարևաններին առաջարկել վճարել նրանց հինգ տարվա հարկերը միայն նրա համար, որ համաձայնեին հարդով ծածկել իրենց տանիքները: Գուցե նրանց մերժումը կոտորել էր տոհմական օջախ հիմնելու նրա ոգին, որովհետև նա շուտով վշտահար հոգին ավանդել էր: Երբ նրա երեխաները ծախեցին տունը, դռան վրա դեռևս սև պսակ էր կախված: Ամերիկացիները հեշտությամբ են հաշտվում ճորտ լինելու գաղափարին, բայց համառությամբ չեն ուզում ընդունել իրենց գյուղական ծագումը:

Կես ժամ անց արևը կրկին շողաց, և նպարավաճառի մեքենան, պտույտ գործելով, կանգ առավ Գեթսեփի տան առաջ՝ ուտելիք բերելով ծառաների համար: Ես համոզված էի, որ տերը մի պատահ առնգամ բերանը չէր դնելու: Սպասուհին սկսեց բացել վերնահարկի պատուհանները՝ հայտնվելով յուրաքանչյուրի մեջ և կախվելով կենտրոնական մեծ պատուհանից՝ մտազբաղ թքեց դեպի պարտեզ: Հետ գնալու ժամանակն էր: Մինչ անձրևում էր, թվում էր, թե լսում եմ բուռն հուզմունքի վերածված նրանց շշուկները

հյուրասենյակում՝ մերթ ցածր, մերթ բարձր: Բայց այժմ անձրևի դադարելու հետ մեկտեղ ասես լռություն իջավ տան մեջ:

Ներս մտնելիս հնարավորին չափ աղմուկ բարձրացրի խոհանոցում, միայն վառարանը տեղահան չարի, բայց նրանք հաստատ ոչինչ չլսեցին: Բազմոցի երկու ծայրերին նստած՝ նայում էին միմյանց, կարծես ինչ-որ հարց էին տվել և կամ տալու: Նախկին շփոթմունքի հետքն անգամ չէր մնացել: Դեյզիի աչքերն արցունքաշաղ էին, և ինձ տեսնելուն պես ոտքի ցատկեց ու սկսեց թաշկինակով մաքրել դեմքը հայելու առաջ: Գեթսբիի մեջ կատարված փոփոխությունը պարզապես ապշեցուցիչ էր: Նա տառացիորեն փայլում էր, վերածվել էր մի նոր անհատի, որն, անխոս, իր հորդ ցնծությամբ ողողել էր փոքրիկ սենյակս:

— Այդ դ՞ու՞ ես, բարեկամ,— ուրախացավ նա, կարծես տարիներ չէինք հանդիպել: Մի պահ ինձ թվաց, թե ուր որ է ձեռքս կթոթվի:

— Անձրևը դադարել է:

— Իսկապե՞ս,— երբ հասկացավ, թե ինչի մասին է խոսքը, երբ տեսավ, որ սենյակում արևի ցուլքեր են խայտում, ժպտաց, ինչպես կծպտար եղանակի տեսաբանը և կամ լույսի հավերժ ջատագովը, ու անմիջապես հաղորդեց լուրը Դեյզիին:

— Ի՞նչ կասես սրան, անձրևը դադարել է:

— Ես շատ ուրախ եմ, Ջեյ:— Նրա ցավատանջ, վշտահար ելևէջող ձայնը հնչեց անսպասելիորեն ուրախ:

— Ես ուզում եմ ձեզ հրավիրել իմ տուն,— ասաց նա:— Ես կուզենայի Դեյզիին ցույց տալ իմ տունը:

— Դու իրո՞ք ուզում ես, որ ես էլ գամ,— հարցրի:

— Իհարկե, բարեկամ:

Դեյզին վերև գնաց լվացվելու (ես շատ ուշացումով հիշեցի, որ սրբիչներս չեմ փոխել), իսկ մենք դուրս եկանք այգի:

— Այստեղից տունս սիրուն է, չէ՛: Տե՛ն՝ արևն ինչպես է շողում ճակատամասի վրա:

Ես գլխով արեցի:

— Հը՛մ,— նրա աչքերը սահեցին տան յուրաքանչյուր կամարապատ դռան յուրաքանչյուր քառակուսի աշտարակի վրայով:— Երեք տարի եմ աշխատել, որ ձեռք զցեմ այն:

— Իսկ ես կարծում էի՝ ժառանգություն ես ստացել:

— Իհարկե, բարեկամ,— մեքենաբար հաստատեց նա,— բայց փողի մեծ մասը կորցրի տազնապի տարիներին՝ պատերազմի ժամանակ:

Ըստ երևույթին, նա հազիվ էր հասկանում իմ ասածը, որովհետև երբ հարցրի, թե ինչով է զբաղված, պատասխանեց՝ «Դա իմ գործն է», և անմիջապես գլխի ընկավ, որ հարմար պատասխան չէր տվել:

— Զանազան գործեր եմ արել,— ուղղեց նա:— Սկզբում դեղի գործ էի անում, հետո՝ նավթի: Բայց հիմա ոչ մեկն էլ չեմ անում:— Նա ինձ ավելի ուշադիր նայեց:— Ուզում ես ասել, որ միտքդ փոխել ես անցյալ օրվա առաջարկությանս մասին:

Ես չհասցրի բերանս բանալ, երբ Դեյզին դուրս եկավ՝ արևի տակ փայլեցնելով հագուստի կոճակների երկշարքը:

— Մի՞թե այդ հսկայական տունը քոնն է,— մատնացույց անելով՝ գոչեց նա:

— Հավանո՞ւմ ես:

— Այո՛, բայց չեմ հասկանում, թե ինչպես ես մեն-մենակ ապրում այնտեղ:

— Ինձ մոտ միշտ մարդ է լինում՝ գիշեր-ցերեկ: Հետաքրքիր մարդիկ: Հոչակավոր մարդիկ:

Փոխանակ Սաունդի առափնյա կարճ ճամփով գնալու՝ իջանք մայրուղի ու մտանք կենտրոնական մուտքից: Հիացական բացականչություններով Դեյզին գմայլվում էր տան ֆեոդալական ուրվագծով, որը տարբեր կողմերից տարբեր տեսք էր ստանում երկնքի ֆոնի վրա, պարտեզի բուսականությամբ, նարգիզների բուրմունքով, ծաղկուն

ալոճենու և սալորենու անուշ հոտով, ցախկեռասի հույլ ոսկերույրով: Տարօրինակ էր, որ մարմարյա աստիճանների վրա չէին խշխշում ներս ու դուրս անող խայտաբղետ զգեստներ, և ոչ մի այլ հնչյուն լսելի չէր՝ բացի թռչունների ճովողյունից:

Իսկ ներսում, երբ մենք թափառում էինք Մարի Անթուանտի և Ռեստավրացիայի ոճի երաժշտասենյակներում ու դահլիճներում, ինձ թվաց, թե յուրաքանչյուր բազմոցի ու սեղանի տակ թաքնված հյուրեր կային, որոնք հրաման էին ստացել շունչները պահելու, մինչև մենք կանցնեինք: Երբ Գեթսեփին «Մերթոն Քոլեջ Գրադարանի» դուռը ծածկեց, ես պատրաստ էի երդվելու, որ լսեցի Բվեճի դիվային ծիծաղը:

Մենք վերև գնացինք, անցանք «ոճավոր» ննջարանների միջով, որտեղ թարմ ծաղիկները բազմերանգին էին տալիս վարդագույն և բաց մանուշակագույն մետաքսյա հարդարանքի մեջ, դիտեցինք զարդասենյակները, ավազանասենյակները, հատակում տեղադրված տաշտակներով լոգարանները և սենյակներից մեկում դեմառդեմ ելանք գիշերանոցը հագին, զգզզված մազերով մի մարդու, որը հատակի վրա լյարդի համար բուժիչ վարժություններ էր անում: Պարոն Քլիփսփրինգերն էր՝ կենվորը: Ես առավոտյան նրան տեսել էի լողափին սովահար թափառելիս: Ի վերջո մտանք Գեթսեփի հարկաբաժինը՝ բաղկացած ննջարանից, լոգարանից և Ռոբերթ Ադամ ոճի առանձնասենյակից, որտեղ խմեցինք մի բաժակ շարտրոգ, որը նա հանեց պատի պահարանից:

Գեթսեփին հայացքը չէր կտրում Դեյզլիից և, կարծում եմ, վերագնահատեց իր տան յուրաքանչյուր իր՝ ըստ սիրեցյալի աչքերի արտահայտության: Երբեմն ինքն էր վերացած նայում շուրջը՝ իր ունեցվածքին, ասես Դեյզլիի իրական և ցնցող ներկայությունից բոլոր իրերը դադարել էին իրական լինելուց: Մի անգամ սայթաքեց և քիչ մնաց ընկներ աստիճաններից:

Ննջարանը բոլոր սենյակներից ամենապարզն էր՝ չհաշված զարդասեղանի փայլատ, մաքուր ոսկուց պատրաստված հարդարանքի պարագաները: Դեյզին հրճվանքով վերցրեց խոզանակը, հարթեցրեց մազերը, իսկ Գեթսեփին նստեց, ձեռքով աչքերին հովանի արեց ու ծիծաղեց:

— Տարօրինակ է, բարեկամ,— զվարթ ասաց նա:— Որքան էլ ուզում եմ... որքան էլ փորձում եմ:

Ըստ երևույթին, նա երկու իրավիճակ էր անցել և այժմ երրորդն էր թևակոխում: Շփոթմունքից ու չպատճառաբանված ուրախությունից հետո Դեյզիի ներկայությունը նրան հիացմունք էր պատճառում: Նա այնքան երկար էր այդ մասին մտածել, այնքան պարզ էր պատկերացրել այդ ամենը, համբերությամբ, այսպես ասած՝ ատամները սեղմած, աներևակայելի լարվածությամբ սպասել, որ հիմա չափից դուրս լարված ժամացույցի զսպանակի պես թուլանում էր:

Մի բոպե անց նա իրեն հավաքեց և ի ցույց մեզ՝ բացեց երկու հսկայական պահարան, որտեղ կախված էին բազմաթիվ կոստյումներ, խալաթներ, փողկապներ, իսկ տասնյակ վերնաշապիկներ աղյուսների նման շարք էին կազմել կողք կողքի:

— Անզլիայում կա մեկը, ով ինձ համար շորեր է գնում: Գարնան ու աշնան սկզբին ուղարկում է այն ամենը, ինչ անհրաժեշտ է:

Նա վերցրեց մի կույտ վերնաշապիկ ու սկսեց մեկառմեկ շարտել մեր առջև. մաքուր վուշից, հաստ մետաքսից, նրբագեղ բամբակյա կտորից վերնաշապիկներ, որոնք ընկնելիս կորցնում էին ծալքերը և գույնզգույն խառնաշփոթությամբ ծածկում սեղանը: Տեսնելով մեր հիացմունքը՝ նա բերեց նորերը և ճոխ փափուկ կույտը առավել բարձրացավ գծավոր, պուտավոր, վանդակավոր, մարջանագույն, կանաչավուն, երկնագույն, բաց նարնջագույն, վրան լեղակագույն սկզբնատառեր ասեղնագործած վերնաշապիկներով: Հանկարծ Դեյզին խեղդուկ ձայն հանեց ու գլուխը հակելով վերնաշապիկների վրա՝ սկսեց ուժգին արտասվել:

— Այնքան սիրուն են,— հեկեկում էր նա, և նրա ձայնը գնալով խլացավ փափուկ ծալքերի մեջ:— Լացս գալիս է, որովհետև ես երբեք... երբեք չեմ տեսել այսպիսի գեղեցիկ շապիկներ:

* * *

Տնից հետո մենք անցանք պարտեզը, ավազանը, ջրաթիռը և միջամառային ծաղիկները դիտելուն, բայց նորից սկսեց անձրևել, և երեքով, կանգնած պատուհանի մոտ, աչքներս հառեցինք հեռուն՝ դեպի Սաունդի պեճուփ մակերեսը:

— Եթե մառախուղ չլիներ, ծովածոցի ծայրին կերևար տունը,— ասաց Գեթսբին:— Նավամատույցի ծայրին ամբողջ գիշեր կանաչ լույս է վառվում:

Դեյզին կտրուկ թևանցուկ արեց նրան, բայց Գեթսբին ասես ամբողջովին խորասուզված էր հենց նոր ասածի մեջ: Հավանաբար հասկացավ, որ այդ լույսի հսկայական նշանակությունը առհավետ կորավ իր համար: Առաջ, երբ իրենց միջև ընկած էր անսահման տարածություն, նրան թվում էր, որ այդ լույսը շողում էր Դեյզիին շատ մոտ՝ համարյա կողքին՝ նման լուսնի հարևանությամբ թարթող աստղի: Այժմ այն կրկին վերածվեց կանաչ լապտերի՝ նավամատույցի ծայրին: Կախարդված առարկաների թիվը մեկով պակասել էր իր համար:

Ես սկսեցի քայլել սենյակի կիսախավարում՝ գննելով գանազան անորոշ իրեր: Գրասեղանի վերևի ծովայինի համազգեստով տարեց մարդու լուսանկարը գրավեց ուշադրությունս:

— Սա ո՞վ է:

— Սա՛: Պարոն Դան Քոդին է, բարեկամ:

Անունը ծանոթ էր:

— Նա մեռած է: Իմ լավագույն ընկերն էր:

Գզրոցի վրա Գեթսբիի փոքրիկ նկարն էր՝ նույնպես ծովայինի համազգեստով, գլուխը մարտականորեն հետ գցած. հավանաբար տասնութ տարեկանում էր նկարվել:

— Այ՛քեզ հրաշք,— բացականչեց Դեյզին:— Ինչ սիրուն մազափունջ է: Դու երբեք ինձ չես ասել, որ մազափունջ ես ունեցել կամ էլ զբոսանամ:

— Այստե՛ղ նայեք,— շտապ կանչեց Գեթսքին: Թերթերից շատ հատվածներ եմ կտրել հավաքել, բոլորն էլ՝ քո մասին:

Նրանք, կողք կողքի կանգնած, աչքի էին անցկացնում լրագրերի կտրածոները: Ես պատրաստվում էի խնդրելու Գեթսքիին, որ ցույց տա սուտակները, երբ հեռախոսը զնգաց:

— Այո՛... Դե, հիմա չեմ կարող խոսել... ես հիմա չեմ կարող խոսել, բարեկամ... ես ասացի՝ փոքր քաղաք... նա պետք է որ իմանա, թե ինչ բան է փոքր քաղաքը... Դե, եթե ըստ նրա՝ Դեթրոյթը փոքր քաղաք է, ուրեմն նա մեզ պետք չէ...

Եվ կախեց լսափողը:

— Եկե՛ք այստեղ, արագ,— բարձր ձայնեց Դեյզին՝ պատուհանին մոտենալով:

Անձրևը շարունակվում էր, արևմուտքում մթությունը ճեղքվել էր, և ծովի վրա կախվել էին կարմրավուն, ոսկեգույն փետրավոր ամպերի քուլաներ:

— Նայե՛ք դրանց,— շնչաց Դեյզին, ապա շշուկով ավելացրեց,— ես կուզեի բռնել այդ կարմրավուն ամպերից մեկը, քեզ նստեցնել վրան ու հրել:

Ես փորձեցի հրաժեշտ տալ, բայց նրանք չթողեցին: Գուցե իմ ներկայությունը ավելի էր զգացնել տալիս նրանց մենակությունը:

— Ես գիտեմ, թե ինչ պետք է անենք,— ասաց Գեթսքին:— Քլիփսփրինգերին կանչենք՝ դաշնամուր նվագի:

Նա դուրս եկավ սենյակից՝ բղավելով՝ Իվինգ, և քիչ անց վերադարձավ շվարած, փոքր-ինչ հյուծված, հարդագույն ցանցառ մազերով երիտասարդի հետ, որի քթին կրիայի պատյանից պատրաստված շրջանակով ակնոց էր դրված:

Քլիփսփրինգերն այժմ պատշաճորեն հագնված էր՝ վիզը բաց մարզական վերնաշապիկ, քաթանե ամպագույն տաբատ և թենիսի կոշիկներ:

— Մենք ձեզ խանգարեցինք,— քաղաքավարի հարցրեց Դեյզին:

— Ես քնած էի,— շփոթմունքի նոպայի մեջ գոռաց Քլիփսփրինգերը:— Այսինքն՝ ես արդեն արթնացել էի: Հետո վեր կացա...

— Քլիփսփրինգերը դաշնամուր է նվագում,— կարճ կտրելով՝ ասաց Գեթսփին:— Ճիշտ չեմ ասում, Իվինգ:

— Ես լավ չեմ նվագում: Մի կերպ նվագում եմ... Երկար ժամանակ չեմ...

— Գնանք ներքև,— ընդհատեց Գեթսփին և ինչ-որ բան չրխկացրեց: Մոխրագույն պատուհաններն անհետացան, և տունն ամբողջովին լուսավորվեց:

Երաժշտասենյակում Գեթսփին վառեց դաշնամուրի կողքի մենավոր լապտերը: Ապա դողդոջուն մատներով բռնած՝ լուցկին մոտեցրեց Դեյզիի ծխախոտին և նրա հետ միասին նստեց բազմոցին՝ սենյակի մյուս ծայրին, որտեղ միայն միջանցքի ջահն էր ցայտկլտում պսպղուն հատակի վրա:

Քլիփսփրինգերը «Սիրո բույնը» նվագելուց հետո շրջեց աթոռը և մթության մեջ դժբախտ հայացքով փնտրեց Գեթսփին:

— Հասկացիր, ես վաղուց է՝ չեմ նվագել: Ես ասացի քեզ, որ չեմ կարող նվագել: Ես կորցրել եմ...

— Շատ ես խոսում, բարեկամ, նվագիր,— հրամայեց Գեթսփին:

Առավոտից իրիկուն

Չիք մեզ համար խնդություն...

Դրսում քամին ոռնում էր, և Սաունդի վրա թեթև ամպ-
րոպ էր ճայթում: Վեսթ Էզզում արդեն վառվում էին լույսերը:
Մարդատար էլեկտրագնացքները, մխրձվելով անձրևի ու
մառախուղի մեջ, Նյու Յորքից տուն էին բերում ուղևորներին:
Մարդկային հոգու փոխակերպման ժամն էր, և օդը հազե-
ցած էր հուզմունքով:

*Հարուստներն են հարստանում անընդհատ,
Աղքատները՝ երեխաներ ծնում մինչ այդ...
Պարզից էլ պարզ է մի բան՝
Չիք մեզ համար խնդություն
Առավոտից իրիկուն...*

Երբ մոտեցա հրաժեշտ տալու, տեսա, որ Գեթսբիի դեմ-
քը շփոթմունքի նախկին արտահայտությունն էր ընդունել,
ասես մի տարտամ կասկած էր պատել նրան իր ներկա եր-
ջանկության մասին: Համարյա հինգ տարի: Նույնիսկ այսօր
կարող է պահեր եղած լինեին, երբ Դեյզին չէր հասել Գեթս-
բիի երագների Դեյզիին, ոչ թե իր մեղքով, այլ նրա ստեղծած
կերպարի հսկայական կենսունակության շնորհիվ: Այդ կեր-
պարը Դեյզիից լավն էր, աշխարհում ամեն ինչից վեր: Գեթս-
բին կերտել էր այն ստեղծագործական հանձարով՝ շարու-
նակ կատարելագործելով, զարդարելով ճամփին հանդի-
պած յուրաքանչյուր սիրուն փեսուրով: Ոչ մի շոշափելի գե-
ղեցկություն չի կարող մրցել այն բանի հետ, ինչ մարդ ի վի-
ճակի է կուտակելու իր դիվային հոգում:

Ես տեսա, թե ինչպես Գեթսբին իրեն նկատելիորեն հա-
վաքեց, բռնեց Դեյզիի ձեռքը և հուզված շրջվեց դեպի նա,
երբ վերջինս ինչ-որ բան էր շնջում նրա ականջին: Կար-
ծում եմ, որ ամենից շատ նրան ձգում էր Դեյզիի ձայնը՝ իր
փոփոխական, տենդագին ջերմությամբ, որովհետև ձայնը՝
չէր կարող անիրական լինել. այդ ձայնը անմահ երգ էր:

Նրանք մոռացել էին ինձ, բայց Դեյզին գլուխը բարձրացրեց և ձեռքը երկարեց իմ կողմը, իսկ Գեթսեբիի համար ես այլևս գոյություն չունեի: Մի անգամ ևս նայեցի նրանց, նրանք էլ՝ ինձ՝ հեռավոր հայացքով, կլանված իրենց ներքին կյանքով: Ես դուրս եկա սենյակից և անձրևի տակ իջա մարմարյա աստիճաններով՝ թողնելով նրանց այնտեղ միասին:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Այդ օրերին Նյու Յորքից մի երիտասարդ բախտախնդիր թղթակից եկավ Գեթսբիի տուն և հարցրեց, թե նա արդյոք չի ցանկանում ելույթ ունենալ:

— Ինչի՞ մասին, — քաղաքավարի հարցրեց Գեթսբին:

— Ինչի մասին ուզում եք:

Հինգ բուպե հարցուփորձից հետո պարզվեց, որ երիտասարդը խմբագրությունում լսել էր Գեթսբիի անունը ինչ-որ խոսակցության ընթացքում, որը նա կամ չէր ուզում ասել, կամ էլ չէր հիշում: Եվ իր ազատ օրը՝ առաջին իսկ պատեհ ժամին, գովելի նախաձեռնությամբ շտապել էր «հետախուզության»:

Դա պատահական կրակոց էր, բայց թղթակցի բնազդը չէր դավաճանել: Գեթսբիի համբավը, որ տարածում էին ամռանը նրա տանը հյուրընկալվող հարյուրավոր մարդիկ և այդպիսով՝ իրենց իրավունք վերապահում տեղյակ լինելու նրա անցյալին, ամռան ընթացքում գնալով մեծանում էր, մինչև նա դադարեց նորություն լինելուց: Ժամանակի մի քանի առասպելները, ինչպիսին է «Ամերիկա-Կանադա ստորգետնյա նավթատար խողովակի նախագիծը», կապում էին նրա անվան հետ, մեկ այլ հաստատ լուր էլ էր շրջում նրա մասին, որ նա ամեննին էլ տան մեջ չէր ապրում, այլ տան տեսքով նավի մեջ, որը գաղտնի նավարկում էր Լոնգ Այլենդի փի երկայնքով: Եվ ինչու էին այս պատմությունները Հյուսիսային Դաքոթայից եկած Ջեյմս Գեթսին բավականություն պատճառում, դժվար է ասել:

Ջեյմս Գեթս՝ սա էր նրա իսկական կամ, համենայն դեպս, օրինական անունը: Նա փոխել էր այն տասնյոթ տարեկան հասակում՝ իր գործունեության սկիզբն ազդարարող

այն նշանակալից պահին, երբ տեսել էր, թե ինչպես է Դան Քոդլիի զբոսանավը Սուփերիոր լճի ամենանենգ ծանծաղուտում խարխալս գցում: Ջեյմս Գեթսն էր, որ այդ օրը մաշված կանաչ վերնաշապիկով և քաթանե տաքատով դեգերել էր ափին, բայց արդեն Ջեյ Գեթսբին էր, որ մակույկով հասավ «Թաուլոմին» և զգուշացրեց Դան Քոդլին, թե կես ժամից բարձրացած քամին կպոկի խարխալը և ջարդուիշուր կանի զբոսանավը:

Հավանաբար նա իր նոր անունը նախօրոք էր պատրաստել: Նրա ծնողները անձար մարդիկ էին, ձախողակ հողագործներ, և նա իր երևակայության մեջ երբեք նրանց չէր ընդունել որպես իր իսկական ծնողների: Ըստ էության, Ջեյ Գեթսբին ծնունդ էր առել Լոնգ Այլընդի Վեսթ Էզգից և ինքն իր մասին ունեցած պատրոնական պատկերացումից: Նա Աստծու որդին էր, և եթե այդ խոսքը որևէ բան նշանակում է, ապա հենց դա է նշանակում, և նա պետք է կատարեր իր Հոր նախասահմանած գործը՝ ծառայեր համատարած, գոեհիկ, խաբուսիկ գեղեցկությանը: Այսպիսով՝ նա հնարել էր մի այնպիսի Ջեյ Գեթսբի, որը տասնյոթամյա պատանին ի վիճակի էր պատկերելու, և մինչև վերջ մնացել էր հավատարիմ այդ մտքին:

Տարուց ավելի նա Սուփերիոր լճի հարավային ափին թրև էր գալիս, երբեմն կակղամորթ մոլլուսկի կամ սաղմոնի առևտրով զբաղվում, երբեմն էլ՝ պատահած գործն անում, որպեսզի սննդի և վարձի փող հայթայթեր: Նրա արևահար կոփված մարմինն այդ ծանր օրերի մասամբ հոգնեցուցիչ, մասամբ ընդարմացուցիչ աշխատանքի մեջ ապրում էր բնական կյանքով: Նա վաղ էր ճանաչել կանանց, և քանի որ նրանք երես էին սովել նրան, սովորել էր արհամարհել նրանց՝ երիտասարդ կույսերին՝ անփորձության, իսկ մյուսներին՝ չնչին բաների շուրջ բարձրացրած աղմուկի համար, որն իր անսահման եսակենտրոն մտածողության մեջ ընդունում էր հարկ եղածին պես:

Սակայն նրա հոգին մշտապես խռովյալ էր: Գիշերները անկողնում նրան ամենահանդուգն և անհեթեթ մտքեր էին պաշարում: Անասելի տոնախմբությունների տիեզերք էր ծավալվում նրա ուղեղում, մինչ ժամացույցը տկտկում էր լվացարանի վրա, իսկ լուսինը թույլ լույսի շաղով ցողում էր հատակի խառնիխուռն շորերը: Ամեն գիշեր նրա երևակայությունը նորանոր նախշեր էր գործում, քանի դեռ քունը ինչ-որ պայծառ երազանքի պահին իր ինքնամոռաց գիրկը չէր առնում նրան: Որոշ ժամանակ այս գիշերային անուրջները հոգուն հանգստություն էին բերում, բավարար հավատ ներշնչում իրականության անիրականության համար և համոզում, որ աշխարհը հաստատորեն բազմած է փերիի թևերի վրա:

Դրանից մի քանի ամիս առաջ ապագա փառքի կանխագագցումը նրան առաջնորդեց Հարավային Միներտոտայի սուրբ Օլաֆի անվան փոքրիկ լյութերական քոլեջը: Նա այնտեղ մնաց երկու շաբաթ՝ վրդովված քոլեջի անհանդուրժելի անտարբերությունից իր ճակատագրի շեփորների հանդեպ՝ արհամարհելով դռնապանի աշխատանքը, որով ուսման վարձն էր վճարում: Հետո վերադարձավ Սուփերիոր լիճ՝ աշխատանք փնտրելու, և մի օր էլ Դան Քոդդիի գրոսանավը խարիսխ գցեց ծանծաղուտում:

Քոդդին այդ ժամանակ հիսուն տարեկան էր: Նա անցել էր Յուքոնի դպրոցը, Նևադայի արծաթահանքերը և մետաղի բոլոր տենդագին փնտրտուքները՝ յոթանասունհինգ թվականից սկսած: Մոնթանայի պղինձը նրան մի քանի միլիոն շահույթ բերեց՝ ամեննին չգրկելով առողջությունից, սակայն հասցրեց թուլամտության դուռը, և բազմաթիվ կանայք, իմանալով այս, փորձում էին նրան բաժանել իր փողերից: Այդ գայթակղիչ պատմությունների հետևանքով լրագրող էլլա Քեյը օգտվեց նրա տկարությունից՝ բռնելով մադամ դը Մենթընոնի դիրքը, իսկ Դան Քոդդին մազապուրծ փախավ գրոսանավով. այդ ամենին մարդիկ տեղեկացան 1902 թվա-

կանի թերթերի ճոռոմ հողվածներից: Եվ հինգ տարի շարունակ հյուրընկալ ավերով նավարկելուց հետո նա դարձավ Ջեյմս Գեթսի բախտը Փոքրիկ Աղջնակ ծովածոցում:

Երիտասարդ Գեթսի համար, որը, թիրին հենված, նայում էր վեր՝ ճաղապատ տախտակամածին, այդ գրոսանավը մարմնավորում էր աշխարհի ողջ գեղեցկությունն ու շքեղությունը: Հավանաբար նա ժպտում էր Քոդիի հետ խոսելիս. նա արդեն փորձից գիտեր, որ մարդկանց դուր է գալիս իր ժպիտը: Համենայն դեպս, Քոդին նրան մի քանի հարց տվեց (նրանցից մեկը ծնունդ տվեց իր նոր անվանը) և տեսավ, որ տղան հնարամիտ է ու վերին աստիճանի ինքնասեր: Մի քանի օր անց Քոդին նրան տարավ Դուլութ և նրա համար գնեց կապույտ բաձկոն, վեց գույգ սպիտակ քաթանե տաբատ և ծովայինի գլխարկ: Եվ երբ «Թուլումին» լողաց դեպի Վեսթ Ինդիա և Բերբերյան ավերը, Գեթսին նույնպես մեկնեց այդ նավով:

Նա անում էր պատահած գործը. հերթով ծառայեց որպես կառավարիչ, նավապետի օգնական, նավապետ, քարտուղար, նույնիսկ բանտապահ, քանի որ զգոն Դան Քոդին գիտեր, թե ինչ շռայլությունների է ընդունակ հարբած Դան Քոդին, և նման պատահականություններից զերծ մնալու համար ավելի ու ավելի էր վստահում Գեթսիին: Այս ամենը տևեց հինգ տարի, որի ընթացքում նավը երեք անգամ պտտվեց Եվրոպայի շուրջը: Դա կարող էր շարունակվել անորոշ ժամանակով, եթե մի գիշեր Բոստոնում Էլլա Քեյը նավ չմտներ, և ապա մի շաբաթ անց Դան Քոդին, հյուրընկալության կանոնները խախտելով, հոգին չավանդեր:

Ես հիշում եմ Գեթսիի ննջարանում կախված նրա լուսանկարը՝ սպիտակահեր, արևահար դեմքով, խիստ, ոչինչ չարտահայտող հայացքով մի մարդ՝ թիվ մեկ անառակը, որը դարավերջի Ամերիկայի արևելյան ափ վերադարձրեց արևմտյան անառակատների և գարեջրատների անզուսպ խրախճանքը: Քիչ խմելու համար Գեթսին անուղակիորեն

նրան էր պարտական: Երբեմն ուրախ հավաքույթների ժամանակ կանայք շամպայն էին լցնում նրա մագերի մեջ, իսկ ինքը սովորություն էր դարձրել միայն լիկյոր խմել:

Քողին նրան ժառանգություն թողեց քսանհինգ հազար դոլար: Սակայն նա չստացավ այդ փողը: Եվ այդպես էլ չհասկացավ իր դեմ բացված դատական գործը, բայց այն, ինչ մնաց միլիոններից, էլլա Քեյի բաժինը դարձավ: Իսկ ինքը տեր դարձավ մի հազվագյուտ կրթության՝ այդ հինգ տարիների յուրօրինակ փորձին, և Ջեյ Գեթսբիի տարտամ ուրվագիծը մարդկային կերպարանք ստացավ:

* * *

Նա այս բոլորն ինձ պատմեց շատ ավելի ուշ, բայց ես հարկ համարեցի գրի առնել այստեղ՝ հոգս ցնդեցնելու նրա անցյալի մասին եղած անհեթեթ լուրերը, որոնց մեջ ճշմարտության հատիկ անգամ չկար: Դեռ ավելին՝ նա ինձ այդ ամենը պատմեց մի այնպիսի խառը ժամանակ, երբ ես հասել էի այն աստիճանի, որ հավատում էի նրա շուրջ եղած ամեն ինչին կամ չէի հավատում ոչնչի: Եվ ահա որոշեցի օգտվել այս կարճ դադարից, մինչ Գեթսբին, այսպես ասած, շունչը պահած, կցրեր թյուրըմբռնումների շղթան:

Մեր հանդիպումները նույնպես դադարեցին: Մի քանի շաբաթ ես նրան չտեսա և նույնիսկ հեռախոսով չխոսեցի հետը: Մեծ մասամբ Նյու Յորքում էի լինում, թրև էի գալիս Ջորդանի հետ, փորձում հաճոյանալ նրա ծեր մորաքրոջը, բայց վերջապես մի կիրակի ցերեկը գնացի Գեթսբիի տուն: Դեռ երկու րոպե էլ չէր անցել իմ ներս մտնելուց, երբ հայտնվեցին երեք հոգի, որոնցից մեկը Թոմ Բյուքենենն էր: Բնականաբար ապշեցի, բայց իրոք զարմանալին այն էր, որ դա մինչև հիմա տեղի չէր ունեցել:

Նրանք երեքն էլ ձիերով էին՝ Թոմը, ոմն Սլոուն և հեծյալի դարչնագույն հանդերձով մի սիրունատես կին, որն այստեղ արդեն եղել էր:

— Շատ ուրախ եմ ձեզ տեսնելու համար,— նրանց դիմավորելով՝ ասաց Գեթսեմին:— Շատ ուրախ եմ, որ եկաք:

Կարծես դա նրանց շատ էր հետաքրքրում:

— Նստե՛ք, խնդրեմ: Սիգարենտ վերցրեք, գուցե սիգար ցանկանաք,— նա արագ շարժվում էր սենյակում՝ սեղմելով գանգերի կոճակները:— Հիմա խմիչք կբերեն:

Թոմի ներկայությունը խորապես ազդել էր նրա վրա: Բայց բոլոր դեպքերում նա չէր հանգստանա, մինչև չիյուրասիրեր նրանց, որովհետև տարտամորեն գիտակցում էր, որ դրա համար էին եկել: Պարոն Սլոունը ամեն ինչից հրաժարվում էր: Լիմոնա՞դ: Ո՛չ, շնորհակալություն: Գուցե շամպայն: Ոչինչ էլ հարկավոր չէ, շնորհակալություն... ներեցեք...

— Լավ գրոսնեցի՞ք:

— Ճանապարհներն այստեղ հիանալի են:

— Բայց ինձ թվում է՝ ավտոմեքենաները...

— Ըհը՛:

Անդիմադրելի մղումով Գեթսեմին շրջվեց դեպի Թոմը, որն այնպիսի դիրք ընդունեց, ասես առաջին անգամ էր տեսնում Գեթսեմին:

— Մենք, կարծեմ, ծանոթ ենք, պարոն Բյուքենեն:

— Այո՛, իհարկե,— կտրուկ քաղաքավարությամբ ասաց Թոմը, բայց, ըստ երևույթին, չհիշեց:— Դե իհարկե, ինչ-որ տեղ հանդիպել ենք: Շատ լավ հիշում եմ:

— Երկու շաբաթ առաջ:

— Ճիշտ է: Դուք այն ժամանակ այն նրա՝ Նիքի հետ էիք:

— Ես ճանաչում եմ Ձեր կնոջը,— համարյա հարձակման անցնելով՝ շարունակեց Գեթսեմին:

— Իրո՞ք:

Թոմը շրջվեց իմ կողմը.

— Դու, կարծեմ, մոտերքում ես ապրում, Նիք:

— Հարևան եմ:

— Մի՞թե:

Սլոունը մեծամտորեն փռվել էր բազկաթոռին և չէր մասնակցում խոսակցությանը: Կինը նույնպես լուռ էր, բայց երկու բաժակ վիսկի խմելուց հետո աշխուժացավ:

— Մենք կգանք Ձեր հաջորդ երեկոյթին, պարոն Գեթսբի,— հայտարարեց նա:— Դեմ չե՞ք լինի:

— Ի՞նչ եք ասում, շատ ուրախ կլինեմ:

— Դուք շատ բարի եք,— սառը քաղաքավարությամբ ասաց Սլոունը:— Բայց մեր գնալու ժամանակն է:

— Ինչո՞ւ եք շտապում,— ընդդիմացավ Գեթսբին: Նա այժմ տիրապետում էր իրեն և ուզում էր Թոմի հետ խոսել:

— Գուցե մնա՞ք, միասին կընթրենք: Երևի Նյու Յորքից մարդիկ գան:

— Ավելի լավ է, դուք եկեք իմ տուն ընթրիքի,— աշխույժ վրա բերեց կինը:— Դուք երկուսդ:

Դա ինձ էլ էր վերաբերում: Սլոունը ոտքի ելավ:

— Գնացի՞նք,— ասաց նա՝ դիմելով միմիայն կնոջը:

— Եկե՞ք, խնդրում եմ,— պնդում էր կինը:— Լավ կլինի, որ գաք: Տեղ շատ կա:

Գեթսբին հարցական նայեց ինձ: Նա ուզում էր գնալ, բայց չէր հասկանում, որ Սլոունը արդեն ի վնաս իրեն վճիռ էր կայացրել:

— Ցավոք, ես չեմ կարող գալ,— ասացի:

— Այդ դեպքում Դոնք եկեք, պարոն Գեթսբի,— պնդեց կինը:

Սլոունը ինչ-որ բան շնչաց նրա ականջին:

— Չենք ուշանա, եթե հենց հիմա ճանապարհ ընկնենք,— բարձրաձայն հակառակեց կինը:

— Ես ձի չունեմ,— ասաց Գեթսբին:— Բանակում ձի քշել եմ, բայց երբեք ձի չեմ ունեցել: Ես մեքենայով կգամ ձեր հետևից: Ներեցեք, մի բոպեից պատրաստ կլինեմ:

Բոլորս, բացի Գեթսբիից, դուրս եկանք գավիթ, որտեղ Սլոունն ու կինը, մի կողմ քաշվելով, սկսեցին վիճել:

— Տէր Աստված, երևում է՝ Գեթսեմին լուրջ ընդունեց,—
ասաց Թումը:— Չի հասկանում, որ այդ կինը իմիջիպայլոց
ասաց:

— Բայց նա հրավիրեց:

— Նա մեծ ճաշկերույթ է տալիս, իսկ Գեթսեմին այնտեղ
ոչ մեկին չի ճանաչում:— Թումը հոնքերը կիտեց:— Տեսնես
որտեղից գիտի Դեյզիին: Աստված վկա, գուցե իմ գաղա-
փարները ժամանակակից չեն, բայց մեր օրերում կանայք
շատ են դես ու դեն ընկնում, շատ են սրա-նրա հետ քարշ գա-
լիս:

Հանկարծ Սլոունն ու տիկինը իջան աստիճաններով և
հեծնեցին ձիերը:

— Գնացի՞նք,— շտապեցրեց Սլոունը Թումին,— ուշա-
նում ենք: Պետք է գնանք:— Ապա դիմեց ինձ:— Ասացե՞ք
նրան, որ սպասել չենք կարող:

Ես ու Թումը ձեռք սեղմեցինք, իսկ մյուսները բավարար-
վեցին սառը գլուխ տալով, և նրանք անմիջապես վարգեցին՝
անհետանալով օգոստոսյան սաղարթի մեջ, երբ Գեթսեմին
գլխարկն ու թեթն վերարկուն ձեռքին դուրս եկավ նախա-
դռնից:

Ըստ երևույթին, Թումին անհանգստացրեց Դեյզիի մի-
այնակ շրջագայությունը, այնպես որ հաջորդ շաբաթ երեկո-
յան նա կնոջ հետ եկավ Գեթսեմիի հավաքույթին: Գուցե նրա
ներկայությունը մի յուրատեսակ ճնշող մթնոլորտ էր հաղոր-
դել երեկոյին, որովհետև այն իմ հիշողության մեջ որոշակիո-
րեն առանձնանում է Գեթսեմիի մյուս երեկույթներից: Նույն
մարդիկ էին եկել կամ առնվազն նույնանման, շամպայնը
նույնքան առատ էր, նույն բազմերանգ, բազմաձայն եռուզե-
ռը, բայց օդը հագեցած էր տհաճությամբ, համատարած
կոպտությամբ, որը նախկինում բացակայում էր: Կամ գուցե
ես պարզապես սովոր էի Վեսթ Էզզն ընդունելու որպես մի
ինքնուրույն աշխարհ՝ իր իսկ սեփական օրենքներով, իր իսկ
սեփական մեծություններով, մի կատարյալ աշխարհ, որը

գաղափար անգամ չուներ անկատարության մասին, իսկ այժմ վերստին նայեցի դրան Դեյզիի աչքերով: Անկասկած տխուր է նոր աչքերով տեսնել այն, ինչին արդեն վարժվել ես:

Թոմն ու Դեյզին եկան իրիկնամուտին: Երբ մենք միասին թափառում էինք խայտաբղետ բազմության մեջ, Դեյզիի կոկորդը կարկաչուն կլկլոցներ էր արձակում:

— Այս բոլորն այնքան հուզիչ է,— շնջաց Դեյզին:— Եթե հանկարծ ուզենաս ինձ համբուրել, Նիք, առանց քաշվելու ասա՛: Ես մեծ ուրախությամբ գործը գլուխ կբերեմ: Հենց միայն անոնն սուր կամ էլ կանաչ քարտ ցույց տուր: Ես կանաչ քարտ եմ տալիս...

— Նայնք Ձեր շուրջը,— առաջարկեց Գեթսբին:

— Նայում եմ: Ես հիացած եմ...

— Դուք այստեղ կտեսնեք շատ մարդկանց, որոնց մասին լսել եք:

Թոմի անպատկառ հայացքը շրջում էր ամբոխի մեջ:

— Մենք քիչ ենք դուրս գալիս տնից,— ասաց նա:— Ես հենց նոր մտածում էի, որ այստեղ ոչ մեկին չեմ ճանաչում:

— Գուցե այդ տիկնոջը ճանաչեք,— Գեթսբին մատնացույց արեց մի հիասքանչ գեղուհու, որն ավելի շուտ նմանվում էր խոլորձ ծաղկի, քան ծեր սալորենու տակ փառահեղորեն բազմած մարդկային էակի: Թոմն ու Դեյզին կանգ առան մի պահ՝ անձնատուր եղած այն անիրական զգացումին, որ ունենում են մարդիկ իրական կյանքում անիրական կինոաստղին ճանաչելիս:

— Սիրուն է,— ասաց Դեյզին:

— Այդ տղամարդը, որ թեքված խոսում է հետը, իր տնօրենն է:

Գեթսբին նրանց մի խմբից մյուսն էր տանում՝ հանդիսավոր ներկայացնելով:

— Տեր և տիկին Բյուքենենները...— մի պահ տատանումից հետո ավելացրեց,— ջրագնդակի չեմպիոնը:

— Ինչ եք ասում,— առարկեց Թոմը,— ինչ չեմպիոն:

Սակայն, ըստ երևույթին, Գեթսեմին դուր էր գալիս այդ բառերի հնչեղությունը, այնպես որ ամբողջ երեկոյի ընթացքում Թոմը մնաց որպես ջրագնդակի չեմպիոն:

— Ես երբեք այդքան շատ հայտնի դեմքեր չեմ տեսել,— գոչեց Դեյզին:— Ինձ դուր եկավ այդ մարդը... Ինչ էր նրա անունը... մի տեսակ կապույտ քիթ ուներ...

Գեթսեմին տվեց անունը՝ ասելով, որ նա ոչ մեծ կինոստուդիայի տնօրեն է:

— Ինչ որ է, նա ինձ դուր եկավ:

— Ես գերադասում եմ ջրագնդակի չեմպիոն չլինել,— Թոմը դարձավ բարեհամբույր,— այլ աննկատ հիանալ այս բոլոր նշանավոր մարդկանցով:

Դեյզին ու Գեթսեմին գնացին պարելու: Հիշում եմ՝ ինձ զարմացրեց Գեթսեմի շնորհալի, փոքր-ինչ հնաոճ ֆոքսթորթը. ես երբեք նրան պարելիս չէի տեսել: Հետո նրանք ճեմելով հասան իմ տանը և կես ժամի չափ նստեցին աստիճանների վրա, իսկ ես Դեյզիի խնդրանքով մնացի հսկելու պարտեզում: «Եթե հանկարծ հրդեհ ծագի կամ ջրհեղեղ սկսվի,— բացատրեց նա,— կամ էլ ինչ-որ ուրիշ աստվածային պատիժ գա մեր գլխին»:

Թոմը հայտնվեց մեր կողքին, երբ երեքով նստեցինք ընթրելու:

— Չե՞ք նեղանա, եթե գնամ այն մարդկանց մոտ,— հարցրեց նա:— Դրանցից մեկը ծիծաղելի բաներ է պատմում:

— Գնա՛, գնա՛,— ջերմ ասաց Դեյզին:— Վերցրո՛ւ իմ ոսկե մատիտը, պետք կգա քեզ հասցե գրելու համար...

Քիչ անց Դեյզին նայեց Թոմի հարևանուհուն ու ասաց ինձ, որ աղջիկը «լավիկն է, բայց հասարակ է», և ես հասկացա, որ միայն Գեթսեմիի հետ անցկացրած կես ժամվա ընթացքում էր նա իրեն լավ զգացել:

Մենք նստել էինք մի խումբ գինովցած մարդկանց կողքին: Գեթսեմին հեռախոսի մոտ էին կանչել: Այդ ես էի միացել

նրանց, որովհետև երկու շաբաթ առաջ ես ինձ լավ էի զգացել նրանց հետ: Բայց այն, ինչ հաճելի էր թվացել այն ժամանակ, այժմ նեխածի հոտ էր արձակում:

— Ինչպե՞ս եք Ձեզ զգում, օրհորդ Բեղեքեր:

Աղջիկը, որին դիմեցի, ուսիս հենվելու անհաջող փորձեր էր անում: Իմ հարցի վրա նա ուղղվեց և բացեց աչքերը:

— Ի՞նչ:

Մի մարմնեղ ալարկոտ կին, որը համոզում էր Դեյզիին՝ հաջորդ օրն իր հետ գոլֆ խաղա տեղի ակումբում, խոսեց ի պաշտպանություն օրհորդ Բեղեքերի:

— Հիմա լավ է զգում: Հինգ-վեց բաժակից հետո սկսում է ճչալ: Քանի՞ անգամ եմ ասել, որ չխմի:

— Ես չեմ խմում,— անմիտ հաստատեց մեղադրյալը:

— Հենց որ լսեցինք ոռնոցդ, ես անմիջապես ասացի բժիշկ Քիվեթին. «Բժիշկ, քո կարիքը զգացվում է»:

— Նա երևի երախտապարտ է Ձեզ,— սառը միջամտեց մի երրորդ կին,— բայց Դուք նրա հագուստը թրջեցիք, երբ գլուխը ավազանի մեջ մտցրիք:

— Տանել չեմ կարող, երբ գլուխս ջրի մեջ են խոթում,— մոթմոթաց օրհորդ Բեղեքերը:— Մի անգամ Նյու Ջերսիում քիչ էր մնում խեղդեին ինձ:

— Ուրեմն չպետք է խմես,— եզրափակեց բժիշկ Քիվեթը:

— Դուք Ձեր մասին մտածեք,— կատաղեց օրհորդ Բեղեքերը:— Ձեր ձեռքերը դողում են: Ոչ մի դեպքում չէի համաձայնվի, որ ինձ վիրահատեիք:

Եվ այնուհետև՝ նման խոսքերի շարան: Վերջում, հիշում եմ, Դեյզիի հետ կանգնած, հեռվից դիտում էինք կինո-ռեժիսորին ու իր կինոաստղին: Նրանք դեռևս նստած էին ծեր սալորենու տակ, և լուսնի գունատ շողը բաժանում էր նրանց համարյա իրար դիպչող դեմքերը: Գլխումս մի միտք ծագեց, թե ռեժիսորը, ողջ երեկոն դանդաղ հակվելով դեպի կինոաստղը, հասել էր ցանկացած մոտիկությանը, և հենց

դա մտածելու պահին լուսնի շողը անհետացավ, և նրա շուրթերը հպվեցին կինոաստղի այտին:

— Նա ինձ դուր է գալիս, — ասաց Դեյզին: — Լավիկն է:

Բայց մնացյալը ցնցեց նրան և ցնցեց անվիճելիորեն, որովհետև դա զգացում էր, ոչ թե շարժում: Նա սարսափում էր Վեսթ Էզզից՝ Լոնգ Այլընդ ձկնորսական ավանում Բրոդվեյի ծննդաբերած այդ աննման «զավակից», սոսկում նրա՝ դարն ապրած նրբահնչյուն դարձվածքների տակ խլրտացող կոշտ ու կոպիտ գռեհիկ խոսքերից և նրա չափազանց սևեռուն ճակատագրից, որը կարճ ճանապարհով քշում էր բնակիչներին անէությունից անէություն: Նա ինչ-որ ահարկու բան էր տեսնում այդ պարզության մեջ, ինչը անկարող էր հասկանալ:

Ես նստեցի նրանց կողքին՝ աստիճանների վրա, մինչ կգար մեքենան: Այդտեղ՝ տան առաջամասը, լուսավորված չէր, միայն դռնից դուրս ցայտող պայծառ լույսի ուղղանկյուն շիթը մխրձվում էր վաղորդյան մեղմ մթության մեջ: Երբեմն հարդասենյակի վարագույրի վրա գծագրվում էր մի սովեր, որն իր տեղն էր զիջում մեկ ուրիշին, և այսպես անտեսանելի հայելու առաջ հարդարվող սովերների մի անորոշ երթ:

— Ի վերջո, ո՞վ է այդ Գեթսբին, — հանկարծ հարցրեց Թոմը: — Հայտնի մաքսանենգ:

— Ո՞վ ասաց, — հարցրի:

— Ոչ մեկը: Ուղղակի եզրակացնում եմ: Այս նորելուկ հարուստներից շատերը հայտնի մաքսանենգներ են:

— Գեթսբին դրանցից չէ, — կտրեցի ես:

Նա մի պահ լռեց: Խճաքարերը խշրտում էին նրա ոտքերի տակ:

— Երևի շատ է չարչարվել այս գազանանոցը հավաքելու համար:

Ջեփյուրը խաղում էր Դեյզիի մորթե օձիքի մոխրագույն մազիկների հետ:

— Համենայն դեպս, սրանք ավելի հետաքրքիր են, քան մեր ծանոթները,— ճիգ գործադրելով՝ ասաց Դեյզին:

— Բայց դու նրանց հետ քեզ այնքան էլ լավ չէիր զգում:

— Շատ էլ լավ էի զգում:

Թումը ծիծաղեց՝ շրջվելով իմ կողմը:

— Դու նկատեցիր Դեյզիի դեմքի արտահայտությունը, երբ այդ աղջիկը խնդրեց իրեն սառը ցնցուղի տակ մտցնել:

Դեյզին սկսեց խռպոտ ռիթմիկ շշուճով ձայնակցել երաժշտությանը՝ յուրաքանչյուր բառին տալով մի այնպիսի իմաստ, որը երբեք նախկինում չէր ունեցել և չէր էլ ունենա: Մեղեդու բարձրանալու հետ մեկտեղ ձայնը քաղցրահնչյուն երանգներ ստացավ՝ հատուկ կոնտրալտո ձայներին, որոնց յուրաքանչյուր նրբերանգ հորդեցնում էր Դեյզիի մարդկային հմայքի ջերմ մասնիկը:

— Շատերն են գալիս առանց հրավիրված լինելու,— հանկարծ ասաց Դեյզին:— Այդ աղջիկը հրավիրված չէր: Անկոչ հյուրի պես գալիս են, իսկ նա էլ, քաղաքավարությունից դրդված, լռում է:

— Ինչնիցե, կուզեի իմանալ, թե ով է Գեթսբին և ինչով է զբաղվում,— համառեց Թումը:— Եվ ես կիմանամ:

— Ուզո՞ւմ ես՝ հենց հիմա ասեմ,— պատասխանեց Դեյզին:— Նա սեփական դեղատներ ունի, շատ դեղատներ: Ինքն է կառուցել դրանք:

Հեռվից երևաց ուշացած լիմուզինը:

— Բարի գիշեր, Նիք,— ասաց Դեյզին:

Նրա հայացքը սահեց իմ վրայով դեպի սանդղահարթակի լույսը, որտեղ բաց դռնից հորդացող պարզ ու տխուր «Առավոտյան ժամը երեքին» վալսը այդ տարվա նորությունն էր: Բայց և այնպես, Գեթսբիի երեկույթի պատահական այցելուները զգայացունց հնարավորությունների առիթ էին ընձեռում, որից զուրկ էր Դեյզիի աշխարհը: Ինչո՞վ էր այդ երգը ձգում իրեն հետ: Ինչ կարող էր կատարվել վաղորդյան այս տազնապալից պահին: Գուցե կգար ինչ-որ

անսպասելի հյուր՝ անչափ հազվագյուտ ու դյուրփիչ, ինչ-որ փթթուն աղջիկ, որը, գերելով Գեթսեփիին իր պայծառ հայացքով, հանդիպման կախարդական պահով մոռացության կմատնե՛ր անսասան նվիրվածության հինգ տարիները:

Ես այդ գիշեր երկար մնացի Գեթսեփի տանը: Նա ինձ խնդրեց սպասել, մինչև ինքը լրիվ ազատ կլինե՛ր, իսկ ես թափառեցի այգում այնքան, մինչև սրթսրթալով վերադարձավ գիշերային լողի սիրահարների խումբը՝ հիացած ու վերացած, մինչև վերևում լույսերը հանգան հյուրասենյակներում: Երբ վերջապես Գեթսեփին իջավ այգի, նրա դեմքի արևահար մաշկը անսովոր կերպով ձգվել էր, իսկ հոգնած աչքերը փայլում էին:

— Դեյզին չհավանեց,— անմիջապես ասաց նա:

— Ընդհակառակը:

— Ո՛չ, չհավանեց,— պնդեց նա:— Դեյզին ձանձրանում էր:

Գեթսեփին լռեց, և ես տեսա նրա ընկճված հոգին:

— Ես նրանից շատ եմ հեռացել: Դժվար է նրան հասկացնելը:

— Երեկոյթի մասին է խոսքը:

— Ի՞նչ երեկոյթ,— ձեռքի մի շարժումով նա մինչ այդ կազմակերպած բոլոր երեկոյթները գրողի ծոցն ուղարկեց:— Երեկոյթը չէ կարևորը, բարեկամ:

Նա սպասում էր, որ Դեյզին ոչ ավել, ոչ պակաս ասեր թումին. «Ես քեզ երբեք չեմ սիրել»: Եվ այդ խոսքով վերջին չորս տարիները ջնջելուց հետո միայն նրանք կանեին ավելի գործնական քայլեր, որոնցից մեկը Լուիսվիլ գնալն էր ու հայրական տանը հարսանիք անելը, ինչպես հինգ տարի առաջ պետք է լինե՛ր:

— Իսկ Դեյզին չի հասկանում,— ասաց Գեթսեփին:— Մի ժամանակ հասկանում էր: Ժամերով նստում էինք...

Նա չվերջացրեց ասելիքը և սկսեց հետուառաջ քայլել մրգի կեղևներ, ուտելիքի մնացորդներ և թառամած ծաղիկներ շաղ տված մենավոր արահետով:

— Դու շատ բան ես պահանջում նրանից,— համարձակվեցի ասել:— Անցյալը չես վերադարձնի:

— Անցյալը չե՞ս վերադարձնի,— անբնական ձայնով գոռաց նա:— Ինչո՞ւ ոչ:

Ապա կատաղած նայեց շուրջը, ասես անցյալը թաքնվել էր իր տան ստվերում, և ձեռքը մեկնելուն պես կրոններ այն:

— Ես ամեն ինչ կանեն ճիշտ այնպես, ինչպես առաջ էր,— նա վճռականորեն գլխով արեց:— Նա կտեսնի:

Գեթսեմի շատ խոսեց անցյալի մասին, և ես հասկացա, որ նա որոնում էր ինչ-որ բան, գուցե Դեյզլի նկատմամբ տաժած սիրո մեջ ձուլված իր երբեմնի կերպարը: Այդ ժամանակից ի վեր նրա կյանքը ընթացել էր խառնիխուռն և անկանոն, բայց եթե մի անգամ հետ դառնար դեպի սկիզբն ու դանդաղ առաջանար, ապա կկարողանար գտնել կորցրածը...

...Մի աշնանային երեկո՝ հինգ տարի առաջ, նրանք զբոսնում էին քաղաքում: Տերևաթափ էր: Ի վերջո մտան մի ծառագուրկ փողոց, որի մայթը սպիտակին էր տալիս լուսնի լույսի ներքո: Կանգնեցին դեմառդեմ: Զով գիշեր էր՝ առլեցուն այն խորհրդավոր հուզականությամբ, որը լինում է տարվա երկու եղանակների փոփոխության ժամանակ: Տների մեղմիկ լույսը դժժալով դուրս էր ցայտում դեպի փողոցի մութը, իսկ աստղերի մեջ շշուկ ու շրշյուն կար: Աչքի պոչով Գեթսեմին նշմարեց, որ մայթերի սալիկները, աստիճանաձև ուղու վերածվելով, տանում են դեպի ծառերի մեջ պատսպարված գաղտնարանը, որտեղ կարող էր հասնել, եթե բարձրանար մեն-մենակ և այնտեղ, ծծելով կյանքի պտուկները, կուլ տար հրաշագործ կաթը:

Երբ Դեյզլին իր գունատ դեմքը մոտ բերեց, Գեթսեմին սիրտը սկսեց արագ տրոփել: Նա գիտեր, որ եթե համբուրեր այդ աղջկան և զուգակցեր իր աննկարագրելի անուրջները նրա անէացող շնչի հետ, ապա իր միտքը կկորցներ աստվա-

ծային թռիչքը: Եվ հապաղում էր՝ ունկնդրելով աստղին դիպած կամերտոնին: Քիչ անց համբուրեց նրան: Գեթսեբի շրթունքների հպումից Դեյզին փթթեց ծաղկի պես, և կատարելությունը ավարտուն դարձավ:

Նրա ողջ պատմությունը իր ահավոր զգացմունքայնությամբ հիշեցնում էր ինչ-որ անորսալի ռիթմ, երբեմնի ասված խոսքերի պատատիկ, որը ես շատ վաղուց ինչ-որ տեղ լսել էի:

Հանկարծ մտքումս կազմավորվեց մի նախադասություն, շրթունքներս շարժեցի համրի նման՝ ճիգ գործադրելով հնչյուններն արտաբերել: Սակայն ձայն չարձակեցի, և այն, ինչ մտքումս էր, առհավետ մոռացության մատնվեց:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Հենց այդ ժամանակ, երբ Գեթսեմի հանդեպ համընդհանուր հետաքրքրասիրությունը գագաթնակետին էր հասել, մի շաբաթ գիշեր նրա տան լույսերը չվառվեցին, և Թրիմալքիոնի նրա գործունեությունը այնպես խորհրդավոր ավարտվեց, ինչպես որ սկսվել էր: Ես անմիջապես չնկատեցի, որ մեքենաները, որոնք աշխուժորեն թեքվում էին դեպի նրա տուն տանող ճանապարհը, մեկ բոպե անց թթված հետ էին դառնում: Մտածեցի՝ գուցե հիվանդ է, և գնացի տեղեկանալու: Չարագործի դեմքով անծանոթ սպասավորը դռան շեմին կասկածամտորեն աչքերը հառեց վրաս:

— Պարոն Գեթսեմի հիվանդ է:

— Ո՛հ,— քիչ անց չկամությամբ ավելացրեց,— պարոն:

— Ես նրան վաղուց չեմ տեսել: Որևէ բան է պատահել:

Ասացնք նրան՝ պարոն Քարավեյն էր եկել:

— Ո՛վ,— հարցրեց նա կոպիտ:

— Քարավեյր:

— Քարավեյր: Լավ, կասեմ:

Եվ կտրուկ շխկացրեց դուռը:

Իմ ֆինն սպասուհուց իմացա, որ մի շաբաթ առաջ Գեթսեմի արձակել էր բոլոր ծառաներին, փոխարենը՝ վարձել նորերին, որոնք Վեսթ Էզզ չէին գնում և վաճառողներից կաշառք չէին վերցնում, այլ հեռախոսով պատվիրում էին չափավոր քանակությամբ մթերք: Նպարավաճառի մոտ աշխատող տղան ասում էր, որ նրա խոհանոցը վերածվել է խոզանոցի, և այն կարծիքն էր շրջում, որ նոր ծառաներն ամենևին էլ ծառա չէին:

Հաջորդ օրը Գեթսեմի գանգահարեց:

— Պատրաստվում ես մեկնելու, — հարցրի:

— Ո՛չ, ի՛նչ ես ասում:

— Լսել եմ՝ ծառաներին արձակել ես:

— Ես ուզում էի այնպիսի մեկին, որ չբամբասեր: Դեյզիին հաճախ է գալիս երեկոները:

Ի դեպ, Դեյզիի անբարեհամբույր հայացքի ներքո ողջ քարվանսարան խաղաքարտե տնակի նման փուլ էր եկել:

— Դրանք Վուլֆշայմի ծանոթներն էին, որոնց նա ուզում էր օգնել: Բոլորն էլ մի ընտանիքից են, քույր ու եղբայր են: Մի ժամանակ հյուրանոց են ունեցել:

— Պարզ է:

Նա ինձ զանգում էր Դեյզիի խնդրանքով, թե արդյոք հաջորդ օրը կգնայի՞ իրենց տուն ճաշի, օրիորդ Բեյքերն էլ էր այնտեղ լինելու: Կես ժամ անց Դեյզին ինքը զանգահարեց և ուրախացավ, որ գալիս եմ: Ինչ—որ բան էր նախապատրաստվում: Սակայն չէի պատկերացնում, որ նրանք այդ առիթը օգտագործելու էին նման տեսարանի համար, հատկապես այն սրտաճմլիկ տեսարանի, որը Գեթսբին անցած երեկո պատկերել էր այգում:

Սարսափելի շոգ օր էր, ամառվա վերջին տաք օրերից մեկը: Երբ գնացքը դուրս եկավ թունելից դեպի արևալույսը, միայն «Ազգային բիսքվիթ ընկերության» շշակներն էին խախտում միջօրեի շիկացած անդորրը: Ծղոտն նստատեղերը բոցավառվելու վրա էին. սպիտակ վերնաշապիկով հարևանուհիս, քրտինքի մեջ կորած, հուսահատ տնքոցով հետ ընկավ, երբ նրա ձեռքի լրագիրը խոնավացավ մատների մեջ: Հետո նրա պայուսակը գլորվեց հատակին:

— Ա՛խ, էլ չեմ դիմանում, — հևաց նա:

Ես հոգնատանջ կռացա բարձրացնելու և ծայրից բռնած՝ հնարավորին չափ հեռվից մեկնեցի տիրոջը՝ ցույց տալու, որ մտադրություն չունեմ յուրացնելու այն, բայց շուրջս եղողները, այդ թվում նաև պայուսակի տերը, կասկածեցին ինձ:

— Շոգ է,— ծանոթ դեմքեր տեսնելով՝ ասաց տոմսավաճառը:— Այս ինչ օր է: Շոգ է... Շոգ... Շոգ... Չե՞ք շոգում... Իսկ դո՞ւք:

Իմ մշտական տոմսի վրա նա ձեռքի երկու մատնահետք թողեց: Այս շոգին չես տարբերի, թե ում վառվող շրթունքներին կհավես, ում գլուխը կխոնավացնի վերնաշապիկիդ ձախ կրծքի գրպանը:

...Երբ Բյուքենենների տան դռան առաջ Գեթսերիի հետ կանգնած սպասում էինք, թեթև քամին մեզ հասցրեց նախարահում հնչող հեռախոսազանգը:

— Տանտիրոջ դիակը,— բղավում էր ծառան լսափողի մեջ:— Ցավում եմ, տիկին, բայց մենք չենք կարող հագցնել մարմինը. ո՞վ է այս շոգին մեռելին ձեռք տալիս:

Իրականում նա ասում էր.

— Այո՛... Այո՛... լսում եմ... հիմա կհարցնեմ:

Նա կախեց լսափողը և ընդառաջ եկավ վերցնելու մեր ծղոտե գլխարկները. նրա դեմքը թեթևակի պսպղում էր յուրից:

— Տիկինը ձեզ սպասում է հյուրասենյակում,— ասաց նա՝ ցույց տալով ձանապարհը, որի կարիքն ամեննին չէր զգացվում: Այսպիսի շոգին յուրաքանչյուր ավելորդ շարժում կենսական ուժերի վատնում էր նշանակում:

Լուսամուտները վարագուրված էին քաթանով, որի շնորհիվ սենյակում կիսախավար էր ու զով:

Դեյզին ու Ջորդանը արծաթյա կուռքերի նման փովել էին հսկայական բազմոցին՝ իրենց ճերմակ զգեստների քղանցքները բռնած, որպեսզի բզզացող օդափոխիչները չթոցնեին:

— Տեղներիցս շարժվել չենք կարող,— միաբերան ասացին:

Ջորդանի՝ դիմափոշի քսած արևահար մատները մի պահ հանգան ափիս մեջ:

— Իսկ որտե՞ղ է պարոն Թոմաս Բյուքենենը՝ հայտնի մարմնամարզիկը,— հետաքրքրվեցի:

Եվ անմիջապես նախասրահից լսվեց նրա խոսքոտ, խուլ ձայնը հեռախոսով խոսելիս:

Այ կարմիր գորգի մեջտեղում կանգնած՝ Գեթսեփին շլացած դիտում էր շուրջը: Դեյզին նայեց նրան ու ծիծաղեց իր քաղցր, հուզիչ ծիծաղով, և նրա կրծքից դիմափոշու մի ամպիկ բարձրացավ:

— Ասում են՝ Թոմը սիրուիու հետ է խոսում,— շշնջաց Ջորդանը:

Մենք լռեցինք: Նախասրահում ձայնը գրգռված բարձրացավ:

— Ահա՛ թե ինչ, ուրեմն էլ չեմ վաճառի քեզ իմ մեքենան... ես ոչ մի պարտավորություն չունեմ քո հանդեպ... Իսկ ինձ բոլորովին դուր չի գալիս, որ ճաշի ժամանակ զանգահարում են ու խանգարում մարդկանց...

— Հեռախոսափողը ձեռքով ծածկեց,— արհամարհանքով ասաց Դեյզին:

— Իզուր ես այդպես մտածում,— հավատացրի նրան:— Նա ուզում է մեքենան վաճառել: Ես պատահմամբ լսել եմ այդ մասին:

Թոմը չրխկոցով բացեց դուռը: Մի պահ նրա հաստ մարմինը գծագրվեց բաց տարածության մեջ, ապա արագ ներս մտավ:

— Պարո՛ն Գեթսեփ,— լավ քողարկված անբարյացակամությամբ նա մեկնեց լայն տափակ ձեռքը:— Ուրախ եմ, որ եկել եք... Նի՛ք...

— Մեզ սառը բան տուր խմելու,— բարձրաձայն ասաց Դեյզին:

Երբ Թոմը դուրս գնաց, Դեյզին ոտքի ելավ, մոտեցավ Գեթսեփին, երեսը մոտեցրեց ու համբուրեց շուրթերը:

— Գիտես, որ քեզ սիրում եմ,— մրմնջաց նա:

— Մոռանում ես, որ այստեղ կին կա,— ասաց Ջորդանը: Դեյզին կասկածանքով նայեց շուրջը:

— Իսկ դու էլ Նիքին համբուրիր:

— Անամոթի՛ մեկը:

— Ի՞նչ անեմ,— գոչեց Դեյզին ու սկսեց դոփել հաստակին՝ կղմինդրե բուխարու առջև: Հետո հանկարծ հիշեց շոգն ու մեղավոր տեսքով նստեց բազմոցին, և հենց այդ պահին ներս մտավ օսլայած դայակը՝ փոքրիկ աղջկա ձեռքից բռնած:

— Անու-շինկա, պատ-լինկա,— թևերը պարզելով դունդունաց Դեյզին:— Արի՛ ինձ մոտ, ես քեզ շատ եմ սիրում:

Երեխան, որի ձեռքը թողեց դայակը, վազ տվեց սենյակով մեկ և ամաչկոտ թաքնվեց մոր հագուստի ծալքերի մեջ:

— Պատ-լինկա: Մաման խառնե՞ց քո շեկլիկ մազերը: Ապա ուղիղ կանգնիր ու ասա՛. «Ող-ջույն»:

Ես ու Գեթսքին հերթով առաջ թեքվեցինք ու սեղմեցինք դժկամությամբ առաջ մեկնած փոքրիկ ձեռքը: Գեթսքին աչքը չէր կտրում նրանից: Ըստ երևույթին՝ նոր միայն հավատաց, որ երեխան գոյություն ունի:

— Ես հագնվել եմ, բայց դեռ չեմ ձաշել,— փոքրիկը իսկույն դարձավ մոր կողմը:

— Որովհետև մայրիկն ուզում էր քեզ ցույց տալ իր ընկերներին,— Դեյզին դեմքը հպեց պստիկի վզի միակ ծալքին:— Դու իմ հրաշքն ես, հրաշքը, իսկական հրաշք:

— Այո՛,— հանգիստ ընդունեց երեխան:— Ջորդան մորաքույրն էլ է սպիտակ շոր հագել:

— Բեզ դո՞ր են գալիս մայրիկի ընկերները,— Դեյզին շրջեց աղջկա դեմքը դեպի Գեթսքին:— Նրանք լավն են:

— Հայրիկն ո՞ր է:

— Հորը նման չէ,— ասաց Դեյզին:— Ինձ է նման: Մազերն իմն են, դեմքի ձևը՝ նույնպես:— Դեյզին հետ ընկավ բազմոցին: Դայակը մոտեցավ, մեկնեց ձեռքը:

— Գնացինք, Փեմմի՛:

— Ցտեսություն, քաղցրս:

Դժգոհ հայացքը հետ հառած՝ լավ դաստիարակված երեխան բռնեց դայակի ձեռքը, և նրանք դուրս գնացին սե-

նյակից այն պահին, երբ կրկին երևաց Թումը, իսկ նրա հետևից՝ գինով լի չորս բաժակ, որոնց մեջ շխկշխկում էր սառույցը:

Գեթսեփին վերցրեց մեկը:

— Իրոք զովացուցիչ տեսք ունեն,— նկատելի լարվածությամբ ասաց նա:

Մենք խմեցինք ազահորեն, երկար կումերով:

— Ինչ-որ տեղ կարդացել եմ, որ արևը գնալով տարեցտարի տաքանում է,— ուրախ ասաց Թումը:— Եվ Երկիրը երևի շուտով կընկնի արևի վրա, կամ էլ... չէ, հակառակը, արևը գնալով տարեցտարի սառչում է:

— Ե՛կ դուրս գնանք,— քիչ անց նա դիմեց Գեթսեփին:— Ես ուզում եմ Ձեզ ցույց տալ տունս:

Ես նրանց հետ միասին պատշգամբ ելա: Սաունդ գետի կանաչավուն ջուրը տոթից անշարժացել էր. մի փոքրիկ առազաստանավ դանդաղ սողում էր դեպի բաց ծովի զովությունը: Գեթսեփի աչքերը մի պահ հետևեցին նավին, ապա բարձրացրեց ձեռքը և ցույց տվեց ծովածոցի մյուս կողմը:

— Իմ տունը ուղիղ դիմացն է:

— Ըհը՛:

Մեր հայացքը սահեց վարդաթմբերի, շիկացած սիգամարգի և ափով մեկ տարածված խանձված մոլախոտերի վրայով: Նավի ճերմակ առազաստները դանդաղ շարժվում էին դեպի երկնքի զով կապույտ սահմանագիծը: Ավելի այն կողմ՝ ատամնավոր ափագծով օվկիանոսում, ցրված էին բազմաթիվ երանավետ կղզիներ:

— Լավ սպորտ է,— գլուխը տմբումբացրեց Թումը:— Դեմ չէի լինի մի ժամ դրանով զբոսնելուն:

Ճաշասենյակը, որտեղ նստեցինք ճաշի, նույնպես մթնեցրած էր, և մենք փորձում էինք մեր նյարդային ուրախությունը սանձել զարեջրով:

— Իսկ երեկոն ինչպե՞ս անցկացնենք,— բացականչեց Դեյզին:— Իսկ վա՛ղը, իսկ հաջորդ երեսուն տարիները:

— Տխուր բաների մասին մի՛ խոսիր,— ասաց Ջորդանը:— Աշնան ցրտերի հետ կյանքը վերսկսվում է:

— Բայց հիմա այնքան շոգ է,— Դեյզին պատրաստ էր արտասովելու,— և ամեն ինչ՝ այնքան խառնաշփոթ: Եկե՛ք բոլորս գնանք քաղաք:

Դեյզիի ձայնը պայքարում էր շոգի դեմ, բախվում նրան, աշխատում իմաստավորել նրա անհեթեթությունը:

— Ես լսել եմ, թե ինչպես են ձիանոցը ավտոտնակի վերածում,— ասում էր Թոմը Գեթսբիին,— բայց ես առաջինն եմ, որ ավտոտնակը ձիանոցի եմ վերածել:

— Ո՞վ է ուզում քաղաք գնալ,— համառեց Դեյզին: Գեթսբիի աչքերը ուղղվեցին Դեյզիի կողմը:— Ա՛խ,— գոռաց Դեյզին:— Դուք կարծես չեք շոգում:

Նրանց հայացքները հանդիպեցին և մնացին գամված. նրանք մեն-մենակ էին տիեզերքում: Դեյզին ձիգով խոնարհեց աչքերը:

— Դուք երբեք չեք շոգում,— ասաց Դեյզին:

Նա Գեթսբիին սիրո խոստովանություն արեց, և Թոմ Բյուքենենը հասկացավ: Նա ապշեց: Բերանը փոքր-ինչ բացած՝ նայեց Գեթսբիին, հետո՝ կրկին Դեյզիին, ասես հենց նոր հանձին նրա գտավ իր հին ծանոթին:

— Դուք հիշեցնում եք ազդերի վրայի մարդկանց,— անմեղորեն ասաց Դեյզին Գեթսբիին:— Գիտեք, չէ՞, ազդերի վրա ինչպիսի մարդկանց են պատկերում:

— Դե լավ, գնացինք,— արագ ընդմիջեց Թոմը:— Ես ուզում եմ գնալ քաղաք: Գնացինք: Բոլորս էլ գնում ենք:

Նա ոտքի ելավ՝ ցատումնալից հայացքներ նետելով մերթ Գեթսբիի, մերթ կնոջ վրա: Ոչ ոք չչարժվեց տեղից:

— Դե՛, գնացինք,— նա հազիվ էր զսպում իրեն:— Ի՛նչ է պատահել: Գնո՞ւմ ենք քաղաք, թե՛ ոչ: Շարժվեցինք:

Ինքնատիրապետման ձիգից դողողացող ձեռքով նա վերջին բաժակ զարեջուրը մոտեցրեց շրթունքներին: Դեյզիի

ձայնը մեզ ոտքի հանեց և տարավ դուրս՝ դեպի անասելի տոթից փայլատակող մանրախճով պատած ճանապարհը:

— Հենց այսպես անմիջապես գնում ենք,— բողոքեց Դեյզին:— Հենց այսպէս, առանց ծխելո՞ւ:

— Բոլորս էլ ծխեցինք ճաշի ժամանակ:

— Ե՛կ ուրախանանք: Այս շոգին մի՛ փչացրու մարդկանց տրամադրությունը,— համոզում էր Դեյզին:

Թոմը չպատասխանեց:

— Ինչպէս ուզում ես,— ասաց Դեյզին:— Շարժվեցինք, Ջորդան:

Նրանք գնացին վերև՝ իրենց կարգի բերելու, իսկ մենք, երեքով կանգնած շիկացած խճաքարերի վրա, դոփում էինք տեղում: Երկնքում լուսնի արծաթյա մահիկն արդեն կախվել էր արևմտյան երկնակամարում: Գեթսքին ցանկացավ խոսել, բայց միտքը փոխեց, իսկ Թոմը, դարձած դեպի նա, սպասողական նայում էր:

— Ձեր ձիանոցը մոտերքո՞ւմ է,— ձիգով հարցրեց Գեթսքին:

— Հեռու չէ: Մոտ քառորդ մղոն կլինի:

— Հը՛մ:

Դադար:

— Չեմ հասկանում՝ ինչ իմաստ ունի քաղաք գնալը,— պոռթկաց Թոմը:— Միայն կանայք կարող են նման մտքեր ունենալ...

— Խմելու բան տանենք,— գոռաց Դեյզին վերևից:

— Վիսկի կվերցնեմ:

Թոմը ներս գնաց:

Գեթսքին մոայլ դարձավ ինձ.

— Ես այս տանը չեմ կարողանում խոսել, բարեկամ:

— Դեյզին անխոհեմ ձայն ունի,— ասացի ես:— Այն լի է...— վարանելով շարունակեցի:

— Նրա ձայնի մեջ զրնգում է դրամը,— հանկարծ ասաց նա:

Ահա թե ինչ: Երբեք նախկինում չէի հասկացել: Նրա ձայնի մեջ գրնգում է դրամը... դա էր նրա ձայնի անդիմադրելի հմայքը, որ մերթ ուժեղանում էր, մերթ թուլանում, մերթ ղողանջում, հնչեցնում ծնծղաների երգ...

Թումը դուրս եկավ տնից՝ ձեռքին սրբիչի մեջ փաթաթած քառորդ լիտրանոց մի շիշ, իսկ հետևից՝ Դեյզին ու Ջորդանը՝ փոքրիկ դիպակե գլխարկներ դրած, թևներին՝ թեթև թիկնոցներ:

— Մենք բոլորս կարող ենք իմ մեքենայում տեղավորվել, — առաջարկեց Գեթսբին: Նա շոշափեց նստոցի կանաչ կաշին: — Իզուր ստվերում չթողեցի:

— Արագությունը սովորական ձևով է փոխվում, — հարցրեց Թումը:

— Այո՛:

— Դե՛ ուրեմն դուք նստեք իմ մեքենան, իսկ ես՝ ձերը:

Առաջարկը տհաճություն պատճառեց Գեթսբիին:

— Բենզինը քիչ է, — առարկեց նա:

— Քիչ չէ, — լկտիաբար ասաց Թումը: Եվ նայեց հաշվիչին: — Իսկ եթե վերջանա, կանգ կառնեմ դեղատան առաջ: Մեր օրերում ամեն ինչ կարող ես գնել դեղատանը:

Առերևույթ անմեղ այս դիտողությանը հաջորդեց լուրջություն: Դեյզին խոժոռ նայեց Թումին: Գեթսբիի դեմքի վրայով անցավ որոշակիորեն անծանոթ և տարտամորեն ծանոթ անորսալի մի արտահայտություն, որն ասես բառերի վերածվելով՝ հասկանալի դարձավ ինձ:

— Գնացի՛նք, Դեյզի՛, — Թումը հրեց կնոջը դեպի Գեթսբիի մեքենան: — Ես քեզ ման կածեմ այս կրկեսային կառքով:

Թումը բացեց դուռը, բայց Դեյզին դուրս պրծավ նրա թևի տակից:

— Դու Նիքին ու Ջորդանին տար, իսկ մենք կգնանք մյուս մեքենայով:

Նա մոտեցավ Գեթսբիին, ձեռքը դրեց նրա արմունկին:

Ջորդանը, Թումը և ես նստեցինք Գեթսեմի մեքենայի առաջամասում:

Թումը փորձառու կերպով սեղմեց անծանոթ լծակները, և մենք, ճեղքելով կիզիչ օդը, առաջ սլացանք՝ հետևում թողնելով նրանց:

— Տեսար,— հարցրեց Թումը:

— Ինչը:

Նա թափանցող հայացքով նայեց ինձ և հասկացավ, որ Ջորդանն ու ես վաղուց գիտեինք այդ մասին:

— Դուք կարծում եք՝ ես հիմար եմ,— ասաց նա:— Կարող է պատահել, բայց ես ունեմ... ինչպես ասեմ, մի ներքին տեսողություն, որն ինձ թելադրում է, թե ինչ անել: Գուցե դուք չեք հավատում նման բաների, բայց գիտությունը...

Նա կանգ առավ: Անառարկելի իրականությունը ինքն իրեն զգացնել տվեց, հետ քաշեց նրան իմաստակումների անդունդի եզրից:

— Ես որոշ տեղեկություն եմ հավաքել այդ թռչնակի մասին,— շարունակեց նա:— Եվ ավելի շատ բան կիմանայի, եթե...

— Ուզում ես ասել՝ գուշակի մոտ ես գնացել,— կծեց Ջորդանը:

— Ինչ,— նա շփոթված աչքերը հառեց մեզ, երբ մենք սկսեցինք ծիծաղել:— Գուշակ:

— Այո՛, Գեթսեմի համար:

— Գեթսեմի համար: Այդ էր պակաս: Ասում եմ՝ որոշ տեղեկություն եմ հավաքել նրա անցյալի մասին:

— Եվ պարզեցիր, որ Օքսֆորդում է սովորել,— պատրաստակամ ասաց Ջորդանը:

— Օքսֆորդում:— Թումը չհավատաց:— Սատանան գիտի, թե ով է նա: Վարդագույն շորերով է ման գալիս:

— Ինչ որ է, նա Օքսֆորդում է սովորել:

— Օքսֆորդ, որը Նյու Մեքսիկո նահանգում է,— արհամարհանքով փոթկացրեց Թումը:— Կամ էլ մի ուրիշ տեղ:

— Լսիր, Թոմ, եթե դու ցուցամուլի մեկն ես, ինչո՞ւ ես նրան ճաշի հրավիրել,— բարկացավ Ջորդանը:

— Դեյզին է հրավիրել: Նրան ճանաչել է մեր ամուսնությունից առաջ: Աստված գիտի, թե որտեղ են ծանոթացել:

Մենք բոլորս հիմա արդեն գրգռված էինք գարեջրի անհետացող ազդեցությունից և գիտակցելով այդ՝ լռեցինք միառժամանակ: Հետո ճամփին՝ առջևում, երևացին բժիշկ Թ. Ջ. Էքլերգի խունացած աչքերը, և ես հիշեցի Գեթսեմի նախազգուշացումը բենզինի մասին:

— Քաղաք կհասցնի,— ասաց Թոմը:

— Բայց այստեղ՝ մոտերքում, ավտոտնակ կա,— հակառակեց Ջորդանը:— Ես չեմ ուզում շոգին ճամփի կեսին կանգ առնել:

Թոմը բարկացած արգելակեց, և մենք կտրուկ շրջվեցինք դեպի Վիլսոնի ցուցանակի տակի փոշոտ տարածությունը: Քիչ անց հայտնվեց տերը իր հաստատության դռան մոտ և անմիտ հայացքը հառեց մեքենային:

— Բենզին լցրու,— կոպիտ գոռաց Թոմը:— Չե՞ս հասկանում, ինչ է, թե՞ կարծում ես՝ եկել ենք տեսարանովդ հիանալու:

— Հիվանդ եմ,— առանց տեղից շարժվելու ասաց Վիլսոնը:— Ամբողջ օրը հիվանդ եմ եղել:

— Ի՞նչ է պատահել:

— Մի տեսակ թուլություն եմ զգում:

— Ի՞նքս լցնեմ,— հարցրեց Թոմը:— Հեռախոսով ձայնդ առողջ էր հնչում:

Վիլսոնը ոտքը դուրս դրեց, ըստ երևույթին նրա համար դժվար էր դռան հենարանից ու հովից զրկվելը, և ծանր շնչով բացեց բենզինի բաքի կափարիչը: Նրա դեմքը արևի լույսի տակ կանաչ էր:

— Ես չեի ուզում խանգարել ձեր ճաշը,— ասաց նա,— բայց փողի կարիք ունեմ և ուզում էի իմանալ, թե ինչ ես արել հին մեքենադ:

— Իսկ սա դուրդ գալիս է,— հարցրեց Թումը:— Անցյալ շաբաթ եմ գնել:

— Լավն է,— Վիլսոնը ձգվեց դեպի բռնակը:

— Կուզենայիր գնել:

— Ձեռ ես առնում,— թույլ ժպտաց Վիլսոնը:— Ձե՛, ավելի լավ է՝ հին մեքենադ ծախես ինձ, որ մի քիչ փող աշխատեմ:

— Իսկ փողն այդքան շտապ ինչի՞նչ է պետք:

— Ուզում եմ մեկնել: Երկար մնացի՞նք այստեղ: Ես ու կինս ուզում ենք գնալ Արևմուտք:

— Կինդ ուզում է գնա՞լ,— բացականչեց Թումը՝ անակնկալի եկած:

— Տասը տարի է՝ այդ մասին է խոսում,— նա մի պահ հենվեց պոմպին՝ ձեռքով հովանի անելով աչքերին:— Եվ հիմա գնում է՝ անկախ նրանից՝ ուզում է, թե ոչ: Ես նրան տանում եմ:

Փոշու ամպ բաց թողնելով՝ երկտեղ մեքենան սլացավ մեր կողքով, և մենք տեսանք ինչ-որ մեկի ձեռքի թափահարումը:

— Ինչքան պիտի տամ,— կտրուկ հարցրեց Թումը:

— Վերջերս ինչ-որ բան եմ լսել,— իմիջիայլոց ասաց Վիլսոնը:— Այդ պատճառով էլ ուզում եմ մեկնել: Դրա համար էի քեզ գանգել:

— Ինչքան պիտի տամ:

— Քսան դոլար:

Շոգի անխնա հարվածներից գլխումս խառնաշփոթ էր, և մի քանի անդուր վայրկյաններ անցան, նախքան գլխի կրնկների, որ նրա կասկածները դեռևս Թումի վրա չէին կենտրոնացել: Նա հայտնաբերել էր, որ Միրթըլը այլ կյանք ուներ իրենից զատ, մի ուրիշ աշխարհում, և դրանից էլ հիվանդացել էր: Ես նայեցի նրան, հետո Թումին, որի զուգահեռ հայտնագործությունից մի ժամ անգամ չէր անցել, և հասկացա, որ մարդկանց մտավոր և ցեղային տարբերությունը չի կարող համեմատվել հիվանդի ու առողջի միջև եղած ահավոր տարբերու-

թյան հետ: Վիլսոնն այնքան հիվանդ էր, որ հանցավոր տեսք ուներ, աններելի հանցանք գործած մարդու տեսք, ասես հենց նոր անմեղ աղջկա էր հղիացրել:

— Լավ, ես կծախեմ մեքենաս, — ասաց Թոմը: — Վաղը ցերեկը կուղարկեմ:

Այդ վայրը ինձ միշտ տարտամ վախ էր պատճառել նույնիսկ օրը ցերեկով, և այժմ ակամա շրջեցի գլուխս՝ կարծես ինչ—որ վտանգ կանխագգալով: Խարամի կույտերի վրայից բժիշկ Թ. Ջ. էքլերբրգի հսկայական աչքերը անթարթ մեզ էին նայում, սակայն շուտով գլխի ընկա, որ քիչ հեռու ուրիշ աչքեր էին մեզ դիտում:

Ավտոտնակի վրայի պատուհաններից մեկի վարագույրը թեթևակի մի կողմ էր քաշված, և Միրթլ Վիլսոնը նայում էր ցած՝ մեր մեքենային: Կլանված՝ նա գաղափար անգամ չուներ, որ իրեն դիտող կա, նրա դեմքի վրա մեկը մյուսին էին հաջորդում զգացմունքները՝ դանդաղ երևակվող լուսանկարի առարկաների նման: Նման արտահայտություն հաճախ եմ տեսել կանանց դեմքերին, բայց Միրթլ Վիլսոնի դեմքին այն անհասկանալի ու անբացատրելի էր թվում, մինչև գլխի ընկա, որ նրա՝ խանդի սարսափից լայն բացված աչքերը ուղղված էին ոչ թե Թոմին, այլ Ջորդան Բեյքերին, որին Թոմի կնոջ տեղն էր դրել:

* * *

Պարզամիտ ուղեղի խառնաշփոթության նման խառնաշփոթություն չկա: Թոմը վարում էր մեքենան, ասես տագնապի շիկացած մտրակների տարափի տակ: Նրա կինն ու սիրուհին, որ մի ժամ առաջ ապահով ու անձեռնմխելի էին, այժմ աճապարանքով դուրս էին սպրդում իր տնօրինությունից: Նա ոտքը դրեց արագացուցիչի վրա՝ Դեյզիին հասնելու և Վիլսոնից հեռանալու կրկնակի բնագողով, և մենք սլացանք ժամում հիսուն մղոն արագությամբ դեպի Ասթորիա, մինչև որ վերգետնյա ճանապարհի երկա-

թասյուների սարդոստայնի մեջ տեսանք անշտապ ընթացող կապույտ մեքենան:

— Հիսուներորդ փողոցի մեծ կինոսրահներում գով է,— ասաց Ջորդանը:— Ես սիրում եմ Նյու Յորքը ամռան օրերին, երբ մարդիկ բացակայում են քաղաքից: Ինչ—որ զգայական, չափից դուրս հասուն բան կա դրանում, ասես ձեռքդ երկարելուն պես բոլոր տեսակի արտասովոր մրգերը կընկնեն ավիդ մեջ:

«Զգայական» բառը հետագա անհանգստության առիթ դարձավ Թոմի համար, բայց նախքան կհասցնեք որևէ բան հորինել՝ հակառակվելու, կապույտ մեքենան կանգ առավ, և Դեյզին մեզ նշան արեց մոտենալու:

— Իսկ հիմա ո՞ր,— գոռաց նա:

— Երևի կինո:

— Շո՞գ է,— ծոր տվեց Դեյզին:— Դուք գնացե՛ք, իսկ մենք մի քիչ կգրոսնենք ու հետո ձեզ կհանդիպենք:— Նա ձիգ արեց կատակելու:— Կժամադրվենք անկյունում: Ես կլինեմ տղամարդը՝ բերանիս երկու ծխախոտ դրած:

— Այստեղ խոսելու տեղը չէ,— լսելով բեռնատարի զայրացած ազդանշանը՝ սրտնեղեց Թոմը:— Եկե՛ք իմ հետևից՝ կենտրոնական զբոսայգու հարավային մուտքի մոտ՝ «Փլացա» հյուրանոցի դիմաց:

Ապա մի քանի անգամ շրջվեց՝ տեսնելու՝ արդյոք կապույտ մեքենան հետևում է իրեն, և եթե երթևեկության պատճառով նրանք դանդաղում էին, Թոմը նույնպես հապաղում էր, մինչև որ նորից հայտնվեին տեսադաշտում: Ինձ թվում է, թե նա վախենում էր, որ նրանք կթեքվեն կողքի փողոցն ու ընդմիջտ կանհետանան իր կյանքից:

Բայց նրանք չթեքվեցին: Եվ մենք բոլորս անբացատրելի որոշում ընդունեցինք՝ «Փլացա» հյուրանոցում լյուքս սենյակ վարձել:

Երկարատև ու աղմկալի վիճաբանությունը, որն ավարտվեց մեզ սենյակ քչելով, չի տպավորվել հիշողությանս մեջ,

չնայած պարզ հիշում եմ, որ այդ ամբողջի ընթացքում ներքնաշորերս լարծուն օձի նման գալարվում էին ոտքերիս շուրջ, և մերթընդմերթ քրտինքի սառը կաթիլներ էին գլորվում մեջքովս վար: Ամեն ինչ սկսվեց Դեյզիի այն առաջարկից, որ հինգ լողասենյակ վարձենք և սառը լոզանք ընդունենք, իսկ քիչ անց խոսք եղավ «անանասի օշարակ խմելու տեղի» մասին: Մեզնից յուրաքանչյուրը շարունակ կրկնում էր՝ «Խելացնոր միտք է», բոլորս միաբերան խոսում էինք ապշած աշխատողի հետ և կարծում կամ ձևացնում, որ այդ ամենը մեզ անասելի հաճույք է պատճառում...

Սենյակը ընդարձակ էր ու հեղձուցիչ, և չնայած արդեն ժամը չորսն էր, պատուհանները բանալուն պես այգուց շիկացած կանաչի հոսանքը ներս խուժեց, Դեյզին մոտեցավ հայելուն և, մեջքը դեպի մեզ արած, սկսեց հարդարել մազերը:

— Շքեղ սենյակ է,— ակնածանքով ասաց Ջորդանը, և բոլորս ծիծաղեցինք:

— Մյուս պատուհանն էլ բացիր,— առանց շրջվելու կարգադրեց Դեյզին:

— Էլ չկա:

— Դե որ այդպես է, զանգենք՝ կացին բերեն...

— Ավելի լավ է՝ չխոսենք շոգի մասին,— բարկացավ Թոմը:— Իսկ դու անընդհատ ասում ես՝ շոգ է, շոգ է, դրանից հազար անգամ ավելի ես շոգում:

Նա սրբիչից հանեց վիսկիի շիշն ու դրեց սեղանին:

— Ինչո՞ւ եք նրան մեղադրում, բարեկամ,— նկատեց Գեթսբին:— Դուք ինքներդ էիք ուզում քաղաք գալ:

Լռություն տիրեց: Հանկարծ հեռախոսագիրքը պոկվեց մեխից ու ընկավ հատակին, որի վրա Ջորդանը շնջաց՝ ներեցնք, խնդրեմ, բայց այս անգամ ոչ ոք չծիծաղեց:

— Ես կբարձրացնեմ,— ասացի:

— Ես ինքս,— Գեթսբին զննեց պոկված կապիչը, ապա հետաքրքրությամբ «հըմ» արեց ու շարտեց աթոռին:

— Իսկ առանց Ձեր այդ նշանավոր խոսքի հնարավոր չէ,— կտրուկ հարցրեց Թոմը:

— Ինչ խոսք:

— Դե այդ «բարեկամ» բառը, որ շարունակ կրկնում եք: Որտեղից եք ձարել:

— Լսիր, Թոմ,— Դեյզին հեռացավ հայելուց,— եթե դու պատրաստվում ես մարդկանց վիրավորելու, ես մի վայրկյան անգամ չեմ մնա այստեղ: Ջանգիր, ասա՛, որ սառույց բերեն անանուխի օշարակի համար:

Երբ Թոմը բարձրացրեց լսափողը, ամբած շոգը ձայնի վերածվեց, իսկ ներքևի պարասրահից մեզ հասան Մենդելսոնի հարսանեկան քայլերգի հանդիսավոր հնչյունները:

— Պատկերացնում եք՝ այս շոգին ամուսնանալ,— հուսահատ գոչեց Ջորդանը:

— Ինչ կա որ, ես ինքս ամուսնացա հունիսի կեսին,— հիշեց Դեյզին:— Լուիսվիլը՝ հունիսին: Ինչ-որ մեկը նույնիսկ ուշագնաց եղավ: Ո՞վ էր դա, Թոմ:

— Բիլոքսին,— կարճ պատասխան տվեց Թոմը:

— Այո՛, այո՛, Բիլոքսի անունով մեկը: Բլոքս Բիլոքսին Բիլոքսի քաղաքից, որը բոքս էր խաղում:

— Հետո նրան մեզ մոտ բերեցին,— ձայնակցեց Ջորդանը,— որովհետև մենք եկեղեցուց երկու տուն այն կողմ էինք ապրում, և նա երեք շաբաթ մնաց մեր տանը, մինչև հայրիկն ասաց, որ արդեն նրա գնալու ժամանակն է: Հաջորդ օրը հայրիկը մահացավ:— Ապա մի պահ լռելուց հետո ավելացրեց՝ մտածելով, որ իր խոսքերը անհարգալից հնչեցին,— մեկը մյուսի հետ ոչ մի առնչություն չուներ:

— Ես ճանաչում էի Բիլ Բիլոքսի անունով մեկին, բայց նա Մեմֆիս քաղաքից էր,— մտաբերեցի ես:

— Նրա զարմիկն է: Ես նրա ամբողջ ընտանիքի պատմությունը գիտեմ: Նա ինձ նվիրեց գովի ալյումինե մականներ, որոնք մինչև օրս օգտագործում եմ:

Ներքևում երաժշտությունը դադարեց: Սկսվեց ամուսնական ծիսակատարությունը, հետո մերթընդմերթ երկարատև ուրախալից շնորհավորանքներ հորդացին մեր սենյակը: Ի վերջո պողոթկաց ջազը՝ ազդարարելով պարերի սկիզբը:

— Ծերանում ենք, — ասաց Դեյզին, — եթե երիտասարդ լինեիք, անմիջապես կցատկեիք ու կպարեիք:

— Հիշիր Բիլոքսիին, — նախազգուշացրեց Ջորդանը: — Որտեղից գիտես նրան, Թոմ:

— Բիլոքսիին, — ձիգով կենտրոնացավ Թոմը: — Ես նրան երբեք չեմ տեսել: Նա Դեյզիի ծանոթն է:

— Ճիշտ չէ, — ժխտեց Դեյզին: — Ես նրան մինչև հարսանիքը չէի տեսել: Նա ձեզ հետ եկավ Չիկագոյից:

— Այո՛, բայց նա ասաց, որ ճանաչում է քեզ: Ասաց, որ մեծացել է Լուիսվիլում: Ազա Բըրդը բերեց նրան վերջին բուսակն ու հարցրեց, թե նրա համար տեղ կգտնվի:

Ջորդանը քմծիծաղ տվեց.

— Նա հավանաբար ուզում էր ձրի տուն գնալ: Իսկ ինձ ասաց, որ Յեյլում Ձեր խմբի ավագն է եղել:

Ես ու Թոմը տարակուսանքով նայեցինք միմյանց:

— Բիլոքսիին:

— Նախ և առաջ մենք ավագ չունեիք...

Գեթսբին կոշիկի ծայրով կարճ, անհանգիստ տկտկացրեց հատակին: Թոմը հանկարծ դիմեց նրան:

— Իմիջիայլոց, պարոն Գեթսբի, որքան գիտեմ, Դուք Օքսֆորդն եք ավարտել:

— Մոտավորապես:

— Ա՛ա, հասկանում եմ: Ուզում եք ասել՝ սովորել եք այնտեղ:

— Այո՛, սովորել եմ:

Դադար: Ապա Թոմի ձայնը՝ հեզնական ու թերահավատ.

— Ըստ երևույթին, այն ժամանակ, երբ Բիլոքսին Նյու Հեյվընում էր սովորում:

Կրկին դադար: Մատուցողը բախեց դուռը, ներս բերեց մանրացրած սառույց ու անանուխի օշարակ, սակայն լուծյունը չխախտվեց նրա շնորհակալությամբ և դռան մեղմ փակոցով: Գեթսբիի կենսագրության այս կարևոր մանրամասնը պետք է վերջապես պարզվեր:

— Ես Ձեզ ասացի, որ սովորել եմ այնտեղ:

— Այո՛, բայց ցանկալի է իմանալ՝ երբ:

— 1919-ին: Միայն հինգ ամիս եմ դասի գնացել: Ահա թե ինչու ես ինձ իսկական Օքսֆորդի սան չեմ կարող համարել:

Թոմը մեզ նայեց՝ տեսնելու, թե արդյոք մենք կիսում ենք նրա թերահավատությունը, բայց բոլորիս հայացքն ուղղված էր Գեթսբիին:

— Ջինադադարից հետո մի քանի սպաների տրվեց այդ հնարավորությունը, — շարունակեց Գեթսբին: — Մենք կարող էինք ընտրել Անգլիայի կամ Ֆրանսիայի ցանկացած համալսարանը:

Ես ցանկություն ունեցա կանգնելու և թփթփացնելու նրա մեջքին: Վերստին նրա նկատմամբ համակվեցի բացարձակ հավատով, ինչպես բազմիցս եղել էր նախկինում:

Դեյզին ոտքի ելավ և հազիվ նկատելի ժպիտով մոտեցավ սեղանին:

— Բայց արա վիսկիի շիշը, Թոմ, — հրամայեց նա: — Ես քեզ համար անանուխի օշարակ կպատրաստեմ, որ քեզ այդքան հիմար չզգաս... Տես, անանուխն արդեն պատրաստ է:

— Սպասիր, — ֆշացրեց Թոմը, — ես պարոն Գեթսբիին մեկ հարց էլ եմ ուզում տալ:

— Խնդրեմ, — քաղաքավարի ասաց Գեթսբին:

— Ի՞նչ կոհիվ եք պատրաստվում գցելու իմ տան մեջ:

Վերջապես խոսակցությունը բացահայտ բնույթ կրեց, և Գեթսբին գոհ էր:

— Նա կոհիվ չի գցում, — Դեյզիի հուսահատ հայացքը մեկից մյուսն անցավ: — Այդ դու ես կոհիվ գցողը: Խնդրում եմ, հավաքիր քեզ:

— Հավաքեմ ինձ,— կատաղած կրկնեց Թումը:— Քիչ հետո կասես, որ հանգիստ նստեմ ու նայեմ, թե ինչպես է Այն-ինչ քաղաքից եկած պարոն Այսինչը սիրաբանում կնոջս հետ: Եթե դա է ուզածդ, հույսդ կտրիր: Այսօր մարդիկ սկսել են ընտանեկան կյանքին ու նրա օրենքներին հակառակ գնալ, իսկ վաղը ամեն ինչ տակնուվրա կլինի, և կամուսնանան սևամորթների հետ:

Իր անմտությամբ ոգևորված՝ Թումն իրեն պատկերացնում էր քաղաքակրթության վերջին պատնեշին մեն-մենակ կանգնած:

— Մենք այստեղ բոլորս էլ սպիտակ ենք,— ասաց Ջորդանը:

— Ես գիտեմ, որ այնքան էլ հանրաճանաչ մարդ չեմ: Շքեղ պարահանդեսներ չեմ տալիս: Ինչպես երևում է, մեր օրերում տունդ խոզանոցի պիտի վերածես, որ ընկերներ ունենաս:

Ինչքան էլ որ բարկացած էի, ինչքան էլ որ բոլորը բարկացած էին, բայց և այնպես, ծիծաղս գալիս էր ամեն անգամ, երբ Թումը բացում էր բերանը: Անառակից բարոյախոսի վերածվելը չափազանց ապշեցուցիչ էր:

— Ես Ձեզ ասելիք ունեմ, բարեկամ...— սկսեց Գեթսերին:

Դեյզին գուշակեց նրա միտքը:

— Ո՛հ, ո՛հ, պետք չէ,— վախեցած ընդհատեց նա:— Խնդրում եմ, գնանք տուն: Եկեք բոլորս գնանք տուն:

— Ճիշտ որ:— Ես վեր կացա:— Գնացի՞նք, Թո՛մ: Ոչ ոք չի ուզում խմել:

— Ես ուզում եմ իմանալ, թե պարոն Գեթսերիի ասելիքն ինչ է:

— Ձեր կինը չի սիրում Ձեզ,— ասաց Գեթսերին:— Նա Ձեզ երբեք չի սիրել: Նա ինձ է սիրում:

— Գժվե՛լ եք, ինչ է,— մեքենաբար գոչեց Թումը:

Գեթսերին տեղից ցատկեց՝ հուզումից աշխուժացած:

— Նա Ձեզ երբեք չի սիրել, լսում եք,— գոռաց նա:— Նա Ձեզ հետ ամուսնացել է միայն նրա համար, որովհետև ես աղքատ էի, իսկ նա հոգնել էր սպասելուց: Դա ահավոր սխալ էր, բայց սրտի խորքում նա երբեք ինձնից բացի ոչ մեկին չի սիրել:

Ես ու Ջորդանը փորձեցինք գնալ, բայց Թոմն ու Գեթս-բին մեկը մյուսից ավելի համառ պնդեցին, որ մնանք, ասես նրանցից ոչ մեկը մեզնից թաքցնելու բան չունենր և արտոնություն էր տվել մեզ հաղորդակից լինելու իրենց բուռն զգացմունքներին:

— Նստի՛ր, Դեյզի՛,— Թոմը ձայնին հայրական երանգ տալու անհաջող փորձ արեց,— ինչ է կատարվում: Ես ուզում եմ ամեն ինչ իմանալ:

— Ես Ձեզ ասացի, թե ինչ է կատարվում,— պատասխանեց Գեթսբին:

— Հինգ տարի է՝ նույն բանն է կատարվում, իսկ Դուք գաղափար անգամ չունեք:

Թոմը կտրուկ շրջվեց դեպի Դեյզին:

— Դու սրա հետ հինգ տարի շարունակ հանդիպում էիր:

— Ո՛չ, չէինք հանդիպում,— ասաց Գեթսբին:— Մենք հանդիպել չէինք կարող: Բայց ամբողջ ժամանակ սիրում էինք միմյանց, բարեկամ, և Դուք ոչինչ չգիտեիք: Ես երբեմն մտածում էի, որ Դուք չգիտեք այդ մասին, և ծիծաղս գալիս էր:— Բայց նրա աչքերը չէին ժպտում:

— Դա՛ է բոլորը,— Թոմը քահանայի նման միացրեց իր հաստ մատներն ու հենվեց աթոռին,— Դուք խելագար եք,— պոռթկաց նա:— Չգիտեմ, թե ինչ է եղել հինգ տարի առաջ, որովհետև ես այն ժամանակ չէի ճանաչում Դեյզիին, և սպանես՝ չեմ կարող ասել, թե ինչպես եք ընդհանրապես ծանոթացել, ինչպես եք մոտեցել նրան, գուցե երբ նպարավաճառից մթերք եք իրենց տուն տարել հետնամուտքից: Բայց ինչ վերաբերում է Ձեր ասածին, բացարձակ սուտ է: Դեյզին սիրելով ամուսնացավ ինձ հետ և հիմա էլ սիրում է:

— Ո՛չ,— Գեթսեմին տարուբերեց գլուխը:

— Նա ինձ սիրում է, չնայած երբեմն հիմարություններ է մտցնում գլուխը և արածը չի իմանում:— Թումը խորիմաստ տմբտմբացրեց:— Դեռ ավելին՝ ես էլ եմ Դեյզիին սիրում: Երբեմն ինձ ազատություն եմ տալիս, բայց միշտ էլ վերադառնում եմ ու սրտումս միայն նրան եմ սիրում:

— Գարշելի՛ արարած,— շրջվելով իմ կողմը՝ Դեյզիի ձայնը ցածրացավ և խոր արհամարհանքով լցրեց սենյակը:— Դու գիտես, Նիք, թե ինչու մենք Չիկագոյում չմնացինք: Տեսնես ինչո՞ւ այդ փոքրիկ չարաձճիության պատմությունը քեզ չի արել:

Գեթսեմին մոտեցավ, կանգնեց Դեյզիի կողքին:

— Ամեն ինչ վերջացավ, Դեյզի՛,— վճռական ասաց նա:— Խոսել չարժե: Ասա՛ նրան ճշմարտությունը, որ երբեք չես սիրել, և ամեն ինչ տեղը կընկնի:

Դեյզին նայեց նրան անիմաստ հայացքով:

— Սիրելի... ինչպես կարող էի սիրել նրան:

— Դու երբեք չես սիրել նրան:

Դեյզին հապաղում էր: Նա աղերսանքով նայեց ինձ ու Ջորդանին, ասես վերջապես հասկացավ անելիքը, ասես մինչև հիմա երբեք մտադիր չէր եղել որևէ բան անել: Բայց արդեն ուշ էր, ինչ եղել էր, եղել էր:

— Ես երբեք նրան չեմ սիրել,— նկատելի դժկամությամբ ասաց նա:

— Նույնիսկ Կապիուլանիո՞ւմ,— հանկարծ հարցրեց Թումը:

— Այո՛:

Ներքևի պարասրահից օդի տաք ալիքների հետ մեկտեղ երգի խուլ, խեղդուկ հնչյուններ էին բարձրանում:

— Ոչ էլ այն օրը, երբ քեզ Փանչ Բոուլից ձեռքերիս վրա տանում էի, որ կոշիկներդ չթրջվեն:— Նրա ձայնի մեջ խռպուտ քնքշանք զգացվեց...— Դեյզի՛:

— Խնդրում եմ, մի... — Դեյզիի ձայնը սառն էր, բայց արդեն առանց թշնամանքի:— Նա նայեց Գեթսեմի:— Տեսա՞ր, Ջեյ,— նրա ձեռքը դողաց սիգարետ վառելիս: Ապա անսպասելի շարտեց սիգարետն ու վառվող լուցկին գորգի վրա:— Դու շատ բան ես ուզում,— գոռաց նա Գեթսեմի վրա:— Ես քեզ սիրում եմ, բավական չէ: Անցյալը չեմ կարող փոխել:— Եվ սկսեց անօգնական հեկեկալ:— Ես նրան մի ժամանակ սիրել եմ, բայց քեզ էլ եմ սիրել:

Գեթսեմի բացուխուփ արեց աչքերը:

— Ի՞նչ էլ ես սիրել,— կրկնեց նա:

— Նույնիսկ դա էլ է սուտ,— կատաղի ճչաց Թոմը:— Նա ձեր գոյության մասին անգամ չգիտեր: Իմ ու Դեյզիի միջև կան բաներ, որ Դուք երբեք չեք իմանա, այնպիսի բաներ, որ մեզնից ոչ մեկը մոռանալ չի կարող:

Բառերը մարմնական ցավ պատճառեցին Գեթսեմիին:

— Ես ուզում եմ Դեյզիի հետ մենակ խոսել,— պնդեց Գեթսեմի:— Նա հիմա շատ հուզված է...

— Նույնիսկ մենակ չեմ կարող ասել, որ երբեք չեմ սիրել Թոմին,— հուսահատ ձայնով ընդունեց Դեյզին:— Ճիշտ չի լինի, եթե հակառակն ասեմ:

— Իհարկե, ճիշտ չի լինի,— միացավ Թոմը:

Դեյզին դիմեց ամուսնուն:

— Իբր քեզ համար միևնույնը չէ:

— Իհարկե, միևնույնը չէ: Սրանից հետո ես ավելի շատ հոգ կտանեմ քո մասին:

— Դուք չհասկացաք,— տագնապեց Գեթսեմի:— Դուք այլևս նրա մասին հոգ չեք տանելու:

— Ինչպե՞ս,— Թոմը լայն բացեց աչքերն ու ծիծաղեց: Նա այժմ տիրապետում էր իրեն:— Ի՞նչ է եղել, որ...

— Դեյզին բաժանվում է Ջեզնից:

— Հիմարություն:

— Այո՛, բաժանվում եմ,— նկատելի ձիգով ասաց Դեյզին:

— Նա չի բաժանվում ինձնից:— Թոմի խոսքերը հանկարծ ծանրորեն ընկան Գեթսբիի վրա:— Այն էլ մի խաբեբայի պատճառով, որը գողացած մատանի է անցկացնելու կնոջ մատին:

— Ես այլևս չեմ կարող լսել այս բոլորը,— գոռաց Դեյզին:— Խնդրում եմ, հեռանանք այստեղից:

— Եվ ընդհանրապես ո՞վ եք Դուք,— պտոթկաց Թոմը:— Որքան ինձ հայտնի է, դուք Մեյեր Վուլֆշայմի խմբից եք: Ես որոշ տեղեկություն եմ հավաքել Ձեր գործերի մասին և դեռ կաշխատեմ ավելին իմանալ:

— Հավաքե՞ք ինչքան կուզեք, բարեկամ,— վստահ սասց Գեթսբին:

— Ես արդեն գիտեմ, թե ինչ են Ձեր «դեղատները»:— Թոմը դարձավ մեզ ու արագ վրա տվեց,— նա և Վուլֆշայմը բազմաթիվ մանր-մունր դեղատներ են գնել Նյու Յորքում ու Չիկագոյում և օրի վաճառել: Սա նրա քաջագործություններից մեկն է: Ես նրան մաքսանենգի տեղ դրեցի հենց սկզբից և չէի սխալվել:

— Իսկ սրան ինչ կասեք,— քաղաքավարի սասց Գեթսբին:— Ձեր ընկեր Վոլթեր Չեյսը չէ՞ր, որ մեզ հետ գործակցեց:

— Եվ Դուք նրա գլխին փորձանք բերեցիք: Թողեցիք, որ մի ամիս մնա Նյու Ջերսիի բանտում: Տե՛ր Աստված: Պետք է լսեիք, թե ինչ էր նա ասում Ձեր մասին:

— Նա մեզ մոտ եկավ լրիվ սնանկացած և շատ ուրախ էր, որ մի քիչ փող վաստակեց, բարեկամ:

— Ինձ մի՛ կոչեք «բարեկամ»,— ճչաց Թոմը: Գեթսբին ոչինչ չասաց:— Վոլթերը Ձեզ օրենքի ձեռքը կտար, բայց Վուլֆշայմը վախեցրեց նրան ու բերանը փակեց:

Կրկին Գեթսբիի դեմքին հայտնվեց այդ օտարոտի, բայց ծանոթ արտահայտությունը:

— Այդ դեղատների գործն այնքան էլ մեծ բան չէ,— հանգիստ շարունակեց Թոմը,— բայց հիմա Դուք զբաղված եք մի այնպիսի գործով, որի մասին Վոլթերը վախեցավ ասել:

Ես նայեցի Դեյզիին, որը սարսափահար նայում էր մերթ Գեթսքիին, մերթ ամուսնուն, մերթ Ջորդանին. վերջինս դարձյալ սկսել էր մի անտեսանելի առարկա հավասարակշռել ծնոտի ծայրին: Ապա նայեցի Գեթսքիին և ցնցվեցի նրա տեսքից: Կարելի էր մտածել (ասում եմ բացարձակ արհամարհանքով նրա պարտեզում լսած չարամիտ հերյուրանքների նկատմամբ), որ նա «մարդ էր սպանել»: Մի պահ նրա դեմքը, որքան էլ անհեթեթ հնչի իմ ասածը, մարդասպանի դեմք էր:

Սակայն այդ կարճատև պահն անցավ, և Գեթսքին սկսեց հուզված խոսել Դեյզիի հետ՝ ժխտելով ամեն ինչ, պաշտպանելով իրեն այն մեղադրանքներից, որ նույնիսկ չէին ասվել: Բայց նրա ամեն մի խոսքից Դեյզին ավելի ու ավելի խոր էր ամփոփվում ինքն իր մեջ, այնպես որ Գեթսքին լռեց. միայն փշրված երազն էր շարունակում ժամանակ շահել՝ փորձելով շոշափելի դարձնել այն, ինչ այլևս իրական չէր՝ ապարդյուն, հուսահատ որսալով սենյակի մյուս ծայրին հնչող ողբալի ձայնը:

Ձայնը կրկին ու կրկին աղերսում էր տուն գնալ:

— Խնդրում եմ, Թոմ: Էլ չեմ կարող:

Նրա վախեցած աչքերն ասում էին, որ իր նախկին մտադրության ու վճռականության հետքն անգամ չէր մնացել:

— Դո՛ւ, Դեյզի՛, գնա՛ նրա հետ,— ասաց Թոմը:— Պարոն Գեթսքիի մեքենայով:

Դեյզին տազնապահար նայեց Թոմին, բայց վերջինս պնդեց վեհանձն արհամարհանքով:

— Գնա՛, գնա՛: Նա քեզ չի անհանգստացնի: Երևի արդեն հասկացավ, որ իր հավակնոտ փոքրիկ սիրավեպն ավարտված է:

Եվ նրանք երկուսով գնացին անմոռնչ, չքացան ուրվականների պես՝ մենավոր ու մեկուսացած, դուրս ամեն ինչից, նույնիսկ մեր խղճահարությունից:

Քիչ հետո Թումը ոտքի ելավ ու սկսեց սրբիչի մեջ փաթաթել վիսկիի չքացված շիշը:

— Խմել ուզում եք: Ջորդան... Նիք...

Ես լուռ էի:

— Նիք,— նա կրկին դիմեց ինձ:

— Ինչ:

— Ուզում ես:

— Ո՛չ... ես հենց նոր հիշեցի, որ այսօր իմ ծննդյան օրն է:

Երեսուն տարիս էր լրանում: Առջևս ձգվում էր նոր տասնամյակի չարաբաստիկ, սպառնալից ուղին:

Ժամը յոթն էր, երբ երեքով մեքենա նստեցինք ու ճանապարհվեցինք դեպի Լոնգ Այլընդ: Թումը անդադար խոսում էր, կատակում, ծիծաղում, բայց նրա ձայնը այնքան հեռու էր ինձնից ու Ջորդանից, ինչքան մայթի վրայի օտարոտի աղմուկը կամ գլխավերևի վերգետնյա ճանապարհի աշխուժությունը: Մարդկային կարեկցանքը չափ ու սահման ունի, և մենք հաճույքով թողեցինք մեր հետևում նրանց ողբերգական վեճը՝ քաղաքի մարող լույսերի հետ մեկտեղ: Երեսուն՝ նշանակում էր մենության մեկ տասնամյակ ևս, ամուրիների նվազող ցուցակ, պակասող եռանդ, նոսրացող մազեր: Բայց կողքիս Ջորդանն էր, որն, ի տարբերություն Դեյզիի, չափազանց իմաստուն էր, որպեսզի վաղուց մոռացված երազները տարեցտարի քարշ չտա իր հետ: Երբ անցնում էինք մութ կամրջով, նրա դալուկ դեմքը ծուլորեն թեքվեց ուսիս, և այդ քաջալերող ձեռքսեղմման տակ փուլ եկավ երեսուն տարիներիս ահավոր ծանրությունը:

Եվ այսպես, զովացող մթնշաղում մենք սլանում էինք դեպի մահ:

* * *

Երիտասարդ հույն Միքայելիսը, որ խարամի կույտերի մոտ սրճարան ուներ, հետաքննության գլխավոր վկան էր: Շոգից ուժասպառ՝ նա քնել էր մինչև ժամը հինգը, հետո

դուրս եկել ման գալու, մտել ավտոտնակ ու գրասենյակում տեսել հիվանդ, իսկապես հիվանդ Ջորջ Վիլսոնին դողացնելիս, գույնը գցած, իսկ և իսկ իր մազերի գույնին: Միքայելիսը խորհուրդ էր տվել նրան անկողին մտնել, բայց Վիլսոնը չէր ցանկացել՝ ասելով, որ շատ գործ կա: Մինչ հույնը փորձել էր համոզել նրան, վերևում անասելի աղմուկ էր բարձրացել:

— Կնոջս փակել եմ սենյակում, — հանգիստ բացատրեց Վիլսոնը: — Թող մնա այնտեղ մինչև վաղը չէ մյուս օրը, հետո կգնանք այստեղից:

Միքայելիսը ապշեց: Նրանք չորս տարի հարևան էին եղել, և Վիլսոնը երբեք նման բանի ընդունակ չէր թվացել: Ընդհանրապես նա կյանքից հոգնած մարդկանցից էր: Աշխատանքից ազատ ժամերին նստում էր դռան շեմին ու նայում անցուդարձողներին, մեքենաներին: Երբ որևէ մեկը խոսում էր հետը, ծպտում էր բարեհամբույր, անգույն ժպիտով: Նա իր գլխի տերը չէր, նա պատկանում էր կնոջը:

Բնականաբար, Միքայելիսը փորձեց իմանալ, թե ինչ էր պատահել, բայց Վիլսոնը ծպտուն անգամ չհանեց, փոխարենը սկսեց տարօրինակ, կասկածելի հայացքներ ձգել հարևանի վրա ու հարցուփորձ անել, թե նա այս կամ այն օրը, այս կամ այն ժամին որտեղ էր եղել և ինչ էր արել: Միքայելիսն արդեն ինքն իրենից դուրս էր գալիս, երբ տեսավ մի քանի գործավորների, որոնք գնում էին դեպի իր սրճարանը, և այդ պատրվակով հեռացավ, որպեսզի քիչ հետո վերադառնա: Բայց չեկավ: Հավանաբար մոռացել էր: Երբ կրկին դուրս եկավ, ժամը յոթն անց էր, և ավտոտնակից տարածվող տիկին Վիլսոնի բարձր, լուտանքներով լի ձայնը հիշեցրեց նրան ցերեկվա խոսակցությունը:

— Խփիր ինձ, — գոռում էր նա: — Գցիր գետնին ու խփիր: Կեղտոտ, վախկոտի՛ մեկը:

Քիչ անց տիկին Վիլսոնը նետվեց դուրս՝ դեպի մթնշաղը՝ թափահարելով ձեռքերն ու բղավելով, և նախքան Վիլսոնը կհասցներ քայլ անել, ամեն ինչ վերջացավ:

«Մահվան մեքենան», ինչպես հետագայում լրագրերը կոչեցին այն, կանգ չառավ, այլ հայտնվեց թանձրացող մթության միջից, մի ակնթարթ երերաց ողբերգական անվճռականությամբ ու անհետացավ հաջորդ ոլորապտույտի հետևում: Միքայելիսը նույնիսկ նրա գույնը կարգին չտեսավ, բայց առաջին իսկ մոտեցող ոստիկանին ասաց, որ այն բաց կանաչ էր: Իսկ մյուս մեքենան, որը Նյու Յորք էր գնում, արգելակեց հարյուր յարդ հեռու, և վարորդը, վազելով հետ, եկավ դեպի այն վայրը, որտեղ գունդուկծիկ եղած չոքել էր կյանքից վայրագորեն հեռացող Միրթլ Վիլսոնը՝ թանձր արյունը շաղախելով փոշու հետ:

Միքայելիսն ու վարորդը առաջին մոտեցողները եղան, և երբ պատռեցին նրա քրտինքից դեռևս թաց վերնաշապիկը, տեսան, որ ձախ կուրծքը կափարիչի նման կախ էր ընկել, և հարկ չկար լսելու սիրտը: Բերանը լայն բացված էր, անկյուններում՝ պատռված, ասես նա խեղդվել էր իր մեջ կուտակված հսկայական կենսունակության ժայթքումից:

* * *

Մենք դեռ հեռվից նկատեցինք երեք թե չորս մեքենա ու հավաքված ամբոխը:

— Վթար,— ասաց Թոմը:— Վիլսոնի բախտը բերեց: Վերջապես մի քիչ փող կաշխատի:

Նա դանդաղեցրեց, բայց մտադրություն չունեի կանգ առնելու: Երբ ավելի մոտեցանք, ավտոտնակի մոտ կանգնած մարդկանց լուռումունջ, լարված դեմքերը ստիպեցին նրան մեքենաբար սեղմել արգելակները:

— Տեսնենք՝ ինչ է եղել,— տարակուսած ասաց նա:— Հենց միայն տեսնենք ու գնանք:

Երբ մեքենայից դուրս եկանք ու շարժվեցինք դեպի դուռը, ավտոտնակից ինձ հասավ խուլ ողբի ձայն, որը, վերածվելով «Ա՛խ, Աստված իմ» բառերի, միալար կրկնվեց մի քանի անգամ:

— Ինչ-որ վատ բան է պատահել,— հուզված ասաց Թոմը:

Նա կանգնեց ոտքի ծայրերին և մարդկանց գլուխների վրայով նայեց ավտոտնակի ներսը, որը լուսավորված էր առաստաղից կախված երկաթացանց զամբյուղում ճոճվող լամպի դեղին լույսով: Հետո նրա կոկորդից խոպոտ հնչյուն դուրս եկավ և իր հզոր բազուկներով հրելով մարդկանց՝ առաջ անցավ:

Շրջանը, վրդովմունքի ձայներ արձակելով, կրկին փակվեց, և ես ոչինչ չկարողացա տեսնել: Հետևից նորանոր մարդիկ էին ավելանում, այնպես որ հանկարծ ինձ ու Ջորդանին հրեցին ներս: Երկու վերմակի մեջ կոլոված Միրթլ Վիլսոնի մարմինը, ասես այդ շոգին նա ցրտից դողացնում էր, դրված էր աշխատասեղանի վրա՝ պատի մոտ, և Թոմը, մեջքը մեզ արած, գլխահակ, անշարժացել էր: Նրա կողքին մոտոցիկլավարի գլխարկով ոստիկանը մեծ տքնաջանությամբ անուններ էր գրում—ջնջում տետրի մեջ: Սկզբում չկարողացա գտնել դատարկ ավտոտնակում արձագանքող այդ բարձր տնքոցի աղբյուրը, բայց հետո տեսա Վիլսոնին, որ գրասենյակի շեմին կանգնած՝ օրորվում էր՝ երկու ձեռքերով դռան կողափայտերից բռնած: Ինչ-որ մեկը ցածրաձայն խոսում էր հետը, փորձելով ձեռքը դնել ուսին, բայց Վիլսոնը ո՛չ լսում էր, ո՛չ տեսնում: Նրա հայացքը սահում էր ճոճվող լույսի վրայով դեպի բեռնավորված սեղանը, ապա կրկին հետ, և այսպես շարունակ անվերջանալի բարձր ոռնոցներ արձակում:

— Ա՛խ, Աստված: Ա՛խ, Աստված: Ա՛խ...

Հանկարծ Թոմը կտրուկ բարձրացրեց գլուխը և սառած աչքերով շուրջը նայելուց հետո ինչ-որ անլսելի, անհասկանալի բան մոթմոթաց ոստիկանին:

— Մ-ե-ք,— հեզում էր ոստիկանը,—... ո...

— Ո՛չ, ի,— ուղղում էր հույնը,— Մ-ի-ք...

— Լսիր,— կատաղած մոթմոթաց Թոմը:

— ա,— շարունակում էր ոստիկանը,— յ...

— Ե...

— Ե...— Թումի ծանր ձեռքը կտրուկ իջավ նրա ուսին, և ոստիկանը բարձրացրեց գլուխը:— Ի՞նչ ես ուզում, այ մարդ:

— Ո՞նց պատահեց: Ուզում եմ իմանալ՝ ո՞նց պատահեց:

— Մեքենան ա խփել: Տեղնուտեղը մեռել ա:

— Տեղնուտեղը մեռել ա,— հայացքը մի կետի հառած՝ կրկնեց Թումը:

— Դուրս ա վազել փողոց: Շան տղան իսկի չի էլ կանգնել: Քշել գնացել ա:

— Երկու մեքենա էին,— բացատրում էր Միքայելիսը:— Մեկը գալիս էր, մյուսը՝ գնում...

— Ո՞ւր, — հետաքրքրությամբ հարցրեց ոստիկանը:

— Իր ճամփով: Դե, նա...— Միքայելիսը բարձրացրեց ձեռքը վերմակների ուղղությամբ, բայց կեսին կանգ առավ ու անմիջապես իջեցրեց...— նա դուրս վազեց դեպի ճանապարհը, և Նյու Յորքից եկողը գետին գցեց նրան: Ա՛յ թե արագություն էր, հա՛: Ժամում երեսուն—քառասուն մղոն:

— Էստեղի անունն ի՞նչ ա,— հարցրեց ոստիկանը:

— Անուն չունի:

Մոտ եկավ մի լավ հագնված գունատ սևամորթ:

— Դեղին մեքենա էր,— ասաց:— Մեծ դեղին մեքենա:

Լրիվ նոր:

— Ինչ է, տեսն՞լ ես դեպքը:

— Ո՛չ, բայց մեքենան կողքովս անցավ: Քառասունից ավելի էր քշում: Հիսուն—վաթսուն կլիներ:

— Արի՛ ասա ազգանունդ: Թողն՞ք անցնի: Ուզում եմ սրա ազգանունը գրել:

Այդ խոսակցությունից մի քանի բառ պետք է որ հասած լիներ դռան մեջ օրորվող Վիլսոնին, որովհետև հանկարծ նրա տնքոցների մեջ նոր խոսքեր մուտք գործեցին:

— Առանց ձեզ էլ գիտեմ: Դուք չէ, որ ինձ պիտի ասեք, թե ինչ մեքենա էր:

Ես տեսա, թե ինչպես բաճկոնի տակ պրկվեցին Թոմի ուսի մկանները: Նա շտապ մոտեցավ Վիլսոնին և կանգնելով դիմացը՝ պինդ բռնեց նրա թևերից:

— Հավաքիր քեզ,— կոպտորեն հանգստացրեց նա:

Վիլսոնի աչքն ընկավ Թոմին. նա ուզեց ուղղվել, բայց ծնկները ծավեցին, և կրնկներ, եթե Թոմը չբռներ:

— Լսիր,— Թոմը թեթևակի ցնցեց նրան:— Ես քիչ առաջ եմ եկել Նյու Յորքից և բերել եմ այն մեքենան, որի մասին արդեն պայմանավորվել էինք: Այն դեղին մեքենան, որ ցերեկը քշում էի, իմը չէ, լսում ես: Դրանից հետո ես այն չեմ տեսել:

Միայն ես ու նեգրը լսեցինք նրա ասածը, որովհետև մոտ էինք կանգնած, բայց ուստիկանը, ինչ—որ բան որսալով, զգաստացավ:

— Ինչի՞ մասին եք խոսում,— հարցրեց:

— Ես նրա ընկերն եմ:— Թոմը շրջեց գլուխը, բայց չթողեց Վիլսոնին:— Նա ասում է, որ գիտի՝ ինչ մեքենա է դա... Դեղին մեքենա էր:

Անորոշ մի բան ստիպեց ուստիկանին կասկածանքով նայել Թոմին:

— Իսկ Ձեր մեքենան ինչ գույնի է:

— Կապույտ: Երկտեղ:

— Մենք հենց նոր ենք գալիս Նյու Յորքից,— ընդհատեցի ես:

Մեր հետևից եկողը հաստատեց իմ ասածը, և ուստիկանը շրջվեց դեպի Միքայելիսը:

— Դե՛, հիմա նորից ասա ազգանունդ:

Տիկնիկի նման գրկելով Վիլսոնին՝ Թոմը ներս տարավ նրան, նստեցրեց աթոռին ու հետ եկավ:

— Մեկնումեկդ նստե՛ք կողքին,— հրամայեց նա:

Մոտ կանգնածներից երկուսը նայեցին միմյանց ու դժկամությամբ ներս գնացին: Հետո դուռը փակեց նրանց վրա, իջավ միակ աստիճանով, աչքերը սեղանից հեռու պահած և մոտ գնալով՝ շնչաց՝ գնացինք:

Թումը իր հուժկու բազուկներով ճանապարհի հարթեց, և մենք գլխահակ ձեղքեցինք խոնված ամբոխը, անցանք պայուսակը ձեռքին շտապող բժշկի կողքով, որին կես ժամ առաջ անհույս կանչել էին:

Թումը դանդաղ քշեց մինչև ոլորապտույտը, հետո ավելացրեց արագությունը, և մեքենան ընթացավ մութ ճանապարհով: Քիչ անց լսեցի ցածր, խոպոտ հեկեկոց և տեսա Թումի այտերն ի վար հոսող արցունքները:

— Անիծյալ վախկոտ,— պոռթկաց նա,— նույնիսկ չի էլ կանգնել:

* * *

Բյուքենենների տունը երևաց սոսափող մութ ծառերի արանքից: Թումը կանգ առավ մուտքի առաջ և նայեց երրորդ հարկին, որտեղ բաղեղների միջից երկու պատուհան էր լուսավորված:

— Դեյզին տանն է,— ասաց: Մեքենայից դուրս գալիս նայեց ինձ ու թեթևակի կնճռոտվեց:

— Ես պետք է քեզ Վեսթ Էզգում իջեցրած լինեի, Նիք: Էլ այսօր անելիք չունենք:

Ինչ—որ փոփոխություն էր կատարվել նրա մեջ. նա խոսում էր լուրջ, վճռական: Երբ անցնում էինք լուսնի լույսով ողողված արահետով, նա աշխույժ կարգադրություններ արեց:

— Ես հիմա կգանգամ ու տաքսի կպատվիրեմ, որ քեզ տուն տանի, մինչ այդ Ջորդանի հետ գնացնք խոհանոց, և թո՛ղ ձեզ ուտելու բան տան, եթե, իհարկե, քաղցած եք:— Նա բացեց դուռը:— Մտի՛ր:

— Չէ՛, շնորհակալություն: Խնդրում եմ, զանգի՛ր, տաքսի գա: Ես դրսում կսպասեմ:

Ջորդանը ձեռքը դրեց թևիս:

— Ներս չն՞ս գա, Նիք:

— Ո՛չ, չեմ ուզում:

Ես վատ էի զգում և ուզում էի մենակ մնալ: Բայց Ջորդանը չէր շտապում գնալ:

— Դեռ ինն անց կես է, — ասաց նա:

Անիծված լինեմ, եթե գնամ, հերիք է, կշտացա նրանցից: Հանկարծ զգացի, որ դա Ջորդանին էլ է վերաբերում: Նա երևի ինչ-որ բան հասկացել էր իմ դեմքի արտահայտությունից, որովհետև կտրուկ շրջվեց, արագ բարձրացավ աստիճաններով և մտավ ներս: Ես, գլուխս ձեռքերիս մեջ առած, նստեցի մի քանի րոպե. շուտով լսեցի, թե ինչպես նախաարահում սպասավորը հեռախոսով տաքսի պատվիրեց: Ապա հեռացա տնից՝ մտադրվելով սպասել դարպասի մոտ:

Քսան քայլ էլ չէի արել, երբ ինձ ձայն տվին, և Գեթսեմին, թփերի արանքից դուրս գալով, կանգնեց ծառուղու վրա: Ես պետք է որ շատ վատ զգացած լինեի մինչ այդ, որովհետև միակ բանը, որի մասին կարողացա մտածել այդ պահին, նրա վարդագույն շորերի փայլն էր լուսնի լույսի տակ:

— Ի՞նչ ես անում այստեղ, — հարցրի:

— Ոչինչ, կանգնած եմ, բարեկամ:

Ինձ թվաց, որ դա արգահատելի զբաղմունք էր: Ես նույնիսկ պատրաստ էի ենթադրելու, որ քիչ անց կկողոպտեր տունը: Չէի էլ զարմանա, եթե մութ թփերի հետևից հայտնվեին «Վուֆշայմի մարդկանց» զազրելի դեմքերը:

— Դուք ճանապարհին որևէ բան տեսա՞ք, — քիչ անց հարցրեց Գեթսեմին:

— Այո՛:

Նա հապաղեց:

— Կինը մեռա՞մ:

— Այո՛:

— Այդպես էլ գիտեի: Ես ասացի Դեյզլին, որ մեռած կլինի: Նման դեպքերում ավելի լավ է ձիշտն ասել: Նա մի կերպ կհաղթահարի այդ ցնցումը:

Նա այնպես էր խոսում, կարծես միակ կարևոր բանը Դեյզլին էր:

— Ես Վեսթ Էզզ գնացի այլ ճանապարհով,— շարունակեց,— և մեքենան թողեցի ավտոտնակումս: Երևի տեսնող չեղավ, բայց, իհարկե, համոզված չեմ:

Նա ինձ այն աստիճան տհաճ էր, որ հարկ չհամարեցի ասելու, թե սխալվում էր:

— Ո՞վ էր այդ կինը,— հարցրեց:

— Վիլսոն է ազգանունը: Ավտոտնակի տիրոջ կինն է: Սատանան տանի, ինչպե՞ս պատահեց:

— Հասկանո՞ւմ ես, ուզեցի թեքել... — նա կանգ առավ, և հանկարծ ես ամեն ինչ հասկացա:

— Դեյզին էր դեկին:

— Այո,— ուշացումով ասաց նա,— բայց, իհարկե, կասեմ, որ ես էի վարողը: Գիտե՞ս, երբ մենք դուրս եկանք Նյու Յորքից, Դեյզին շատ ջղային վիճակում էր, և նրան թվաց, որ վարելը կհանգստացնի իրեն, իսկ այդ կինը հանկարծ նետվեց մեզ վրա, երբ մենք անցնում էինք դիմացից եկող մեքենայի կողքով: Այդ ամենը կատարվեց մեկ րոպեում, բայց ինձ թվաց, որ նա ուզում էր խոսել մեզ հետ, կարծես մեզ ծանոթի տեղ դրեց: Տեսնելով կնոջը՝ Դեյզին սկզբում թեքեց մեքենան, իսկ դիմացից եկող մեքենան խանգարեց, ու նա հետ սովեց: Հենց որ ձեռքս դիպավ դեկին, ես ցնցում զգացի, հավանաբար տեղնուտեղը սպանվեց:

— Ջարդուխուրդ է եղել:

— Պետք չէ, բարեկամ:— Նա թարթեց աչքերը:— Ինչ որ է, Դեյզին սեղմվել էր դեկին: Ես խնդրեցի կանգնեցնել մեքենան, բայց նա ի վիճակի չէր, ես էլ սեղմեցի ձեռքի արգելակը, հետո Դեյզին ընկավ ծնկիս ու այդպես առաջ անցանք: Վաղն իրեն լավ կզգա,— շարունակեց Գեթսբին:— Ես կսպասեմ այստեղ, տեսնեմ՝ նա չի անհանգստացնում Դեյզիին ցերեկվա կատարվածի համար: Նա հիմա փակված է սենյակում, և եթե Թոմը որևէ բռնություն գործադրի, ինձ նշան կանի, լույսը կանջատի ու նորից կվառի:

— Նա ձեռք չի տա նրան,— ասացի:— Հիմա չի էլ մտածում Դեյզիի մասին:

— Ես նրան չեմ վստահում, բարեկամ:

— Ինչքան ես մնալու այստեղ:

— Ամբողջ գիշեր, եթե հարկ լինի: Մինչև բոլորը քնեն:

Մի նոր միտք ծագեց գլխումս: Ենթադրենք՝ Թոմը իմացավ, որ Դեյզին էր դեկին: Նա կմտածի, որ այստեղ ինչ-որ կապ կա, կարող է մտածել, Աստված գիտի, թե ինչ: Ես նայեցի տանը: Առաջին հարկի երկու թե երեք պատուհանն էր լուսավորված, իսկ վերևում Դեյզիի սենյակի վարդագույն ցուլքն էր:

— Սպասիր այստեղ,— ասացի:— Գնամ տեսնեմ՝ արդյոք ներսում իրարանցում չկա՞:

Ես հետ գնացի սիզամարգի եզրով, անաղմուկ անցա խճաքարերի վրայով և ոտքերիս ծայրերին բարձրացա աստիճաններով: Հյուրասենյակի պատուհանները բաց էին, սենյակը դատարկ էր: Անցնելով պատշգամբը, որտեղ հունիսյան մի երեկո ճաշել էինք երեք ամիս առաջ, հասա լուսավորված մի ուղղանկյան, որը հավանաբար մառանի պատուհանն էր: Վարագույրն իջեցված էր, բայց չէր հասնում մինչև ներքև:

Դեյզին ու Թոմը նստած էին դեմ դիմաց՝ խոհանոցի սեղանի մոտ՝ վրան տապակած սառը ձուտ և երկու շիշ գարեջուր: Թոմը ոգևորված ինչ-որ բան էր պատմում և խոսելիս ձեռքը դրեց Դեյզիի ձեռքին: Դեյզին նայում էր նրան ու գլխով հավանություն տալիս:

Նրանք երջանիկ չէին: Նրանցից ոչ մեկը չէր դիպել ո՛չ ձուտին, ո՛չ էլ գարեջրին, բայց և դժբախտ էլ չէին: Ողջ տեսարանից ընտանեկան մտերմություն էր բուրում, ասես դավադրություն էին պատրաստում:

Երբ հետ եկա, լսեցի մոտեցող տաքսիի ձայնը: Գեթսբին նույն տեղում էր:

— Ամեն ինչ կարգին է,— հարցրեց մտահոգ:

— Այո՛, ամեն ինչ,— ես անվճռական կանգ առա:—
Գնանք միասին, քեզ քնել է պետք:

Նա տարուբերեց գլուխը:

— Ես կսպասեմ այստեղ, մինչև Դեյզին քուն մտնի: Բա-
րի՛ գիշեր, բարեկան:

Նա ձեռքերը դրեց գրպանները և արագ շրջվեց, կարծես
իմ ներկայությունը խանգարում էր նրա հսկողության սրբու-
թյունը:

Եվ ես հեռացա՝ թողնելով նրան կանգնած լուսնի լույսի
տակ՝ հսկելու մի բան, որի կարիքը չկար:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

Ամբողջ գիշեր չկարողացա քնել: Մառախուղ էր: Սաունդ գետի վրա անդադար սուլում էր շչակը, իսկ ես տենդի մեջ շուռումուռ էի գալիս զազրելի իրականության ու ծանր, մղձավանջային երազների մեջ: Լուսադեմին լսեցի, թե ինչպես մի տաքսի մոտեցավ Գեթսեբիի տանը: Անմիջապես վեր թռա անկողնուց, սկսեցի հագնվել, զգացի, որ բան ունեմ նրան ասելու, ինչ-որ բան նախազգուշացնելու, որովհետև առավոտյան ուշ կլինեմ:

Պարտեզ մտնելով՝ նրա մուտքի դուռը բաց տեսա: Նախասրահում Գեթսեբին հենվել էր սեղանին՝ անքնությունից թե վիատությունից կույ եկած:

— Ոչ մի բան էլ չեղավ,— անկենդան ձայնով ասաց նա:— Ես սպասեցի մոտավորապես մինչև ժամը չորսը, հետո նա մոտեցավ պատուհանին, կանգնեց մի րոպե ու հանզգրեց լույսը:

Նրա տունը երբեք այդքան հսկայական չէր թվացել ինձ, ինչպես այդ գիշեր, երբ մենք չափչփում էինք ընդարձակ սենյակներով՝ սիգարետ փնտրելու հույսով: Մի կողմ հրելով վրան հիշեցնող վարագույրները՝ մենք շոշափում էինք երկարուձիգ մութ պատերը՝ լույսի անջատիչները գտնելու: Այդ ընթացքում ես ընկա ուրվական հիշեցնող դաշնամուրի վրա, որի ստեղծներից պոռթկացին բազմաթիվ հնչյուններ: Ամենուր անբացատրելի քանակության փոշի էր, սենյակներից բորբոսի հոտ էր գալիս, ասես օրեր շարունակ չէին օդափոխել: Վերջապես ինչ-որ սեղանի վրա ծխախոտատուփ նշմարեցի՝ մեջը երկու հին, չոր գլանակ: Լայն բացելով հյուրա-

սենյակի մինչև գետին հասնող պատուհանները՝ մենք նստեցինք դրսում և սկսեցինք ծխել՝ նայելով մթությանը:

— Դու պետք է հեռանաս այստեղից,— ասացի:— Շատ հավանական է, որ հետևեն մեքենադ:

— Հեռանամ, բարեկամ, հիմա:

— Գնա՛ մի շաքաթով Ատլանտիք Սիթի կամ Մոնրեալ:

Նա լսել անգամ չուզեց: Ինչպե՞ս կարող էր թողնել Դեյզլին՝ առանց իմանալու, թե ինչ էր նրա մտադրությունը: Նա դեռ կառչած էր վերջին տարտամ հույսից, որը ես չէի կարող ի դերև հանել:

Հենց այդ գիշեր նա ինձ պատմեց Դան Քոդլիի հետ անցկացրած իր երիտասարդ տարիների պատմությունը, պատմեց, որովհետև «Ջեյ Գեթսբին» ապակու նման փշրվել էր՝ դեմ առնելով Թոմի դաժան չարախնդությանը, և իր երկարամյա գաղտնի հեքիաթ-ներկայացումը ավարտվել էր: Ինձ թվում էր՝ նա այժմ առանց բացառության ամեն ինչ կխոստովաներ, միայն թե խոսեր Դեյզլի մասին:

Դեյզլին առաջին աղջիկն էր «վերնախավից», որին հանդիպել էր: Ջանազան իրավիճակներում նա խոսել էր բարձր դիրքի մարդկանց հետ, բայց միշտ էլ արանքում ասես անտեսանելի փշալար էր եղել: Առաջին հայացքից Դեյզլին նրան անսահման ցանկալի էր թվացել: Նա գնում էր նրանց տուն սկզբից Թեյլոր ճամբարի սպաների հետ, իսկ հետո՝ մենակ: Նա հիացած էր, երբեք այդպիսի գեղեցիկ տան մեջ չէր եղել: Բայց ամենազարմանալին, ամենաանսպասելին այն էր, որ Դեյզլին ապրում էր այնտեղ իմիջիայլոց, ինչպես Գեթսբին ճամբարի վրանում: Այդ տանը բացահայտվելու պատրաստ գաղտնիքներ էին թաքնված, ակամա մտածում էիր վերնահարկի ննջարանների մասին, որոնք ավելի գայթակղիչ էին իրենց գեղեցկությամբ ու զովությամբ, քան իր իմացած այլ ննջարանները, մտածում էիր նրա միջանցքներում հորդացող անհոգ զվարճության և այստեղ կատարվող սիրավեպերի մասին, որոնք բորբոսնած չէին, ոչ էլ՝ նարդոսի չորացած

ծաղիկների բույրով հագեցած, այլ նոր էին՝ փթթուն և անբաժան այդ տարվա պսպղուն մեքենաներից ու պարահանդեսներից, որոնց ծաղիկները դեռ չէին թառամել: Նրան հուզում էր նաև այն հանգամանքը, որ իրենից առաջ շատ ու շատ տղամարդիկ արդեն սիրել էին Դեյզիին, դա բարձրացնում էր նրա գինը իր աչքում: Ամենուր նա զգում էր նրանց ներկայությունը, օղը զրնգում էր դեռևս չմեռած զգացմունքների արձագանքներից:

Բայց Գեթսբին գիտեր, որ բախտի բերմամբ էր ընկել այդ տունը: Ինչքան էլ փառահեղ ապագա սպասելիս լիներ Ջեյ Գեթսբիին, ներկայումս նա առանց անցյալի աղքատ երիտասարդ էր, և ցանկացած պահի նրա զինվորական համազգեստը, որը անտեսանելի թիկնոցի դեր էր կատարում, կարող էր սահել ուսերից: Այդ պատճառով էլ ջանում էր ժամանակ չկորցնել: Վերցնում էր այն ամենը, ինչ հնարավոր էր՝ գաղտնաբար, անխղճորեն, այդպես էլ հոկտեմբերյան մի խաղաղ գիշեր նա տիրացավ Դեյզիին՝ իմանալով, որ իրավունք չունեի անգամ մատով դիպչելու նրան:

Նա կարող էր արհամարհել իրեն, որովհետև Դեյզիին գերել էր խաբեությամբ: Ես չեմ ուզում ասել, որ բարբաջանքներ էր գործի դրել իր երևակայած միլիոնների մասին խոսելիս, բայց գիտակցաբար ներշնչել էր Դեյզիին ապահովության գաղափար, հավատացրել, որ ինքը միևնույն խավին է պատկանում և միանգամայն ի վիճակի է հոգ տանելու նրան: Իրականում նա չունեի այդպիսի միջոցներ, չունեի թիկունքին կանգնած անվանի ընտանիք, և ցանկացած պահի անդեմ կառավարության քմահաճույքը կարող էր նրան շարտել աշխարհի մյուս ծայրը:

Սակայն Գեթսբին չարհամարհեց իր անձը, և ամեն ինչ ստացվեց հակառակ իր սպասածի: Հավանաբար մտադրվել էր վերցնել այն, ինչ կարող էր, ու հեռանալ, բայց պարզվեց, որ իրեն դատապարտել էր ծառայելու սրբությամբ: Նա գիտեր, որ Դեյզին սովորական աղջիկ չէր, բայց չէր

պատկերացնում, թե ամեն ինչ որքան դժվար կարող էր լինել վերնախսավի աղջկա հետ: Եվ Դեյզին մշուշվեց-անհետացավ իր հարուստ տան, իր հարուստ բովանդակալից կյանքի մեջ՝ չթողնելով Գեթսեփին ոչինչ՝ բացի այն զգացումից, որ ինքն այժմ ամուսնացած է հետը:

Երբ երկու օր անց նրանք կրկին հանդիպեցին, Գեթսեփի շունչը կտրվեց և ոչ թե Դեյզիինը: Գեթսեփին իրեն լքված զգաց և ոչ թե Դեյզին: Աղջկա պատշգամբը ողողված էր անգին աստղալույսի շքեղությամբ. բազմոցի մետաղյա ցանցը հուզիչ ճոճռաց, երբ Դեյզին շրջվեց դեպի նա, և Գեթսեփին համբուրեց նրա զվարճալի սիրունիկ բերանը: Դեյզիի ձայնը մրսածությունից խոպոտել էր ու դարձել ավելի գերող: Գեթսեփին մտքի շշմեցուցիչ պայծառությամբ հասու էր դառնում հարստության և դրա հսկողության տակ ապրող երիտասարդության գաղտնիքին՝ ըմբռնելով աղջկա բազմաթիվ զգեստների թարմությունը, որոնց տակ Դեյզին պսպղում էր արծաթի նման՝ բարեկեցիկ ու հպարտ, աղքատների քայքայիչ հոգսերից հեռու:

* * *

— Չես կարող պատկերացնել, թե որքան զարմացա, երբ հասկացա, որ սիրում եմ նրան, բարեկամ: Ես նույնիսկ սկզբում կարծում էի, որ կլքի ինձ, բայց չլքեց, որովհետև սիրահարված էր ինձ: Նրան թվում էր, թե ես շատ բան գիտեմ, քանի որ իմ իմացածը նա չգիտեր... Եվ այնպես պատահեց, որ ես շեղվեցի իմ փառասիրությունից, և իմ սերը գնալով ավելի ու ավելի էր խորանում: Բայց հոգ չէր: Ի՞նչ օգուտ մեծ գործեր կատարելուց, եթե կարող էի ինձ ավելի լավ զգալ՝ նրան պատմելով իմ մտադրությունների մասին:

Եվրոպա մեկնելուց առաջ՝ վերջին երեկոն, նրանք անցկացրին լուռ, ժամերով նստեցին գրկված: Աշնանային ցուրտ օր էր, սենյակում կրակ էր վառվում, աղջկա այտերը շիկնել էին: Մերթնդներթ Դեյզին շարժվում էր, այնժամ Գեթսեփին

քին թեթևակի փոխում էր դիրքը, մի անգամ նույնիսկ համբուրեց նրա թուխ, փայլուն մազերը: Մթնշաղի հետ մեկտեղ նրանք դարձան հուշիկ, որպեսզի ավելի լավ հիշեին այդ երեկոն իրենց երկար բաժանման ընթացքում, որ հաջորդօրն էր բերելու իր հետ: Իրենց սիրո ամսում նրանք երբեք ավելի մոտ չէին եղել, ոչ էլ ավելի խոր հաղորդակցվել միմյանց հետ, քան այն ժամանակ, երբ Դեյզին շրթունքները լուռ հպեց նրա համազգեստի ուսին, կամ էլ երբ ինքը մեղմորեն շոշափեց Դեյզիի մատների ծայրերը, ասես նա քնած լիներ:

* * *

Նա լավ առաջ գնաց զինվորական ծառայության մեջ: Նախքան ճակատ մեկնելը նրան կապիտանի կոչում տվին, իսկ Արզոնի մարտերից հետո դարձավ մայոր ու գնդացրային դիվիզիայի հրամանատար: Ջինադադարից հետո մոլեգնորեն ուզում էր տուն գնալ, բայց փոխարենը ինչ-որ բարդության կամ թյուրիմացության հետևանքով Օքսֆորդ ընկավ: Նրա հոգին խռովյալ էր: Դեյզիի նամակներում անհամբերություն ու թախիծ էր զգացվում: Չէր հասկանում, թե ինչու էր Գեթսքին հապաղում: Արտաքին աշխարհը ճնշում էր Դեյզիին, ու նա ցանկանում էր տեսնել Գեթսքիին, զգալ իր կողքին նրա ներկայությունը և համոզվել, որ ինքը ճիշտ է վարվում:

Դեյզին երիտասարդ էր, և նրա արհեստական աշխարհում բուրում էին խոլորձները, իշխում էր հաճելի, անվնաս ցուցամոլությունը, և նվազախմբերը տարածում էին տվյալ տարվա երաժշտությունը, որն իր հնչյուններում ամփոփում էր կյանքի տխրությունն ու գայթակղությունը: Ամբողջ գիշեր սաքսոֆոնը ողբում էր «Բիլ Սթրիթ Բլուզի» հուսահատ մեղեդին, որի տակ հարյուրավոր ոսկեգույն և արծաթագույն մաշիկներ պսպղուն փոշի էին բարձրացնում հատակի վրա: Թեյըմպումի հանդարտ ժամերին միշտ էլ գտնվում էին սե-

նյակներ, որոնք անդադրում ցնցվում էին այդ քաղցր, անզոր տենդից, իսկ այսուայսուր փայլատակում էին թարմ դեմքեր՝ տխուր եղջերափողերից հատակին թափվող վարդի թերթերի նման:

Սեզոնի բացման հետ Դեյզին վերստին աշխուժացավ այս մթնշաղային տիեզերքում: Նա նորից սկսեց տասնյակ ժամադրություններ նշանակել տասնյակ մարդկանց հետ և քուն մտնել արշալույսին՝ գիշերային զգեստն ու զարդարանքները մեռնող խոլորձների հետ միասին հատակին զգած: Եվ շարունակ մի ներքին ձայն վճիռ էր պահանջում: Նա ուզում էր դասավորել իր կյանքը անհապաղ, անմիջապես, և վճիռը կայացնելու համար սիրո, դրամի և անառարկելի գործնականության ուժ էր պետք, որը ինչ-որ տեղ՝ մոտերքում էր:

Այդ ուժը հայտնվեց զարնան կեսերին, երբ Լուիսվիլ եկավ Թոմ Բյուքենենը: Նրա արտաքինը ազդեցիկ էր, ոչ պակաս ազդեցիկ էր նաև նրա դիրքը, և Դեյզին իրեն շոյված էր զգում: Անկասկած, որոշակի պայքար տեղի ունեցավ, որին հաջորդեց որոշակի սփոփանք: Գեթսբին նամակը ստացավ դեռևս Օքսֆորդում:

* * *

Արդեն լուսաբաց էր Լոնգ Այլընդում: Մենք գնացինք ներքևի հարկը, անցանք սենյակից սենյակ՝ բանալով պատուհանները ոսկեգույնին խփող աղոտ լույսին ընդառաջ: Ցողոտ գետնին ընկած էր ծառի ստվերը, ցնորական թռչուններ էին երգում կապույտ սաղարթի մեջ: Օդի քնքուշ, հաճելի շարժումը, որն ամենևին էլ քամի չէր, խոստանում էր հաճելի, գով օր:

— Դեյզին նրան երբեք չի սիրել, — Գեթսբին շրջվեց նոր բացված պատուհանից ու մարտական տեսքով նայեց ինձ: — Մի՛ մոռացիր, բարեկամ, որ երեկ Դեյզին շատ էր հուզված: Թոմը վախեցրեց նրան, այնպես ներկայացրեց ինձ, կարծես

ես մանր խաբերա լինեմ: Արդյունքը եղավ այն, որ Դեյզին չի-
մացավ ասելիքը:

Գեթսբին մռայլ նստեց:

— Գուցե Դեյզին ինչ—որ ժամանակ սիրել է նրան,
սկզբում, երբ նոր էին ամուսնացել, բայց նույնիսկ այդ ժամա-
նակ ինձ ավելի էր սիրում:

Ապա մի անսովոր միտք հայտնեց.

— Ամեն դեպքում դա նրա գործն էր:

Ինչ կարելի էր եզրակացնել այստեղից. գուցե լոկ ա՛յն,
որ իրենց հարաբերությունների մեջ նա միայն անհատակ
խորություն էր տեսնում:

Գեթսբին վերադարձավ Ֆրանսիայից, երբ Թոմն ու Դեյ-
զին դեռևս չէին ավարտել իրենց հարսանեկան ճամփորդու-
թյունը, և բանակի վերջին աշխատավարձը ծախսեց դեպի
Լուիսվիլ կատարած ցավալի, բայց և ցանկալի ուղևորության
վրա: Նա մեկ շաբաթ մնաց այնտեղ, թափառեց այն փողոց-
ներում, որտեղ նոյեմբերյան երեկոներին հնչել էր իրենց
քայլերի համատեղ կտկտոցը, կրկին այցելեց քաղաքից
դուրս եղած այն վայրերը, ուր գնացել էին Դեյզիի ձերմակ
մեքենայով: Ինչպես Դեյզիի տունը նրա համար մշտապես
ավելի խորհրդավոր ու հրապուրիչ էր եղել, քան մյուս տները,
այնպես էլ այդ քաղաքն ինքնին, նույնիսկ առանց Դեյզիի,
լի էր թախծոտ գեղեցկությամբ:

Նա մեկնեց այն զգացումով, ասես Դեյզին մնացել էր
Լուիսվիլում, ու եթե ավելի շատ փնտրեր, գուցե գտներ նրան:
Վերջին փողերով ցերեկային գնացքի տոմս գնեց: Միջանց-
քում՝ ծալովի աթոռին նստած, տեսավ սահող—անցնող շենքե-
րը: Ապա բացվեցին գարնանային դաշտերը, և մի պահ գնաց-
քի կողքով ընթացավ մի դեղին տրամվայ՝ լեցուն մարդկան-
ցով, որոնց գուցե մի ժամանակ պատահաբար բախտ էր վի-
ճակվել տեսնելու Դեյզիի դեմքի հրաշափայլ գունատությունը:

Ճանապարհը թեքվեց, գնացքն այժմ հեռանում էր
արևից, որը մայր մտնելիս, ասես որպես օրհնանք, տարած-

վում էր անհետացող քաղաքի վրա, որի օդը շնչել էր Դեյզին: Հուսահատ նա ձեռքը դուրս հանեց պատուհանից, կարծես ուզում էր ձանկել մի բուռ օդ, տանել իր հետ մի պատառիկ այն վայրից, որ Դեյզիի շնորհիվ դարձել էր պաշտելի: Սակայն շատ շուտով գնացքի արագությունից նրա աչքերի առաջ ամեն ինչ շաղվեց, և հասկացավ, որ առհավետ կորցրեց իր կյանքի գեղեցկագույն և լավագույն կտորը:

* * *

Ժամը ինն էր, երբ մենք ավարտեցինք նախաճաշը և դուրս եկանք պատշգամբ: Եղանակը կտրուկ փոխվել էր գիշերվա ընթացքում, օդում զգացվում էր աշնան շունչը: Պարտիզպանը՝ Գեթսբիի նախկին ծառաներից վերջինը, մոտեցավ աստիճաններին:

— Ես այսօր ուզում եմ դատարկել ավազանը, պարոն Գեթսբի: Շուտով կսկսվի տերևաթափը, հետո դժվար կլինի մաքրել խողովակները:

— Չէ, այսօր պետք չէ,— հակառակեց Գեթսբին, ապա արդարանալով դարձավ ինձ:— Գիտե՞ս, բարեկամ, ամբողջ ամառ մի անգամ չեմ մտել ջուրը:

Ես նայեցի ժամացույցին ու ոտքի ելա:

— Գնացքս շարժվում է տասներկու րոպեից:

Ես չէի ուզում գնալ աշխատանքի, չէի կարող աշխատել, ավելին՝ չէի ուզում մենակ թողնել Գեթսբիին: Ես բաց թողեցի այդ գնացքը, մյուսն էլ, վերջապես ստիպեցի ինձ վեր կենալ:

— Կզանգեմ,— վերջում ասացի:

— Զանգիր, բարեկամ:

— Կեսօրին կզանգեմ:

Մենք դանդաղ իջանք աստիճաններով:

— Երևի Դեյզին էլ կզանգի:— Նա սպասումի մեջ նայեց ինձ՝ հուսալով, որ կհաստատեմ ասածը:

— Երևի:

— Դե՛, ցտեսություն:

Մենք ձեռք սեղմեցինք. ես հեռացա: Դալար ցանկապատին չհասած՝ ինչ-որ բան հիշելով շրջվեցի:

— Նրանք բոլորը ոչնչություն են,— գոռացի պարտեզով մեկ:— Դու ինքդ մենակ արժես այդ անիծյալ խումբը՝ միասին վերցրած:

Հետագայում ուրախ էի այդ խոսքերիս համար: Դա միակ գովեստն էր, որ նա երբևէ լսել էր ինձնից, որովհետև սկզբից մինչև վերջ չէի արդարացրել նրան: Նա քաղաքավարի գլուխ տվեց, ապա դեմքը պայծառացավ, և լայն ժպտաց՝ ասես հասկանալով, թե վաղուց մոլեգնորեն համագործակցելով՝ գիտակցել էինք այդ փաստը: Նրա վարդագույն կոստյումը՝ այդ հիմարավուն կտորը, պարզ գծագրվում էր ձերմակ աստիճանների վրա, և ես հիշեցի այն երեկոն, երբ երեք ամիս առաջ առաջին անգամ այցելեցի այդ տոհմական տունը: Պարտեզում ու ծառուղիներում վխտում էին այն մարդկանց դեմքերը, որոնք նրան էին վերագրում այս կամ այն արատը, և նա, թաքցնելով իր անարատ երազը, հարթակին կանգնած, ցտեսություն էր ասում նրանց:

Ես շնորհակալություն հայտնեցի նրան հյուրընկալության համար: Մենք բոլորս միշտ շնորհակալություն էինք հայտնում նրան այդ բանի համար՝ ես և այլևայլ մարդիկ:

— Ցտեսություն, Գեթսբի՛,— գոռացի:— Նախաձաշը հիանալի էր:

* * *

Գրասենյակ հասնելով՝ որոշ ժամանակ զբաղվեցի արժույթների օրվա գինը բաժնետոմսերի անվերջանալի ցուցակի մեջ անցկացնելով, բայց շուտով ննջեցի պտտվող աթոռին: Կեսօրին մոտ հեռախոսազանգը արթնացրեց ինձ, ես վեր թռա՝ քրտինքի մեջ կորած: Ջորդան Բեյքերն էր: Նա հաճախ էր ինձ զանգում այդ ժամին, որովհետև որոշակի տեղ

չունենք՝ մերթ լինում էր հյուրանոցներում, մերթ ակումբներում, մերթ զանազան տներում, և ես նրան չէի կարող գտնել: Սովորաբար նրա ձայնը հեռախոսափողի միջից թարմություն ու զովություն էր բերում, կարծես գրասենյակիս պատուհանից գուժի կանաչ հրապարակի ճիմահողն էր ներս լցվում, բայց այդ առավոտ այն հնչեց կոպիտ ու չոր:

— Ես Դեյզիի մոտ չեմ: Հիմա Համսթեդում եմ, ցերեկը կլինեմ Սաութհեմփթընում:

Հավանաբար պատշաճությունը պահանջում էր չմնալ Դեյզիի տանը, բայց դա ինձ բարկացրեց, իսկ նրա հաջորդ խոսքից ես սառա:

— Դու երեկ ինձ հետ լավ չվարվեցիր:

— Ինչ լավ վարվելու մասին է խոսքը:

Մի պահ լռություն, ապա.

— Բայց և այնպես, ուզում եմ քեզ տեսնել:

— Ես էլ եմ ուզում քեզ տեսնել:

— Գուցե չգնամ Սաութհեմփթըն ու գամ քաղաք:

— Ո՛չ, այսօր չէ:

— Ինչպես ուզում ես:

— Այսօր չեմ կարող: Զանազան գործեր...

Այսպես խոսեցինք մի քանի րոպե, հետո կտրուկ լռեցինք: Չեմ հիշում՝ մեզնից ով առաջինը կախեց լսափողը շրիկոցով, բայց հիշում եմ՝ այն ժամանակ դա ինձ նույնիսկ չանհանգստացրեց: Ես չէի կարող հանդիպել նրան այդ օրը ու քաղցր գրուցել թեյի ժամին, եթե անգամ իմանայի, որ այլևս չէի տեսնելու նրան:

Քիչ անց զանգեցի Գեթսբիին, բայց գիծը զբաղված էր: Փորձեցի չորս անգամ: Վերջապես կենտրոնից զայրացած հայտնեցին, որ պատվիրված է խոսակցություն Դեթրոյթի հետ: Հանելով չվացուցակս՝ մի փոքրիկ շրջանակ արեցի 3:50-ի գնացքի շուրջը: Ապա հենվեցի աթոռին՝ փորձելով կենտրոնանալ: Ուղիղ ժամը տասներկուսն էր:

Երբ առավոտյան գնացքով անցնում էի խարամի կույտերի կողքով, դիտավորյալ նստեցի դիմացի շարքում: Կարծում էի՝ դեռևս այնտեղ հավաքված կլինեիր հետաքրքրասեր ամբոխը, փոքրիկ տղաները փոշու մեջ արյան բծեր փնտրելիս կլինեին, և ինչ-որ շաղակրատ կրկին ու կրկին պատմելիս կլինեիր պատահածը, մինչև որ այն դառնար քիչ հավանական իր համար, ու այլևս չկարողանար կրկնել, և Միրթլ Վիլսոնի ողբերգությունը մոռացության մատնվեր: Այժմ ուզում եմ փոքր-ինչ հետ դառնալ ու պատմել, թե ինչ պատահեց ավտոտնակում նախորդ գիշերը՝ մեր մեկնելուց հետո:

Քրոջը՝ Քեթրինին, դժվարությամբ գտան: Երևի նա այդ գիշեր խախտել էր չխմելու օրենքը, որովհետև երբ նրան բերեցին, խմիչքից հիմարացել էր և ի վիճակի չէր հասկանալու, որ շտապօգնության մեքենան արդեն դիակը տարել էր Ֆլեշինգ: Հետո, երբ հասկացրին եղելությունը, նա անմիջապես ուշագնաց եղավ, ասես դա դժբախտ պատահարի ամենասուկալի մասը լիներ: Ինչ-որ մեկը բարությունից կամ հետաքրքրասիրությունից դրդված՝ նստեցրեց նրան իր մեքենան ու տարավ քրոջ մարմնի հետքերով:

Կեսգիշերն անց էր, բայց դեռևս ամբոխ էր հավաքված ավտոտնակի առաջ, մարդիկ գալիս-գնում էին, իսկ ներսում Ջորջ Վիլսոնը թախտի վրա նստած հետուառաջ էր ճռճվում: Միառժամանակ գրասենյակի դուռը բաց էր, և ով ավտոտնակ էր մտնում, անդիմադրելիորեն նայում էր ներս: Հետո ինչ-որ մեկն ասաց, որ անհարմար է և փակեց դուռը: Միքայելին ու մի քանի այլ մարդիկ նրա կողքին էին՝ սկզբում չորս կամ հինգ, հետո երկու կամ երեք հոգով: Ապա Միքայելիսը խնդրեց վերջին մնացողին տասնհինգ րոպե ևս սպասել, մինչև ինքը տուն կգնար սուրճ խմելու: Դրանից հետո նա մինչև լուսաբաց մենակ մնաց Վիլսոնի հետ:

Ժամը երեքի կողմերը Վիլսոնի անհասկանալի մոթմոթոնները որակական փոփոխություն կրեցին: Նա

հանդարտվեց ու սկսեց խոսել դեղին մեքենայի մասին: Հայտարարեց, որ ինքը կիմանա, թե ում է պատկանում այդ մեքենան: Հետո հանկարծ պատմեց, որ կինը երկու ամիս առաջ քաղաքից տուն էր եկել ուռած քթով, կապտուկները դեմքին:

Սակայն լսելով իր իսկ ձայնը՝ ցնցվեց, սկսեց լաց լինել ու տնքալ. «Ա՛խ, Աստված»: Միքայելիսը անհաջող փորձ արեց՝ ցրելու նրա մտքերը:

— Քանի՞ տարի է՝ ամուսնացած եք, Ջորջ: Դե լավ, հանգիստ նստիր մի րոպե ու պատասխանիր հարցիս: Ինչքան ժամանակ է՝ ամուսնացած եք:

— Տասներկու տարի:

— Երեխա չե՞ք ունեցել երբեք: Դե լավ, Ջորջ: Հանգիստ նստիր, քեզ բան եմ հարցնում: Երեխա ունեցել եք:

Աղոտ լույսի տակ սև, տհաճ բզեզներ էին միմյանց բախվում թռչելիս, երբեմն մեքենա էր սուրալով անցնում, և Միքայելիսը այդ ձայնը նմանեցնում էր այն մեքենայի ձայնին, որն անցել էր մի քանի ժամ առաջ: Նա ավտոտնակ մտնել չէր ուզում, որովհետև նստարանը, որի վրա քիչ առաջ դին էր դրված, արյան բծերով էր ծածկված, այդ պատճառով էլ անհանգիստ պտտվում էր գրասենյակում, որի ամեն մի առարկան անգիր գիտեր, և ժամանակ առ ժամանակ նստելով Վիլսոնի կողքին՝ փորձում էր հանգստացնել նրան:

— Ո՞ր եկեղեցին ես գնում, Ջորջ: Երևի վաղուց չես եղել այնտեղ: Ուզո՞ւմ ես՝ զանգեմ քահանա կանչեմ, գա հետդ զրուցի, լսո՞ւմ ես:

— Ոչ մի եկեղեցի չեմ գնում:

— Առանց եկեղեցու հնարավոր չէ, Ջորջ, թեկուզև այս դեպքում: Երևի մի ժամանակ գնացել ես: Եկեղեցում չե՞ս ամուսնացել:

— Դա շատ վաղուց էր:

Պատասխանելու ձիգից խախտվեց ճոճվելու ռիթմը: Մի պահ Վիլսոնը լռեց: Ապա նրա մարած աչքերը ընդունեցին նախկին՝ կիսով չափ հասկացող, կիսով չափ վարանած հայացքը:

— Բայց արա էն դարակը,— նա մատնացույց արեց սեղանը:

— Ո՞ր դարակը:

— Ա՛յ եղ մեկը:

Միքայելիսը բացեց առաջին իսկ մոտիկ դարակը: Այնտեղ ոչինչ չկար՝ բացի կաշվե ու արծաթե թելերից հյուսված փոքրիկ թանկարժեք վզափոկից:

— Սա՛,— հարցրեց՝ դարակից հանելով:

Վիլսոնը աչքերը չոեց ու գլխով արեց:

— Երեկ եմ գտել: Փորձեց բացատրություն տալ, բայց ես ինչ—որ բան գլխի ընկա:

— Ուզում ես ասել՝ կի՞նդ է առել:

— Թղթի մեջ փաթաթված դրված էր սեղանին:

Միքայելիսը տարօրինակ ոչինչ չտեսավ և տասնյակ պատճառաբանություններ բերեց, թե ինչու էր կնոջը պետք եկել վզափոկը: Հավանաբար Վիլսոնը նման բացատրություններ արդեն լսել էր Միրթից, որովհետև կրկին սկսեց տնքալ՝ «Ա՛խ, Աստված իմ», և Միքայելիսի մխիթարական խոսքերը կախվեցին օդում:

— Նա է սպանել նրան,— Վիլսոնի բերանը հանկարծ բացվեց, ու ծնոտը կախ ընկավ:

— Ո՞վ:

— Ես կգտնեմ, թե ով:

— Դու հիվանդ ես, Ջորջ: Ուղեղդ պղտորվել է, և ասածդ չես հասկանում: Ավելի լավ է՝ փորձես հանգիստ նստել: Շուտով լույսը կբացվի:

— Նա սպանեց նրան:

— Դա դժբախտ պատահար էր, Ջորջ:

Վիլսոնը օրորեց գլուխը, աչքերը նեղացան, բերանը թեթևակի լայնացավ՝ հաստատական բացականչության պատրաստ:

— Ես գիտեմ,— վճռական ասաց նա:— Ես հասարակ մարդ եմ և ոչ մեկին վատություն չեմ ցանկանում, բայց երբ

մի բան գիտեմ, ուրեմն գիտեմ: Դա մեքենայում նստած մարդն էր: Միրթըր դուրս վազեց հետը խոսելու, բայց նա չկանգնեց:

Միքայելիսը նույնպես տեսել էր այդ, բայց մտքովն անգամ չէր անցել դրան հատուկ իմաստ տալ: Նա համոզված էր, որ տիկին Վիլսոնը ավելի շուտ փախչում էր ամուսնուց, քան փորձում կանգնեցնել ինչ—որ մեքենա:

— Ինչպե՞ս կարող էր նման բան անել:

— Դու նրան չես ճանաչում,— ասաց Վիլսոնը. կարծես նա պատասխանելիս լիներ հարցին:— Անախ:

Եվ նորից սկսեց ճոճվել, իսկ Միքայելիսը կանգնած՝ ձեռքում տրորում էր վզափոկը:

— Գուցե որևէ ընկեր ունես, Ջորջ, ասա՛, զանգեմ՝ գա:

Անհուսալի բան էր: Միքայելիսը հաստատ համոզված էր, որ Վիլսոնը ընկեր չուներ: Նա չէր հերիքում անգամ իր կնոջը: Քիչ անց պատուհանից դուրս նշմարեց կապտին սովող երկինքը: Ժամը հինգին արդեն լույս էր, և հնարավոր եղավ անջատել էլեկտրական լամպը:

Վիլսոնի ապակյա աչքերը ուղղվեցին խարամի կույտերի կողմը, որոնցից ծխացող գորշ ամպերի քուլաները, երևակայական ձևեր ընդունելով, այս ու այն կողմ էին քշվում վաղորդյան մեղմիկ քամուց:

— Ես խոսեցի հետը,— երկար լռությունից հետո մոթմոթաց նա:— Ես ասացի նրան, որ կարող է ինձ խաբել, բայց Աստծուն՝ ոչ: Ես նրան մոտեցրի պատուհանին,— նա ճիգով ոտքի ելավ և կանգնեց պատուհանի առջև,— և ասացի. «Աստված գիտի, թե դու ինչ ես անում, քո բոլոր արարքները: Դու կարող ես ինձ խաբել, բայց Աստծուն՝ ոչ»:

Միքայելիսը ցնցվեց՝ տեսնելով, որ Վիլսոնը նայում էր բժիշկ Թ. Ջ. Էքքերգի անկենդան աչքերին, որոնք հայտնվել էին չբացող մթության միջից:

— Աստված տեսնում է ամեն ինչ,— կրկնեց Վիլսոնը:

— Դա ազդ է,— փորձեց բացատրել Միքայելիսը:

Ինչ-որ բան ստիպեց նրան հեռանալ պատուհանից: Իսկ Վիլսոնը, գլուխն օրորելով, դեռ երկար կանգնեց և, դեմքը ապակուն հպած, դիտում էր աղջամուղջը:

* * *

Ժամը վեցին Միքայելիսը հագիվ էր ոտքերի վրա մնում և ուրախացավ՝ լսելով մոտեցող մեքենայի ձայնը: Դա նախորդ գիշերվա մարդկանցից մեկն էր, որ խոստացել էր հետ գալ: Միքայելիսը երեք հոգու համար նախաձաշ պատրաստեց, որը նրանք կերան երկուսով: Վիլսոնն այժմ հանդարտվել էր, և Միքայելիսը տուն գնաց քնելու: Երբ չորս ժամ անց արթնացավ ու շտապեց ավտոտնակ, Վիլսոնը չքացել էր:

Հաջողվեց իմանալ նրա անցած ճանապարհը. նա ոտքով եկել էր Ռուզվելթ նավահանգիստ, հասել Գեդիի, գնել էր մի բաժակ սուրճ և սենդվիչ, որը չէր կերել: Ըստ երևույթին, շատ էր հոգնած, որովհետև դանդաղ էր քայլում և միայն կեսօրին մտավ Գեդիի: Այնպես որ դժվար չեղավ վերականգնել նրա երթուղին ժամանակի առումով. մի տեղ տղաները տեսել էին, թե ինչպես ճանապարհով անցնում էր մեկը, որը «կարծես գիժ լիներ», մեկ ուրիշ տեղ վարորդները նկատել էին տարօրինակ հայացքով մեքենաներին նայող մի մարդու: Հետո նրա հետքը կորչում էր երեք ժամով: Ոստիկանությունը հիմք էր ընդունում Միքայելիսին ասված խոսքերը, թե ինքը կգտնի մարդասպանին, և ենթադրում էր, որ Վիլսոնը դեղին մեքենա փնտրելու միտումով մտել էր մոտակայքի ավտոտնակները: Բայց, մյուս կողմից, ոչ մի ավտոտնակի տեր չէր տեսել նրան, գուցե շատ ավելի հեշտ ու ստույգ միջոց էր գտել իմանալու: Երկուսն անց կեսին նրան տեսել էին Վեսթ Էզգում, որտեղ հարցրել էր Գեթսբիի տան ճամփան: Հետևաբար մինչ այդ էր իմացել Գեթսբիի անունը:

Ժամը երկուսին Գեթսեմին հազավ լողազգեստը և պատվիրեց ծառային, որ եթե մեկն ու մեկը զանգահարի, ապա իրեն իմաց տան լողավազանում: Նա մտավ ավտոտնակ և վարորդի օգնությամբ փչեց ներքնակը, որից ամառվա ընթացքում օգտվել էին հյուրերը: Ապա խստիվ արգելեց մեքենան ավտոտնակից հանել, և սա տարօրինակ էր, որովհետև առջևի աջակողմյան թևը նորոգման կարիք էր զգում:

Ներքնակը ուսին գցած՝ Գեթսեմին շարժվեց դեպի լողավազան: Մի անգամ կանգ առավ ուղղելու. վարորդը հարցրեց, թե արդյոք օգնության կարիք չի զգում, բայց նա տարուբերեց գլուխը և քիչ անց անհետացավ դեղնող ծառերի հետևում:

Ոչ ոք չզանգահարեց, բայց ծառան, զոհելով իր ցերեկային քունը, սպասեց մինչև ժամը չորսը, չնայած այդ ժամին արդեն ոչ մեկին պետք չէր տեղյակ պահել զանգի մասին: Հավանաբար Գեթսեմին ինքն էլ չէր հավատում այդ զանգին, գուցե այլևս նշանակություն չէր տալիս դրան: Եթե այդպես էր, ուրեմն զգում էր, որ արդեն կորցրել էր իր հին, տաքուկ աշխարհը, շատ բարձր գին էր վճարել իր միակ երագին այդքան երկար հավատարիմ մնալու համար: Նա պետք է սարսափազդու սաղարթի միջով նայած լիներ անձանոթ երկնքին, պետք է որ սուկացած լիներ՝ հայտնաբերելով, թե ինչ անհեթեթ կառուցվածք ունի վարդը, և ինչպիսի ուժգնությամբ է ընկնում արևի լույսը իմիջիայլոց ստեղծված խոտի վրա: Դա նոր նյութական աշխարհ էր, բայց անիրական, որտեղ խղճուկ ուրվականները, օդի փոխարեն երագներ շնչելով, անիմաստ սկտում էին... նման խարամե երևակայական կերպարանքին, որ, դանդաղ սահելով, առաջանում էր անձև ծառերի արանքից:

Վարորդը՝ Վուլֆշայմի հովանավորյալներից մեկը, որ լսել էր կրակոցները, հետո ասաց, որ առանձնապես ուշադրություն չէր դարձրել դրանց: Ես կայարանից անմիջապես

գնացի Գեթսեմի մոտ, և իմ հապճեպ վազքը աստիճաններով տազնապի առաջին ազդանշանը եղավ: Բայց հաստատ համոզված եմ՝ նրանք արդեն գիտեին: Մենք չորսով՝ վարորդը, ծառան, պարտիզպանը և ես, անխոս նետվեցինք դեպի լողավազան:

Մակերևույթին թրթռացող ջրի թեթևակի, հազիվ նշմարելի հոսքը լցվում էր մի կողմից և անհետանում մյուսից: Մանր ալիքների վրա օրորվելով՝ անկանոն լող էր տալիս ներքնակն իր բռնով: Մակերեսը հազիվ ակոսող քամու թեթևակի հոսանքը բավական էր՝ շեղելու այդ պատահական բռնը իր պատահական երթից: Երբեմն տերևների մի կույտ կարկինի նման դանդաղ պտտում էր ներքնակը՝ ալ կարմիր շրջան գծելով ջրի մեջ:

Երբ Գեթսեմիին տուն էինք տանում, պարտիզպանը նկատեց Վիլսոնի մարմինը խոտերի մեջ մի կողմ ընկած, և ողբերգությունը ավարտուն դարձավ:

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

Այժմ՝ երկու տարի անց, ես այդ օրվա շարունակությունը, գիշերը և հետևյալ օրը հիշում եմ որպես Գեթսեբիի առանձնատնից ներս ու դուրս անող ոստիկանների, լուսանկարիչների ու թղթակիցների անդուլ շրջապատույտ: Գլխավոր դարպասի երկայնքով պարան ձգեցին, և մի ոստիկան կանգնեց՝ հետ պահելու հետաքրքրասեր ամբոխին, բայց տղաները շուտով հայտնաբերեցին, որ իմ բակի միջով կարելի էր մտնել Գեթսեբիի պարտեզը, և ամբողջ ժամանակ լողավազանի կողքին հավաքված էին բերանբաց տղաներ: Ինչ-որ ինքնավատահ մեկը, հավանաբար խուզարկու, այդ օրը կռանալով Վիլսոնի մարմնի վրա, արտասանեց «խելագար» բառը, և նրա հեղինակավոր ձայնը հիմք դարձավ առավոտյան լրագրերի հաղորդագրությունների համար:

Այդ հաղորդագրությունները մղձավանջային էին՝ զավեշտական մանրամասներ պարունակող, ճոռոմ, հեռու իրականությունից: Երբ Միքայելիսը հարցաքննության ժամանակ պատմեց Վիլսոնի՝ կնոջ նկատմամբ ունեցած կասկածների մասին, ես մտածեցի, որ այժմ ողջ պատմությունը անպարկեշտ զրպարտության բնույթ կստանա, բայց Քեթրինը, որը կարող էր մի քանի խոսք ասել, լռեց: Նա ապշեցուցիչ կամքի ուժ ցուցաբերեց, վճռական աչքերով նայեց քննիչին իր պոկոտած հոնքերի տակից և երդվեց, որ քույրը երբեք չի ձանաչել Գեթսեբիին, միշտ լավ հարաբերությունների մեջ է եղել ամուսնու հետ, և ընդհանրապես երբևէ ոչ մի զանցանք չի գործել: Նա նույնիսկ ինքն իրեն համոզեց և, թաշկինակը բերանին սեղմած, լաց եղավ, ասես կասկածի նշույլն անգամ վիրավորական լիներ իր համար: Այսպիսով՝ Վիլսոնը հոչակ-

վեց «վշտից խախտված մարդ», որպեսզի հնարավորինս պարզեցվեր գործը: Եվ այստեղ վերջակետ դրվեց:

Սակայն այդ ամենը ինձ համար հեռավոր էր ու ոչ էական: Պարզվեց, որ Գեթսեմին ինձնից բացի ոչ մի մտերիմ չուներ: Այն պահից, երբ զանգահարեցի Վեսթ Էզզ՝ հաղորդելու դժբախտ լուրը, յուրաքանչյուր ենթադրության և յուրաքանչյուր գործնական հարցի համար ինձ էին դիմում: Սկզբում ապշած ու շփոթված էի: Բայց վերջում, երբ ժամանակն անցնում էր, և նա պառկած էր անշարժ, անկյանք և անխոս, մեջս պատասխանատվության զգացում արթնացավ, որովհետև միայն նա էի հետաքրքրվում նրանով, ուզում եմ ասել՝ միայն նա էի ցուցաբերում այն խոր, անձնական հետաքրքրությունը, որի իրավունքը բոլորս ունենք մեր կյանքի վերջում:

Գեթսեմին գտնելուց կես ժամ անց բնագոյաբար զանգեցի Դեյզիին, զանգեցի առանց տատանվելու: Բայց պարզվեց, որ նա ու Թոմը մեկնել էին վաղ առավոտյան՝ իրենց հետ ճամպրուկներ վերցնելով:

— Հասցե չե՞ն թողել:

— Ո՛չ:

— Չե՞ն ասել՝ երբ կգան:

— Ո՛չ:

— Իսկ գիտե՞ք, թե որտեղ են: Ինչպե՞ս գտնել նրանց:

— Չգիտեմ: Չեմ կարող ասել:

Ես ուզում էի Գեթսեմի համար գտնել որևէ մեկին: Ուզում էի մտնել սենյակ, որտեղ նա պառկած էր, և հանգստացնել նրան. «Ես կգտնեմ որևէ մեկին քեզ համար, Գեթսեմի: Մի՛ անհանգստանա: Հավատա՛ ինձ, ես քեզ համար մեկնումեկին կձարեմ»:

Մեյեր Վուֆշայմի անունը չկար հեռախոսագրքի մեջ: Ծառան ինձ տվեց նրա Բրոդվեյի գրասենյակի հասցեն, և ես զանգեցի տեղեկատու, բայց երբ իմացա համարը, արդեն հինգն անց էր, և ոչ ոք չպատասխանեց:

— Նորից զանգահարեք:

- Երեք անգամ փորձեցի:
- Շատ կարևոր գործ է:
- Ցավում եմ, բայց այնտեղ ոչ ոք չկա:

Ես վերադարձա հյուրասենյակ և մի ակնթարթ բոլոր պաշտոնական անձանց պատահական այցելուների տեղ դրեցի: Բայց երբ նրանք քաշում էին սավանը, նայում Գեթսեբիի անշարժ աչքերին, ուղեղումս շարունակվում էր նրա բողբոջը:

— Լսիր, բարեկամ, դու պետք է մարդ գտնես ինձ համար: Պետք է ջանք չխնայես: Ես այս բոլորին մենակ դիմանալ չեմ կարող:

Ինչ-որ մեկը սկսեց հարցեր տալ ինձ, բայց ես իսկույն խույս տվի, գնացի վերևի հարկը, և սկսեցի շտապ աչքի անցկացնել նրա սեղանի չկողպած դարակները. նա ինձ երբեք որոշակի չէր ասել, որ ծնողները մեռած էին: Ոչ մի տեղ ոչինչ չգտա, միայն պատից նայում էր Դան Քոդլի լուսանկարը՝ որպես հիշատակ անցած-գնացած փոթորիկների:

Առավոտյան ծառայի հետ ուղարկեցի Վուլֆշայմին ուղղված նամակ, որտեղ հարցուփորձ էի անում Գեթսեբիի մասին և պարտադրում գալ հաջորդ գնացքով: Գրելիս այդ վերջինն ինձ ավելորդ թվաց: Համոզված էի, որ նա կգար թերթերը կարդալուց հետո, ձիշտ այնպես, ինչպես համոզված էի, որ Դեյզին հեռագիր կուղարկեր: Բայց ո՛չ հեռագիրը ստացվեց, ո՛չ էլ պարոն Վուլֆշայմը եկավ: Միայն նորանոր ոստիկաններ, լուսանկարիչներ և լրագրողներ ժամանեցին: Երբ ծանոան բերեց Վուլֆշայմի պատասխանը, ես լցվեցի ցասումով ու արհամարհանքով.

«Միրելի՛ պարոն Քարավեյ: Սա իմ կյանքի ամենասարսափելի հարվածներից է, և ես չեմ կարողանում հավատալ, որ դա իրոք այդպես է: Այդ մարդու անմիտ արարքը մեզ բոլորիս մտածելու առիթ է տալիս: Ես հիմա չեմ կարող գալ, որովհետև չափազանց կարևոր գործով եմ զբաղված, և ինձ չի կարելի այդ կարգի պատմությունների մեջ ընկնել:

Եթե հետո կարողանամ որևէ բանով օգտակար լինել, Էդգարի միջոցով
իմա՛ց տվեք: Նման բաներն ինձ շարքից հանում են, ես ցնցված եմ ու
ամբողջովին կորցրել եմ ինքս ինձ:

Անկեղծորեն Ձեր՝ Մեյեր Վուլֆշայմ»

Եվ ապա՝ հապճեպ մի հետգրություն ներքևում.

«Իմա՛ց տվեք՝ երբ է թաղումը և այլն. ոչ մի բան չգիտեմ ընտանի-
քի մասին»:

* * *

Երբ երեկոյան հեռախոսը զնգաց և միջքաղաքայինը
միացրեց Չիկագոն, ես մտածեցի, որ վերջապես Դեյզին է:
Բայց հեռախոսափողի մեջ լսվեց տղամարդու ձայն՝ խուլ ու
հազիվ լսելի:

— Սլեզելն է խոսում:

— Լսում եմ:— Ազգանունն անծանոթ էր:

— Ա՛յ քեզ պատմություն, հա՛: Ստացա՞ք իմ հեռագիրը:

— Ոչ մի հեռագիր չենք ստացել:

— Երիտասարդ Փարքերը բռնվեց, — շտապ վրա բերեց
ձայնը:— Նրան բռնեցին բաժնետոմսերը ձեռքին: Նյու Յոր-
քից հաղորդագրություն էին ստացել համարներով, բռնելուց
ուղիղ հինգ րոպե առաջ: Ի՞նչ կասեք այդ մասին, հը՛: Էս գա-
վառական քաղաքներում չգիտես՝ ինչի կհանդիպես...

— Հե՛յ, — շնչակտուր ընդհատեցի ես:— Լսե՛ք, սա պա-
րոն Գեթսբին չէ: Նա մեռած է:

Լարի մյուս ծայրում երկարատև լռություն տիրեց, որին
հաջորդեց բացականչություն... ապա կտրուկ շրխկոց, և
գիծն անջատվեց:

* * *

Երևի երրորդ օրը Մինեսոտա քաղաքից Հենրի Ս. Գեթս
ստորագրությամբ հեռագիր ստացվեց: Այնտեղ ասվում էր,

որ ուղարկողը անմիջապես ճանապարհ է ընկնում և խնդրում է հետաձգել թաղումը մինչև իր գալը:

Գեթսեմի հայրն էր՝ մի վշտոտ ծերունի, բավականին անօգնական ու շվարած, չնայած սեպտեմբերյան տաք օրվան՝ կողոված երկար, էժանագին թիկնոցի մեջ: Նրա աչքերը հուզմունքից շարունակ արցունքակալվում էին, և երբ ձեռքից վերցրի պայուսակն ու հովանոցը, սկսեց այնպիսի ուժգնությամբ ձգել մոխրագույն, ցանցառ մորուքը, որ ոչ մի կերպ չհաջողվեց հանել թիկնոցը: Նա հագիվ էր կանգնում ոտքի վրա, այնպես որ ես նրան տարա երաժշտասենյակ, նստեցրի և ուտելիք պատվիրեցի ծառային, բայց նա ոչինչ չկերավ, և նրա դողդոջ ձեռքերում կաթը թափվեց բաժակից:

— Ես Չիկագոյի թերթում կարդացի,— ասաց:— Չիկագոյի թերթում էր գրված այդ մասին: Եվ անմիջապես ճանապարհ ընկա:

— Ես Ձեզ գտնել չէի կարող:

Նրա ոչինչ չտեսնող հայացքը պտտվում էր սենյակում:

— Դա խելագարի գործ է: Իհարկե, միայն խելագարը կարող էր նման բան անել:

— Գուցե սուրճ խմեք,— պնդեցի ես:

— Ոչ մի բան չեմ ուզում: Ես հիմա լավ եմ զգում ինձ, պարոն...

— Քարավել:

— Ես արդեն լավ եմ զգում ինձ: Որտեղ է Ջիմին:

Ես նրան տարա հյուրասենյակ, որտեղ պառկած էր որդին, և թողեցի մենակ: Հարթակի վրա հավաքված մի քանի տղաներ նայում էին ներս: Երբ նրանց ասացի, թե ով էր եկողը, նրանք դժկամությամբ հեռացան:

Քիչ անց դուռը բացվեց, և պարոն Գեթսեմ դուրս ելավ. նրա բերանը բացված էր, դեմքը՝ թեթևակի կարմրած, աչքերից թափվում էին հատուկենտ արցունքներ: Նա այն տարիքում էր, երբ մահը այլևս սարսափելի անակնկալ չէր, և երբ առաջին անգամ նայեց շուրջը, տեսավ դահլիճի բարձր

առաստաղն ու շքեղությունը և մեկը մյուսի մեջ բացվող ընդարձակ սենյակները, նրա վշտին խառնվեց երկյուղած հպարտությունը: Ես նրան տարա վերն՝ հյուրերի սենյակներից մեկը, և մինչ կհաներ բաձկոնը, ասացի, որ բոլոր կարգադրություններն առժամանակ դադարեցված են նրա գալու կապակցությամբ:

— Ես չգիտեի Ձեր ցանկությունը, պարոն Գեթսբի:

— Իմ ազգանունը Գեթս է:

— ...պարոն Գեթս: Ես մտածեցի, որ գուցե Դուք կուզենաք մարմինը տեղափոխել Արևմուտք:

Նա տարուբերեց գլուխը:

— Ջիմին միշտ էլ սիրել է Արևելքը: Նա այստեղ հասավ այդ դիրքին: Դուք իմ տղայի ընկերն էիք, պարոն...

— Մենք մտերիմ ընկերներ էինք:

— Նա շատ առաջ կգնար, հավատացե՛ք: Նա դեռ երիտասարդ էր, բայց խելքը տեղն էր:

Եվ ձեռքը ազդեցիկ շարժումով մոտեցրեց ճակատին. ես համաձայնության նշան արի:

— Եթե նա ապրեր, մեծ մարդ կդառնար Ջեյմս Ջ. Հիլլի նման: Մեծ օգուտ կտար երկրին:

— Ճիշտ է,— տատամսեցի ես:

Նա հեռացրեց ասեղնագործ անկողնակալը, ձիգ պառկեց անկողնում ու անմիջապես քուն մտավ:

Երեկոյան զանգեց ակնհայտորեն վախեցած ինչ-որ մեկը, որը նախքան անունը տալը ցանկացավ իմանալ, թե ում հետ է խոսում:

— Պարոն Քարավեյն է:

— Ա՛ա,— ուրախացավ նա:— Քլիփսփրինգերն է:

Ես էլ ուրախացա, որովհետև հավանաբար մեկ ուրիշ ընկեր էլ կգար Գեթսբիի թաղմանը: Ես չէի ուզում լրագրերում հայտարարություն տալ, որպեսզի հետաքրքրասերների ամբոխ չհավաքվեր, այնպես որ ինքս էի մտադրվել զանգել ծանոթներին: Դժվար էր նրանց գտնելը:

— Թաղումը վաղն է,— ասացի:— Ժամը երեքին շարժվելու ենք: Խնդրում եմ, հայտնե՞ք բոլորին, ովքեր կցանկանան գալ:

— Դե՛ն իհարկե,— շտապ ընդհատեց նա:— Հազիվ թե որևէ մեկին տեսնեմ, բայց եթե տեսնեմ, կասեմ:

Նրա ձայնը կասկած հարուցեց:

— Դուք ինքներդ երևի կգաք:

— Կաշխատեմ: Գիտե՞ք՝ ինչի համար եմ զանգել...

— Մի վայրկյան,— ընդհատեցի ես:— Ինչպե՛ս թե կաշխատեմ:

— Գիտե՞ք ինչ: Ճիշտն ասած՝ ես այժմ ապրում եմ Գրինվիչում՝ իմ ծանոթների մոտ, և պետք է վաղը լինեմ տանը: Հավաքույթի պես մի բան ենք անելու: Բայց ես ձեռքիցս եկածը կանեմ, որ գամ:

Նա անշուշտ լսեց իմ անզուսպ բացականչությունը, որովհետև շտապ վրա տվեց:

— Ես այդտեղ մի զույգ կոշիկ եմ թողել և զանգել եմ՝ իմանալու, թե արդյոք Ձեզ համար դժվար չի լինի ծառայի հետ ուղարկել դրանք: Հասկանո՞ւմ եք, թենիսի կոշիկներ են, առանց դրանց չեմ կարող: Իմ հասցեն...— Ես չլսեցի շարունակությունը, կախեցի լսափողը:

Քիչ անց ամաչեցի Գեթսբիի փոխարեն: Նրա ծանոթներից մեկը, որին զանգահարեցի, եզրափակեց, որ նրան այդպես էլ պետք էր: Համենայն դեպս, ես եմ մեղավոր. այդ մարդը պատկանում էր նրանց թվին, ովքեր բոլորից շատ էին բամբասում Գեթսբիին՝ խիզախություն ստացած նրա գինուց, և կարիք չկար զանգահարելու նման մեկին:

Թաղման առավոտը գնացի Մեյեր Վուլֆշայմի գրասենյակը, քանի որ այլ կերպ չէի կարող գտնել նրան: Վերելակավարը ինձ ցույց տվեց նրա սենյակի դուռը, որի վրա գրված էր «Սվաստիկա բաժնետիրական ընկերություն»: Սկզբում թվաց, թե մարդ չկա ներսում: Մի քանի անգամ իզուր ձայն տալուց հետո միջնորմի հետևում վիճաբանու-

թյուն ծագեց. քիչ հետո հայտնվեց մի սիրունիկ հրեուհի և իր սև աչքերը թշնամանքով հառեց վրաս:

— Մարդ չկա: Պարոն Վուլֆշայմը գնացել է Չիկագո:

Նրա ասածի առաջին մասը ակնհայտորեն ճիշտ չէր, որովհետև ներսում սկսեցին սուլել «Վարդանոցը» երգը:

— Խնդրում եմ, ասացե՛ք նրան, որ պարոն Քարավեյն է ուզում խոսել հետը:

— Ես չեմ կարող նրան Չիկագոյից հետ բերել:

Այդ պահին դռան հետևից մեկը բղավեց՝ Ստեյլա: Անկասկած Վուլֆշայմի ձայնն էր:

— Թողե՛ք Ձեր այցետոմսը սեղանին,— շտապեց ուղղել նա:— Երբ վերադառնա, կտամ:

— Բայց չե՛ որ նա ներսում է:

Մի քայլ անելով՝ նա գայրացած սկսեց ձեռքերը սահեցնել կոնքերով վեր ու վար:

— Ձեզ նմանները կարծում են, որ ուզած ժամանակ կարող են ներս խցկվել: Մենք ձանձրացել ենք Ձեզանից: Երբ ես ասում եմ, որ նա Չիկագոյում է, ուրեմն Չիկագոյում է,— գոռգոռաց նա:

Ես տվեցի Գեթսքիի անունը:

— Ա՛ա,— նա կրկին նայեց ինձ:— Սպասե՛ք մի րոպե: Ի՞նչ հաղորդեմ նրան:

Նա չքվեց: Քիչ անց Մեյեր Վուլֆշայմը տխուր հայտնվեց դռան շեմին՝ ձեռքերն առաջ մեկնած: Նա ինձ ներս տարավ և հարգարժան ձայնով ասաց, որ մեզ բոլորիս համար դա մեծ վիշտ է, և ինձ սիգար առաջարկեց:

— Հիշում եմ՝ երբ առաջին անգամ հանդիպեցի նրան,— շարունակեց Վուլֆշայմը,— երիտասարդ մայոր էր՝ քանակից նոր զորացրված, զարդարված պատերազմում ստացած շքանշաններով: Միջոցներ չունեի շոր գնելու, այդ պատճառով էլ միշտ համազգեստ էր հագնում: Ես նրան տեսա Վայնրբենների խաղատանը՝ Քառասուներեքերորդ փողոցում, եկել էր աշխատանք փնտրելու: Երկու օր էր՝ ոչինչ չէր կերել:

Ես նրան ճաշի հրավիրեցի, և նա կես ժամում չորս դոլարի ուտելիք կերավ:

— Դուք նրան օգնեցի՞ք ոտքի կանգնելու:

— Ինչ, օգնեցի: Ես նրան մարդ դարձրի:

— Հը՛մ:

— Ես նրան ցեխից հանեցի, ոչնչից մարդ դարձրի: Իսկույն նկատեցի, որ գեղեցիկ երիտասարդ է, և երբ ասաց, որ սովորել է «Օգսֆորդում», մտածեցի՝ կարելի է նրան օգտագործել: Ստիպեցի ամերիկյան լեգեոն մտնել, և այնտեղ շատ առաջ գնաց: Հենց այդ ժամանակ էլ իմ մի հաճախորդը Օլբանիում նրան գործ առաջարկեց: Մենք շատ կիպ էինք... — նա բարձրացրեց իր երկու հաստ մատները, — միշտ միասին:

Ես մտածեցի՝ արդյոք նրանք չէին համագործակցել 1919 թվականին:

— Իսկ այժմ նա մեռած է, — քիչ անց ասացի ես: — Դուք նրան մոտիկ մարդ եք, և գիտեմ՝ կցանկանաք գալ թաղմանը:

— Իհարկե, կցանկանամ:

— Դե, ուրեմն եկե՛ք:

Նրա ռունգերի մագերը թեթևակիորեն ցնցվեցին, և երբ տարուբերեց գլուխը, աչքերն արցունքակալվեցին:

— Չեմ կարող, չեմ կարող խառնվել այդ գործին:

— Ինչ գործ: Ամեն ինչ արդեն վերջացած է:

— Երբ մարդուն սպանում են, ես այդ գործին չեմ ուզում խառնվել: Երիտասարդ ժամանակս ուրիշ էր: Եթե որևէ ընկեր մեռնում էր, ով ուզում է լիներ, ես մինչև վերջ նրանից չէի հեռանում: Ուզում եք՝ ինձ լավկան համարեք, բայց այդպես էր լինում, մինչև վերջին րոպեն չէի բաժանվում նրանից:

Հասկացա: Ինչ-որ որոշակի պատճառ ստիպում էր նրան չգալ, ուստի ոտքի ելա:

— Դուք քոլնջ եք ավարտել, — հանկարծ հետաքրքրվեց: Մի պահ մտածեցի՝ հիմա ուր որ է կառաջարկի «ընդերակցություն», բայց նա միայն գլխով արեց ու թոթվեց ձեռքս:—

Պետք է մարդուն ընկեր լինել կենդանության օրոք, ոչ թե մահվանից հետո,— ասաց նա:— Իմ կարծիքով մեռածին ոչնչով չես օգնի:

Երբ դուրս եկա գրասենյակից, երկինքը մթնել էր, և Վեսթ Էզզ հասա բարակ անձրևի տակ: Շորերս փոխելուց հետո գնացի Գեթսբիի տուն: Պարոն Գեթսը հուզված քայլում էր դահլիճում: Նրա հպարտությունը որդու և նրա ունեցվածքի նկատմամբ գնալով աճում էր, և այժմ ինչ-որ բան ուներ ինձ ցույց տալու:

— Այս նկարը Ջիմին էր ուղարկել:— Դողդոջուն մատնե-րով նա հանեց դրամապանակը:— Ահա՛, տեսելք:

Դա առանձնատան լուսանկարն էր՝ ձեռքերի հպումից անկյուններում ձաքած ու կեղտոտված: Նա մեկ առ մեկ ցույց տվեց ամեն մի մանրամասն՝ հիացմունք որսալով իմ աչքե-րում՝ ամեն անգամ «Հապա մի նայեք» ասելով: Այնքան հա-ճախ էր ցույց տվել այդ նկարը, որ այն ավելի իրական էր, քան առանձնատունը:

— Ջիմին էր ուղարկել: Լավ նկար է: Շատ հաջող է ստացվել:

— Չտեսնված: Դուք Ջիմիին վաղուց է՝ չեք տեսել:

— Նա երկու տարի առաջ եկավ և ինձ համար գնեց տուն, որտեղ հիմա ապրում եմ: Իհարկե, մենք շատ տանջվե-ցինք, երբ հեռացավ մեզանից, բայց հիմա տեսնում եմ՝ իրա-վունք ուներ: Գիտեր, որ իրեն մեծ ապագա է սպասում: Իսկ երբ մարդ դարձավ, ոչինչ չէր խնայում ինձ համար:

Նա չէր ուզում բաժանվել նկարից և դանդաղում էր՝ պա-հելով այն աչքերիս առաջ: Հետո դրեց դրամապանակի մեջ ու գրպանից հանեց մի հին քրքրված գիրք՝ «Ցատկիր, Քա-սիդի» վերնագրով:

— Տեսնք, սա դեռ երեխա ժամանակից է պահպանվել: Շատ բան կասի Ձեզ:

Նա բացեց հետևի կազմը, շրջեց, որ տեսնեմ: Վերջին էջում գրված էր՝ «Դասացուցակ», և ամսաթիվը՝ 12 սեպտեմ-բերի, 1906 թ., իսկ ներքևում.

Արթնանալ	առավոտյան ժ. 6-ին
Վարժություն մարզագնդերով և մագլցել պատի վրայով. . .	6.15-6.30
Ուսումնասիրել էլեկտրականություն և այլն.	7.15-8.15
Աշխատել	8.30-16.30
Բեյսբոլ և սպորտ.	16.30-17.00
Ճարտասանություն, կեցվածք.	17.00-18.00
Ուսումնասիրել անհրաժեշտ գյուտերը.	19.00-21.00

Ընդհանուր որոշումներ

Ժամանակ չփատնել Շաֆթերսի (կամ անունը ընթերնելի չէր) վրա: Չծխել, ծամոն չծամել:

Լոգանք՝ օրումեջ:

Կարդալ օգտակար գիրք կամ ամսագիր ամեն շաբաթ:

Խնայել շաբաթական հինգ (ջնջած) երեք դոլար:

Լավ վերաբերվել ծնողներին:

— Պատահաբար ձեռքս ընկավ,— ասաց ծերուկը:—
 Շատ բան է ասում, չէ՛: Զիմին առաջ կգնար: Միշտ որոշում-
 ներ էր ընդունում: Նկատեցի՞ք, թե ինչ էր գրված ուղեղը մար-
 զելու մասին: Շարունակ այդ ուղղությամբ էր մտածում: Մի
 անգամ ասաց, որ խոզի պես եմ ուտում, ես էլ ծեծեցի նրան:

Նա չէր ուզում փակել գիրքը և, գննողաբար նայելով ինձ,
 բարձրաձայն կարդում էր գրառումները: Երևի կարծում էր, թե
 կարտագրեմ ցուցակը անձնական օգտագործման համար:

Դեռ երեքը չկար, երբ լյութերական քահանան ժամանեց
 Ֆլեշինգից: Ես ակամա նայեցի պատուհանից դուրս՝ տեսնե-
 լու՝ արդյոք ուրիշ մեքենաներ չն՞ն գալիս: Գեթաբիի հայրն էլ
 նույնն արեց: Իսկ երբ մոտեցավ թաղման ժամը, և ծառաները
 ներս մտան ու կանգնեցին, ծերուկը սկսեց անհանգիստ
 թարթել աչքերը և ինչ-որ անորոշ բան մոթմոթալ անձրևի
 մասին: Քահանան մի քանի անգամ նայեց ժամացույցին, ես

ծերուկին մի կողմ տարա և խնդրեցի սպասել կես ժամ ևս: Բայց անօգուտ: Ոչ ոք չեկավ:

Ժամը հինգին երեք մեքենայից բաղկացած մեր թափորը հասավ գերեզմանատուն և կանգ առավ անձրևի տակ՝ դարպասի մոտ. առաջինը դիակառքը՝ սարսափելիորեն սև ու թաց, ապա լիմուզինը, որտեղ նստած էինք քահանան, պարոն Գեթսը և ես, իսկ վերջում՝ Գեթսբիի բաց մեքենան՝ մեջը չորս կամ հինգ ծառա և Վեսթ Էզգի փոստատարը, բոլորն էլ՝ մինչև ոսկորները թրջված: Երբ արդեն մտել էինք գերեզմանատուն, լսեցի մեքենայի ձայն, ապա ինչ-որ մեկը, ջրափոսերի մեջ չփչփացնելով, շտապեց հասնել մեզ: Ես շրջվեցի: Դա Բվեճն էր, որին երեք ամիս առաջ հանդիպել էի Գեթսբիի գրադարանում գրքերը հիացած գննելիս:

Ես այդ օրվանից նրան չէի տեսել: Չգիտեմ՝ ինչպես էր իմացել թաղման օրը, նույնիսկ անունը չգիտեմ: Անձրևը հոսում էր նրա ակնոցի հաստ ապակիներից, և նա սրբեց դրանք՝ տեսնելու, թե ինչպես էին Գեթսբիի գերեզմանի վրա անջրանցիկ քաթան քաշում:

Այդ պահին փորձեցի մտածել Գեթսբիի մասին, բայց նա արդեն շատ հեռու էր, և միայն կարողացա առանց վրդովմունքի հիշել, որ Դեյզին ո՛չ հեռագիր, ո՛չ էլ ծաղիկ չուղարկեց: Ինչ-որ մեկը կհսաձայն մոմոաց. «Օրհնյալ են այն մեռելները, որոնց վրա է թափվում անձրևը»: Եվ ապա Բվեճը աշխույժ վրա բերեց՝ ամեն:

Մենք անձրևի տակ խառնիխոռն շտապեցինք դեպի մեքենաները: Դարպասի մոտ Բվեճը դիմեց ինձ.

— Ես չկարողացա ժամանակին գալ:

— Ոչ ոք էլ չկարողացավ:

— Ի՞նչ եք ասում:— Նա ցնցվեց:— Տե՛ր իմ Աստված: Հարյուրներով մարդ էր մտնում նրա տուն:

Նա հանեց ակնոցը և կրկին երկու կողմից սրբեց ապակիները:

— Խեղճ տղա, — ասաց նա:

Իմ կյանքի ամենավառ հիշողություններից մեկը Ծննդյան տոնի նախօրեին Արևմուտք գնալն էր նախ՝ դպրոցի, հետո՝ քոլեջի արձակուրդներին: Նրանք, ովքեր Չիկագոյից հեռու էին գնում, դեկտեմբերյան մի երեկո՝ ժամը վեցին, հավաքվում էին հին, կիսախավար Յունիոն կայարանում՝ քաղաքում ապրող մեր ընկերների հետ, որոնք արդեն տոնական տրամադրություն ունեին և գալիս էին մեզ գնաս բարով ասելու: Ես հիշում եմ օրիորդ Այսինչի կամ օրիորդ Այնինչի՝ գիշերօթիկ դպրոցից տուն դարձող աղջիկների մուշտակները, նրանց սառած շնչի գոլորշին, նրանց ձեռքի թափահարումները հին ծանոթներ տեսնելիս, հրավերները՝ «Կգամ օրդվեյների մոտ, Հերսինների տուն, Շուլցերի մոտ», և երկար կանաչ տոմսերը՝ պինդ սեղմած մեր ձեռնոց հագած ձեռքերում: Իսկ գծերի վրա՝ կառամատույցի ելքի դիմաց, զվարթ, ինչպես Ծննդյան տոնը, կանգնած էին Չիկագո, Մեյլիոքի, Սենթ Փոլ ուղևորվող գնացքների դեղին վագոնները:

Երբ գնացքը շարժվում էր ձմեռային գիշերով, իսկական ձյունը՝ մեր ձյունը, սպիտակին տալով, տարածվում էր պատուհաններից դուրս, և Վիսքոնսինի կիսակայարանների աղոտ լույսերը թարթելով անցնում էին, հանկարծ օդը դառնում էր սուր ու կայտառացնելու աստիճան մտերմիկ: Վագոն-ռեստորանից հետ գալիս մենք խոր շնչում էինք այդ օդը ցուրտ հարթակներում՝ անասելիորեն գիտակցելով մեր միասնությունը այդ երկրի հետ, հետո աննկատելիորեն ձուլվում նրա մեջ:

Սա է իմ Միջին Արևմուտքը, ոչ թե դաշտերը, տափաստանները կամ խաղաղ շվեդական քաղաքները, այլ իմ դեռահաս օրերի հուզիչ գնացքները, փողոցի լապտերները, սառնաշունչ մթնշաղում դողանջող սահնակների զանգերը և լուսավորված պատուհաններից ընկնող փշարմավի պսակների ստվերները ձյան վրա: Ես այդ ամենի անբաժան մաս-

նիկն են և փոքր-ինչ թախծոտ՝ երկարատև ձմեռների պատճառով, փոքր-ինչ ինքնավստահ՝ Քարավեյների տանը մեծացած լինելու համար, և մի քաղաքում, որտեղ հիմա էլ տները կրում են տանտիրոջ անունը: Ես հիմա եմ հասկանում, որ ըստ էության ստացվեց Արևմտքի պատմություն, որ ի վերջո Թոմն ու Գեթսեին, Դեյզին, Ջորդանն ու ես՝ բոլորս էլ Արևմտքից էինք, և գուցե բոլորիս էլ պակասում էր մի բան, որը մեր կյանքը ինչ-որ չափով անհարիր էր դարձնում Արևելքի կյանքին:

Նույնիսկ այն ժամանակ, երբ Արևելքը ինձ շատ էր հուզում, նույնիսկ այն ժամանակ, երբ ես պարզ գիտակցում էի նրա գերազանցությունը Օհայո գետից այն կողմ տարածվող տաղտուկից ճարպակալած քաղաքների նկատմամբ, որտեղ բամբասող լեզուները ոչ մեկին չէին խնայում, թերևս միայն զառամյալներին ու երեխաներին, նույնիսկ այդ ժամանակ էլ ես այնտեղ ինչ-որ հրեշավոր բան էի տեսնում: Մինչև հիմա էլ երազիս գալիս է Վեսթ Էզզը, որն ավելի շուտ երազ չէ, այլ երևակայական ցնորք՝ էլ Գրեկոյի գիշերային բնանկարները հիշեցնող: Տխուր, կողք կողքի կույզ եկած հարյուրավոր միանման զավեշտական տներ ցածր երկնքի տակ, որտեղ անփայլ լուսինն էր լողում: Առջևում ֆրակ հագած չորս մռայլ տղամարդ տանում են պատգարակը՝ վրան երեկոյան սպիտակ զգեստով հարբած մի կին: Նրա ձեռքը կախ է ընկած կողքից, իսկ մատներին սառը փայլով պսպղում են գոհարները: Տղամարդիկ լրջորեն շրջվում են՝ կանգ առնելով մի տան առաջ. դա իրենց ուզած տունը չէ: Բայց ոչ ոք չգիտի կնոջ անունը, այն ոչ մեկին պետք չէ:

Գեթսեիի մահից հետո Արևելքն ինձ հետապնդում էր, ամեն ինչ աղավաղված տեսք էր ստացել, և աչքս ի վիճակի չէր կարգավորելու ոչինչ: Եվ երբ չոր, խշխշան տերևների վրայից կապտավուն ծուխ բարձրացավ, և քամին սկսեց պարանից ձգել թոցնել թաց լվացքը, ես որոշեցի տուն դառնալ:

Մի բան էր միայն մնացել անելու, մի տհաճ, ծանր բան, որն ավելի լավ կլիներ, եթե չարվեր: Բայց ես ուզում էի ամեն ինչ կարգի գցել մեկնելուցս առաջ և ոչ թե վստահել, որ անտարբերության ծովը մեծահոգաբար քշեր տաներ իմ աղբը: Ես հանդիպեցի Ջորդան Բեյքերին, և մենք միասին գրուցեցինք մեզ պատահածի, հետագայի և այն մասին, թե ինչ ապրումներ ունեցա ես: Ընկողմանած լայն աթոռին՝ նա հանգիստ լսում էր ինձ:

Ջորդանը հագել էր գուլֆի համազգեստ. հիշում եմ՝ այդ պահին մտածեցի, թե նա հիշեցնում է մարզական ամսագրերի լուսանկար՝ ծնոտը փոքր-ինչ անհոգ վեր պահած, մազերը՝ աշնանային տերևի գույնի, դեմքը՝ ծնկին դրած ձեռնոցի սրճագույն երանգի: Երբ ավարտեցի խոսքս, նա առանց այլևայլության ասաց, որ նշանված է: Ես չհավատացի, չնայած գիտեի, որ գլխի թեթևակի շարժումով կարող էր շատերի հետ ամուսնանալ, և զարմացած ձևացրի: Մի պահ մտածեցի, թե արդյոք սխալ չեմ թույլ տալիս, ապա արագ մտքումս ծանրութեթև արեցի ամեն ինչ ու ոտքի ելա:

— Բայց և այնպես, դու ինձնից հրաժարվեցիր,— անսպասելիորեն ասաց Ջորդանը:— Դու ինձ հեռախոսով մերժեցիր: Չնայած հիմա հեշ էլ կարևոր չէ, բայց այն ժամանակ գլուխս կորցրել էի, և դա ինձ համար նոր փորձություն եղավ:

Մենք ձեռք թրթվեցինք:

— Իմիջիայլոց, հիշում ես,— ավելացրեց նա,— մի անգամ մենք խոսում էինք մեքենա վարելու մասին:

— Հիշում եմ, բայց աղոտ:

— Դու ասացիր, որ անփորձ վարորդը ապահով է, քանի դեռ չի հանդիպել մեկ ուրիշ անփորձ վարորդի: Ինձ հետ հենց այդպես էլ պատահեց: Ուզում եմ ասել, թե ինչպես կարողացա նման սխալ թույլ տալ: Ես կարծում էի՝ դու ազնիվ, ուղղամիտ մարդ ես: Կարծում էի՝ ներքուստ հպարտություն ունես:

— Ես երեսուն տարեկան եմ,— ասացի,— հինգ տարի է, ինչ դուրս եմ եկել այն հասակից, երբ կարող էի ինքս ինձ խաբել ու դա պատիվ համարել:

Ջորդանը չպատասխանեց: Բարկացած, կիսով չափ սիրահարված նրան, անսահման ավիսուսանքը սրտին՝ ես շրջվեցի դուրս գալու:

* * *

Մի օր՝ հոկտեմբերի վերջին, տեսա Թոմ Բյուքենենին: Նա անցնում էր Հինգերորդ պողոտայով իր զգոն, հարձակման պատրաստ քայլվածքով, ձեռքերը մարմնից փոքր-ինչ դուրս, ասես պատրաստ հեռու վանելու որևէ միջամտություն, գլուխը տարուբերելով այս ու այն կողմ՝ անհանգիստ աչքերին զուգընթաց: Ես դանդաղեցրի քայլս, որպեսզի չանցնեմ նրանից առաջ, և հենց այդ պահին նա կանգ առավ ու ճակատը կնձռոտած՝ սկսեց ուսումնասիրել գոհարեղենի խանութի ցուցափեղկը: Հանկարծ ինձ նկատելով՝ ձեռքը պարզած ընդառաջ եկավ:

— Ինչ է պատահել, Նիք: Չե՞ս ուզում ձեռքս սեղմել:

— Այո՛, լավ էլ գիտես, թե ինչ կարծիքի եմ քո մասին:

— Դու գծվել ես, Նիք,— շտապ վրա բերեց,— խելքդ թոցրել ես: Չեմ հասկանում, ինչ ես ուզում ասել:

— Թո՛մ,— հարցրի ես կտրուկ,— ինչ ասացիր դու Վիլսոնին այն օրը:

Նա անխոս նայեց ինձ, և ես հասկացա, որ իմ ենթադրությունն այդ անհայտ ժամերի մասին ճիշտ էր:

— Ես նրան ճշմարտությունն ասացի: Նա եկավ, երբ մենք ճանապարհի պատրաստություն էինք տեսնում: Ես լուր ուղարկեցի ծառայի հետ, որ տանը չենք: Նա փորձեց զոռով մտնել այնպիսի վիճակում էր, որ կսպաներ ինձ, եթե չասեի, թե ով է մեքենայի տերը: Ձեռքը գրպանում՝ ատրճանակի վրա էր պահել:— Հանկարծ Թոմը մարտականորեն բարձրացրեց ձայնը:— Իսկ ինչ, եթե ասել եմ: Վաղ թե ուշ նրա վերջը գալու էր: Քո ու Դեյզլիի աչքերին փոշի էր փչում, բայց իրականում բռիի մեկն էր: Անցավ Միրթլի վրայով, կարծես շուն էր կոխտում, նույնիսկ կանգ էլ չառավ:

Ես ասելիք չունեի, քանի որ չէի կարող բերել այն պարզ փաստը, որ դա ճիշտ չէ:

— Իսկ դու կարծում ես՝ ինձ համար հեշտ էր: Երբ գնացի բնակարանը հանձնելու տիրոջը և պահարանի վրա տեսա այդ անիծյալ ամանը՝ շան պաքսիմատներով, նստեցի ու երեխայի նման լաց եղա: Գրողը տանի, հիշելն անգամ սարսափելի է...

Ես ո՛չ կարող էի նրան ներել, ո՛չ էլ կարեկցել, բայց հասկացա, որ նրա արածը իր աչքում միանգամայն արդարացված էր: Ամեն ինչ չափազանց խառնաշփոթ էր ու անփույթ: Թոմն ու Դեյզլին անփույթ մարդիկ էին: Նրանք ոչնչացնում էին իրեր ու մարդիկ, ապա փախչում՝ թաքնվելով իրենց փողի, իրենց անսահման անփութության և կամ էլի ինչ-որ բանի հետևում, որը շաղկապում էր նրանց՝ թողնելով, որ ուրիշները հավաքեն աղբը իրենց հետևից...

Հրաժեշտ տալիս սեղմեցի նրա ձեռքը. հիմարություն էր չանելը, քանի որ հանկարծ ինձ թվաց, որ երեխայի հետ եմ խոսում: Իսկ նա մտավ գոհարեղենի խանութ՝ մարզարտյա մանյակ կամ գուցե թևքաճարմանդներ գնելու՝ ընդմիջտ ազատված գավառացու իմ փափկանկատությունից:

* * *

Գեթաբիի առանձնատունը դեռևս դատարկ էր, երբ ես մեկնում էի, իսկ նրա սիզամարգի խոտը իմ սիզամարգի խոտի չափ աճել բարձրացել էր: Տեղի վարորդներից մեկը նրա դարպասի մոտով անցնելիս միշտ կանգ էր առնում և ուղևորներին ցույց տալիս պարտեզի խորքի առանձնատունը: Գուցե նա այն տաքսու վարորդն էր, որ Դեյզլին ու Գեթաբիին տարել էր Իսթ Էզզ այն սոսկալի գիշերը, գուցե հետո իր պատմությունն էր հորինել այդ կապակցությամբ: Ես չէի ցանկանում լսել այն և միշտ կայարանից դուրս գալիս խուսափում էի նրա մեքենան նստելուց:

Շարաթ երեկոները անց էի կացնում Նյու Յորքում, որովհետև իմ հիշողության մեջ դեռևս այնքան թարմ էին Գեթսբիի շքեղ երեկոյթները, խելահեղ խրախճանքները, որ շարունակ ինձ թվում էր, թե անորոշ երաժշտության արձագանք, ծիծաղ ու եկող-գնացող մեքենաների աղմուկ է հասնում ականջիս: Մի երեկո իրոք մեքենայի ձայն լսեցի և տեսա, թե ինչպես լուսարձակը կանգ առավ նրա աստիճանների առաջ: Բայց չպարզեցի, թե ով էր եկողը. հավանաբար ինչ-որ ուշացած հյուր, որ երկար ժամանակ բացակայել էր քաղաքից և չէր իմացել երեկոյթների ավարտի մասին:

Մեկնելու նախօրեին, երբ իրերս արդեն հավաքել էի, մեքենասւ՝ վաճառել նպարավաճառին, գնացի վերջին անգամ տեսնելու այդ հսկայական առանձնատան անհեթեթ անկումը: Ճերմակ աստիճանների վրա աղյուսի կտորով խզված էր մի անպարկեշտ խոսք, որը պարզ երևում էր լուսնալույսի տակ: Ես քերեցի այն կոշիկիս ծայրով: Հետո անցա լողափ ու փովեցի ավազին:

Առափնյա ճոխ առանձնատների մեծ մասն այժմ դատարկ էր, և ոչ մի տեղ լույս չէր երևում՝ բացի Սաունդի ջրերում հանդարտ լողացող լաստանավի աղոտ սովերանման ցուլքից: Լուսնի բարձրանալու հետ մեկտեղ անկարևոր շինությունների ուրվագծերն անհետացան, և ես աստիճանաբար նշմարեցի հնամենի կղզին՝ նոր աշխարհի կանաչ, անաղարտ կուրծքը, որ այնժամ հառնել էր հոլանդացի նավաստիների աչքի առաջ: Կղզու անհետացած ծառերը, որոնք իրենց տեղն էին զիջել Գեթսբիի դոյակին, մի ժամանակ օրորել էին մարդկային երազներից վերջինն ու մեծագույնը. հավանաբար մի վաղանցուկ, հմայված ակնթարթ մարդ արարածը, շունչը պահած, կանգնել էր այս նոր երկրի դիմաց՝ տարված նրա գեղեցկությամբ, որը ո՛չ հասկացել էր, ո՛չ էլ ցանկացել հասկանալ, որովհետև պատմության մեջ վերջին անգամ էր դեմառդեմ դուրս եկել ինչ-որ բանի, որը համապատասխանում էր իր հիացմունքի կարողությանը:

Երբ նստած մտորում էի հին, անծանոթ աշխարհի մասին, հիշեցի նաև Գեթսեմին, որն առաջին անգամ հրձվանքով զանազանեց Դեյզիի տան դիմացի նավամատույցի կանաչ լույսը: Նա երկար ճանապարհ էր անցել՝ հասնելու իր կապույտ սիգամարգին, և նրան իր երազն այնքան մոտ էր թվացել, որ հագիվ թե չկարողանար հասնել դրան: Նա չգիտեր, որ այն հետևում է մնացել՝ քաղաքից դուրս՝ ինչ-որ տեղ՝ հեռաստաններում, այնտեղ, որտեղ Ամերիկայի դաշտերն էին ձգվում գիշերվա երազկոտ մթության մեջ:

Գեթսեմին հավատում էր կանաչ լույսին, երանելի ապագային, որ տարեցտարի հեռանում է մեզնից: Թեև այն խույս տվեց այսօր, հոգ չէ, վաղն ավելի արագ կվազենք, մեր թևերն ավելի լայն կբացենք... Եվ մի գեղեցիկ առավոտ...

Այսպես մենք լողում ենք առաջ՝ հոսանքին ընդդեմ, բայց այն շարունակ հրում է մեր նավակները հետ՝ դեպի անցյալի գիրկը:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

20-րդ դարի առաջին կեսին Ամերիկյան թևակոխեց մի բարդագույն պատմական ժամանակաշրջան, որի տարիները հասարակական, տնտեսական և մշակութային զարգացում էին ապրելու հնի և նորի բախման պատճառով: Նոր սերնդի գրողներին անվանում էին «նոր սերնդի» կամ «ջազի դարի» ներկայացուցիչներ: Այս սերնդից էր Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդը՝ դարասկզբի ամերիկյան մեծագույն գրողներից մեկը: Նա ներկայացրեց իր ժամանակի մարդու հասարակական-հոգեբանական կերպարը:

Ֆրենսիս Սքոթ Ֆիցջերալդը ծնվել է 1896 թվականի սեպտեմբերի 24-ին Մինեսոտա նահանգի Սենթ Փոլ քաղաքում: 1908-1911 թթ. հաճախել է տեղի դպրոցը: Ապա սովորել է Նյու Ջերսի նահանգի Հաքենսաք քաղաքի կաթոլիկական դպրոցում: 1913 թ. ընդունվել է Փրիսթոնի համալսարանը: 1917 թ. ուսումը կիսատ թողնելով՝ մեկնել է ռազմաճակատ (այդ տարիներին ԱՄՆ-ը մասնակցում էր Առաջին համաշխարհային պատերազմին): 1918 թվականին Ֆիցջերալդը ծառայում էր Ալաբամա նահանգի Շերիդան ճամբարում, որտեղ էլ սիրահարվում է նույն նահանգի գերագույն դատարանի դատավորի աղջկան՝ Ջելդա Սայրին (1900-1948), որը ճակատագրական է լինում գրողի կյանքում և դառնում է նրա որոշ ստեղծագործությունների հերոսուհին («Գիշերն անույշ է»): Զորացրվելուց հետո տեղափոխվում է Նյու Յորք և աշխատանքի անցնում գովազդային գործակալությունում: Գրելով պատմվածքներ՝ տպագրվում է հանրահայտ ամսագրերում, որոնց նկարահանելու իրավունքը վաճառում է հոլիվուդյան կինոստուդիաներին:

1920-ականները համարվում են Ֆիցջերալդի գործունեության ամենաբեղուն շրջանը: Նա բազմիցս այցելում է Ֆրանսիա, հատկապես ֆրանսիական Ռիվիերա: Այնուհետև կնոջ՝ Ջելդայի հետ հաստատվում է Նյու Յորքում և սկսում գրել «Մեծն Գեթսբի» վեպը: 1924-ին կրկին մեկնում է Ֆրանսիա, որտեղ էլ ավարտում է վեպը: Փարիզում նա ընկերանում է ամերիկացի վտարանդիների հասարակության շատ անդամների, հատկապես Էռնեստ Հեմինգուեյի հետ: Մինչև 1926 թ. վերջը Ֆիցջերալդն ապրում է Փարիզում, երբեմն այցելում Ռիվիերա, որտեղ էլ հղանում է իր չորրորդ վեպը՝ «Գիշերն անույշ է»: Ընդհանուր առմամբ նա գրել է 150 պատմվածք և չորս վեպ՝ «*This Side of Paradise*» (1920), «*The Beautiful and the Damned*» (1920), «*The Great Gatsby*» (1925), «*Tender is the Night*» (1934) և Հոլիվուդի մասին գրված վեպը «*The Last Tycoon*» (1939), որն անավարտ է մնում մոտալուտ մահվան պատճառով (սրտի նոպայից 1940 թ. դեկտեմբերի 21-ին):

Դարասկզբին ձևավորվել են նրա գեղագիտական սկզբունքները, որոնք արդյունք էին ամերիկացի, ֆրանսիացի և ռուս գրողների ազդեցության: Սակայն այդ ամենը չխանգարեց նրան դառնալու ինքնուրույն գաղափարական և գեղարվեստական հասունությամբ, ոճով և հայացքներով ձևավորված գրող: Իր գործերում վերլուծելով ամերիկյան պատմությունը և իրականությունը՝ նա հանգում է այն եզրակացության, որ եվրոպացիները, գրավելով նոր հայտնաբերված մայրցամաքը, ներմուծեցին հին աշխարհի աղտեղությունները, որի բարոյախոսությունը Բենջամին Ֆրանքլինի ասույթն է՝ «Ժամանակը փող է»: Եվ ժամանակի բարոյագուրկ և հոգեզուրկ վիճակի պատճառն անցյալի սխալներն են:

Ֆիցջերալդի «Մեծն Գեթսբի» վեպի մասին բազմաթիվ իրարամերժ տեսակետներ են եղել, որի պատճառը գրողի կիրառած «երկակի դիտարկման» մեթոդն է, որ նույնաց-

նում է Գեթսեմի ճակատագիրը Ամերիկայի ճակատագրի հետ: Ֆիցջերալդը իր նամակներից մեկում վեպի վերնագրի մասին ասում է, որ ինքը գերադասում է այն կոչել «Թրիմալփոն»:

Անտիկ աշխարհում գրված՝ Գայ Պետրոնիուսի «Սատիրիկոնը», որից պահպանվել են մի քանի հատվածներ, հռոմեական գրականության ամենախորհրդավոր գործերից է: «Թրիմալփոնի խնջույքը» ամենածավալունն է և գրավիչը: Այն ազատ քաղաքացի դարձած և արագ հարստացած նախկին ստրուկ Թրիմալփոնի պատմությունն է: Նա ցոփ ու շվայտ կյանք է վարում գինարբուքների մեջ: Վեպի հերոս Գեթսեմին հիշեցնում է հռոմեացի ստրուկին: «Չոր օրենքի» տարիներին անօրինական խմիչք վաճառելով մեծահարուստ դարձած Գեթսեմին իր շքեղ առանձնատանը ճոխ խնջույքներ է կազմակերպում, որտեղ հավաքվում են Նյու Յորքի վերնախավի ներկայացուցիչները: Գեթսեմին անտիկ հերոսին նման է նաև իր անցյալով: Նա վրայից նետում է հին աշխարհի քարացած կապանքները և, որպես ազատ երկրի ազատ քաղաքացի, կանգնում է երկրնտրանքի առաջ. մի կողմում փողն է, մյուս կողմում՝ սերը: Գեթսեմին տարբերվում է Պետրոնիուսի հերոսից, որը հարստությունը վատնում է զեխության մեջ, իսկ Գեթսեմի հարստությունը նպատակ չէ, այլ միջոց՝ հետ բերելու հինգ տարի առաջ կորցրած իր սիրուն՝ Դեյզիին: Նա իր խնջույքներով ցանկանում է Դեյզիին տեղեկացնել իր գոյության մասին: Ֆիցջերալդի հերոսը երկփեղկված անտիկ աշխարհից եկած և «ջազի դարի» դիմակի տակ քողարկված Թրիմալփոն է, ինչպես նաև խոր հոգու և նուրբ սրտի տեր, ռոմանտիկ սիրահար:

Իր երկակի դիտարկման մեջ Ֆիցջերալդը ներկայացնում է երկու զուգահեռ պատմություն՝ Գեթսեմի ողբերգական սերը և «ամերիկյան ողբերգությունը»: Դեյզիի վերադարձից հետո Գեթսեմին վերափոխվում է. «Հենց այդ ժամանակ, երբ Գեթսեմի հանդեպ համընդհանուր հետաքրքրասի-

րութիւնը գագաթնակետին էր հասել, մի շաբաթ գիշեր նրա տան լույսերը չվառովեցին, և Թրիմալքիոնի նրա գործունեութիւնը այնպէս խորհրդավոր ավարտվեց, ինչպէս որ սկսվել էր» (էջ 122): Եվ Գեթսքին սպանվեց այն ժամանակ, երբ հանդես եկավ իր մարդկային, իրական դեմքով, բայց եթե ողջ էլ մնար, չէր կարող տիրանալ իր երազած երջանկութեանը, քանզի խոր անդունդ էր գոյացել հերոսի երևակայութեան և իրական Դեյզիի միջև: Նման «երկակի դիտարկման» մեջ Դեյզին ժամանակի Ամերիկան է՝ «ժամանակը փող է» կարգախոսը դավանող, դարձած բարոյագուրկ և հոգեգուրկ, որը չի կարող բաժանվել «ջագի դարի» իսկական զավակ Թոմ Բյուքենենից՝ իր ամուսնուց: Իսկ Ամերիկայի ճակատագիրը «երկակի դիտարկման» շնորհիվ առաջնահերթ է դարձել, որի մասին ակնարկում է Ֆիցջերալդը՝ վեպի վերջում ամփոփելով իր մտքերը. «Երբ նստած մտորում էի հին, անծանոթ աշխարհի մասին, հիշեցի նաև Գեթսքիին, որն առաջին անգամ հրձվանքով զանազանեց Դեյզիի տան դիմացի նավամատույցի կանաչ լույսը...

Գեթսքին հավատում էր կանաչ լույսին, երանելի ապագային, որ տարեցտարի հեռանում է մեզնից: Թեև այն հույս տվեց այսօր, հոգ չէ, վաղն ավելի արագ կվազենք, մեր թներն ավելի լայն կբացենք... Եվ մի գեղեցիկ առավոտ...

Այսպէս մենք լողում ենք առաջ՝ հոսանքին ընդդէմ, բայց այն շարունակ հրում է մեր նավակները հետ՝ դեպի անցյալի գիրկը» (էջ 192):

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին.	7
Գլուխ երկրորդ	30
Գլուխ երրորդ	46
Գլուխ չորրորդ.	68
Գլուխ հինգերորդ.	89
Գլուխ վեցերորդ	106
Գլուխ յոթերորդ.	122
Գլուխ ութերորդ.	157
Գլուխ իններորդ	174
<i>Հեղինակի մասին.</i>	193

Ֆրենսիս Աքոթ Ֆիցջերալդ

Մեծն Գեթսբի

Վեպ

Թարգմանությունն անգլերենից՝ Սոնա Սեֆերյանի

Francis Scott Fitzgerald

The Great Gatsby

Novel

Translated into Armenian by Sona Seferyan

Zangak Publishing House, Yerevan, Armenia

Հրատարակչության տնօրեն՝
Գեղարվեստական խմբագիր՝
Տեխնիկական խմբագիր՝
Կազմի ձևավորումը՝
Էջադրումը՝
Վերստուգող սրբագրիչ՝

Էմին Մկրտչյան
Մարիամ Կանայան
Նվարդ Փարսադանյան
Մարիամ Կանայանի
Գրիգորի Հարությունյանի
Նունիկ Ավետիսյան

Տպագրությունը՝ օֆսետ: Չափսը՝ 84x108/32: Թուղթը՝ օֆսետ
Ծավալը՝ 6,25 տպ. մամ.: Տառատեսակը՝ GHEA Mashtots

«ԶԱՆԳԱԿ» հրատարակչություն
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23 25 28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

1915.info